

Գիրքը լուսապատճենահանվել է  
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից և ներկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՊՆԻՔ ԱՌԻՅԱԿԵԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԱԿՈՒՄՆ ԱՌԻՅԵԱԼ, ՀԱՅԱՍՏԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ  
ԼՈՒՄՊՈՅՏՔԵՆԱԶԱՆԵԸ ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀՈՅՊԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅՔՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԸՆԴՈՂՆԱԿԱԼ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:  
ՑԱՆՎԱԼՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:




ԳՐԵՔ ՄԵՁ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

ՄԻԳԵԼ ՍԵՐՎԱՆՏԵՍ



ԴՈՆ ԿԻԽՈՏ

ՄԻԳԵԼ ՍԵՐՎԱՆՏԵՍ



ԴՈՆ ԿԻՒՈՏ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ—1982

Թարգմանությունը Պ. ՄԱԿԻՆՑԱՆԻ

Նկարները՝ ԳՈՒՍՏԱՎ ԴՈՐԵՆԻ

### Սերվանտես

Դոն Կիխոտ: Վեպ. Դպր. բարձր տարիքի համար (Թարգմ. Պ. Մակինցյանի: Նկ. Գուստավ Դորենի.— Եր.: Սովետ. գրող 1982.— 180 էջ: Նկ. 50:

Վերածնության դարաշրջանի դրական ակնավոր դեմքերից մեկի՝ իսպանացի հանճարեղ գրող Միգել դե Սերվանտես Սաավեդրայի (1547—1616 թթ.) հանրահռչակ «Դոն Կիխոտ» վեպի համառոտ վերապատմությունը վերահրատարակվում է պատանինների համար:

4803020000  
Ս 705(01)82 196—82 «Տ»

ԳՄԴ 84. 4 Իսպ.

И (Իսպ.)



## ԳԼՈՒԽ I

### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է ՀՌԶԱԿԱՎՈՐ ՀԻՂԱԼԳՈ ԴՈՆ ԿԻՒՈՏ ՄԱՆՉԱՑՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԻ ՄԱՍԻՆ

**Մ**անչայի գյուղերից մեկում մի կալվածատեր էր ապրում: Նա ուներ նիզակ, հին վահան, քնձոտո մի ձի և որսորդական շուն: Նրա եկամտի երեք քառորդը կլանում էր սնունդը՝ տաք կերակուր, ավելի հաճախ տավարի մսից, քան ոչխարի, ընթրիքին՝ սովորական ապուր, շաբաթ օրերը՝ խաշ, ուրբաթ՝ ոսպ, իսկ կիրակիները, բացի այդ, ևս մի աղավնի: Մնացածը գնում էր հագուստի՝ նուրբ մահուդից կարած կապա, թավշյա տաբատ և նույն կտորից հողաթափ՝ տոն օրերի համար, իսկ շաբաթվա մնացյալ օրերին տնայնագործ մահուդից զգեստ էր հագնում: Նա տանը տնտեսուհի էր պահում, որ քառասունն անց էր, քրոջ աղջկան, որ քսանին մոտ էր, և առտնին ու դաշտային աշխատանքների համար. մի ծառա, որ տեղը եկած ժամանակ կարող էր ձի էլ թամբել, պարտեզում էլ մկրատ բանեցնել: Մեր հիդալգոն՝ մոտ հիսուն տարեկան կլիներ: Նա ուներ ամուր ու նիհար կազմվածք, սուր դեմք, վեր էր կենում լույսը չբացված և որսորդության սիրահար էր:

Դուր պետք է իմանաք, որ վերոհիշյալ հիդալգոն ազատ ժամերին (ասել է, թե՛ գրեթե ողջ տարին) անձնատուր էր լինում ասպետական վեպերի ընթերցանության այնպիսի հափշտակությամբ ու մոլուխամբ, որ որսն էլ էր

\* Հիդալգո— ազնվական, կալվածատեր:



մոռացութեան տալիս, իր տնտեսական գործերն էլ: Նրա մոլութիւնն ու ցնորամտութիւնն այն աստիճանի էին հասել, որ, գրքեր գնելու նպատակով, մի քանի օրավար պիտանի հող վաճառեց:

4 Մեր կալվածատերը փորասուզվեց ընթերցանութեան մեջ այն աստիճան, որ ցերեկը կարդում էր արևածագից մինչև մթնշաղ և գիշերը՝ մթնշաղից մին-

չև արևածագ՝ եւ քիչ էր քնում, շատ կարգում, և նրա ուղեղը շտապում էր, մինչև որ, վերջապես, խելքը կորցրեց: Նրա նրևակայութիւնը լի էր այն ամեն բաներով, որ կարդացել էր գրքերում՝ կախարդանքով, մենամարտերով, մարտակոչերով, ճակատամարտերով, վերքերով, սիրո խոստովանութիւններով, տառապանքներով և այլ հազար ու մի դատարկաբանութիւններով: Եւ այնքան ամուր էր մտել նրա գլուխը, թե իր կարդացած նրևակայական հնրութիւնքի կույտը զուտ ճշմարտութիւն է, որ նրա աչքում աշխարհիս երեսին ավելի ճշմարտանման բան չկար:

Վերջ ի վերջո, կորցնելով առողջ դատողութիւնը, նա հասավ ամենատարօրինակ մի զառանցանքի, որ միայն խելագարն է կարող հնարել, այն է՝ թե վայել է և անհրաժեշտ, ինչպես իր սեփական փառքի, այնպես էլ պետութիւնն օգտի համար, թափառական ասպետ դառնալ և ձիով ու սպառազինված արկածներ որոնել, բոլոր դեպքերում այնպես վարվելով, ինչպես թափառական ասպետները (որոնց մասին նա կարդացել էր), վերացնել ամեն անարդարութիւն, և հավերժական փառք ու հռչակի հասնել:

Նախ և առաջ, նա մի լավ մաքրեց իր նախնիների զենքուզրահը, որ երկար տարիներ անկյունում ընկած ժանգոտել ու փոշոտել էր:

Նա, ինչքան կարող էր, լավ մաքրեց ու նորոգեց զենքուզրահը, բայց հանկարծ նկատեց, որ մի շատ կարևոր բան պակաս է՝ սաղավարտը առանց երեսակալի էր: Հիդալգոն սովորաթղթից երեսակալ շինեց և կպցրեց, ու դուրս եկավ սաղավարտի պես մի բան: Ճիշտ է, կամենալով փորձել նրա ամրութիւնը և պարզել, կարո՞ղ է արդյոք դիմանալ մարտում, նա թուրը քաշեց, երկու հարված հասցրեց և վայրկենապես ոչնչացրեց ամբողջ շաբաթվա շինածը: Դրանից նա շփոթվեց և, որպեսզի ապագայում ապահովված լինի նման դժբախտութիւնից, մեջը երկաթի կտորներ դրեց, ամրացրեց և, չկամենալով նորից փորձել, դա համարեց ամենակատարյալ սաղավարտը աշխարհիս երեսին:

Ապա հիդալգոն քննութիւն ենթարկեց իր քնձոտ ձին, ու թեև նրա ոսկորները դուրս էին ցցվել և մազը թափվել, նա գտավ, որ աշխարհիս երեսին իր ձիու նմանը չկա: Չորս օր մտածում էր, թե ինչ անուն տա ձիուն, որովհետև խորհում էր, թե անթուլատրելի է, որ այսքան հռչակավոր ասպետի այսչափ լավ մի ձի երևելի անուն չունենա: Ուստի կամեցավ նրան այնպիսի անուն տալ, որ հենց անունից հասկացվեր, թե ինչ է եղել նախքան թափառական ասպետի ձի դառնալը և ինչ է այժմ դարձել: Նա խորապես համոզված էր, որ եթե տերը փոխում է իր արվեստը, ուրեմն ձին էլ պիտի փոխի իր անունը և նոր, փառավոր, ախորժալուր անուն ստանա՝ տիրոջ նոր աստիճանին ու կոչմանը համապատասխան:

Այսպիսով, մի շարք անուններից հետո, երբ նա հորինում, մերժում ու փոփոխում էր, վերջապես որոշեց ձիուն Ռոսինանտ\* անունը տալ: Այս անունը նրան թվաց ազնիւ, ախորժալուր և նշանակալից, որ ցույց էր տալիս, թե նախկինում նա վատույժ ձի էր, իսկ այժմ՝ առաջին նժույզը աշխարհի երեսին: Չի ու համար, ըստ իր ճաշակի, անուն հնարելուց հետո՝ նա կամեցավ

\* Ռոսին կնշանակի՝ վատույժ ձի, իսկ անտի՝ առաջ: Իսպաներեն հնչում է՝ Ռոսինանտե:



իրեն համար էլ անուն հորինել: Մի շաբաթ էլ այս մտամտումքի մեջ անցկացնելուց հետո, վերջապես, վճռեց կոչվել դոն Կիխոտ\*:

Եվ ահա, երբ որ զենքը մաքրված էր, սաղավալտը՝ պատրաստ, ձին նոր անուն էր ստացել, ինքն էլ նորից մկրտվել, մնում էր գտնել մի տիկին, որին կարելի լիներ սիրահարվել, որովհետև թափառական ասպետն առանց սիրո միևնույն է, թե ծառն առանց տերևի ու պտուղի կամ մարմինն՝ առանց հոգու:

Նա ինքն իրեն ասում էր.

— Եթե որպես պատիժ իմ մեղքերի համար կամ թե իմ բախտից ես հանդիպելու լինեմ որևէ հսկայի, ինչպես միշտ պատահում է թափառական ասպետներին, և առաջին իսկ ճակատամարտում նրան թամբից վայր գցելու կամ միջից կես անելու լինեմ, հաղթեմ ու հպատակեմ, միթե վա՞տ կլինեմ, եթե մեկնումեկին նվեր ուղարկեմ նրան, որպեսզի ծնկի գա իմ սիրելի տիկնոջ առջև, հեզ ու խոնարհ ձայնով ասի՝ «Ըս Կրակուլիամբրո հսկան եմ, տիկին, Մալինդրանիա կղզու իշխանը: Ահասաստ մարտում հաղթված Մանչացի ասպետ դոն Կիխոտից, որի սխրագործությունները ամեն գովասանքից վեր են: Նա ինձ հրամայեց, որ ներկայանամ ձերդ ողորմածությունը, որպեսզի ձերդ մեծությունը տնօրինի իմ բախտը ըստ իր հայեցողության»:

Ա՛խ, ինչ ցնծությամբ էր մեր բարի ասպետն արտասանում այս ճառը և առավել ևս ցնծաց, երբ վերջապես գտավ, թե ով պիտի լինի իր սրտի տիրուհին:

Պատմում են, թե հարևան գյուղում մի շատ սիրունատես երիտասարդ գեղջկուհի կար, որին նա մի ժամանակ սիրահարված է եղել, թեև գեղջկուհին, ինչպես երևում է, բոլորովին չի իմացել այդ մասին:

Նրա անունը Ալդոնցա կորենցո էր: Ահա սրան մեր ասպետը որոշեց տալ իր սրտի տիկնոջ տիտղոսը: Եվ որոնելով նրա համար նոր անուն, որը նրա սեփական անունից շատ չզանազանվեր և համապատասխան լիներ իշխանուհու և ազնվական տիկնոջ, նա վճռեց անվանել՝ Դուլսինեսա Տոբոսցի, որովհետև աղջկա ծննդավայրը Տոբոսոն էր: Այդ անունը, հիդալգոյի կարծիքով, ախորժալուր, քնքուշ և իմաստալից էր, ինչպես և նրա մինչ այդ հնարած բոլոր անունները:

## ԳԼՈՒԽ II

### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է ՀԱՆՃԱՐԵՂ ԴՈՆ ԿԻՒՈՏԻ ԱՌԱՋԻՆ ԱՐԾԱՎԻ ՄԱՍԻՆ

Երբ որ նախապատրաստություններն ավարտված էին, դոն Կիխոտը վրճոնեց անմիջապես ձեռնամուխ լինել իր մտահղացումների կատարմանը: Նրան խթանում էր այն միտքը, թե իր ամեն մի հապաղումը մարդկությանը վնաս է հասցնում՝ քանի՛-քանի՛ վիրավորվածներ սպասում են վրեժխնդրության,

քանի՛-քանի՛ անարդարութիւն պետք է ուղղվի, քանի՛-քանի՛ իրավունք վերականգնվի, շարաշահութիւն ոչնչացվի, պարտք հատուցվի:

Եվ ահա՛ առանց մեկնումեկին իր մտադրութիւններին հաղորդակից անելու, մի գեղեցիկ առավոտ, լուսաբացից առաջ (հուլիսի ամենաշոգ օրերից մեկն էր) նա ամենքից գաղտնի զինվեց իր զենք ու զրահով, հեծավ իր Ռոսիանտին, գլխին դրեց իր խղճուկ սաղավարտը, ձեռքն առավ վահանը, նիզակը և անասունների բակի հետին դռնից դուրս եկավ դաշտ, ուրախ-զվարթ, որ այդքան հեշտ կարողացավ ձեռնամուխ լինել այնքան փառավոր գործի: Սակայն բաց դաշտ ելավ թե չէ, գլխիցը այնպիսի սարսափելի միտք անցավ, որ քիչ էր մնացել թողնել ձեռնարկած գործը՝ նա հիշեց, որ դեռևս ասպետ չի կարգվել և որ ասպետական կանոններով չի կարող, չպիտի հանդրգնի որևէ ասպետի հետ կռվի բռնվել: Իսկ եթե անգամ կարգված էլ լիներ, պետք է որ ճերմակ զրահ կրեր, իբրև նորընծա և իր վահանի վրա նշան չպիտի նկարեր, մինչև որ իր առաքինութեամբ արժանանար նշան կրելուն: Այդ խորհրդածութիւններից քիչ էր մնում, որ նրա վճռականութիւնը թուլանար: Բայց խելագարութիւնը հաղթահարեց բոլոր փաստարկումները, և նա որոշեց, որ ճանապարհին առաջին իսկ մարդը իրեն ասպետ կկարգի՝ ասպետներից շատերը այլ կերպ չեն վարվել, եթե հավատալու լինենք վեպերին, որ նրան այդ օրն էին գցել: Գալով ճերմակ զրահներին, նա ինքն իրեն խոսք տվեց առաջին իսկ պատեհ առիթով այնպես մաքրի իր զրահները, որ դրանք սամույրից էլ ճերմակ երևան:

Այս մտքից նա հանգստացավ և շարունակեց իր ուղին, միանգամայն անձնատուր լինելով իր ձիու կամքին. նրա կարծիքով, արկածների էութիւնն էլ հենց այդ է եղել:

Ամբողջ օրը մեր ասպետը գնում էր ու գնում և իրիկնադեմին ինքն էլ, ձին էլ ուժասպառվել ու սովամահ էին լինում: Վերջապես նա սկսեց դեսուդեն նայել՝ որևէ դղյակ կամ հովվի խրճիթ գտնելու հույսով, որպեսզի հանգիստ առնել ու կազդուրվել, և հանկարծ, ճամփից ոչ հեռու, մի իջևանատուն տեսավ: Նա ուրախացավ, կարծես թե ուղեցույց աստղ գտած լիներ, որն իրեն եթե ոչ պալատ, գեթ որևէ օթևան էր առաջնորդում:





Նա ձին քշեց և մոտեցավ իջևանատանը, երբ մութն արդեն ընկնելու վրա էր:

**8** Այդ միջոցին, պատահաբար, դարպասի մոտ երկու երիտասարդ աղջիկ կային կանգնած: Նրանք մի քանի ջորեպանների հետ ուղևորվում էին Սևիլիա

և իջևանել էին այստեղ: Իսկ որովհետև մեր արկածախնդրի աչքում այն ամենը, որ նա տեսնում, խորհում ու երևակայում էր՝ ներկայանում էր իրական և իր կարողացած վեպերի ոգով ու ձևով ստեղծված, ապա իջևանատունը տեսնելուն պես իսկույն վճռեց, թե՛ սա դրյակ է շորս աշտարակով, փայլուն արծաթից կապած կտուրով, շարժական կամրջով և խոր խրամատով, մի խոսքով՝ այն բոլոր պարագաներով, որ հիշատակվում են դրյակների նկարագրություններում:

Նա մոտեցավ իջևանատանը (որ նրան դրյակ էր թվում) և դարպասից մի քանի քայլ հեռու կանգնեցրեց Ռոսինանտին, որովհետև սպասում էր, որ աշտարակի ատամների արանքում որևէ թզուկ կերևա և փող կփչի, ազդարարելով ասպետի գալուստը:

Սակայն որովհետև թզուկը հապաղում էր, իսկ Ռոսինանտը՝ շտապում, որ գոմ հասնի, ապա դոն Կիխոտը մոտեցավ դարպասին և տեսավ այնտեղ կանգնած երկու աղջիկներին, նրա աչքում՝ շնաշխարհիկ տիկիներին, որ դուրս էին եկել դրյակի առջև զբոսանքի: Այդ իսկ վայրկյանին ինչ-որ մի խոզապան, արտերից խոզերի բուլուկը քշելիս՝ շվի փչեց, որ նրանց մեկտեղ հավաքի: Դոն Կիխոտը իսկույն երևակայեց, որ դա թզուկն է իր գալուստըն ազդարարում: Ուստի մեծ գոհունակությամբ մոտեցավ իջևանատանն ու տիկիներին: Սրանք էլ տեսնելով, որ ինչ-որ ձիավոր, տարօրինակ զինված, նիզակ ու վահանով, իրենց է մոտենում, երկյուղից ուզեցին ներս վազել: Սակայն դոն Կիխոտը, կռահելով, որ նրանք երկյուղից են փախչում, բարձրացրեց ստվարաթղթե երեսակալը և, ցույց տալով իր նիհար ու փողոտ դեմքը, ամենասիրալիք եղանակով և լրջորեն ասաց.

— Մի փախեք ինձնից, օրիորդներ, և միք վախենա որևէ վիրավորանքից, որովհետև ասպետական միաբանությունը, որին ես պատկանում եմ, անվայել է և անարժան վիրավորել որևէ մեկին, առավել ևս ձեզ նման ազնւրվազարմ օրիորդներին, ինչպես կարելի է ենթադրել ձեր տեսքից:

Կանայք աչքերը տնկեցին նրա վրա, աշխատելով լավ տեսնել նրա դեմքը, որ կիսով չափ ծածկված էր խղճուկ սաղավարտով:

Իսկ երբ նրանք լսեցին, որ անծանոթն իրենց օրիորդ անունով է մեծարում, չկարողացան իրենց ծիծաղը պահել և այնպես հռհռացին, որ դոն Կիխոտը, վերջապես, բարկացավ ու ասաց.

— Պարկեշտությունը գեղեցկության զարդն է, և ծայրաստիճան անվայել է չնչին պատճառից ծիծաղելը: Սակայն թող ասածս կշտամբանք կամ վիրավորանք չթվա, որովհետև իմ միակ ցանկությունն է ծառայել ձեզ:

Կանանց համար անհասկանալի այդ լեզուն և մեր ասպետի տարօրինակ արտաքինը կրկնապատկեցին նրանց ծիծաղն ու ասպետի բարկությունը, և անհայտ է, ինչով կվերջանար այդ ամենը, եթե այդ վայրկյանին չհայտնեի իջևանատեղը՝ մի շատ գեր, ուստի և շատ խաղաղասեր մարդ: Տեսնելով իր առջև այդ անճոռնի կերպարանքը, զինված այդքան պես-պես առարկաներով՝ թեթև վահանով, նիզակով, զենք ու զրահով, նա մեկ կամեցավ միանալ երկու աղջիկներին, սակայն մի քիչ վախենալով զենք ու զրահի այդ կույտից, որոշեց քաղաքավարի խոսել, և այսպես սկսեց.



— Եթե ձերդ ողորմածութիւնը, պարոն ասպետ, հաճի այստեղ իջևանել, դուք այստեղ ամեն բան կգտնեք, բացի մահճակալից:

Դոն Կիխոտը, տեսնելով, թե ամրոցի պետը ինչ ակնածութեամբ է հետը խոսում (որովհետև նա իջևանատիրոջը ամրոցի պետի տեղ էր դնում) պատասխանեց.

— Ինչ էլ ինձ առաջարկելու լինեք, պարոն ամրոցատեր, ես ամեն բանից գոհ կմնամ, որովհետև ինչպես ասվում է՝

Իմ հագուստը՝ զենքն է, դրահը,  
Իսկ հանգիստը՝ մարտը կատաղի:

Իջևանատերը բռնեց ասպանդակը, և դոն Կիխոտը իջավ ձիուց մեծ դժվարութեամբ ու ճիգ գործադրելով, որովհետև ամբողջ օրը բան չէր կերել: Ապա նա խնդրեց իջևանատիրոջից, որ շատ հոգատար լինի իր ձիու նկատմամբ, որովհետև աշխարհիս երեսին խոտաճարակ էակներից դա լավագույնն է:

Աչք գցելով Ռոսինանտի վրա, իջևանատերը նրան բնավ այնպիսի երեւելի ձի չտեսավ, ինչպես դոն Կիխոտն էր ասում: Զին գոմ տանելուց հետո նա վերադարձավ, որ հարցնի, թե հյուրը ի՞նչ կկամենար: Այդ պահին աղջիկները (որ արդեն հաշտվել էին նրա հետ) հանում էին նրա զենքուզրահը:

Նրանց հաջողվել էր հանել կրծքի և մեջքի զրահը, բայց արձակել վզակապի կոճակներն ու հանել անձոռնի սաղավարտը՝ միանգամայն անհնարին էր: Վերջինս կապած էր պարանոցին կանաչ ժապավենով և, որովհետև կապերն անկարելի էր արձակել, ապա մնում էր ժապավենը կտրել:

Սակայն դոն Կիխոտը դրան ոչ մի կերպ չէր ուզում համաձայնել: Այդպես էլ ամբողջ գիշեր մնաց սաղավարտը գլխին: Դժվար էր ավելի տարօրինակ և ծիծաղաշարժ պատկեր երևակայել:

Իջևանատան դարպասի առջև նրա համար սեղան դրեցին, որ զով լինի: Իջևանատերը բերեց մեկ բաժին վատ մաքրած և զզվելի խաշած ձուկ և մի կտոր հաց, նույնքան սև ու բորբոսնած, որքան զենքուզրահը:

Դժվար էր շփոթաղել, տեսնելով, թե նա ինչպես է ուտում, սաղավարտը գլխին, երեսակալը բարձրացրած: Նա իր ձեռքերով ոչ մի կտոր չէր կարող բերանը դնել և պետք էր, որ աղջիկներից մեկնումեկը մատուցեր նրան այդ ծառայութիւնը: Իսկ նրան փսմեցնելը ուղղակի անկարելի կլիներ, եթե իջևանատերը եղեգի մեջը չմաքրեր և մի ծայրը չդներ նրա բերանը, իսկ մյուսը՝ գինու մեջ: Դոն Կիխոտը այդ ամենը տանում էր մեծ համբերութեամբ, միայն թե սաղավարտի կապը չքանդեին:

Այդ միջոցին իջևանատանը մոտեցավ մի խոզարած և մի երեք-չորս անգամ փշեց իր եղեգնյա շվին: Դոն Կիխոտը վերջնականապես համոզվեց, որ հուշակավոր դղյակ է ընկել:

Մի բան էր միայն նրան վշտացնում, որ ինքը դեռ ասպետ չի կարգված: Նա համարում էր, որ իրավունք չունի արկածներ որոնելու, քանի դեռ չի պատկանում ասպետական դասին:



ԳԼՈՒԽ III

ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉ ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ԿԵՐՊՈՎ  
ԴՈՆ ԿԻՍՈՏԸ ԱՍՊԵՏ ԿԱՐԳՎԵՑ

Տանջվելով այդ մտքից, դոն Կիսոտը շտապեց ավարտել իր սուղ ընթրիքը, վեր կացավ, կանչեց իջևանատիրոջը և, տանելով նրան գոմ ու փակելով դուռը, ծնկի իջավ նրա առջև ու ասաց.

— Ես տեղիցս վեր չեմ կենա, արի ասպետ, մինչև որ դուք չկատարեք խնդիրքս, որով մտադիր եմ դիմելու ձեզ և որը կնպաստի ձեր փառքին և մարդկային ցեղի բարորությանը:

Տեսնելով, որ հյուրը ծնկաչոք է և լսելով նման խոսքեր, իջևանատիրը շփոթվեց, և նայում էր նրան, առանց իմանալու, թե ինչ ասի և ինչ անի: Ապա սկսեց թախանձել, որ դոն Կիսոտը վեր կենա, սակայն ապարդյուն: Նա չէր ուզում վեր կենալ, մինչև որ իջևանատիրը խոստացավ կատարել նրա խնդիրքը:

— Ես հավատացած էի, պարոն, որ դուք, անսահման բարի լինելով, չեք մերժի ինձ,— ասաց դոն Կիսոտը,— և դուք լայնասիրտ կերպով խոստացաք վաղը, արևածագին, ինձ ասպետ կարգել: Վերջապես կկատարվի իմ վառ փափագը, այսինքն՝ ես կկարողանամ, ինչպես հարկն է, արկածներ որոնել հօգուտ թույլերի, ինչպես պարտադրում է թափառական ասպետների կանոնադրությունը:

Մենք արդեն ասացինք, որ իջևանատիրը խելքը գլխին մարդ էր և նկատել էր, որ իր հյուրի ծերը պակաս է, և լսելով այդքան տարօրինակ խոսքեր, նա վերջնականապես համոզվեց այդ բանում, և, գիշերը զվարճացած լինելու համար, վճռեց թև տալ նրա խելագարությանը:

Ուստի պատասխանեց զոն Կիխոտին, թե նրա ցանկությունն ու խնդիրքը միանգամայն բանական են, թէ նման մտադրությունը միանգամայն բնական ու արժանի է այնպիսի մի ազնիվ ասպետի համար, ինչպիսին զոն Կիխոտն է, դատելով նրա արի արտաքինից և շարժումներից: Թե ինքն էլ երբ երիտասարդ հասակում անձնատուր է եղել այդ պատվաբեր գործին և թափառել է աշխարհիս զանազան կողմերում՝ արկածներ որոնելով, վարժվել է ոտքերի արագաշարժության և ձեռքերի հմտության մեջ, ի վերջո ծանոթացել է Իսպանիայի բոլոր դատարան հիմնարկություններին: Իսկ իր օրերի մայրամուտին բնակվել է այս ողջակում և ապրում է այստեղ, հյուրընկալելով բոլոր թափառական ասպետներին, ինչ կոչման ու կարողության տեր էլ լինեն նրանք, միմիայն հանդեպ նրանց տածած մեծ սիրուց դրդված, իհարկե պայմանով, որ ի տրիտուր իր լավ վերաբերմունքի, նրանք իրենց ունեցածից իրեն էլ բաժին հանեն:

Իջևանատերը ասաց նաև, որ զոն Կիխոտը գիշերը կարող է ողջակի բակում անցկացնել, իսկ վաղը կկատարվեն կարգման համար բոլոր պարտադիր արարողությունները, և նա այնպիսի ասպետ կկարգվի, որից լավը չի գտնվի արար աշխարհում:

Վերջապես նա հարցրեց՝ փող ունի՞ արդյոք զոն Կիխոտը: Դոն Կիխոտը պատասխանեց, թե գրոշ չունի, որովհետև ոչ մի վեպում չի կարդացել, որ թափառական ասպետները հետները փող ունենան:

Պետք էր հսկում կատարել զենքի առջև՝ իջևանատան մեծ բակում: Դոն Կիխոտը հավաքեց իր զենքուզրահը, դրեց ջրհորի բերնին և, բռնելով նիզակն ու վահանը, մեծ արժանապատվությամբ սկսեց ետ ու առաջ քայլել: Իջևանատերը պատմեց ամենքին, ովքեր իջևանել էին իր մոտ, հյուրի խելագարության մասին, զենքի առջև հսկում կատարելու մասին և ասպետ կարգվելու մասին:

Խելագարության այդ տարօրինակ տեսակից զարմացած՝ բոլորն էլ գնացին և հեռվից տեսան, որ մեր ասպետը մերթ ժանր ու հավասար ետ ու առաջ էր գնում, մերթ՝ հենված նիզակին, հառում էր աչքերը իր զենքուզրահին և երկա՛ր-երկա՛ր նայում:


Այնինչ գիշերը վրա էր հասել, և լուսինն այնպես պայծառ էր փայլում, որ շուրջը ցերեկվա պես լուսավոր էր, և հանդիսականներին երևում էր այն ամենը, ինչ որ անում էր ուխտի մեջ մտնել պատրաստվող մեր ասպետը:

Այդ միջոցին իջևանատանը գիշերող ջորեպաններից մեկի խելքին փչեց իր ջորիներին ջրել, իսկ ջրհորից ջուր հանելու համար պետք էր պոռնկից դեն քաշել զենքուզրահը:

Դոն Կիխոտը, լսելով ջորեպանի ոտնաձայնը, բացականչեց.

— Ով էլ որ լինես դու, հանդուգն ասպե՛տ, որ մեկնում ես ձեռքդ երբևէ սրով գոտեպնդված թափառական ասպետներից ամենաարիի զենքուզրահին, խորհիր նախապես, թե ինչ ես անում և չհամարձակվես ձեռք տալ, թե չէ հանդգնությանդ համար կվճարես քո կյանքը:

Ջորեպանը գլուխն էլ շուռ շտվեց և՛ զենքուզրահի փոկերից վերցնելով, մի կողմ շարտեց:



Տեսնելով այդ, դոն Կիխոտը աչքերը հառեց երկնքին, մի կողմ դրեց վահանը, երկու ձեռքով բարձրացրեց նիզակը և այնպիսի ուժով հարվածեց ջորեպանի գլխին, որ վերջինս փովեց գետին՝ ամենաողբալի վիճակում: Եթե նա մի հարված էլ հասցնելու լիներ, հակառակորդն այլևս բժշկի դիմելու կարիք չէր ունենա:



Իր գործը կատարելուց հետո դոն Կիխոտը հավաքեց զենքուզրահը, դրեց նախկին տեղը և վերսկսեց ետ ու առաջ քայլել նույնքան հանգիստ, որքան առաջ:

Մի քիչ հետո, եղելությունից միանգամայն անտեղյակ (որովհետև հարվածից շմած ջորեպանը ընկած էր մնացել) մի ուրիշ ջորեպան եկավ. նա նույնպես ուզում էր ջրել իր ջորիներին, և երբ ձեռքը մեկնեց զենքուզրահին, դոն Կիխոտը, առանց մի բառ արտասանելու, երկրորդ անգամ մի կողմ դրեց վահանը, երկրորդ անգամ երկու ձեռքով քաշեց նիզակն ու վար բերեց երկրորդ ջորեպանի գլխին այնքան հաջող, որ ոչ թե նիզակը երեք կտոր եղավ, այլ գանգը՝ չորս:

Աղմուկի վրա վազելվազ հավաքվեցին իջևանողները, նրանց հետ՝ նաև իջևանատերը:

Վիրավորված ջորեպանների ընկերները, տեսնելով յուրայիններին գետնին փռված՝ հեռվից սկսեցին քարկոծել դոն Կիխոտին, որը, ինչքան կարող էր, պաշտպանվում էր վահանով, բայց չէր հեռանում ջրհորից, չկամենալով լքել իր զենքուզրահը:

Իջևանատերը գոռում էր, որ ջորեպանները կռվին վերջ տան, քանի որ իրենց արդեն ասված է եղել, որ այդ մարդը խելագար է:

Իսկ դոն Կիխոտը ավելի բարձր էր բղավում, ամենքին ստոր, դավաճան անվանելով, իսկ զղյակի տիրոջը՝ չար ու նենգ, որովհետև թույլ է տալիս իր իսկ զղյակում այսպիսի վիրավորանքներ հասցնեն թափառական ասպետին: Եվ ավելացնում էր, որ եթե ինքն արդեն ասպետ կարգված լիներ, ապա կխրատեր նրան նման ստորության համար:

Այս ամենը նա այնքան խիզախ ու վճռական էր ասում, որ սաստիկ ահաբեկեց հարձակվողներին: Շնորհիվ իջևանատիրոջ հորդորի, նրանք դադարեցին քարկոծելը, ապա դոն Կիխոտը թույլ տվեց, որ հավաքեն վիրավորներին և վերսկսեց իր հսկումը զենքուզրահի առջև այնպիսի սառնասրտությամբ, ասես թե բան չէր պատահել:

Այս կատակները իջևանատիրոջը դուր չեկան, և գործին վերջ տալու համար նա վճռեց հյուրին անհապաղ ասպետ կարգել, քանի դեռ նոր աղետ չէր պատահել:

Ուստի, մոտենալով դոն Կիխոտին, ներողություն խնդրեց ստոր ուսմիկների լկտի վարմունքի համար, որ առանց իր գիտության է եղել, թեև նրանց հանդգնությունը չարաչար պատժված է: Ապա նա մեկ էլ կրկնեց, որ ասպետ կարգելու ողջ էությունը ծոծրակին՝ ձեռքով, ուսին՝ սրով հարված հասցնելն է, մի բան, որ կարելի է անգամ քաց դաշտում անել: Գալով զենքի առջև հսկում կատարելուն, ապա այդ էլ ավարտված պիտի համարել, քանի որ սովորաբար դա տևում է ընդամենը երկու ժամ, իսկ դոն Կիխոտը չորս ժամից ավելի է, ինչ հսկում է արթուն:

Դոն Կիխոտը այս ամենին հավատաց և պատասխանեց, որ պատրաստ է հնազանդելու և խնդրում է, որ ծեսը, ըստ կարելվույն, շուտ կատարվի, որովհետև եթե մեկնումեկի խելքին փշի դարձյալ հարձակվել իր վրա, նա զղյակում կենդանի շունչ չի թողնի, խնայելով միայն զղյակի տիրոջը՝ հարգանքից դրդված, և միմիայն նրանց, որոնց համար նա բարեխոս կլինի:

Վախեցած այս նախազգուշացումներից, ամբողջի տերն իսկույն գնաց բերեց տետրը, որի մեջ գրի էր առնում, թե ջորեպաններին ինչքան գարի ու դարման է բաց թողնում և, ուղեկցութեամբ մոմի կտոր բռնած մի տղայի և ւարդեն հիշատակված երկու աղջիկների, մոտեցավ դոն Կիխոտին, հրամայեց, որ նա ծնկի գա և ինչ-որ աղոթք ջերմեռանդութեամբ կարդալու ձև արեց: Ընթերցանութեան միջոցին նա հանկարծ տարավ-բերեց և խփեց դոն Կիխոտի ծոծրակին, ապա նրա իսկ թրով զարկեց ուսին, շարունակելով աղոթքի պես բան մոթմոթալ:

Այդ ամենից հետո առաջարկեց, որ տիկիններից մեկը գոտեպնդի սրով նորընծա ասպետին, մի բան, որ տիկինը կատարեց շատ վարժ ու զուսպ:

Երբ որ այս շտեմնված ծեսերը կատարված էին այսպիսի արագութեամբ, դոն Կիխոտն շտապեց ձի հեծնել՝ այնքան անհամբեր էր նա արկածախնդրութեան: Նա իսկույն թամբեց Ռոսինանտին, թռավ վրան և, գրկելով իջևանատիրոջը, շնորհակալություն հայտնեց իրեն ասպետ կարգելու համար այնպիսի արտասովոր ոճով, որ անհնար է վերարտադրել:

Իսկ իջևանատերը, որ ուրախ էր նրանից ազատվելու համար, պատասխանեց ավելի կարճ, բայց ոչ պակաս հոռոտրական ոճով, օթևանելու համար բան չվերցրեց և նրան բարի ճանապարհ մաղթեց:

#### ԳԼՈՒԽ IV

### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉ ՊԱՏԱՀԵՑ ՄԵՐ ԱՍՊԵՏԻՆ ԻՋԵՎԱՆԱՏՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒՑ ՀԵՏՈ

Լույսը բացվում էր, երբ դոն Կիխոտը դուրս եկավ իջևանատնից և այնքան գոհ, այնքան հպարտ, ուրախությունից այնքան հուզված՝ ասպետ կարգված լինելու համար, որ նրա ձիու կողերն էլ էին դա զգում:

Սակայն մտաբերելով իջևանատիրոջ խորհուրդները անհրաժեշտ պաշարի մասին, որ մարդ պիտի հետը վերցրած լինի՝ մանավանդ փող ու շապիկներ, նա վճռեց տուն դառնալ, որ ամեն ինչի պատրաստութուն տեսնի և, միաժամանակ, զինակիր գտնի: Այն էլ ասեմք, որ նա նկատի ուներ իր հարևան մի գյուղացու, աղքատ և մեծ ընտանիքի տիրոջ, բայց շատ հարմար՝ թափառական ասպետի զինակրի պաշտոնի համար:

Այս մտադրություններով նա շուռ տվեց Ռոսինանտի գլուխը դեպի գյուղ, և ձին, կարծես տիրոջ միտքն ըմբռնելով, այնպիսի պատրաստակամութեամբ և այնքան թեթև վազեց, ասես նրա սմբակները չէին էլ դիպչում գետնին:

Հազիվ էր դոն Կիխոտը մի քանի քայլ անցել, որ նրան թվաց, թե աջ կողմում գտնվող անտառի թավուտից թույլ ու աղեխարշ հեծեծանք է լսվում:

Լսելուն պես նա ասաց.

— Շնորհակալ եմ երկնքից ինձ առաքած ողորմածութեան համար: Ահա դեպքը բերում է ինձ կատարելու ասպետի պարտականությունը և քաղելու իմ ազնիվ որոշման պտուղը: Անտարակույս, իմ օգնութեան և պաշտպանութեան կարոտ որևէ տղամարդ կամ կին է հեծեծում:



Եվ, շուտ տալով Ռոսինանտի գլուխը, նա շտապեց դեպի այն կողմը, որտեղից հեծեծանքի ձայն էր գալիս: Հենց որ մտավ անտառ, տեսավ կաղնուց կապած մի մատակ, իսկ նրա կողքին մի ուրիշ ծառից կապած տասնհինգ տարեկան մի տղա, որ մինչև գոտկատեղը մերկ էր: Լաց լինողն էլ հենց սա էր և ոչ առանց պատճառի, որովհետև մի բռի գյուղացի նրան անխնա ծեծում էր կաշվե փոկով, յուրաքանչյուր հարվածի հետ խրատ ու խորհուրդ տալով.

— Աչքդ բաց պահիր, իսկ բերանդ՝ փակ:

Իսկ տղան պատասխանում էր.

— Էլ երբեք չեմ անի, տեր իմ, խոսք եմ տալիս, որ այսուհետև ավելի լավ կպահեմ հոտը:

Տեսնելով այս բարբարոսությունը, դոն Կիխոտը ցասկոտ ձայնով բացականչեց.

— Անարժան ասպետ, տմարդություն է հարձակվելը նրանց վրա, ովքեր ի վիճակի չեն պաշտպանվելու: Ձի հեծեք և նիզակ վերցրեք (գյուղացու նիզակը հենված էր նույն կաղնուն, որից կապած էր նրա ձին), և ես կապացուցեմ ձեր վարմունքի ողջ ստորությունը:

Տեսնելով իր գլխի վերև ինչ-որ կերպարանք, որի վրա զանազան զենքեր են կախված և որը քիչ է մնում նիզակը խրի իր փոքր, գյուղացին վճռեց, որ հասել է իր վախճանը, ուստի ահուղողով պատասխանեց.

— Պարոն ասպետ, այս տղան, որին ես պատժում եմ, իմ ծառան է, իմ ուխարներն է արածացնում այստեղից ոչ հեռու: Ես նրան պատժում եմ անփութության և ծուլության համար, իսկ նա դուրս է տալիս, իբրև թե ես այդ շարամտությամբ եմ անում, որ իր ոտճիկը կտրեմ: Աստված վկա, ես իմ հոգիս, սո՛ւտ:

— Սուտը դու ես, ստոր ու կոպիտ արարած,— բացականչեց դոն Կիխոտը:— Մեզ վրա լույս սփռող արևը վկա, ես իսկույն ևեթ նիզակով կխոցեմ քեզ: Անմիջապես վճարիր նրան առանց մի խոսք ասելու, թե չէ մեկ հարվածով քեզ շան սատակ կանեմ: Եվ արձակիր նրան, շո՛ւտ:

Գյուղացին գլուխը կախ ու լուռ արձակեց իր ծառային, իսկ դոն Կիխոտը հարցրեց տղային, թե տերն իրեն ինչքան է պարտք:



Տղան պատասխանեց, թե ինը ամսվա ոտճիկը, հաշվելով ամսական յոթ  
ոեալ:

Դոն Կիխոտը հաշվեց. դուրս եկավ վաթսուներեք ոեալ, և հրամայեց,  
որ գյուղացին իսկույն քսակը հանի կամ պատրաստվի մահվան:

Ահաբեկված գյուղացին երգվեց իրեն սպառնացող կործանումով, որ իր **17**  
2 Դոն Կիխոտ

պարտքը բնավ այդքան մեծ չէ, որ պետք է հաշվի առնել և այդ գումարից հանել երեք զույգ կոշիկի արժեքը, որ ծառան մաշել է, և երկու անգամ արյուն առնելու վճարը, որ արվել է նրա հիվանդութեան ժամանակ և նստել է մեկ ուսուցիչ:

— Ենթադրենք թե այդպես է,— պատասխանեց դոն Կիխոտը,— սակայն նրան անմեղ տեղը ծեծելով դուք լրիվ ստացել եք թե՛ կոշիկների, թե՛ արյուն առնելու համար: Որովհետև եթե նա քո կոշիկի կաշին է ճղել, ապա դուք նրա սեփական կաշին եք ճղել: Եթե սափրիչը նրա հիվանդութեան ժամանակ է արյուն առել, ապա դու առողջի արյունն ես առնում: Կնշանակի՞ տեղը դուրս է եկել:

— Ցավն այն է, պարոն ասպետ, որ մոտս փող չունեմ: Թող Անդրեսը հետս գա տուն, և ես կվճարեմ մինչև վերջին ուսուցիչ:

— Ե՛ս... նրա հետ տո՛ւն գնամ,— բացականչեց տղան:— Երբե՛ք, պարոն, մտքովս էլ չի անցնի: Հենց որ նրա հետ մենակ մնամ, նա իմ կաշին կքերթի:

— Նա այդ չի անի,— առարկեց դոն Կիխոտը,— իմ պատիվը կպահի: Թող միայն երդվի ասպետական ուխտով, որին պատկանում է, ես նրան բաց կթողնեմ և կերաշխավորեմ, որ կվճարի:

— Խորհեցեք, թե ի՞նչ եք ասում, ձերդ ողորմածություն,— ասաց տղան:— Իմ տերը իսկի ասպետ էլ չէ և ոչ մի ասպետական ուխտի մեջ չի մտնում: Նա Խուան Հալդադոն է, Կինտանար գյուղի հարուստներից:

— Անդրես, տղաս, ես չեմ հրաժարվում,— ընդհատեց նրան գյուղացին:— Արի գնանք, երդվում եմ աշխարհիս երեսին գոյություն ունեցող ասպետական բոլոր ուխտերով, որ, ինչպես ասացի, կվճարեմ մինչև վերջին ուսուցիչ, այն էլ նոր-նոր դրամներով:

— Շահը ներում եմ ձեզ,— ասաց դոն Կիխոտը:— Ես միանգամայն բավարարված կլինեմ, եթե դուք սովորական ուսուցիչներով վճարելու լինեք: Ձեր երդումը պահեք, հա՛, թե չէ ես ինքս եմ երդվում, որ կվերադառնամ, կգրտնեմ ձեզ և կպատժեմ: Դուք կարող եք մողեսի պես թաքնվել, միևնույն է, դարձյալ ես ձեզ կգտնեմ: Իսկ եթե հաճեիք իմանալ, թե ով է ձեզ հրամայողը, ապա իմացած եղեք (հիմա դուք ավելի եռանդուն կկատարեք ձեր խոստումը)՝ ես արի Դոն Կիխոտ Մանչացին եմ, անարգանք և անարդարություն պատճառողների վրիժառուն: Տերը ձեզ հետ, և միք մոռանա ձեր խոստումն ու երդումը, թե չէ պատիժը վրա կհասնի:

Այս խոսքերը բերնին՝ նա խթանեց Ռոսինանտին և արագ-արագ հեռացավ:

Գյուղացին նրան աչքերով ճամփա գցեց և համոզվելով, որ ասպետն անհետացավ անտառի թավուտում ու չի երևում, դարձավ իր ծառային ու ասաց.

— Ապա մոտ արի, Անդրես: Ես ուզում եմ վճարել քեզ պարտքս, ինչպես հրամայեց անարգանք պատճառողների վրիժառուն:

— Խոսք եմ տալիս ձեզ,— պատասխանեց Անդրեսը,— որ ձերդ ողորմածությունը շատ լավ կանի, եթե կատարի բարի ասպետի հրամանը: Աստված նրան հազար տարի կյանք տա իր արիության և արդար դատաստանի համար: Երդվում եմ, որ եթե դուք ինձ վճարելու չլինեք, նա իսկույն կվերադառնա և ձեր հախիցը կգա, ինչպես որ խոստացավ:

— Ես էլ եմ խոսք տալիս,— պատասխանեց գյուղացին:— Բայց որովհետև ես քեզ շատ եմ սիրում, ապա իսկույն պարտքս կավելացնեմ, որպեսզի հատուցումն էլ ավելի լինի:

Եվ, բռնելով տղայի թևից, դարձյալ կապեց նրան նույն կաղնուց և գանահարեց, հասցնելով կիսամեռ վիճակի:

Ահա այսպես արի ասպետ դոն Կիխոտ Մանչացին պայքարի մտավ անարդարության դեմ:

Շուտով դոն Կիխոտը հասավ մի տեղ, որտեղ ճամփան բաժանվում էր չորս ճյուղի: Նա իսկույն մտաբերեց, որ թափառական ասպետները, սովորաբար, կանգ առնելիս են եղել ճամփաբաժաններում և խորհել, թե որ ճամփով ընթանան: Որպեսզի նրանց օրինակին հետևած լինի, նա էլ մի պահ կանգ առավ, ապա բաց թողեց Ռոսինանտի սանձը, որը հավատարիմ իր սկզբնական մտադրության, բռնեց գոմը տանող ճամփան:

Մի երկու մղոն կտրելուց հետո դոն Կիխոտը նկատեց մարդկանց մի մեծ խումբ: Դրանք, ինչպես հետո պարզվեց, տուլեդոացի վաճառականներ էին և գնում էին Մուրսիա՝ մետաքս գնելու:

Վեց հոգի էին նրանք և գնում էին զլխներին հովանոց բռնած, ուղեկցությամբ չորս հեծյալ ծառաների և երեք ջորեպանների, որ ոտքով էին գնում:

Հաղիվ էր նրանց նշմարել դոն Կիխոտը, որ իսկույն երևակայեց, թե դա արկածի նոր առիթ է: Ուստի հպարտ ու խիզախ տեսքով ոտքերն ամրացրեց ասպանդակների մեջ, ավելի ամուր բռնեց նիզակը, կուրծքը ծածկեց վահանով և ճամփի մեջտեղում կանգնելով սպասեց, որ թափառական ասպետները մոտ գան (որովհետև վաճառականներին նա թափառական ասպետներ էր համարում):

Երբ որ նրանք մոտեցան այնչափ, որ կարող էին իրեն տեսնել և լսել ձայներ, դոն Կիխոտը բարձրաձայն ու հպարտ ասաց.

— Ոչ ոք ձեզնից մի քայլ առաջ չի անի, եթե լիսստովանի, որ ամբողջ աշխարհում ավելի գեղեցիկ կին չկա, քան աննման Դուլսինեա Տորոսցին:

Թե անծանոթի խոսքերից, թե կերպարանքից, վաճառականները կռահեցին, որ դա խելագար է: Սակայն նրանք կամեցան իմանալ, թե ինչո՞ւ է իրենցից այդպիսի խոստովանություն պահանջում, և նրանց միջից կատակասեր ու սրամիտ մեկը պատասխանեց.

— Պարոն ասպետ, մենք չենք ճանաչում այդ բարի տիկնոջը, որի մասին դուք խոսում եք: Յուլյց տվեք մեզ նրան և, եթե պարզվի, որ նա իրոք այդքան գեղեցիկ է, ինչպես դուք եք պնդում, մենք ամենայն սիրով և առանց որևէ հարկադրանքի կճանաչենք ճշմարտությունը և կատարած կլինենք ձեր պահանջը:

— Եթե ես նրան ձեզ ցույց տամ,— ասաց դոն Կիխոտը,— և դուք ընդունեք այդքան ակներև մի ճշմարտություն, ապա ի՞նչը կլինի ձեր արժանիքը: Ես պահանջում եմ ձեզնից, որպեսզի դուք հենց առանց նրան տեսնելու հավատաք, ճանաչեք, հաստատեք, երդվեք և պաշտպանեք այդ ճշմարտությունը: Հակառակ դեպքում ես ձեզ մարտի եմ կանչում, անճոռնի և ժպիրհ մարդուկներ: Դուրս եկեք կամ մեկ-մեկ, ինչպես պահանջում է ասպետական օրենքը, կամ բոլորդ միասին, ես սպասում եմ ձեզ և հուսով եմ, ըստ ար-

ժանվույն կդիմավորեմ ձեզ, հավատացած լինելով, որ կատարելապես արդարացի եմ:

— Պարոն ասպետ,— առարկեց վաճառականը,— բոլոր այս իշխաններին՝ իմ ուղեկիցների անունից աղաչում եմ ձերդ ողորմածութեանը, որպեսզի մենք մեր հոգու վրա մեղք վերցրած չլինենք, ընդունելով մի բան, որ երբեք չենք տեսել և որի մասին երբեք չենք լսել, ցույց տվեք այդ տիկնոջ որևէ պատկերը, անգամ եթե այդ պատկերը ցորենի հատիկից մեծ չլինի՝ չէ՞ որ ասվում է, թե փոքրիկ մի բրդից ճանաչվում է ոչխարը: Դա մեզ միանգամայն կհանգստացնի և կհամոզի, ձերդ ողորմածութունն էլ բավարարված կլինի, ստանալով ցանկացածը:

— Մտո՛ր սրիկա,— զայրույթով բռնկված գոչեց դոն Կիխոտը:

Եվ, ասելով այս խոսքերը, նա նիզակը ճոճեց և կատաղի ու ցասումնալից հարձակվեց իր խոսակցի վրա այնպես, որ եթե վերջինիս բախտից Ռոսինանտը ճամփի կեսին չսայթաքեր ու վայր չընկներ, ապա հանդուգն վաճառականի բանը բուրդ կլիներ:

Ռոսինանտը վայր ընկավ, և դոն Կիխոտը գլորվեց մի կողմ: Չնայած իր թափած ճիգերին, նա ոչ մի կերպ չկարողացավ ոտքի ելնել՝ այնքան էին խանգարում նիզակը, վահանը, խթանները, սաղավարտը և ծանր ու հնադարյան զենքուզրահը: Վեր կենալու ապարդյուն ճիգ թափելով, նա միաժամանակ շարունակում էր խոսել.

— Մի՛ք փախչի, վախկոտներ՛ր, անպիտաններ՛ր, սպասեցեք: Իմ մեղքը չէ, որ ես վայր ընկա, մեղքը իմ երիվարինն է:

Ջորեպաններից մեկը, որ, ըստ երևույթին, հեզ բնավորության տեր չէր, լսելով, որ վայր ընկած ասպետը շարունակում է լուտանք թափել իրենց գլխին, չհամբերեց և վճռեց, ի պատասխան, նրա բուրդը գզել: Նա մոտեցավ դոն Կիխոտին, խլեց նրա ձեռքից նիզակը, կտոր-կտոր արեց և մի կտորով սկսեց հարվածել մեր ասպետին այնպես, որ շնայած զրահին, ջարդեց նրան, ասես մի ջվալ ցորեն: Վաճառականները գոռում էին, որ նա դադարի, այլևս լիսի, բայց ջորեպանը ոգևորվել էր և չէր ուզում խաղին վերջ տալ, մինչև որ չսպառեց իր ցասումի ողջ պաշարը: Նիզակի կտորները մեկը մյուսի հետևից վերցնելով՝ նա կոտորում էր, հարվածելով գետնին փռված թշվառական ասպետի մեջքին, որը, շնայած կարկուտի պես տեղացող հարվածներին, չէր լուռ և շարունակում էր սպառնալ երկնքին, երկրին և նրանց, ում ավազակների տեղ էր դնում:

Վերջապես ջորեպանը հոգնեց, և վաճառականները շարունակեցին իրենց ճամփան: Ամբողջ ճամփորդության ընթացքում նրանք ասում ու խոսում էին ծեծ կերած ասպետի մասին:

Դոն Կիխոտը, տեսնելով, որ թշնամիները հեռացան, նորից վեր կենալու փորձ արեց: Սակայն եթե ողջ և առողջ չկարողացավ ոտի կանգնել, ապա հիմա ծեծված, կիսամեռ վիճակում ինչպե՞ս ելներ:

Այնուհանդերձ նա իրեն երջանիկ էր համարում, երևակայելով, որ հենց այդպիսի ձախորդություններ են պատահում թափառական ասպետներին և որ ամբողջ մեղքը ձիունն է: Միայն թե վեր կենալ նա դարձյալ չկարողացավ, այնքան էին ցավում ոսկորները:



## ԳԼՈՒԽ V

### ՈՐ ԾԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄԵՐ ԱՍՊԵՏԻ ՁԱՆՍՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Այդ միջոցին ճամփով մի գյուղացի էր անցնում, նույն գյուղի բնակիչ, որտեղից որ մեր ասպետն էր, և նրա դրացին: Նա վերադառնում էր շրաղացից, որտեղ ցորեն էր տարել:

Հանելով դոն Կիխոտի երեսակալը, որ շարդվել էր փայտի հարվածներից, գյուղացին սրբեց նրա փոշոտ դեմքը:

— Պարոն Կիխադա (որովհետև նա այդպես էր կոչվում, քանի խելքը տեղն էր և խաղաղ հիդալգոյից թափառական ասպետ չէր դարձել), այդ ո՞վ է ձերդ ողորմածության բուրդն այդպես գզել:

Քարի մարդը խնամքով հանեց նրա կրծկալն ու մեջկալը, որպեսզի տեսնի՝ վիրավորված հո չի՞: Սակայն ոչ վերք, ոչ արյուն չերևաց: Ապա բարձրացրեց նրան գետնից և մեծ դժվարությամբ նստեցրեց իր էշի վրա: Վերջապես հավաքեց զենքերը, անգամ նիզակի կտորները, կապեց այդ ամենը Ռոսինանտի թամբին, բռնեց ձիու սանձն ու էշի նոխտան և ճանապարհ ընկավ դեպի գյուղ, խորհելով խելագար խոսքերի մասին, որ արտասանում էր դոն Կիխոտը:

Գյուղացին հանգեց այն եզրակացության, որ իր հարևանը ցնդել է և շտապեց շուտ տուն հասնել, որովհետև դոն Կիխոտի երկար ու բարակ ճառերը ճանձրացնում էին:

Իրիկնադեմին նրանք հասան գյուղ: Սակայն գյուղացին սպասեց, որ բուրովին մթնի, որովհետև չէր կամենում, որ մեկնումեկը տեսնի մեր հիդալգոյին ծեծված և հազիվհազ նստած էշի վրա: Երբ որ, նրա կարծիքով, հարմար ժամանակ հասավ, մտավ գյուղը և դիմեց դոն Կիխոտի տունը: Այստեղ բուրովը շփոթմունքի մեջ էին: Եկել էին նրա երկու մտերիմ բարեկամները՝ տեղական



սափրիչն ու քահանան, և խոսում էին տնտեսուհու հետ, որ բարձրաձայն ասում էր:

— Ի՞նչ եք կարծում, ի՞նչ դժբախտութիւն կարող է եկած լինել մեր պարոնի գլխին: Ահա վեց օր է, ինչ անհետացել են նա էլ, նրա քնձոռտ ձին էլ, վահանն էլ, նիզակն էլ, զրահներն էլ: Ախ, ի՞նչ դժբախտ կին եմ եղել ես: Դա նույնքան ճիշտ է, որքան այն, որ մենք ծնվել ենք մեռնելու համար: Այն ասպետական անիծյալ գրքերը, որ սա հավաքում ու շարունակ կարդում էր, նրան խելագարեցրին: Հիմա ես հիշում եմ, թե քանի-քանի անգամ ինքն իր հետ խոսելիս ասում էր, թե մտադիր է թափառական ասպետ դառնալ, որպեսզի զանազան հրկրներ գնա արկածներ որոնելու համար: Սատանան տանի բոլոր այդ գրքերը, որ կործանեցին Մանչայի ամենախելոք գլուխը:

Նույնն էր ասում դոն Կիխոտի զարմուհին և ավելացնում.

— Գիտե՞ք, պարոն վարպետ Նիկոլաս (այդպես էր սափրիչի անունը), հաճախ քեռիս տարվում էր այդ անիծյալ վեպերի ընթերցանությամբ ու ձեռքն առնում սուրը և սկսում ծակծկել պատերը: Իսկ երբ որ բոլորովին ուժասպառ էր լինում, հայտարարում էր, թե չորս հսկա է սպանել, որոնցից յուրաքանչյուրի հասակը չորս անգամ բարձր էր աշտարակից: Հոգնածութիւնից նա քրտնաթոր էր լինում, իսկ ինքը պնդում էր, թե դա արյուն է հոսում իր վերքերից, որ ստացել է մարտի միջոցին: Ապա նա խմում էր մի մեծ գավաթ պաղ ջուր, թարմանում, հանգստանում և հայտարարում, որ դա ոչ թե ջուր էր, այլ թանկագին խմիչք, որ բերել էր մի հզոր կախարդ՝ իր բարեկամը: Սակայն այս ամենի մեղքը իմն է, որովհետև ես գլխի շնկա նախօրոք հաղորդել ձեզ քեռուս փելագարութեան մասին, չէ՞ որ դուք օգնած կլինեիք նրան, չէիք թողնի, որ հասնի այդ օրին, և այրած կլինեիք այս անօրեն գրքերը (իսկ նա դրանցից շատ շատ ունի), որովհետև դրանք միանգամայն արժանի են հրաճարակ լինելու:

— Ես էլ նույն կարծիքին եմ, — վրա բերեց քահանան, — և խոսք եմ տալիս, որ վաղն իսկ դրանք կրակի կմատնենք, որպեսզի էլ չմղեն ընթերցողներին դեպի այդպիսի գործեր, որպիսիք, երևի, հիմա կատարում է իմ խեղճ բարեկամը:

Դոն Կիխոտն ու նրա ուղեկիցը լսեցին այս բոլոր խոսակցութիւնները, և գլուղացու համար լրիվ պարզվեց իր հարևանի ցավը: Ուստի նա բարձրաձայն աղաղակեց.

— Բա՛ց արեք:

Չայնի վրա բոլորը դուրս վազեցին: Տղամարդիկ ճանաչեցին իրենց բարեկամին, կանանցից մեկը՝ իր տիրոջը, մյուսը՝ քեռուն, և բոլորը վրա տվին, որ գրկեն նրան, մինչդեռ նա մնացել էր էջի վրա նստած, որովհետև ոչ մի կերպ չէր կարողանում ցած իջնել:

— Բոլորդ էլ համբերեք, ես ծանր վիրավորված եմ իմ երիվարի պատճառով: Ինձ տարեք գրեք անկողին և, եթե հնարավոր է, իմաց տվեք իմաստուն Ուրգանդային\*, որ նա բուժի և կապի իմ վերքերը, — ասաց նա:

— Ի՞նչ դժբախտութիւն, տեսա՞ք, — բացականչեց տնտեսուհին: — Սիրտըս ճիշտ էր ասում, թե մեր պարոնի որ ոտն է կաղում: Համեցեք, ձեր գա-

լուստը բարի, ձերդ ողորմածություն, մենք կկարողանանք բժշկել ձեզ և առանց այդ Ուրգադաշի\*։ Մի անգամ էլ, հազար անգամ էլ անիծվեն այդ ասպետական գրքերը։ Ահա թե որտեղ հասցրին ձերդ ողորմածությանը։

Ապա նրանք դո՞ն Կիխոտին տարան դրեցին անկողին և ուզում էին կապել վերքերը, սակայն ոչ մի վերք չերևաց։ Նա բացատրեց, թե պարզապես իր երկվար Ռոսինանտի հետ գլորվել է գետնին՝ տասը հսկաների դեմ մարտնչելիս։ Ավելի հանդուգն ու կատաղի էակներ, նրա ասելով, աշխարհս չի ստեղծել։

— Պա՛-պա՛-պա՛-պա՛, — ընդհատեց քահանան, — գործը հսկաների՛ն հասավ։ Ազնիվ խոսք, վաղն ևեթ, արևը մայր շմտած, բոլոր գրքերն այրված կլինեն։

Նրանք սկսեցին դո՞ն Կիխոտին հարցուփորձ անել, սակայն սա չուզեց որևէ բան պատմել, միայն խնդրեց, որ ուտելու բան տան իրեն և հանգիստ թողնեն, որովհետև ամենից շատ ուտելու և քնելու կարիք ունի։

Նրա ցանկությունը կատարեցին։ Ապա քահանան մանրամասն հարցուփորձ արեց գյուղացուն, թե ինչպես գտավ դո՞ն Կիխոտին։ Գյուղացին պատմեց և կրկնեց բոլոր անմտությունները, որ մեր ասպետն ասում էր թե գետնին պառկած ժամանակ, թե էշով գալիս։

#### ԳԼՈՒԽ VI

### ՄԵԾ ՈՒ ԶՎԱՐՄԱԼԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՈՐԻՆ ԵՆԹԱՐԿԵՑԻՆ ՔԱՀԱՆԱՆ ՈՒ ՍԱՓՐԻՉԸ ՄԵՐ ՀԱՆՃԱՐԵՂ ՀԻՊԱԼԳՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Դո՞ն Կիխոտը դեռ քնած էր։ Քահանան խնդրեց նրա զարմուհուց այն սենյակի բանալին, որտեղ պահված էին գրքերը՝ այս մեծ դժբախտության մեղապարտները, և աղջիկը մեծ պատրաստակամությամբ հանձնեց բանալին։

Բոլորը, տնտեսուհու ուղեկցությամբ, ներս մտան և տեսան հարյուրից ավելի խոշոր, փառակազմ հատորներ և շատ ուրիշ՝ ավելի փոքր գրքեր։

Քահանան խնդրեց, որ սափրիչը մեկը մյուսի հետևից գրքերը տա իրեն, որպեսզի ինքը պարզի, թե դրանց մեջ ի՞նչ է խոսվում. չէ՞ որ կարող է պատահել, որ դրանցից մի քանիսը արժանի չլինեն հրկիզման։

— Չէ, չէ, — բացականչեց դո՞ն Կիխոտի զարմուհին, — պետք չէ խնայել դրանցից և ոչ մեկը, դրանք բոլորն էլ մեղավոր են։ Ամենից լավը այն կլինի, որ մենք լուսամուտից դուրս թափենք բակ, մի կույտ անենք և վառենք, կամ թե տանենք անասնաբակը և այնտեղ խարույկ վառենք։ Այնտեղից ծուխը մեզ չի անհանգստացնի։

Նույնն էր ասում նաև տնտեսուհին։

Գրքերը հանձնեցին տնտեսուհուն, իսկ գրքերի քանակը քիչ չէր, և տնտեսուհին, սանդուղքներով գնալ-գալուց ազատվելու համար, դուրս թափեց դրանք լուսամուտից։

\* Ուրգադա — Ուրդանդաշի աղավաղված անունն է, կնշանակի ծեր կին։



Այնուհետև քահանան ու սափրիչը որոշեցին պատ շարել և ծածկել գրադարանի դուռը այնպես, որ դոն Կիխոտը վեր կենալուց հետո այլևս չկարողանա գտնել գրքերը (ներանք հույս ունեին, որ, վերացնելով պատճառը, կվերացնեն նաև հետևանքները): Իրար մեջ պայմանավորվեցին ասել դոն Կիխոտին, որ մի կախարդ թոցրել է սենյակը, գրքերն էլ հետը: Այդ ամենը կատարվեց մեծ փութկոտությամբ:

Երկու օր անց դոն Կիխոտը վեր կացավ, և նրա առաջին գործը եղավ գնալ գրքերին նայել: Չգտնելով սենյակը, որտեղ գրքերն էին, նա սկսեց թափառել տնով մեկ և որոնել բոլոր սենյակներում: Նա մոտենում էր այն տեղին, որտեղ առաջ դուռ կար, մատներով ձեռք էր տալիս և աջ ու ձախ նայում:

Վերջապես երկար որոնելուց հետո հարցրեց տնտեսուհուն, թե ո՞ր կողմն է իր մատենադարանը:

Տնտեսուհին, նախապես դիտենալով, թե ինչ պիտի ասի, պատասխանեց.

— Մատենադարանս ո՞րն է: Այդ ինչն՞ր եք որոնում, ձերդ ողորմածություն: Էլ ոչ մատենադարան է մնացել, ոչ գիրք, որովհետև դեն ամեն ինչ տարել է:

— Իսկ էլ դեր չի, — առարկեց զարմուհին, — այլ կախարդը, որ եկավ մի գիշեր, ամպի վրա բազմած, ձերդ ողորմածության այստեղից գնալուց հետո: Նա իջավ վիշապից, որի վրա հեծել էր, ներս մտավ ձեր մատենադարանը և չգիտեմ, թե ինչ արեց-չարեց այնտեղ, միայն թե մի պահ անց նա դուրս թռավ կտուրից, իսկ տունը լցվեց ծխով: Երբ մենք սիրտ արինք նայելու, թե ինչ է արել այնտեղ, արդեն ոչ գիրք կար, ոչ սենյակ: Ես էլ, տնտեսուհին էլ, միայն մի բան ենք լավ հիշում՝ երբ որ այդ շար ծերուկը թռչում-գնում էր, նա բարձրաձայն գոչեց, թե՛ սենյակի տիրոջը ինքը մեծ վնաս հասցրեց, որը հետագա-

յում կիմացվի: Դրան նա ավելացրեց, որ ինքը կոչվում է իմաստուն Մունյատուն:

— Ֆրեստոն կասեն,— ընդհատեց դոն Կիխոտը:

— Ես ի՞նչ իմանամ,— պատասխանեց աղջիկը,— Ֆրեստոն է, թե Ֆրիտոն, հիշում եմ միայն, որ անունը վերջանում էր առն-ով:

— Այդպես է, որ կա,— ասաց դոն Կիխոտը,— դա մի իմաստուն կախարդ է, իմ սխերիմ թշնամին, որովհետև իր արհեստի և գրքերի շնորհիվ իմացել է, թե հասնելու է ժամը, և ես մենամարտելու եմ մի ասպետի հետ, որին նա հովանավորում է, և թե ինձ վիճակված է հաղթել, հակառակ նրա բոլոր ճիգերին, ու հիմա աշխատում է ինձ ամեն տեսակ անախորժություն պատճառել: Սակայն հավատացնում եմ, որ նա սխալվում է և չի խուսափի նախահանամությունից:

— Ո՞վ կարող է կասկածել որ,— ասաց զարմուհին:— Սակայն, ձերդ ողորմածություն, քեռի ջան, ո՞վ է ստիպում ձեզ մտնելու բոլոր այդ կռիվների մեջ: Ավելի լավ չի՞ տանը խաղաղ նստեք, քան թափառեք աշխարհով մեկ, մեր ցորենի հացից առավել լավը որոնելու համար: Հո գիտե՞ք՝ պատահում է, որ մարդ բողբի հետևից է ընկնում և ինքն է խուզված վերադառնում:

— Ախ, զարմուհիս,— բացականչեց դոն Կիխոտը,— ինչ թյուր ես ըմբռնել դու այդ բանը: Մինչև ինձ խուզեն, ես ինքս կպոկեմ բոլորի մորուքը, ովքեր միայն երևակայեն իմ մի հատիկ մազին դիպչել:

Տնտեսուհին ու դոն Կիխոտի զարմուհին որոշեցին այլևս չառարկել, որպեսզի չգրգռեն նրա զայրույթը:

## ԳԼՈՒԽ VII

### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է ՓԱՌԱՊԱՆԾ ԱՍՊԵՏ ԴՈՆ ԿԻՒՈՏ ՄԱՆՉԱՑՈՒ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՎԻ ՄԱՍԻՆ

Դոն Կիխոտը կես ամիս խաղաղ նստեց տանը, ոչ մի բանով չարտահայտելով իր առաջվա գժուկությունները շարունակելու ցանկությունը: Այդ օրերի ընթացքում նա քանիցս զվարճալի գրույցներ ունեցավ իր երկու բարեկամների՝ քահանայի և սափրիչի հետ այն մասին, թե աշխարհս ոչ մի բանի այնքան կարիք չունի, ինչքան թափառական ասպետների և թե ինքը պիտի հարուստն տա թափառական ասպետությանը:

Քահանան մեկ ընդդիմախոսում էր նրան, մեկ էլ առերես համաձայնում, որովհետև առանց այդ խորամանկությունը բանեցնելու հնարավոր չէր լինի ապացուցելու նրան իր մոլորությունը:

Այդ ընթացքում դոն Կիխոտն սկսեց համոզել մի գյուղացու, իր հարևանին, բարի մի մարդու, բայց ծերը պակաս: Վերջ ի վերջո նա այնքան համոզեց, այնքան խոսեց ու բաներ խոստացավ, որ խեղճ գյուղացին համաձայնեց գնալ նրա հետ՝ որպես զինակիր: Ի միջի այլոց, դոն Կիխոտը նրան խորհուրդ տվեց երկար ու բարակ շխորհել և անմիջապես ելնել թափառելու, որովհետև

կարող է այնպիսի արկած պատահել, որ ինքը մի կղզի կնվաճի և նրան կառավարիչ կնշանակի:

Այս և նման խոստումներից ոգևորված Սանչո Պանսան (այսպես էր գլուղացու անունը) թողեց կնոջն ու երեխաներին և մտավ ծառայութեան իր հարևանի մոտ, իբրև զինակիր:

Ապա դոն Կիխոտն սկսեց փող հավաքել՝ մի բան ծախեց, մյուսը՝ գրավ դրեց, և մեծ վնասով բավական գումար հավաքեց:

Բացի այդ, նա իր մի բարեկամից փոխ վերցրեց կլոր վահան, մի կերպ կարգի բերեց ջարդված սաղավարտը և նախագգուշացրեց իր զինակիր Սանչոյին, որ այսինչ օրն ու ժամին ինքը մտադիր է ճամփա ընկնել, որպեսզի նա էլ պատրաստութուն տեսներ: Դոն Կիխոտը հատկապես պնդում էր, որ Սանչոն շմոռանա ճամփորդական պայուսակ վերցնելու:

Վերջինս խոստացավ, որ չի մոռանա և ասաց, որ իր երևելի էշն էլ կվերցնի հետը, որովհետև ոտքով գնալու համար իր կազմվածքն այնքան էլ հարմար չէ: Այդ հանգամանքը մի քիչ շփոթեցրեց դոն Կիխոտին, և նա աշխատում էր մտաբերել՝ ունեցե՞լ են արդյոք թափառական ասպետները զինակիրներ, որոնք էշով են գնալիս եղել, բայց նրա միտքը ոչ մի այդպիսի դեպք չէր գալիս:

Այնուհանդերձ նա համաձայնվեց, հավատացած լինելով, որ առաջին իսկ հարմար դեպքում, առաջին իսկ հանդիպման պահին որևէ անպատկառ ասպետի հետ, կխլի նրա ձին և այդ ավելի պատվավոր կենդանուն կտա իր զինակիրին: Վերջապես, նա շապիկների և այլ անհրաժեշտ իրերի պաշար տեսավ, հետևելով իջևանատիրոջ խորհուրդներին:

Երբ որ ամեն ինչ պատրաստ էր, մի գիշեր նրանք երկուսով աննկատ դուրս եկան գյուղից: Սանչոն անգամ մնաք բարով շասաց կնոջն ու երեխաներին, իսկ դոն Կիխոտը՝ տնտեսուհուն ու զարմուհուն: Ողջ գիշերը նրանք առաջ ընթացան, այնպես որ երբ լույսը բացվեց, այլևս երկյուղ չկար, որ նրանց կարող են գտնել, եթե որոնելու էլ լինեն:

Սանչո Պանսան, պայուսակով ու տիկով բեռնավորված, այնպես էր բազմել էշի վրա, ասես պատրիարք լիներ: Նա շատ անհամբեր էր խոստացված կղզու կառավարիչ դառնալու համար: Դոն Կիխոտը պատահամբ ձիու գլուխը շուռ տվեց այն ճամփի վրա, որով նա գնացել էր առաջին անգամ, միայն թե հիմա ավելի հաճելի էր, որովհետև ժամը վաղորդյան էր և արևի շեղ ճառագայթները նրան չէին անհանգստացնում:

Այստեղ Սանչո Պանսան ասաց իր տիրոջը.

— Տեսեք, հա՛, ձեր ողորմածութուն, պարոն թափառական ասպետ, շմոռանաք ձեր խոստումը կղզու մասին: Ինչքան էլ մեծ լինի, ես գիտեմ, թե ինչպես կկառավարեմ:

Դոն Կիխոտը դրան պատասխանեց.

— Իմացած եղիր, իմ բարեկամ Սանչո Պանսա, որ հին ժամանակների թափառական ասպետների մեջ շատ տարածված սովորույթ է եղել նշանակել իրենց զինակիրներին նվաճած կղզիների կամ թագավորութունների կառավարիչ, և ես հաստատ որոշել եմ այդ գովելի սովորույթը վերականգնել: Ավելին կասեմ, ես կամենում եմ ավելի հեռուն գնացած լինել. իմ նախորդները, երբեմն կամ ավելի ճիշտ՝ միշտ, սպասում էին, որ իրենց զինակիրները ծե-

րանան և ծառայութիւնից ուժասպառվեն, շատ դժնդակ օրեր և առավել վատթար գիշերներ անցկացնեն, ապա շնորհում էին նրանց որևէ հովտի կամ գավառի մարկիզութիւն կամ կոմսութիւն և նույնիսկ ավելի պակաս բան: Իսկ ես, եթե մենք երկուսս էլ կենդանի մնացինք, հնարավոր է, որ մի վեց օրից նվաճեմ այնպիսի թագավորութիւն, որին հպատակված լինեն մի քանի ուրիշները և որը քեզ ավելի հարմար գա, կտամ քեզ, թագադրելով քեզ արքա: Զկարծես, թե ես շափազանցում եմ՝ թափառական ասպետներին այնպիսի պատմութիւններ ու դեպքեր են պատահում, որ ոչ ոք ո՛չ տեսել է, ո՛չ երևակայել: Այնպես որ ես հեշտութեամբ կարող եմ նվիրել քեզ խոստացածիցը և ավելին:

— Ասել է թե,— պատասխանեց Սանչոն,— եթե, ոնց որ ձերդ ողորմածութիւնն է ասում, հրաշքով թագավոր դառնամ, իմ կնիկս էլ թագուհի՞ կդառնա, զավակներս էլ թագածառանգնե՞ր:

— Ի՞նչ կասկած,— պատասխանեց դոն Կիխոտը:

— Ես էլ չեմ կասկածում,— պատասխանեց Սանչո Պանսան,— մանավանդ որ այնպիսի հզորազոր տեր ունեմ, ինչպես ձերդ ողորմածութիւնն է՝ անշուշտ դուք ինձ կնվիրեք այն, ինչ որ ավելի հարմար ու հաճելի լինի ինձ համար:

#### ՔԱՌԻՍ VIII

ՓԱՌԱՎՈՐ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՏԱՐԱՎ ԱՌԻ ԴՈՆ ԿԻՍՈՏԸ  
ՀՈՂՄԱՂԱՑՆԵՐԻ ԴԵՄ ՄՂԱԾ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԵՎ ԱՆԵՐԵՎԱԿԱՅԵԼԻ  
ՄԱՐՏՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ԵՎ ԱՅԼ ԱՆՑՔԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՐԺԱՆԻ  
ԵՆ ՀԱԾԵԼԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ

Այստեղ դաշտի մեջ նրանք տեսան երեսուն թե քառասուն հողմաղաց:  
Նկատելով դրանք, դոն Կիխոտն ասաց իր զինակրին.

— Բարի բախտը ավելի լավ է դասավորում մեր գործերը, քան մենք կարող էինք ցանկանալ: Նայիր այն կողմ, Սանչո Պանսա, բարեկամ, տեսնո՞ւմ ես երեսուն, գուցե էլ ավելի ահեղ հսկաներին: Իսկույն ես կմարտնչեմ նրանց դեմ և կկոտորեմ բոլորին, մինչև վերջինը: Այս ավարը կդառնա մեր հարստութեան սկիզբը: Որովհետև արդար և հաճո է աստծուն այն մարդը, որ սույն շար սերմը վերացնի աշխարհիս երեսից:

— Ի՞նչ հսկաներ են որ,— հարցրեց Սանչո Պանսան:

— Այն, որ քո առջևն են,— պատասխանեց դոն Կիխոտը:— Տեսնո՞ւմ ես, ի՞նչ ահագին ձեռքեր ունեն: Ոմանց ձեռքերի երկարութիւնը գրեթե երկու մղոն է:

— Զգուշացեք, ձերդ ողորմածութիւն, այն, ինչ երևում է, իսկի էլ հսկաներ չեն, այլ հողմաղացներ, իսկ այն, ինչ դուք ձեռքերի տեղ եք դնում, թևեր են, որ պտույտ են գալիս քամուց. և պտտացնում աղացքարերը:

— Իսկույն երևում է,— պատասխանեց դոն Կիխոտը,— որ արկածների գործում դու դեռ անփորձ ես: Հսկանե՛ր են: Եվ եթե դու վախենում ես, ապա



մի կողմ քաշվիր և աղոթք ասա, իսկ ես այդ միջոցին անհավասար և ահեղ մարտի կելնեմ նրանց դեմ:

Ու նա խթանեց Ռոսինանտի կողերը, առանց ուշ դարձնելու Սանչոյի ճիշերին, որը հավատացնում էր, թե նա ոչ թե հսկաների վրա է հարձակվելու, այլ՝ հողմաղացների: Դոն Կիխոտը հաստատ համոզված լինելով, որ իր առջև հսկաներ են, ականջ չդրեց զինակրի ճիշերին: Նա առաջ էր սլանում, բարձրաձայն բացականչելով.

— Միք փախչի, վատհոգի և ստոր արարածներ, որովհետև ձեզ վրա հարձակվողը մեն-մենակ ասպետ է:

Այդ միջոցին թեթև քամի բարձրացավ, և ահագին թևերն սկսեցին պրտըտվել: Նկատելով այդ, դոն Կիխոտը շարունակեց.

— Եթե դուք ավելի շատ ձեռքեր ունենայիք, քան հսկա Բրիարեյը և թափահարերիք, դարձյալ հատուցումից չէիք խուսափի:

Այս ասելով և հոգին իր տիրուհի Դուլսինեային պահ տալով, նա, վահանով պաշտպանված, նիզակը ճոճելով, բաց թողեց Ռոսինանտի գլուխը, հարձակվեց ամենամոտիկ հողմաղացի վրա և նիզակը խրեց նրա թևը: Այդ բոպեին քամին թափով պտույտ տվեց թևը, և թևը, փշուր-փշուր անելով նիզակը, քաշեց իր հետևից և ձիուն, և ձիավորին, որոնք ամենաթշվառական վիճակում թռան բավականին հեռու:

Սանչոն, իր էջի ողջ արագությամբ, շտապեց տիրոջը օգնության և մոտենալով, համոզվեց, որ տերն ի վիճակի չէ տեղից շարժվելու՝ այնքան ուժղին էր նա գետին տապալվել Ռոսինանտի հետ:

— Չերդ ողորմածություն, — բացականչեց Սանչոն, — չէի՞ ասում, որ դրանք հողմաղացներ են: Ախր դա միայն այն մարդու համար չի պարզ, որի գլուխը ջրաղաց է:

— Լոիր, Սանչո բարեկամ,— պատասխանեց ղոն Կիխոտը:— Ռազմական արհեստը, ավելի քան որևէ այլ բան, ենթակա է բախտի փոփոխականության: Մանավանդ որ իրոք հենց այդպես է. այդ կախարդ Ֆրեստոնը, որ թոցրեց իմ առանձնասենյակն ու գրքերը, հսկաներին էլ հողմաղացներ դարձրեց, որպեսզի հաղթանակի փառքից ինձ զրկած լինի՝ այդ աստիճան զորեղ է նրա թշնամանքը դեպի ինձ: Սակայն վաղ թե ուշ նրա շար կախարդանքը տեղի պիտի տա իմ թրին:

Սանչոն օգնեց իր տիրոջը վեր կենալ և նորից հեծնել Ռոսինանտին, որի առջևի ոտքերը գրեթե շարդված էին: Զրուցելով այդ արկածի շուրջ, նրանք առաջացան Պուետրո Լապիսի ճամփով, որովհետև, ղոն Կիխոտի ասելով, աշտեղ նրանց սպասում էին բազմաթիվ ու զանազան արկածներ, քանի որ ճամփան շատ բանուկ է: Մի բան միայն նրան վիշտ էր պատճառում՝ նիզակի կորուստը:

— Ես հավատում եմ այն ամենին, ինչ որ ձերդ ողորմածությունը պատմում է,— ասաց Սանչոն:— Միայն թե շիտակ նստեցեք, թե չէ կարծես բոլորովին կախ ընկած լինեք մի կողքի՝ երևի վայր ընկնելը ձեզ սաստիկ ցավ է պատճառել:

— Այո, դա ճիշտ է,— պատասխանեց ղոն Կիխոտը,— և եթե ես չեմ գանգատվում ցավից, պատճառն այն է, որ թափառական ասպետներին վայել չէ գանգատվել վերքերից, թեկուզ նրանց աղիքները դուրս գալու լինեն:

— Դե որ այդպես է, ես ասելիք չունեմ,— պատասխանեց Սանչոն,— թե ես ավելի գոհ կլինեի, եթե ձերդ ողորմածությունը գանգատվեր, երբ որ մի տեղը ցավելու լիներ: Գալով ինձ, ես ամենաչնչին ցավից կճշամ, եթե միայն չգանգատվելու կանոնը չի վերաբերում նաև թափառական ասպետների զինակիրներին:

Դոն Կիխոտը շկարողացավ ծիծաղը պահել իր զինակրի պարզամտությունից և բացատրեց, որ նրան թույլ է տրվում տնքալ երբ և ինչպես կամենա, ունենալով պատճառ, թե առանց պատճառի, քանի որ ասպետական գրքերում նա մինչև հիմա հակառակ ցուցումների չի հանդիպել:

Սանչոն նկատեց, որ արդեն մի բան ուտելու ժամանակ է: Դոն Կիխոտը պատասխանեց, թե ինքը առայժմ չի ուզում, բայց Սանչոն կարող է ուտել, երբ որ կամենա: Տիրոջ թույլտվությունն առնելով, Սանչոն ավելի հարմար նստեց էշի վրա և, պայուսակից հանելով իր պատրաստած պաշարը, սկսեց ուտել, շաքունակելով դանդաղ գնալ ղոն Կիխոտի հետևից: Մերթ ընդ մերթ նա այնպիսի հաճույքով էր բերանը դնում գինու տկին, որ նրան կնախանձեր Մալագայի ամեն մի միկիտանչի: Այսպես համրաքայլ, տմբտմբալով և կում-կում գինի խմելով, նա իսպառ մոռացավ բոլոր խոստումները, որ տվել էր իրեն ղոն Կիխոտը: Նրան թվում էր, թե արկածներ որոնելը, անգամ վտանգավոր արկածներ, բնավ աշխատանք չէ, այլ զուտ հաճույք:

Վերջապես, երբ վրա հասավ գիշերը, մեր ճամփորդները պառկեցին ծառերի տակ, և ղոն Կիխոտը, կոտրելով մի շորացած ճյուղ, կպցրեց դրան երկաթի ծայրը, որ պոկել էր կոտրված նիզակից:

Այդ ամբողջ գիշեր ղոն Կիխոտը աչքը չփակեց, խորհելով իր սրտի տիկնոջ՝ Դուլսինեայի մասին, որպեսզի ոչ մի բանով տարբերված չլինի այն



ասպետներին, որոնց մասին կարդացել էր վեպերում: Քանի՛-քանի՛ գիշերներ են անքուն անցկացրել նրանք անտառներում և անապատներում, խորասուզված հուշերի մեջ իրենց տիկիներին մասին:

Բոլորովին այլ կերպ անցկացրեց գիշերը Սանչոն: Նրա փորը լիքն էր, այն էլ ոչ թե դատարկ ջրով, ուստի նա մեռածի պես քնեց մինչև առավոտ: Եթե դոն Կիխոտը նրան քանիցս ձայն տված չլիներ, նա չէր զարթնի ոչ արևվի ճառագայթներից, որ ընկել էին երեսին, ոչ էլ բազմաթիվ թռչունների ճովողունից, որ խնդությամբ ողջունում էին նոր օրվա ծագումը:

Իսկ վեր կենալով, նա նախ և առաջ բերանը տարավ տկին և, նկատելով, որ երեկվա պես կլորիկ չէ, վշտացավ, որովհետև նրան թվում էր, որ այդ պակասը չի հաջողվի շուտով լրացնել:

Դոն Կիխոտը չկամեցավ նախաճաշել, ինչպես մենք արդեն ասացինք, նա սնվում էր լոկ քաղցր հուշերով:

Նրանք առաջ ընթացան Պուետրո Լապիսի ճամփով և ժամը երեքին մոտ հասնում էին կիրճին: Հեռվից կիրճը տեսնելուն պես դոն Կիխոտը ասաց.

— Այստեղ, եղբայր Սանչո Պանսա, մենք կարող ենք մեր ձեռքերը մինչև արմունկ կոխել արկած ասածիդ մեջ: Սակայն նկատի ունեցիր՝ աշխարհիս ինչ շարաշար վտանգների մեջ էլ ընկնելու լինեմ, դու չպիտի թուր քաշես ինձ պաշտպանելու համար, բացառությամբ միայն, եթե տեսնելու լինես, որ վրաս հարձակվող թշնամին ամբոխ է, թշվառ խուժան: Այդ դեպքում միայն դու կարող ես ինձ օգնության հասնել: Իսկ եթե նրանք ասպետներ լինեն, ապա ասպետական օրենքներով ոչ մի դեպքում վայել չէ և ոչ էլ թույլատրելի, որ դու ինձ օգնես, քանի որ դու դեռ ասպետ չես կարգված:

— Կարող եք, պարոն, ապահով լինել,— պատասխանեց Սանչոն,— այդ հարցում ես կհնազանդեմ ձերը ողորմածության, մանավանդ որ խաղաղ բնավորության տեր մարդ եմ և չեմ սիրում տուրուղմիոցի մեջ խցկվել: Բայց խղճի մտոք ասած՝ եթե հարկ լինի կաշիս պաշտպանելու, այն ժամանակ ոչ մի ասպետական օրենքի դնչին մտիկ չեմ տա, որովհետև և աստվածային, և մարդկային օրենքները թույլ են տալիս պաշտպանվելու վիրավորողներին:

— Նույնն էլ ես եմ ասում,— պատասխանեց դոն Կիխոտը:— Հիշիր միայն, որ եթե կամենալու լինես ինձ պաշտպանել ասպետներից, դու պետք է սանձահարես քո բնական մոլեգնությունը:

— Խոստանում եմ,— ասաց Սանչոն,— կկատարեմ այդ պատվիրանը նույն սրբությանը, ինչպես կիրակի օրն եմ պահում:

Այսպես խոսելով, նրանք ճամփին հանդիպեցին երկու վարդապետի, որ ուղտերի շարձը ջորիներ էին հեծել: Նրանք ճամփորդական ակնոցներ էին դրել և հովանոց բռնել: Նրանց հետևից ընթանում էր մի կառք, շրջապատված շորս թե հինգ ձիավորներով: Ինչպես հետագայում պարզվեց, կառքով ինչ-որ բիսկայեցի տիկին էր գնում Սևիլիա, ամուսնու մոտ:

Վարդապետները, թեև նույն ճամփով էին գնում, ինչ որ տիկինը, բայց նրա հետ ոչ մի կապ չունեին: Դոն Կիխոտը նրանց տեսավ թե չէ, ասաց իր զինակրին.

— Եթե ես չեմ սխալվում, մեզ այնպիսի՛ նշանավոր արկած է սպասում, որպիսին դեռևս ոչ ոք չի տեսել, որովհետև սև կերպարանքները, որ երևում

են, անկասկած, կախարդներ են, որոնք ինչ-որ իշխանուհի են փախցրել և տանում են կառքով: Ես պիտի լարեմ բոլոր ուժերս, որպեսզի այս շար գործը խափանեմ:

— Դա հո հողմաղացներից վատ կլինի,— պատասխանեց Սանչոն:— Մի՞թե չեք տեսնում, պարոն, որ ձեր առջև վարդապետներ են, իսկ կառքով, երևի, ճամփորդներ են գնում:

— Ես արդեն ասացի քեզ, Սանչո,— պատասխանեց դոն Կիխոտը,— որ դու արկածներից բան չես հասկանում: Իմ ասածը ճիշտ է, և դու իսկույն կհամոզվես:

Այս խոսքերով նա առաջ անցավ և կանգ առավ ճամփի մեջտեղում, որտեղից պիտի անցնեին վարդապետները, և երբ նրանք այնքան մոտեցան, որ կարող էին լսել իր խոսքերը, բարձրաձայն աղաղակեց.

— Օհ, դո՛ւք, դժոխքի սերունդ, իսկույն ևեթ ազատեցեք իշխանուհիներին, որոնց բռնի տանում եք կառքով, թե չէ պատրաստվեցեք շուտափույթ մահվան, որպես ձեր եղբունագործության արժանի պատիժ:

Վարդապետները ջորիների նոխտաները քաշեցին և կանգ առան, զարմացած դոն Կիխոտի թե տեսքից, թե խոսքից, և այսպիսի պատասխան տրվին.

— Պարոն ասպետ, մենք բնավ դժոխքի սերունդ չենք, այլ վարդապետներ: Մենք ճամփորդում ենք մեր գործերով և բան չգիտենք այս կառքով իշխանուհիներ փախցնելու մասին:

— Դուք ինձ անուշ խոսքերով չեք խաբի: Ես ձեզ լավ եմ ճանաչում, ըստոր սրիկաներ,— առարկեց դոն Կիխոտը:

Եվ, առանց պատասխանի սպասելու, նա խթանեց Ռոսինանտին և ցած թեքելով նիզակը, այնպիսի կատաղի արիությանմբ հարձակվեց առաջին վարդապետի վրա, որ եթե վերջինս ինքն իրեն ջորուց գետին չնետեր, ապա դոն Կիխոտը նրան անշուշտ վայր կզցեր թամբից և ծանր վերք կհասցներ, կամ էլ նույնիսկ կսպաներ:

Երկրորդ վարդապետը, տեսնելով, թե ինչպես են վարվում իր ուղեկցի հետ, կրունկները խրեց իր գեր ջորու կողերը և քամուց արագ սլացավ դեպի դաշտ:

Սանչո Պանսան, նկատելով, որ վարդապետը պառկած է գետնին, թեթև թռավ էջից և վազեվազ մոտենալով նրան, սկսեց հանել շորերը: Այդ միջոցին մոտ եկան վարդապետներին հետևող երկու ծառաները և հարցրեցին Սանչոյից, թե ինչո՞ւ է հանում նրա շորերը: Սանչոն պատասխանեց, որ ըստ օրինաց ավարն իրեն է պատկանում, որովհետև իր տեր դոն Կիխոտը հաղթել է մարտում:

Շառաները, որ կատակ չէին հասկանում և զաղափար շունեին, թե ավարըս որն է, մարտս որը, նկատելով, որ դոն Կիխոտը ծովեց մի կողմ և սկսեց խոսել կառքում նստածների հետ, վրա տվին, Սանչոյին գրորեցին գետին, փետտեցին նրա մորուքը և այնպես ջարդեցին, որ խեղճի շունչը կտրվեց:

Իսկ ահ ու սարսափով բռնված վարդապետը, առանց մի վայրկյան կորցնելու, հեծավ ջորուն և, մեռելի պես գունատ, քշեց իր շորքոտանուն դաշտ, որտեղ պատկառելի հեռավորության վրա սպասում էր ուղեկիցը, տարակու-



սանքի մեջ, թե ինչո՞վ է վերջանալու այս փորձանքը: Ապա, առանց սպասելու այս պատմության վախճանին, նրանք երկուսով էլ առաջ սլացան:

**32** Իսկ դո՞ն Կիխոտը, ինչպես արդեն ասացինք, սկսեց զրուցել կառքում նրստած աիկնոջ հետ:

— Ձեր գեղեցկությունը, տիրուհիդ իմ, — ասում էր նա, — ազատ է հիմա տրամադրել իր անձը, որպես կամենա, որովհետև ձեզ փախցնողներին հանդգնությունը կաշկանդված է արդեն իմ բազկի գործությամբ: Եվ, որպեսզի ձեզ վիշտ չպատճառի ձեր փրկչի անունը չիմանալը, ես կասեմ, որ իմ անունը դոն Կիխոտ Մանչաջի է: Ես թափառական ասպետ եմ, արկածախնդիր, գերված գեղանի և աննման Դուլսինեա Տոբոսցով: Իբրև վարձ այն ծառայության համար, որ ես հիմա ձեզ մատուցեցի, ձեզնից միայն մեկ բան կխնդրեմ՝ գնացեք Տոբոսո և պատմեցեք նրան, թե ինչ եմ արել ձեզ ազատելու համար:

Կառքին ուղեկցող ծառաներից մեկը ուշի-ուշով լսում էր դոն Կիխոտին: Տեսնելով, որ նա չի ուզում թողնի կառքն առաջ ընթանա և պահանջում է, որ իսկույն ետ դառնան Տոբոսո, մոտեցավ դոն Կիխոտին և բռնելով նրա նիզակը ասաց.

— Գնա բանիդ, ասպետ, թե չէ քեզ տեղնուտեղը շան սատակ կանեմ: Դոն Կիխոտը մեծ արժանապատվությամբ պատասխանեց.

— Թշվառ արարած, եթե դու ասպետ լինեիր, ես կպատժեի քո հանդրգնությունն ու լրբությունը:

— Ինչպես թե ես ասպետ չեմ: Նետիր նիզակդ, հանիր թուրդ, ու ես քեզ ցույց կտամ, որ քո կատուն ջուրը կընկնի\*:

— Դու իսկույն այդ կտեսնես, — պատասխանեց դոն Կիխոտը և, դեն շարտելով նիզակը, թուրը քաշեց, ծածկվեց վահանով ու հարձակվեց հակառակորդի վրա՝ նրան սպանելու հաստատ մտադրությամբ: Սա ուզեց իր ջորուց ցած իջնել, բայց դա նրան չհաջողվեց, և նա ժամանակ ունեցավ միայն թուրը պատյանից հանելու: Նրա բախտից կառքը հենց կողքին էր կանգնած, որտեղից դուրս քաշեց մի բարձ, օգտագործելով այն վահանի փոխարեն: Եվ ահա մեր հակառակորդները կանգնեցին դեմառդեմ, որպես երկու մահացու թշնամիներ:

Ներկաները կամեցան նրանց հաշտեցնել, բայց գործը գլուխ չեկավ, որովհետև դոն Կիխոտի հակառակորդը երդվում էր, որ եթե իրեն խանգարեն մարտն ավարտելու, ապա նա իր տիրուհուն էլ կսպանի, և բոլորին էլ, ովքեր միջամտելու լինեն: Կառքում նստած տիկինը, ապշած ու ահաբեկված այդ տեսարանից, հրամայեց, որ կառապանը մի քիչ դենը քշի ու սկսեց հեռվից հետևել կատաղի մարտին: Այդ վայրկյանին ծառան դոն Կիխոտի վահանի վրայից այնպիսի մի հարված հասցրեց նրա ուսին, ձր եթե վահանը խանգարած չլիներ, մեր ասպետի ուսն անշուշտ մինչև գոտին կկտրվեր:

Դոն Կիխոտը, շժմած կատաղի հարվածից, բարձրաձայն գոչեց.

— Օ, Դուլսինեա, իմ հոգու հատոր, ծաղիկ գեղեցկության, հասեք օգնության ձեր ասպետին, որ ձեր մեծամեծ առաքինություններին արժանանալու համար ընկել է այս ահավոր վտանգի մեջ:

Այդ ասելը, թուրը քաշելը, վահանով ծածկվելը և հարձակվելը մեկ եղավ:

---

\* Այս արտահայտությունը հետևյալ խաղից է առաջ եկել: Երկու կատունների պոչեր կապում են իրար և դնում են առվի մի ափին՝ մեկին, մյուս ափին՝ մյուսին: Կատունները սկսում են իրար քաշել: Որը կարողացավ մյուսին քաշել և հետևաբար ջուրը գցել, նա համարվում է հաղթող:

Դոն Կիխոտը վճռել էր ամեն ինչ վտանգել գործը մեկ հարվածով վերջացնելու համար:

Մտռան իր հակառակորդի ամենի տեսքից կռահեց նրա ասասաստ մտադրությունը և երզվեց՝ ո՛չ նվազ քաջությամբ դիմադրել: Բարձով լավ ծածկված՝ նա սպասում էր թշնամուն, տեղում կանգնած, անկարող լինելով իր ջորու գլուխը ծռել ոչ աջ, ոչ ձախ, որովհետև կենդանին ի վիճակի չէր քայլ անգամ անելու. այնքան էր հյուծված և անսովոր նմանօրինակ խաղերի:

Ուրեմն, ինչպես ասացինք, դոն Կիխոտը հարձակվեց հակառակորդի վրա, բարձրացնելով սուրը և պատրաստվելով նրան միջից երկու կես անել, իսկ նրա հակառակորդը սպասում էր, դեմ անելով բարձր և նույնպես թուրը քաշած. մինչդեռ հանդիսատեսները, ահից շնչարգել, սպասում էին, թե վերջապես երբ պիտի իջնեն օդում սպառնալիորեն կախված այս սրերը:

Առաջինը ջորեպանը հարվածեց, այն էլ այնպիսի ուժով ու կատաղությամբ, որ եթե թուրը նրա ձեռքում շուռ չգար, այդ մի հատիկ հարվածը վերջ կտար ոչ միայն նրանց դժնդակ մենամարտին, այլև մեր ասպետի բոլոր արկածներին: Սակայն հետագա մեծ գործերի համար դոն Կիխոտին պահպանող բարի բախտը շուռ տվեց նրա հակառակորդի ձեռքում թուրն այնպես, որ հարվածը դիպավ մեր ասպետի ձախ ուսին և մեծ վնաս չհասցրեց: Միայն թե այդ ուսից պոկվեցին բոլոր գրահները և կտրվեցին վահանի մի մասն ու ականջի կեսը: Այդ բոլորը շոինդ ու շառաչով ընկան գետին, և մեք ասպետը մնաց շատ տխուր վիճակում:

Տեր աստված, կգտնվի այնպիսի մի մարդ, որ կարողանար արժանավոր կերպով նկարագրել այն կատաղությունը, որով լցվեց մեր Մանչացու սիրտը, երբ տեսավ, թե իրեն ինչ օրն են գցել: Գալով ինձ, կասեմ միայն, որ դոն Կիխոտը նորից կիսականգնեց ասպանդակների վրա, երկու ձեռքով ավելի ուժգին սեղմեց թուրը և այնքան կատաղի հարվածեց հակառակորդի բարձին ու գլխին, որ խեղճին, շնայած որ լավ ծածկված էր, թվաց, թե մի ամբողջ սար է փլվել իր վրա: Նրա քթից, բերանից ու ականջներից արյուն հոսեց, նա երբ-րաց և անշուշտ վայր կընկներ, եթե չփաթաթվեր ջորու պարանոցին: Չնայած դրան, նրա ոտքերը դուրս պրծան ասպանդակներից, ձեռքերը կախ ընկան, իսկ ջորին, վախեցած այս սարսափելի հարվածից, սլացավ դաշտ քացի-քացի տալով և վերջ ի վերջո նրան գցեց գետին:

Դոն Կիխոտը դիտում էր այս ամենը խորապես հանգիստ, իսկ երբ նրա հակառակորդը վայր ընկավ, նա ձիուց ցած թռավ, արագ վազեց նրա մոտ և, թրի ծայրը նրա երկու աչքերի մեջտեղը դնելով՝ հրամայեց, որ անձնատուր լինի, թե չէ գլուխը կկտրի:

Պարտված հակառակորդն այն աստիճան շշմած էր, որ չկարողացավ խոսք անգամ արտասանել, իսկ ցասումն այնպես էր կուրացրել դոն Կիխոտին, որ ջորեպանի բանը, անշուշտ, վատ կլիներ. եթե կառքի տիկիները, որոնք հեհեհ հետևում էին մենամարտության ընթացքին, շմտենային մեր ասպետին և թախանձագին չխնդրեին, որ, իբրև ողորմածութուն, իրենց շնորհվի ծառայի կյանքը:

Ի պատասխան՝ դոն Կիխոտը ծանր ու արժանապատվությամբ լի ասաց. — Իհարկե, գեղեցիկ տիկիներ, ես մեծ ուրախությամբ կկատարեմ ձեր

Խնդիրքը: Բայց մեկ պայման կզնեմ՝ այս ասպետը պիտի խոստանա ինձ, որ կերթա Տորոսո կոչվող գյուղը և կներկայանա աննման տիրուհի Դուսինեային, որը կտնօրինի նրա բախտը, ինչպես կամենա:

Ահաբեկված ու վշտացած տիկիները, կարգին գլխի շքնկնելով, թե ինչ է պահանջվում իրենցից, անգամ հարցուփորձ չանելով, թե ինչ ազգ ու տակից է այդ Դուսինեան, խոստացան, որ իրենց զինակիրը ճշտությամբ կկատարի նրա հրամանը:

— Հավատ ընծայելով ձեր խոսքին,— ասաց դոն Կիխոտը,— ես նրան այլևս վնաս չեմ տա, թեև նա շատ և շատ արժանի է դրան:

## ԳՂՈՒՄ IX

### ԴՈՆ ԿԻՒՍՈՏԻ ԵՎ ՆՐԱ ԶԻՆԱԿԻՐ ՍԱՆՉՈ ՊԱՆՍԱՅԻ ՍՐԱՄԻՏ ԶՐՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Սանչո Պանսան, որ վարդապետների ծառաներից լավ ծեծ էր կերել, վերջապես տեսնելով, որ մարտն ավարտված է, և իր տերը կամենում է հեծնել Ռոսինանտին, վազ տվեց՝ ասպանդակը բռնի, բայց նախքան տերը ձի կհեծներ, չոքեց նրա առջև, բռնեց ձեռքը, համբուրեց ու ասաց.

— Հաճեցեք, ձերդ ողորմածություն, տեր իմ դոն Կիխոտ, ինձ կառավարիչ կարգել այն կղզու, որ դուք նվաճեցիք այս դաժան մարտում: Ինչքան էլ նա մեծ լինի, զգում եմ ես, որ կկարողանամ կառավարել նույնքան լավ, որքան աշխարհիս բոլոր մյուս կղզիների վարչապետները:

Դոն Կիխոտը դրան պատասխանեց.


— Նկատի առ, եղբայր Սանչո, որ այս արկածը, ինչպես և սրա նման մյուսները, կղզի շահելու արկածներ չեն: Ճամփաբաժիններում կարող են քո գլուխը ջարդել, կամ ականջդ կտրել, բայց դու մեջտեղ բան չես շահի: Համբերիր մի քիչ. մենք այնպիսի արկածներ էլ կունենանք, որ թույլ կտան ինձ ոչ միայն քեզ կառավարիչ կարգել, այլև ավելի բարձր պաշտոն տալ:

Սանչոն ջերմագին շնորհակալություն հայտնեց, մի անգամ էլ համբուրեց նրա ձեռքն ու օգնեց, որ նա հեծնի Ռոսինանտին, իսկ ինքը թռավ էջի վրա և գնաց տիրոջ ետևից: Դոն Կիխոտը, կառքում նստած տիկիներին այլևս ոչ մի խոսք չասելով, անգամ հրաժեշտ չտալով, արագ քշեց ձին և մտավ մոտակա անտառը:

Սանչոն, տիրոջը հետևելով, լիսկլիսկում էր իր ողջ արագությամբ վազող էջի վրա: Սակայն Ռոսինանտը այնքան արագ էր վազում, որ Սանչոն շուտով ետ մնաց և ստիպված ձայն տվեց տիրոջը, որ սպասի իրեն:

Դոն Կիխոտը, նրա ձայնն առնելով, քաշեց Ռոսինանտի սանձը, մինչև որ հոգնած զինակիրը հասավ իրեն ու ասաց.

— Թվում է ինձ, տեր իմ, որ մենք խելացի վարված կլինենք, եթե պատրասարվեինք որևէ եկեղեցու: Չէ՞ որ այն մարդը, որի դեմ դուք նոր մարտընչեցիք, այնպիսի ողբալի վիճակում մնաց, որ զարմանալի չի լինի, եթե



այդ անցքի լուրը Սանտա Հերմանդադին\* հասնի և այն ժամանակ մեզ կկալանավորեն, իսկ բանտ որ նստեցրին, աստված վկա, շատ քրտինք պիտի թափենք, որ այնտեղից դուրս գանք:

— Լռի՛ր,— ասաց դոն Կիխոտը:— Այդ որտե՞ղ ես դու տեսել կամ կարդացել, որ թափառական ասպետներին արյունահեղության համար դատի ենթարկեն:

— Արյունահեղության մասին ես բան չգիտեմ,— պատասխանեց Սանչոն,— և ես երբեք այդ գործով չեմ զբաղվել: Գալով տուրուդմիոցին, գիտեմ, որ Սանտա Հերմանդադը դրանով շատ է հետաքրքրվում, մնացյալի մասին չեմ խոսում:

— Մի վշտանար, բարեկամս,— ասաց դոն Կիխոտը,— ես քեզ ոչ թե Հերմանդադի, նույնիսկ քաղաքացիների ձեռքից կազատեմ: Բայց խղճի մտոք ասա ինձ՝ տեսե՛լ ես դու երբևիցե աշխարհիս երեսին ինձնից ավելի խիզախ ասպետ: Կարդացե՛լ ես դու վեպերում, որ որևէ ասպետ ավելի արիություն ցուցաբերած լինի հարձակվելիս, ավելի համառություն՝ պաշտպանվելիս, ավելի մահաբեր լինի հարվածելիս և ավելի ճկուն՝ թամբից ցած գլորելիս:

— Ճիշտն ասած,— պատասխանեց Սանչոն,— կյանքումս ոչ մի վեպ չեմ կարդացել, որովհետև ես կարդալ-գրել չգիտեմ: Բայց գրագ կգամ, որ ավելի արի տիրոջ, քան ձերդ ողորմածությունն է, ես կյանքումս չեմ ծառայել, և, տա աստված, որ այդ արիության համար մենք նեղը չընկնենք: Սակայն խնդրում եմ, ձերդ ողորմածություն, հոգացեք ձեր մասին. ախր ձեր ականջից սաստիկ արյուն է գալիս: Բարեբախտաբար, պայուսակիս մեջ վիրակապ ու սպիտակ սպեղանի կա:

\* Սանտա Հերմանդադ կնշանակի՝ սուրբ միաբանություն, որ ունեկր դատարաններ և գյուղական պահակներ՝ հանցադործներին դատելու և պատժելու համար:

Սանչոն պայուսակից հանեց վիրակապն ու սպեղանին: Բայց երբ դոն Կիխոտը նկատեց, թե ինչ դրության է հասել իր սաղավարտը, քիչ մնաց աշափափվելու: Ձեռքը թրին դնելով և աչքերը հառելով երկինք, նա արտասանեց.

— Երդվում եմ, այսուհետև այնպիսի կյանք վարել, ինչպես մեծ մարկիզ Մանտուանացին, երբ նա երդվեց իր զարմիկ Բալդովինի մահվան վրեժը լուծել, այսինքն՝ սփռոցից հաց չճաշակել, շանել շատ ուրիշ բաներ, որ թեև ես հիմա մոռացել եմ, սակայն դնում եմ երդմանս մեջ, մինչև որ վրեժս չլուծեմ նրանից, ով նման վիրավորանք հասցրեց ինձ:

— Ձերդ ողորմածություն, Կիսկոյե, գրողը տանի այդ տեսակ երդումները,— վրա բերեց Սանչոն:— Նրանք վնաս են տալիս առողջությանը և անհանգստացնում խիղճը: Թե չէ, ասացեք ապա՝ ի՞նչ կլինի, եթե, դիցուք, բազմաթիվ օրերի ընթացքում մեզ ոչ մի սաղավարտավոր մարդ չհանդիպի. ի՞նչ պիտի անենք մենք: Մի՞թե դուք կատարելու եք ձեր երդումը, հակառակ բոլոր անհարմարություններին և անախորժություններին, այն է՝ շորերը հագիդ քնես, գյուղերում չգիշերես և քեզ հազար ու մի ուրիշ փորձությունների ենթարկես, որ հիշատակել է այդ խելքը թոցրած Մանտուանացին, ի՞նչ է, ձերդ ողորմածությունը կամենում է նրա երդումը վերականգնեցնել: Այն էլ մտածեցեք, ձերդ ողորմածություն, որ բոլոր այս ճամփաներով գնում են ոչ թե զինված մարդիկ, այլ ջորեպաններ և կառապաններ, որոնք ոչ միայն սաղավարտ չեն կրում, այլև գուցե իրենց օրում չեն էլ լսել դրա մասին:

— Սխալվում ես,— առարկեց դոն Կիխոտը,— երկու ժամ չի քաշի, և մենք այս խաչաձևվող ուղիներում բազմաթիվ զինված մարդկանց կհանդիպենք:

— Էհ, լավ, թող ձեր ասածը լինի,— ասաց Սանչոն:— Միայն թե կղզի նվաճելու ժամը շուտ հասնի:

— Ես արդեն ասել եմ քեզ, Սանչո, որ կարիք չունես դրա համար անհանգիստ լինելու: Կղզի չեղավ, որևէ թագավորություն հո կգտնվի, այն էլ քո չափսին, ոնց որ մատանին՝ մատիդ: Սակայն այդ թողնենք, մենք դեռ ժամանակ կունենանք դրա մասին խոսելու, իսկ հիմա տեսնենք, թե քո պայուսակում ուտելու պաշար կա՞: Կազդուրվենք և իսկույն գնանք որևէ դղյակ որոնելու, որ գիշերն անցկացնենք:

— Մոտս ընդամենը մի գլուխ սոխ, մի կտոր պանիր և մի քանի կտոր հաց կա,— պատասխանեց Սանչոն:— Սակայն այս ամենը ձերդ ողորմածության պես արի ասպետի համար անվայել ուտելիք է:

— Դու ամենևին բան չես հասկանում,— բացականչեց դոն Կիխոտը:— Իմացած եղիր, Սանչո, թափառական ասպետի առաքինությունն այն է, որ ամիսներով բան չուտի, իսկ եթե ուտելու էլ լինի, ապա ուտի ձեռքն ընկած բանը: Դու կատկած չէիր ունենա, եթե այնքան վեպեր կարդացած լինեիր, որքան ես, և թեև ես շատ եմ կարդացել, բայց չեմ հիշում, որ ասպետը երբեքցե ան կերպ ուտելիս լինի, քան բոլորովին պատահամբ և միմիայն ճոխ խնջույքներում, որ սաքքված են լինում նրա պատվին: Մնացած օրերը ասպետները ծաղիկների բույրով հո չէի՞ն սնվում: Իհարկե, պետք է ենթադրել, որ նրանք այնուամենայնիվ մի բան ուտում էին և բավարարում մնացյալ



բնական պահանջները, քանի որ ի վերջո նրանք էլ մեզ նման մարդիկ են: Իսկ որովհետև նրանք իրենց կյանքի մեծ մասը անտառներում և անապատներում են անցկացրել, ապա խոհարարներ չէին ունենում և, պետք է ենթադրել, որ նրանց սովորական սնունդը գեղջկական հասարակ սնունդ է եղել, հիմա ինձ առաջարկածիդ պես մի բան: Ուստի, Սանչո բարեկամ, թող քեզ շվշտացնի այն, ինչ ուրախացնում է ինձ, մի աշխատիր նոր-նոր բաներ հնարել և թափառական ասպետներին ճամփից շեղել:

— Ներեցեք ինձ, ձերդ ողորմածություն, — ասաց Սանչոն, — ես ոչ գրել գիտեմ, ոչ էլ կարդալ, ինչպես մի անգամ արդեն ասել եմ, ուստի ասպետական պաշտոնի կանոններն էլ երբեք չեմ կարդացել: Այսուհետև ես պայուսակիս մեջ ամեն տեսակ շոր պտուղների պաշար կպահեմ ձեզ համար, որովհետև ձերդ ողորմածությունն ասպետ է, իսկ ինձ համար, — քանի որ ասպետ չեմ, — որսի միս և ընդհանրապես ավելի էական բաներ:

— Իմ ասածը բոլորովին այն չէր, Սանչո, — առարկեց դոն Կիխոտը, — որ թափառական ասպետները պարտավոր են միայն շոր միրգ ուտել: Ես միայն նկատեցի, որ նրանք սովորաբար դրանով են սնվել, մեկ էլ մի քանի տեսակ դաշտային բանջարներով, որ գիտեին գտնել դաշտերում: Ես էլ դա լավ գիտեմ:

— Օգտակար բան է ճանաչել այդ բանջարները, — ասաց Սանչոն, — որովհետև, ինչպես ինձ թվում է, այդ գիտությունը մի օր մեզ պետք կգա:

Այստեղ նրանք պայուսակից հանեցին իրենց պաշարը և երկուսով, հաշտ ու խաղաղ, սկսեցին ուտել: Սակայն գիշերվա օթևան գտնելու ցանկությունից դրդված՝ նրանք կարճեցին իրենց շոր ու ցամաք ճաշը, իսկույն նստեցին մեկն՝ իր երիվարը, մյուսն՝ իր էջը և քշեցին, հուսով, որ մինչև մութն ընկնի հասնեն բնակելի մի վայր: Սակայն արևը մայր մտավ և նրա հետ անհետացավ ցանկացածին հասնելու հույսը, իսկ որովհետև նրանք այժմ արածացնողների վրանների մոտ էին, ուստի որոշեցին հենց այստեղ էլ կանգ առնել: Որքան Սանչոն վշտանում էր, որ գյուղ հասնել չկարողացան, այնքան դոն Կիխոտը, ընդհակառակը, ուրախ էր բաց երկնքի տակ գիշերը անցկացնելու մըտքից, որովհետև ամեն անգամ, երբ այդպիսի բան էր պատահում, նա դա հաջողության նշան էր համարում, որը հաստատում էր իր ասպետական իրավունքները:

## ԳԼՈՒԽ X

### ԹԵ ԻՆՉ ՊԱՏԱՀԵՑ ԴՈՆ ԿԻՍՈՏԻ ԵՎ ԱՅԾԱՌԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Այժմարածները նրանց սիրալիր ընդունեցին, և Սանչոն, որքան կարելի է լավ հոգ տանելով Ռոսինանտի և իր էջի մասին, դիմեց այն կողմը, որտեղից այժի մսի հոտ էր գալիս: Ու թեև նրան քաշում էր անհապաղ մսի համը տեսնելու ցանկությունը՝ պիտանի՞ է արդյոք միսը կաթսայից անմիջապես ստամոքսն ուղևորելու, այնուհանդերձ նա իրեն զսպեց, որովհետև այդ իսկ վայրկ-

յանին հովիվները կաթսան կրակից վերցրին և, գետնին ոչխարի մորթիներ փռելով, արագ-արագ բացեցին իրենց գեղջկական սեղանը, ապա մեծ սիրա-լիրությամբ առաջարկեցին մեր ճամփորդներին օգտվել իրենց սեղանից: Բո-լոր վեց հովիվները, որ հսկում էին հոտը, նստեցին ոչխարի մորթիների վրա, նախապես անշնորհք քաղաքավարությամբ խնդրելով դոն Կիխոտին, որ շուռ տված տաշտի վրա տեղ գրավի: Դոն Կիխոտը նստեց, իսկ Սանչոն ոտքի վրա մնաց, որ նրան սպասարկի և մատուցի եղջյուրից շինած գավաթը:

Սակայն մեր ասպետը, տեսնելով, որ նա չի նստում, ասաց.

— Որպեսզի դու տեսած լինես, Սանչո, թե ինչ բարիք է պարփակվում թափառական ասպետության մեջ և թե ինչ արագությամբ մարդիկ, որ այսպես թե այնպես ծառայում են նրան, հասնում են աշխարհում հարգանքի և պատ-վի, ես կամենում եմ, որ դու նստես իմ կողքին այս բարի մարդկանց շրջա-նում և հավասար լինես ինձ՝ քո տիրոջը և բնական պարոնին, որ դու իմ ափ-սեից ուտես և նույն թասից խմես, որից խմում եմ ես, որովհետև թափառա-կան ասպետության մասին կարելի է ասել նույնը, ինչ որ սովորաբար սիրո մասին է ասվում՝ բոլորին հավասարեցնում է:

— Խորին շնորհակալություն, — պատասխանեց Սանչոն, — բայց ահա թե ինչ կասեմ ես ձերդ ողորմածությունը՝ թող ուտելու բան ունենամ, իսկ կանգ-նած ու մենակ ուտելը, թերևս, ինձ համար ավելի հարմար լինի, քան կայսեր կողքին նստած: Եվ եթե թույլ տաք շիտակն ասել, ապա իմ սեփական ան-կյունում սոխով հաց ուտելը, առանց ծեսերի և արարողությունների, շատ ավե-լի դուրեկան է, քան ուրիշի սեղանից հնդկահավ ուտել և հարկադրված լինել դանդաղ ծամելու, սակավ խմելու, ամեն վայրկյան բերան սրբելու, շհազալու, չփռշտալու, երբ որ հազդ ու փռշտոցդ գալիս է և շանելու շատ ուրիշ բաներ, որ թույլատրվում է մարդուս ազատ և մենակ միջոցին: Ուտի, տեր իմ, պա-տիվների փոխարեն, որ ձերդ ողորմածությունն ուզում է ինձ այրած լինել, որպես թափառական ասպետի ծառայի, քանի որ ես ձերդ ողորմածության զինակիրն եմ, շնորհեցեք ինձ ավելի հարմար ու շահավետ բան: Իսկ այս պատիվը ես ընդունում եմ շնորհակալությամբ, բայց հրաժարվում եմ նրա-նից այժմ և մինչև ի կատարածն աշխարհի:

— Չնայած դրան, դարձյալ նստիր, — և քաշելով նրա թևից, դոն Կիխո-տը ստիպեց, որ նստի իր կողքին:

Հովիվները զինակիրներից և թափառական ասպետներից բան չէին հաս-կանում: Նրանք զոռ էին տալիս ուտելուն և լռելյայն նայում էին հյուրերին, որոնք մեծ ախորժակով խժուում էին բուռնցքի մեծությամբ կտորներ:

Երբ որ միսը վերջացավ, հովիվներն ահագին քանակությամբ տկողին դրեցին մորթիների վրա, հետն էլ կես գլուխ պանիր, որ այնքան պինդ էր, ասես կրից լիներ շինած:

Իսկ եղջյուրե թասը անգործ չէր մնում (մեկ՝ լիքը, մեկ՝ դատարկ), ինչ-պես ջուր քաշող դուլլ, նա այնպիսի արագությամբ էր շրջան գործում, որ եր-կու տկերից մեկը շուտով դատարկվեց:

Երբ որ դոն Կիխոտը իր փորը մի լավ կշտացրեց, մի բուռ տկողին վերց-րեց և, ուշի-ուշով զննելով, սկսեց հետևյալ խոսքը.

— Երջանիկ է եղել այն ժամանակը և բախտավոր այն դարը, որ հնում կոչելիս են եղել ոսկեդար, այն էլ ոչ թե նրա համար, որ ոսկուց է (այնքան գնահատելի մեր երկաթե դարում), որովհետև այն երանելի ժամանակ ոսկին առանց որևէ աշխատանքի էր ձեռք բերվում, այլ նրա համար, որ այն ժամանակ ապրող մարդիկ չգիտեին երկու բառ՝ իմը ու քոնը: Այդ սրբազան դարում ամեն ինչ ընդհանուր էր: Իր օրվա պարենն ստանալու համար մարդուն մնում էր միայն ձեռքը մեկնել զորավոր կաղնու ճյուղերին, որ առատությամբ քաղցր ու համեղ պտուղներ էին տալիս: Վճիտ աղբյուրներն ու արագահոս վտակները առատորեն առաջարկում էին իրենց զով ու առողջադար ջրերը: Ժայռերի ճեղքերում ու փշակներում համեստ ու ժրաջան մեղուները հիմնում էին իրենց հանրապետությունները և բոլորին պարգևում իրենց աշխատանքի անուշ բերքը: Այն ժամանակ ամենուրեք խաղաղություն, բարեկամություն, համաձայնություն էր տիրում: Խաբեությունը, նենգությունն ու խորամանկությունը չէին խառնվում ճշմարտության և անկեղծության: Արդարադատությունը իշխում էր լիակատար կերպով, և ոչ շահամոլությունը, ոչ կողմնապահությունը, որ հիմա այնքան ստորացնում, ճնշում ու հալածում են նրան, չէին հանդգնում ոչ վիրավորել նրան, ոչ մոլորեցնել: Թափառական ասպետների ուխտը հիմնվել է, որ պաշտպանի կույսերին, հովանավորի այրիներին, օգնի որբերին ու աղքատներին: Ծս ևս, հովիվ եղբայրներ, պատկանում եմ այդ ուխտին: Շնորհակալ եմ բարի ընդունելության և հյուրասիրության համար, որ դուք ցույց տվիք ինձ և իմ գինակրին: Թեև, բնական օրենքով, աշխարհիս բոլոր արարածները պարտավոր են աջակցելու թափառական ասպետներին, այնուամենայնիվ, ես գիտեմ, որ դուք այդ պարտականությանն անգիտակ լինելով հանդերձ՝ ընդունեցիք մեզ և հյուրասիրեցիք, ուստի ես պարտք եմ համարում սրտանց շնորհակալ լինելու ձեր բարեսրտության համար:

Ամբողջ այս երկար ճառը (որ նա շատ լավ կարող էր արտասանած լինել) մեր ասպետն արտասանեց միմիայն նրա համար, որ իրեն առաջարկած տկողինը միտը գցեց ոսկեդարը և նրա խելքին փշեց ապարդյուն դուրս տալ հովիվների առջև, որոնք, առանց մի բառ արտասանելու, լսում էին նրան մըտամոլոր և շփոթված:

Սանչոն էլ էր լուռ: Նա կրծում էր տկողինը և շուտ-շուտ մոտենում երկրորդ տկին, որը, գինին սառը պահելու համար, կախված էր կաղնու ճյուղից:

## ԳԼՈՒԽ XI

### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է ԴՈՆ ԿԻՍՈՏԻ ՄԻ ԱՆՀԱՋՈՂ ԱՐԿԱԾԻ ՄԱՍԻՆ

Սանչոն հոգ չէր տարել կապել Ռոսինանտին, գիտենալով նրա հանգիստ բնավորությունը: Սակայն բախտը կամ թե սատանան (որ միշտ քնած չի լինում) այնպես արին, որ այդ հովտում արածում էր մադիանների մի երամակ: Զիապանները սովորություն ունեն խոտ ու ջրով առատ վայրերում կանգ

առնելու, ուստի այն տեղը, որտեղ իջևանել էր դոն Կիխոտը, նրանց էլ էր հարմար թվացել:

Ռոսինանտը հակառակ իր բնավորության և սովորությունների, առանց տիրոջից թույլտվություն խնդրելու, մեկ էլ թեթև վազքով վազեց դեպի երամակը: Սակայն մադիանները նրան աքացիներով ու խածելով դիմավորեցին: Վայրկենապես նրա փորկապը կտրվեց, և Ռոսինանտը մնաց առանց թամբի: Ձիուն ավելի դառնություն հասավ ձիապաններից, որոնք հարձակվեցին նրա վրա մահակներով և հախիցն այնպես եկան, որ խեղճը կիսամեռ փովեց գետին:

Դոն Կիխոտն ու Սանչոն, տեսնելով Ռոսինանտի ջարդը, շնչակտուր մոտ վազեցին:

— Իսկույն երևում է, Սանչո բարեկամ,— ասաց դոն Կիխոտը,— որ սրանք ասպետներ չեն, այլ ստոր մարդուկներ: Դու կարող ես ամենայն իրավամբ ինձ օգնել, որպեսզի ես Ռոսինանտին հասցրած ջարդի վրեժը լուծեմ ըստ արժանվույն:

— Վա՛յ այդ վրեժին,— պատասխանեց Սանչոն:— Նրանք քսան հոգուց ավելի են, իսկ մենք՝ երկու, եթե շասեմ մեկ ու կես:

— Ես մենակ հարյուրին արժեմ,— առարկեց Կիխոտը:

Եվ, ավելորդ խոսքեր չվատնելով, նա թուրը քաշեց ու հարձակվեց ձիապանների վրա: Իր տիրոջ օրինակից վարակվելով ու վառվելով, նույնն արեց նաև Սանչո Պանսան:

Դոն Կիխոտն իսկույն հարվածեց մի ձիապանի և կտրեց նրա հագի շուխան և ուսի մի մասը:

Մնացած ձիապանները տեսնելով, որ իրենք՝ շատվոր, երկու մարդուց ջարդ են կրում, մահակներն առան և, շրջապատելով հակառակորդներին, սկըսեցին հասցնել հարված հարվածի հետևից զարմանալի ճարպկությամբ ու եռանդով: Երկրորդ հարվածից իսկ Սանչոն փովեց գետին, ապա նաև դոն Կիխոտը, որին քիչ օգնեցին իր վարպետությունն ու արիությունը: Նա գլորվեց Ռոսինանտի ոտքերի մոտ:

Ապա ձիապանները, տեսնելով իրենց արարքը, ճեպով-հապճեպով հավաքեցին իրենց մադիաններին և ճամփա ընկան, թողնելով երկու արկածախնդիրներին շատ թշվառ վիճակում և առավել վատթար հոգեկան կացության մեջ:


Առաջինը ուշքի եկավ Սանչո Պանսան, որ պառկած էր տիրոջ կողքին: Ցածր ու ցավագին ձայնով նա տնքաց.

— Պարոն դոն Կիխոտ, այ պարոն դոն Կիխոտ:

— Ի՞նչ, եղբայր Սանչո,— պատասխանեց դոն Կիխոտը նույնքան թույլ ու վշտալի ձայնով:

— Եթե հնարավոր է, ես կկամենայի,— պատասխանեց Սանչո Պանսան,— որ ձերդ ողորմածությունն ինձ տար մի երկու կում Ֆեր Բլասի բալասանից: Գուցե թե կտարած ոսկորներին էլ օգնի, ինչպես վերքերին:

— Ավա՛ղ,— բացականչեց դոն Կիխոտը,— եթե մենք բալասան ունենայինք՝ էլ ի՞նչ ցավ: Սակայն երդվում եմ թափառական ասպետի պատվով,



Սանչո Պանսա, որ երկու օր շանցած,— եթե միայն բախտը արգելք չհանդի-  
սանա,— ես կգտնեմ այդ բալասանը, թե չէ թող գոսանան ձեռքերս

— Իսկ ի՞նչ կարծիքի է ձերդ ողորմածությունը, մեր՛ ոտքերը ե՞րբ կլվա-  
նան:

— Ինչ որ ինձ է վերաբերում,— պատասխանեց ջարդված ասպետը,— չեմ կարող ժամկետ նշանակել: Սակայն եղելության մեղքը ամբողջովին իմն է՝ պետք չէր, որ ես թուր քաշեի աշնպիսի մարդկանց վրա, որոնք ինձ պես կարգված ասպետներ չեն: Ուստի, կարծում եմ, ասպետական օրենքների նման խախտման համար, որպես պատիժ, ռազմի աստվածը թույլ տվեց, որ հատուցումը գա իմ գլխին: Այո, Սանչո Պանսա, լավ միտդ պահիր, ինչ կսես քեզ և այդ մեր երկուսիս օգտին կլինի. հենց որ տեսար, թե մեզ նեղացնում է այդ տեսակ ամբոխ, էլ մի սպասիր, որ ես նրանց վրա թուր քաշեմ, այլ իսկույն քոնք քաշիր և պատժիր նրանց, ինչպես քեֆդ տա: Իսկ եթե, բան է, նրանց ազատելու համար օգնության գալու լինեն ասպետները, ապա այն ժամանակ ես քեզ կկարողանամ պաշտպանել և նրանց հախիցը գալ, ինչպես որ հարկն է: Չէ՞ որ հազարավոր օրինակներից դու արդեն համոզված կլինես, թե իմ արե՞ բազկի զորութունը որքան մեծ է:

Սակայն Սանչո Պանսան այլ կարծիքի էր, քան իր տերը, ուստի լռելու փոխարեն առարկեց.

— Պարոն, ես հանգիստ մարդ եմ, հեզ, խաղաղասեր և պատրաստ եմ տանելու ամեն վիրավորանք, որովհետև ունեմ կին ու երեխաներ, որոնց պետք է կերակրել և մարդ դարձնել: Ուստի, ձերդ ողորմածության թույլտվությամբ, ես ոչ մի դեպքում թուր չեմ քաշի ոչ ռամիկի, ոչ էլ ասպետի վրա և այս վայրկյանից սկսած նախապես ներում եմ բոլոր վիրավորանքները, որ ինձ հասցրել են կամ ապագայում կհասցնեն, ով էլ լինի ինձ վիրավորողը՝ ազնվական թե հասարակ մարդ, հարուստ թե աղքատ, հիդալգո թե հարկատու, մի խոսքով՝ ինչ դասի ու դիրքի էլ պատկանելու լինի:

Լսելով այս, նրա տերն ասաց.

— Իմացած եղիր, Սանչո բարեկամ, որ թափառական ասպետների կյանքը ենթակա է հազար ու մի աղետների և ձախորդությունների: Սակայն պատահական գործիքով հասցրած վերքերը ամոթաբեր են համարվում: Այդ մասին պարզ ցուցում կա մենամարտության կանոնադրության մեջ, որտեղ ասված է՝ «Եթե մի կոշկակար հարվածի մյուսին կաղապարով, որ մինչ այդ բռնած է եղել ձեռքին, թեև կաղապարը փայտից է շինած, չի կարելի համարել, որ նա, որին հարվածել են, փայտով է ծեծվել»: Ասելս այն է, որ դու չկարծես, եթե մեզ այս կովում ծեծել են, ապա մեր պատիվն անարգված է, որովհետև զենքը, որ այդ մարդկանց ձեռքին էր և որոնցով նրանք մեզ ծեծեցին, հասարակ մահակ էր և նրանցից ոչ մեկը, որքան հիշում եմ, ոչ սուր ուներ, ոչ թուր, ոչ դաշույն:

— Ես ժամանակ չունեցա զննելու,— պատասխանեց Սանչոն,— որովհետև հազիվ էի փայտ վերցրել, որ նրանք իրենց մահակներով ինձ այնպես օրհնեցին, որ աչքերիս լույսը մարեց և ոտքերս ծալվեցին: Նրանք ինձ իսկույն գլորեցին այնտեղ, որտեղ հիմա ես պառկած եմ: Այնպես որ ես իսկի հավասար չունեմ խորհելու՝ անարգվել է իմ պատիվը փայտի հարվածներից, թե ոչ, նրանք նույնքան խոր խրվեցին իմ հիշողության մեջ, որքան և իմ ոսկորների մեջ:

— Դարձյալ, եղբայր Սանչո, գիտցած եղիր,— ասաց դոն Կիխոտը,— չկա վիշտ, որ մոռացնել շտա ժամանակը, և չկա ցավ, որ շքուծի մահը:

— Սրանից էլ վատթար ձախորդութիւն կլինի՞,— պատասխանեց Սանչոն,— որ ժամանակը թեթևացնի և մահը բուժի: Եթե մեր ցավը լավ դեղով լավացող լիներ՝ կեսցավ կլիներ: Բայց, կարծես, հիվանդանոցի բոլոր դեղերն էլ հիմա մեզ չեն օգնի:

— Թող գանգատներդ, Սանչո, և արիացիր: Ինձնից օրինակ վերցրու,— ասաց դոն Կիխոտը:— Տեսնենք, թե Ռոսինանտի բանն ինչպես է, որովհետև, կարծես, խեղճին մեզնից պակաս չի հասել:

— Զարմանալի չէ, որ այդպես էլ լինի,— պատասխանեց Սանչոն,— քանի որ նա էլ է թափառական ասպետ դարձել: Զարմանքն այն է, որ իմ էջն է հեշտ պրծել, առանց մի մազ կորցնելու, մինչդեռ մենք քիչ էր մնացել կաշվից գրկվեինք:

— Բավական է, բարեկամ,— ասաց դոն Կիխոտը,— վեր կաց, քանի էշիդ էլ որևէ դժբախտութիւն չի պատահել, գնանք, քանի գիշերը դեռ վրա չի հասել այս ամալի վայրում:

Ախ ու վախ քաշելով, հոգոց հանելով, անիծելով նրան, ով իրեն այս գործի մեջ է գցել, Սանչոն վեր կացավ, բայց կեսճամփին կորացավ, ասես տաճկական աղեղ լիներ, ուժ չունենալով շտկվել: Մեծամեծ ճիգերով փախանեց էշին, որն այդ օրը տեղի ունեցած անկարգութիւնից ասես շփոթված՝ թափառում էր մի քիչ հեռու: Ապա Սանչոն բարձրացրեց Ռոսինանտին, որը, եթե գանգատվելու համար լեզու ունենար, Սանչոյից ետ չէր մնա: Ի վերջո Սանչոն պառկեցրեց տիրոջը էշի վրա, հետևից կապեց Ռոսինանտին և բռնելով էշի նոխտան, մի կերպ քարշ եկավ այն կողմը, որտեղից թվում էր, թե պիտի մեծ ճամփան անցներ: Հազիվ մեկ մղոն անցած լիներ, բախտը, որ նրան մեկ շարիքից դեպի մյուսն էր տանում, հանեց նրան այն ճամփան, որտեղ նրանք շուտով մի իջևանատուն տեսան, որը դոն Կիխոտին (և բնավ ոչ Սանչոյին) դղյակ թվաց:

Սանչոն հավատացնում էր, թե դա իջևանատուն է. իսկ նրա տերը թե՛ դղյակ է: Երկար տևեց նրանց վեճը, մինչև որ նրանք տեղ հասան և ներս մըտան իջևանատան բակը:

## ԳԼՈՒԽ XII

ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է,

ԹԵ ԻՆՉ ՊԱՏԱՀԵՑ ԽՈՐԱՄԱՆԿԱՄԻՏ ՀԻԴԱԼԳՈՅԻՆ ԻՋԵՎԱՆԱՏԱՆԸ,  
ՈՐԸ ՆՍ ԴՂՅԱԿԻ ՏԵՂ ԷՐ ԴՐԵԼ

Իջևանատերը, տեսնելով էշի վրա պարկի պես ընկած դոն Կիխոտին, հարցրեց Սանչոյից, թե ինչ դժբախտութիւնն է պատահել այդ մարդուն: Սանչոն պատասխանեց, թե նա վայր է ընկել ժայռից և կողքը մի քիչ ցավացրել:

Իջևանատերը կին ուներ, բնականից շատ սրտացավ և մերձավորի ցավին ցավակցող: Նա շտապեց օգնութեան հասնելու դոն Կիխոտին և իր աղջրկան էլ հրամայեց, որ օգնի:

Նույն իջևանատանը մի աղջիկ էր ծառայում, լայնադեմ, քիթը կճատ,



տափակ ծոծրակով և մեկ աչքով կույր, ասենք մյուսն էլ մի բանի նման չէր: Իսկ ուսերը ծառանում էին սապատի պես, հարկադրելով, որ նա գետնին նայի ավելի, քան կկամենար:

Սա էլ սկսեց օգնել իջևանատիրոջ աղջկան, և նրանք երկուսով դոն Կիխոտի համար վատթարագույն անկողին գցեցին մարագում, որը, բոլոր նշաններից երևում էր, երկար ժամանակ պահեստ էր եղել: Նույն տեղը մի ջորեպան էլ էր գիշերում, որի անկողինը դոն Կիխոտի տեղից մի քիչ հեռու էր: Թեև ջորեպանի տեղը ջորիների փալաններից և քեչաններից էր շինած, դարձյալ դոն Կիխոտի անկողնուց շատ լավն էր: Դոն Կիխոտի մահճակալը չորս հատ վատ ուանդած տախտակից էր, որ դրված էին անհավասար ոտքերի վրա, մի ներքնակից՝ վերմակի հաստությամբ, լի այնքան պինդ-պինդ գնդերով, որ կարելի էր քարերի տեղ դնել, եթե ծակոտիներից բուրդը դուրս եկած լիներ:

Ահա այդ անկողնում պառկեց դոն Կիխոտը, և իսկույն իջևանատիրոջ կինը, իր աղջկա հետ, սկսեցին նրան ոտից գլուխ սպեղանի քսել, իսկ Մարիտոռնեսը (այդպես էր աղախնի անունը) բռնել էր ճրագը:

Դոն Կիխոտի մարմնի վրա բազմաթիվ կապտած տեղեր տեսնելով, իջևանատիրոջ կինն ասաց, որ դրանք ավելի հարվածի, քան թե վայր ընկածի հետքի են նման:

— Իսկի էլ հարվածի հետքեր չեն,— պատասխանեց Սանչոն,— այլ ժայռը ծածկված էր սուր-սուր քարերով, որոնցից յուրաքանչյուրը մի-մի կապտած տեղ էր թողել:

Սրան նա ավելացրեց.



— Բարի եղեք, տիկին, այդ դեղից մի քիչ պահեցեք, իմ գոտկատեղն էլ է կոտրատվում:

— Ուրեմն դուք է՞լ եք վայր ընկել,— հարցրեց իջևանատիրոջ կինը:

— Վայր ընկնելը վայր չեմ ընկել,— պատասխանեց Սանչո Պանսան,— միայն հենց տեսնելուց, թե ինչպես վայր ընկավ իմ տերը, այնպես ցնցվեցի, որ ողջ մարմինս ցավեց, ասես թե հազար փայտի հարված կերա:

— Կպատահի,— ասաց իջևանատիրոջ աղջիկը,— ինձ էլ է հաճախ պատահում երազիս տեսնել, իբր թե վայր եմ ընկնում աշտարակից և չեմ կարողանում ընկնել պրծնել և երբ որ հետո զարթնում եմ, այնպես եմ ջարդված լինում, մարմինս այնպես է կոտրատվում, ասես թե իսկապես վայր եմ ընկած եղել:

— Բանն էլ այն է, տիրուհի,— ասաց Սանչոն,— որ առանց երազի, ուղղակի արթմնի, հիմիկվա պես, մարմինս կապտեց ոչ պակաս, քան դոն Կիխոտինը, իմ տիրոջինը:

— Այս կաբալյերոյի անունն ի՞նչ է,— հարցրեց Մարիտոռնեսը:

— Դոն Կիխոտ Մանչացի,— պատասխանեց Սանչո Պանսան:— Նա թափառական ասպետ է, աշխարհիս երեսին եղածներից ամենափառավորն ու զորավորներից մեկը:

— Իսկ ի՞նչ բան է թափառական ասպետը,— դարձյալ հարցրեց սպասուհին:

— Մի՞թե երբեք չեք լսել,— բացականչեց Սանչո Պանսան:— Դե իմացած եղեք, քույրիկ, թափառական ասպետն այնպիսի բան է, որ աչք ճակլու ժամանակ չես ունենա, որ նա կարող է ծեծ ուտել և կայսր դառնալ: Այսօր նա աշխարհիս երեսին ամենադժբախտ և թշվառ էական է, իսկ վաղը նա իր գինակրի համար երեք-չորս թագավորություն կունենա՝ դե ընտրիր:

— Այդ ինչպե՞ս է,— հարցրեց տանտիկինը,— որ ձեր տերը այդքան կարևոր անձնավորություն է, իսկ դուք, ինչպես տեսնում եմ, իսկի մի կոմսություն էլ չեք ձեռք գցել:

— Դա այդքան էլ արագ չի լինում,— պատասխանեց Սանչոն:— Հազիվ մի ամիս է, ինչ մենք արկածախնդրության ենք ելել և մինչև օրս դեռ մի կարգին արկածի չենք հանդիպել: Երբեմն լինում է, որ մեկ բանի հետևից ես գնում, իսկ բոլորովին ուրիշն ես գտնում: Բայց ճիշտ եմ ասում, եթե միայն իմ տիրոջ՝ դոն Կիխոտի, վերքերն առողջանան, որ վայր ընկնելուց եղան, ես էլ կենդանի մնամ, ես իմ հույսերը չեմ փոխի Իսպանիայի առաջնագույն իշխանության հետ:

Այս խոսակցությանն ուշի-ուշով ականջ էր դնում դոն Կիխոտը: Դժվարությամբ բարձրանալով իր անկողնում, նա բռնեց տանտիրուհու ձեռքն ու ասաց.

— Հավատացեք, չքնաղ տիրուհի, դուք կարող եք երջանկություն համարել, որ ձեր դղյակում ինձ պես մի անձնավորության ապաստան եք տվել, որովհետև եթե ես ինքս ինձ չեմ գովում, ապա միմիայն այն պատճառով, որ, ինչպես ասում են, գովասանքն ինքն իրեն ստորացնում է: Սակայն իմ գինակիրը կպատմի ձեզ, թե ով եմ ես: Ես միայն այն կասեմ, որ իմ հիշողության

մեջ առհավետ կտպավորվի ինձ մատուցած ձեր ծառայութիւնը, և որ ողջ կյանքումս ես ձեզնից շնորհակալ կմնամ:

Տիրուհին, նրա աղջիկն ու բարի Մարիտոռնեսը շփոթված լսում էին թափառական ասպետի խոսքերը, որոնք նրանց համար նույնքան անըմբռնելի էին, որքան եթե նա հունարեն խոսելու լինէր: Նրանք նայում ու զարմանում էին: Արդարև ասպետը նրանց աչքին ուրիշ ցեղի մարդ էր երևում: Գեղավարի շնորհակալութիւն հայտնելով նրա սիրալիր խոսքերի համար, նրանք վեր կացան գնացին, իսկ Մարիտոռնեսը զբաղվեց Սանչոյով, որ կարոտ էր խնամքի ոչ պակաս, քան իր տերը:

Ողջ իջևանատունը սուզվել էր լուռթյան մեջ և բոլոր ճրագները մարած էին, բացի մուտքի լապտերից:

Այս խորունկ լուռթյունն ու մեր ասպետի անդադրում մտորումները արկածների մասին, որոնցով լի էին նրա ցավին մեղապարտ գրքերը, ներշնչեցին նրան մի ամենատարօրինակ ու անմիտ ցնորք, որ հնարավոր է միայն երևակայել, այն է՝ նրան թվաց, թե ինչ-որ հուշակավոր մի դրյակ է եկել (որովհետև յուրաքանչյուր իջևանատուն, որտեղ նա իջևանում էր, նրան դրյակ էր թվում) և որ իջևանատիրոջ աղջիկը, այլ կերպ ասած՝ դրյակի տիրոջ աղջիկը, հմայված իր ազնիվ տեսքով, սիրահարվել է իրեն և խոստացել է այս գիշեր, ծնողներից գաղտնի, գալ և բաժանել իր անկողինը: Զոռտ ճշմարտութիւն ընդունելով իր իսկ հնարած այս զառանցանքը, նա սկսեց տանջվել իր առաքինութիւնը սպառնացող վտանգի մասին:

Այդ միջոցին, հուշիկ քայլերով, Մարիտոռնեսը ներս մտավ, որ գտնի ջորեպանին: Սակայն հազիվ էր նա շեմքն անցել, որ դոն Կիխոտը, նրա ոտնաձայնը լսելով՝ նստեց անկողնում, շնայած իր սպեղանիներին ու կողերի ցավին, տարածեց ձեռքերը, բանալով իր գիրկն ու արտասանեց.

— Ինչպե՞ս կուզենայի ես, չքնաղ ու ազնվագարմ օրիորդ, ի վիճակի լինել ըստ արժանվույն հատուցանելու ձեզ այն բարձր ողորմածութեան համար, որ պարգևում եք ինձ ձեր մեծ գեղեցկութեան տեսքով: Սակայն ազնիվ մարդկանց անընդհատ հալածող բախտը հաճել է ինձ նետել այս անկողինը, որի մեջ ես պառկած եմ ջարդված ու տրորված:

Մեր ջորեպանը ուշի-ուշով լսում էր դոն Կիխոտի ասածները: Խանդով բռնված, նա մոտեցավ դոն Կիխոտի անկողնուն և թաքնվեց, որ տեսնի, թե իրեն համար այդ անըմբռնելի խոսքերն ինչով են վերջանալու: Սակայն երբ որ նա տեսավ, թե աղջիկն ուզում է դուրս պրծնի, իսկ դոն Կիխոտը բաց չի թողնում, այդ բանը նրան դուր չեկավ: Նա տարավ-բերեց և բռունցքով այնպես խփեց մեր ասպետի ոսկրոտ ծնոտին, որ նրա բերանը արյունով լցվեց: Գտնելով, որ դա դեռ քիչ է, ջորեպանը ոտքերով սկսեց ջարդել նրա կողերը:

Մահճակալը նոր ծանրութիւն չտանելով՝ սաստիկ աղմուկով փլվեց, որից զարթնեց իջևանատերը: Նա իսկույն գլխի ընկավ, որ սա Մարիտոռնեսի արարքը կլինի, որովհետև բարձր ձայն տվեց աղախնին և պատասխան չառավ: Այդ կասկածով՝ նա վեր կացավ, ճրագը վառեց և դիմեց դեպի աղմուկը:

Տեսնելով իր սաստիկ զայրացած տիրոջը, աղջիկը մի պահ երկյուղից իրեն կորցրեց, ապա ծլկվեց Սանչո Պանսայի անկողինը, որը խաղաղ քնած էր: Մտնելով նրա անկողնու մեջ, աղջիկը կծկվեց:



**48** Այստեղ Սանչոն զարթնեց: Զգալով իր վրա ընկած կենդանի բեռը, նա վճռեց, որ սատանան է խեղդում իրեն և սկսեց բռունցքով հարվածել աջ ու ձախ: Հարվածների զգալի մասը հասավ Մարիտոոնեսին: Աղջիկը, ցավից ամեն ամոթ կորցնելով, այնպես պատասխանեց Սանչոյին, որ վերջինիս քու-

նը ուզեր-չուզեր փախա՛վ: Զգալով, որ իրեն դնգստում են և շտենեկով հակա-  
ռակորդին, Սանչոն վեր թռավ, բռնեց Մարիտոռոնեսին և մի ծիծաղելի տու-  
րուղմփոց սկսվեց:

Իջևանատիրոջ ձեռքի ճրագը մարեց: Հարվածները մթան մեջ տեղում էին  
ում որ հասնի և այնքան անողոք, որ ում դիպչում էին՝ ցած էին գցում: Պա-  
տահաբար նույն իջևանատանը գիշերում էր Սանտա Հերմանդադի պահակներից  
մեկը: Լսելով կովի աղմուկը, նա վերցրեց իր կարճ գավազանը և թիթեղ-  
յա տուփը, խավարի մեջ մտավ մարագն ու ճչաց.

— Կա՛նգ առեք, հանուն արդարադատության, կա՛նգ առեք, հանուն Սան-  
տա Հերմանդադի:

Առաջին մարդը, որին նա դեմ առավ, դոն Կիխոտն էր, որ անզգա պառ-  
կած էր մեջքին, իր փլված անկողնու վրա:

Բռնելով նրա մորուքից, պահակը մի քանի անգամ գոռաց.

— Հասեք օգնության արդարադատությանը:

Սակայն տեսնելով, որ իր բռնած մարդը չի շարժվում, նա կարծեց, թե  
սպանված է, իսկ սենյակում գտնվող մյուս մարդիկ մարդասպաններ են, ու-  
տի բարձր աղաղակեց.

— Փակե՛ք դարպասը: Ոչ ոքի բաց չթողնեք, որովհետև այստեղ մարդ  
է սպանվել:

Այդ աղաղակից բոլորն էլ վախեցան և վերջ տվին կովին: Իջևանատերը  
շտապ վերադարձավ իր սենյակը, ջորեպանը՝ իր փալանների մոտ, սպասու-  
հին՝ իր խցիկը: Միայն խեղճ դոն Կիխոտն ու խեղճ Սանչոն չկարողացան  
տեղից շարժվել:

Միաբանության պահակը, բաց թողնելով դոն Կիխոտի մորուքը, գնաց  
ճրագ գտնի, որ բռնի և կալանավորի ոճրագործներին: Բայց նա չկարողացավ  
ճրագ գտնել, որովհետև իջևանատերը դիտմամբ հանգցրել էր մուտքի լապ-  
տերը, և նա հարկադրված եղավ օջախի մոտ գնալու, որտեղ մեծ դժվարու-  
թյամբ, վերջապես, կարողացավ վառել իր ճրագը:

### ԳԼՈՒԽ XIII

ՈՐ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է ԱՐԻ ԴՈՆ ԿԻՍՈՏԻ  
ԵՎ ՆՐԱ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԶԻՆԱԿՐԻ ԿՐԱՄ  
ՀԵՏԱԳԱ ԱՆՀԱՄԱՐ ԱՂԵՏՆԵՐԸ ԻՋԵՎԱՆԱՏԱՆԸ,  
ՈՐԸ ՄԵՐ ԱՍՊԵՏԸ, ԴԺՐԱԽՏԱՐԱՐ, ԴՂՅԱԿԻ ՏԵՂ ԷՐ ԴՐԵԼ

Մինչ այս, մինչ այն, դոն Կիխոտը ուշքի եկավ և դիմեց իր զինակրին.  
— Սանչո, բարեկամս, դու քնած ես: Քնած ես դու, Սանչո բարեկամ:  
— Էլ ի՞նչ քոն, — պատասխանեց Սանչոն վշտալից, — սատանաները  
կարծես այս գիշեր գլխիս էին թափվել:

— Միանգամայն հիմք ունես այդպես մտածելու, — պատասխանեց դոն  
Կիխոտը, — որովհետև կամ ես բան չեմ հասկանում, կամ այս դղյակը կա-  
խարդված է: Իմացած եղիր... Ասենք, նախ դու պետք է երդվես, որ այս ամե-

4 Դոն Կիխոտ

:

նը, ինչ ես քեզ կպատմեմ, գաղտնի կպահես թե իմ կենդանության օրոք, թե իմ մահից հետո:

— Երգվում եմ,— ասաց Սանչոն:

— Դե լավ,— շարունակեց դոն Կիխոտը, այսպես թե այնպես ես վստահ եմ, որ դու ազնիվ ես և սիրում ես ինձ: Դե իմացած եղիր, որ այս գիշեր ինձ պատահեց ամենազարմանալի արկածներից մեկը, որոնցով ես կարող եմ պարծենալ: Կարճ՝ նոր էր եկել մոտս այս դոլյակի տիրոջ աղջիկը, չքնադազեղ ու հրապուրիչ մի աղջիկ, որ կարելի է գտնել աշխարհիս երեսին: Այն միջոցին, երբ ես նրա հետ ամենաքնքուշ ու սիրալիք խոսակցություն ունեի, անտեսանելի և անհայտ հրեշի ձեռքը տարավ-բերեց և իմ ծնոտին այնպիսի հարված հասցրեց, որ բերանս մինչև հիմա էլ արնակալած է: Դրանից հետո էլ ինձ այնպես ջարդուբուրդ արեց, որ հիմա դրությունս ավելի վատ է, քան թե երեկ, երբ ձիապանները մեզ վիրավորեցին, ինչպես դու հիշելիս կլինես, Ռոսինանտի անզսպության պատճառով: Դա հարկադրում է ինձ ենթադրել, որ այդ աղջկա անգին գեղեցկության գանձը պահպանում է որևէ հմայված մավր, այն էլ ոչ ինձ համար:

— Ոչ էլ անշուշտ ինձ համար,— հարեց Սանչոն,— որովհետև չորս հարյուրից ավելի մավրեր այնպես ման եկան մեջքիս վրա, որ դրա հետ համեմատած երեկվա մահակները հալվա ու փախլավա են: Բայց ասացեք, պարոն, ինչպես կարող եք դուք մեզ այսպիսի մի կացության մեջ գցող արկածը հազվագյուտ անվանել:

— Ինչպե՞ս, մի՞թե քեզ էլ են ծեծել,— հարցրեց դոն Կիխոտը:

— Բայց ես ձեզ շասացի՞ այդ, անիծյա՛լ լինեն իմ ծնողները,— պատասխանեց Սանչոն:

— Մի՛ վշտանար, բարեկամս,— ասաց դոն Կիխոտը,— ես իսկույն կպատրաստեմ իմ թանկագին բալասանը, և դու աչք ճպելու ժամանակ չես ունենա, ինչ մենք բուժված կլինենք:

Այդ իսկ վայրկյանին պահակը, որ վերջապես հաջողացրեց ճրագը վառել, ներս մտավ, որ տեսնի կարծեցյալ մեռելին: Տեսնելով, որ միայն շապիկը հագին, գլուխը թաշկինակով կապած, ճրագը ձեռքին և ոչ մի բարի բան չգուշակող դեմքով մարդ է մոտենում իրենց, Սանչոն հարցրեց տիրոջից.

— Պարոն, չլինի թե հմայված մավրը հենց սա է, որ իր գործը չի ավարտել և վերադարձել է, որ մեզ սպանի պրծնի:

— Սա չի կարող մավր լինել,— պատասխանեց դոն Կիխոտը,— որովհետև հմայվածները անտեսանելի են լինում:

— Թե տեսնել չի լինի, հո զգալ կլինի՞,— պատասխանեց Սանչոն,— իմ կողերը կարող են պատմել դրա մասին:

— Իմն էլ,— ասաց դոն Կիխոտը,— բայց դա դեռ չի նշանակում, թե մեր տեսած մարդը հմայված մավրն է:

Պահակը մոտենալով և տեսնելով նրանց խաղաղ խոսելիս, սատարիկ զարմացավ: Պետք է ձեզ ասեմ, որ դոն Կիխոտը շարունակում էր մեջքի վրա պառկած մնալ, ուժ չունենալով տեղից շարժվելու ծծօր և սպեղանիների պատճառով: Պահակը մոտեցավ նրանց ու հարցրեց.

— Է՛հ, ի՞նչ օրի ես, խղճուկ:



— Ձեր տեղը ես ավելի քաղաքավարի կլինեի,— պատասխանեց դոն Կի-  
խոտը, — թե՞ ձեր կողմերում թափառական ասպետների հետ այդպես է ըն-  
դունված խոսել, բոի գյուղացի:

Տեսնելով, որ այդ խղճուկ արտաքինով մարդն ինչպես է խոսում հետը,

պահակը շհամբերեց, տարավ-բերեց ձեթով լի ճրագն ու խփեց դոն Կիխոտի գլխին այնպես, որ քիչ էր մնում նրա գանգը փշուր-փշուր աներ: Դարձյալ սենյակն ընկղմվեց խոր խավարի մեջ, և պահակն իսկույն դուրս եկավ:

— Անկասկած, պարոն,— ասաց Սանչո Պանսան,— դա հենց հմայված մավրն է, որ կա: Երևի թե նա գանձը ուրիշների համար է պահում, իսկ մեզ՝ բռունցքի և ճրագի հարվածներ հրամցնում:

— Երևի այդպես է,— պատասխանեց դոն Կիխոտը:— Բայց շարժե փորձել այդ տեսակ կախարդանքի դեմ կռվել: Անօգուտ է նմանապես զայրանալ կամ գանգատվել, որովհետև քանի որ այդ ուժերն աներևույթ են և ցնորական, մենք, ինչքան էլ ջանք թափելու լինենք, շենք կարող վրեժ առնել: Փորձիր, ապա, Սանչո, վեր կենալ ու որոնել այս դրյակի պարետին: Աշխատիր մի քիչ յուղ, գինի, աղ և խնկունի ձեռք բերել, որ ես կարողանամ բուժիչ բալասան եփել: Ճիշտն ասած, ես դրա կարիքը շատ ունեմ, որովհետև այդ ուրուի հասցրած վերքերից սաստիկ արյուն է գալիս:

Ոսկորների սաստիկ ցավով, Սանչոն վեր կացավ և մթության մեջ գնաց իջևանատիրոջ մոտ: Ճանապարհին դեմ առնելով պահակին, որը հետևում էր, թե ինչ է մտադիր անելու իր հակառակորդը, ասաց.

— Ով էլ լինեք դուք, պարոն, եղեք այնքան բարեգութ ու բարեգործ, մեզ մի քիչ խնկունի, յուղ, աղ ու գինի տվեք, որպեսզի դեղ պատրաստենք թափառական ասպետներից լավագույնի համար, որը պակաս է անկողնում՝ այս իջևանատանը բնակվող կախարդ մավրի ձեռքով ծանր վիրավորված:

Լսելով այդ, պահակը վճռեց, որ իր առջև խելագար է կանգնած: Եվ, որովհետև լույսն սկսել էր բացվել, նա դուռը բաց արեց և, իջևանատիրոջը կանչելով, հաղորդեց նրան խեղճի խնդիրքը:

Իջևանատերը տվեց Սանչոյին ինչ որ պետք էր, և վերջինս տարավ տվեց դոն Կիխոտին, որը կանգնել էր՝ ձեռքով բռնած գլուխը և գանգատվում էր ճրագով հասցրած հարվածից, թեև այդ հարվածից նրա ճակատին միայն երկու բավական խոշոր ուռուցք էր դուրս եկել, իսկ արյան տեղ նա ընդունում էր պարզապես քրտինքը, որը ծորում էր առատորեն:

Վերջապես, նա վերցրեց այդ բաղադրիչ մասերը և պատրաստեց բուժիչ խառնուրդ, պահելով կրակի վրա և խառնելով, մինչև որ նրան թվաց, թե բավական է: Ապա մի սրվակ խնդրեց, որպեսզի խառնուրդն ածի մեջը, բայց որովհետև ողջ տանը սրվակ չգտնվեց, նա գոհացավ ձեթի թիթեղյա ամանով, որ իջևանատերն առաջարկեց նրան ձրիաբար: Դրանից հետո թիթեղի ամանի վրա ոչ պակաս քան ութսուն անգամ «հայր մեր» ասաց և բազմաթիվ այլ աղոթքներ, յուրաքանչյուր խոսքի վրա խաչ հանելով: Սանչո Պանսան, իջևանատերն ու պահակը ներկա էին այս գործողությունը: Գալով ջորեպանին, նա ամենահանգիստ կերպով զբաղված էր իր ջորիներով: Ապա դոն Կիխոտը կամեցավ իսկույն փորձել այնքան բուժիչ, իր կարծիքով, բալասանի զորութունը և միանգամից կուլ տվեց թիթեղյա ամանի մեջ շտեղավորված և կավե ամանի մեջ մնացած դեղը: Բայց հազիվ էր նա խմել, որ սիրտն այնպես խառնեց, որ ստամոքսում եղած-չեղածը դուրս թափվեց: Սրտախառնություն հարուցած ջղաձգություններից և լարվածությունից քրտինքը թափվում էր առատությամբ, և նա խնդրեց, որ իրեն տաք-տաք ծածկեն ու մենակ թողնեն:

Երբ երկար ու ձիգ ժամ քնելուց հետո նա զարթնեց թարմ մարմնով և հարվածների ցավը այնքան էր մեղմացել, որ նա իրեն միանգամայն առողջ համարեց և հավատաց, որ այդ բալասանի շնորհիվ նա այլևս երկյուղ չունի ընդհարումներից, կովից ու տուրուղմփոցից, ինչքան էլ դրանք վտանգավոր լինեն:

Սանչո Պանսան, որ իր տիրոջ առողջանալը հրաշք համարեց, խնդրեց, որ դոն Կիխոտը իրեն տա ամանում մնացածը. իսկ ամանի մեջ քիչ բան չէր մնացել: Դոն Կիխոտը տվեց, և Սանչոն, երկու ձեռքով բռնելով ամանը, մեծ հավատով ու ջերմեռանդությամբ իր կոկորդն ածեց մի քիչ պակաս, քան իր տերը: Սակայն դուրս եկավ, որ Սանչոյի ստամոքսը այնքան էլ զգայուն չէր, որովհետև մինչև սիրտ թափելը նա այնպիսի ծակոցներ զգաց և սիրտն այնպես էր խառնում, այնպես քրտնեց և այնքան թուլացավ, որ հաստատ ու անկեղծ վճռեց, թե իր վերջին ժամը հասել է: Այս ծանր ու տանջալից կացության մեջ, նա սկսեց անիծել և՛ բալասանը, և՛ շարագործին, որ իրեն հրամցրեց: Տեսնելով նրան այդ վիճակում, դոն Կիխոտն ասաց.

— Ես կարծում եմ, Սանչո, որ քեզ հասած ամբողջ ցավը նրանից է, որ դու ասպետ չես կարգված: Որովհետև, կարծեմ, այս խմիչքը օգուտ չի բերում նրան, ով ասպետ չէ:

— Եթե ձերդ ողորմածությունը գիտեր այդ բանը,— բացականչեց Սանչոն,— ինչո՞ւ ապա, գետինը մտնեմ ես իմ յոթը պորտով, թույլ տվեց, որ խրմեմ:

Դոն Կիխոտը, ինչպես մենք արդեն ասացինք, թարմ ու առույգ լինելով, կամեցավ իսկույն ճամփա ելնել արկածներ որոնելու, որովհետև այստեղ անցկացրած յուրաքանչյուր ժամը նրան կորուստ էր թվում աշխարհի և իր պաշտպանության ու հովանավորության կարոտ բոլոր զրկվածների համար: Եվ նրան առանձնապես մղում էր այդ անելու այն խոր հավատը, որ ներշնչել էին նրան իր բալասանի հատկությունները: Տոչորվելով այդ ցանկությանմբ, նա իր ձեռքով թամբեց Ռոսինանտին և փալանեց իր զինակրի էջը, ապա օգնեց Սանչոյին, որ վեր կենա և նստի վրան: Դրանից հետո նա հեծավ ձին և, անցնելով բակի ծայրը, վերցրեց այնտեղ դրած գեղջկական նիզակը, որ պիտի փոխարիներ մարտականին:

Երբ որ նրանք երկուսով էլ անասունների վրա էին, դոն Կիխոտը մոտեցավ իջևանատան պատշգամբին և, դիմելով տիրոջը, ծանր ու հանդիսավոր ձայնով ասաց.

— Ձեր դղյակում վայելածս բարիքները, կալվածատեր պարոն, մեծ ու բազմաթիվ են, և ես ինձ պարտավոր եմ համարում մինչև վերջին օրերս շնորհակալ լինել ձեզ: Օ՛հ, եթե կարողանայի երախտամատույց լինել, պատժելով ձեզ վիրավորանք հասցրած որևէ հանդուգնի: Որովհետև, իմացած եղեք, իմ կոշումն է՝ օգնել տկարներին, կեղեքվածների վրեժը լուծել և պատժել ստորությունը:

Դրան, նույնպիսի արժանապատվությամբ, իջևանատերը պատասխանեց.

— Պարոն Կաբալյերո, ես կարիք չունեմ, որ ձերդ ողորմածությունը վրիժառու լինի ինձ հասցրած վիրավորանքների համար, որովհետև տեղ եկած ժամանակ, ես էլ գիտեմ ինձ վիրավորողների հախիցը գալ: Մի բան միայն



կկամենայի ես, որ ձերդ ողորմածութիւնը վճարեր ինձ իմ իջևանատանը գիշերելու համար, այսինքն՝ ընթրիքի և երկու անկողնու համար, ինչպես և ձեր երկու կենդանիների կեր ու դարմանի գինը:

— Ուրեմն սա իջևանատուն է եղել,— հարցրեց դոն Կիխոտը:

— Այո և լավագույն համբավ վայելող,— պատասխանեց իջևանատերը:

— Մինչև այս վայրկյանը ես մոլորութեան մեջ եմ եղել,— ասաց դոն Կիխոտը,— որովհետև, ճիշտն ասած, Լրեակայում էի, թե դոյակ է, այն էլ վատը չէ: Բայց քանի որ դոյակ չէ, այլ իջևանատուն, ինձ մնում է խնդրել ձեզանից, որ վարձից ազատեք: Ծա շեմ կարող փոփոխել թափառական ասպետների կանոնադրութիւնը, որի համաձայն, ինչպես ինձ լավ հայտնի է, քանի որ գրքերում երբեք հակառակը չեմ հանդիպել, նրանք երբեք գիշերելու կամ որևէ այլ բանի համար չէին վճարում հյուրանոցին, որտեղ իջևանում էին: Նրանք իրավամբ և ըստ օրինաց ամենուրեք լավագույն ընդունելութիւն էին վայելում, մի բան, որ նրանց ցույց էր տրվում ի վարձատրութիւն մեծամեծ նեղութիւնների, որ նրանք կրում են զօր ու գիշեր անցկացնելով արկածների որոնումների մեջ, ամառ ու ձմեռ, ոտքով թե ձիով, տանելով քաղց ու ծարավ, շոգ ու սառնամանիք, ենթարկվելով երկնային արհամարիքների բոլոր փոփոխութիւններին և երկրային աղետներին:

— Այդ գործերից խելքս քիչ է կտրում,— հայտարարեց իջևանատերը,— վճարեցեք ինձ ինչ որ հարկն է, թե չէ ես գործ չունեմ զանազան առասպելների և ասպետութիւնների հետ:

— Դուք անտաշ ու մուռտառ միկիտանչի եք,— բացականչեց դոն Կիխոտը:

Սվ, խթանելով Ռոսինանտին, ճոճելով իր գեղջկական նիզակը, նա անարգել դուրս եկավ բակից և բավական ճանապարհ կտրեց, առանց ետ նայելու, որ տեսնի, գալի՞ս է արդյոք իր հետևից զինակիրը, թե ոչ:

Տեսնելով, որ կենվորը գնաց առանց վճարելու, իջևանատերը իր հաշիվը ներկայացրեց Սանչո Պանսային: Սանչոն հայտարարեց, թե քանի որ իր տերը չկամեցավ վճարել, ապա ինքը ավելի քիչ է հակված վճարելու, որովհետև, թափառական ասպետի զինակիր լինելով, նա ենթարկվում է նույն կանոնադրութեան, ինչ որ իր տերը, որը թույլ չի տալիս իջևանատներում և պանդոկներում որևէ բանի համար վճարել: Իջևանատերը լրջորեն զայրացավ և սպառնաց, որ եթե Սանչոն չվճարի, ապա նրա հախիցը կգա իր գիտցած ձեւով: Բայց Սանչոն դրան պատասխանեց, թե հնազանդելով ասպետական կանոնադրութեան, նա ոչ մի գրոշ չի վճարի, անգամ իր կյանքի գնով, որովհետև նա չի ուզում, որ իր պատճառով պախարակված լինի թափառական ասպետների գեղեցիկ և հին սովորութիւնը և որպեսզի իրենից հետո աշխարհ եկած զինակիրները չկարողանան դժգոհել իրենից և կշտամբել այնքան արգար օրենքի խախտման համար:

Դժբախտ Սանչոյի շար բախտից իջևանատան կենվորների մեջ չորս տեղացի մահուղագործ կային Պոտրոսից, որ գտնվում է Կորդովում, և էլի երկու սրիկա Սևիլիայից, բոլորն էլ ուրախ, կտրիճ ու հանաքչի տղաներ: Նրանց բոլորի մտքում միևնույն միտքը ծագեց, և խոսքները մեկ անելով, նրանք



շրջապատեցին Սանդոյին և, քաշելով, քաշքշելով, էշից վայր բերին: Նրան-  
ցից մեկը վազեվազ գնաց բերեց իջևանատիրոջ վերմակը, որի վրա և գցե-  
ցին Սանդոյին: Սակայն աչքերը բարձրացնելով և նկատելով, որ առաստաղը  
ցածր է իրենց մտահղացման համար, նրանք վճռեցին հետևի բակն անցնել,

որի առաստաղը երկնակամարն էր: Այստեղ Սանչոյին վերմակի մեջտեղը դնելով, նրանք սկսեցին վեր-վեր գցել:

Վեր գցվողի տառապալից ճիչերը այնքան սուր էին, որ հասան իր տիրոջ ականջին, որը սկզբում կարծեց, թե իրեն որևէ նոր արկած է հանդիպել, սակայն շուտով ճանաչեց զինակրի ձայնը: Շուտ տալով ձիու գլուխը, նա ահավոր արագությամբ քշեց, ետ եկավ իջևանատուն և, դարպասը փակ գտնելով, սկսեց շուրջը պտույտ գալ, որոնելով մուտքը: Սակայն հագիվ էր մոտեցել հետին բակի ցանկապատին, որը շատ էլ բարձր չէր, տեսավ այն ուրախ խաղը, որ խաղում էին իր զինակրի գլխին: Նրա աչքի առջև զինակիրը թռչում էր օդ և ապա վայր ընկնում այնպիսի զվարճալի արագությամբ, որ եթե գոն կիսոտի ցասումը չբռնկեր, կարելի է համոզված լինել, որ նա ծիծաղից կթուլանար: Նա փորձեց ձիուց անցնել ցանկապատի վրա, բայց այնքան թույլ ու ջարդված էր, որ չկարողացավ անգամ ձիուց իջնել: Ուստի, շարունակելով ձիու վրա նստած մնալ, նա սկսեց շարաճճիների վրա կարկուտի պես այնպիսի անեծք ու հիշոց թափել, որ գրիչս հրաժարվում է վերարտադրել: Իսկ հանաքչիները, չնայած դրան, չէին դադարում ուրախ-զվարթ աշխատելուց, ինչպես և չէին դադարում օդում թռչկոտող Սանչոյի վայնասունները, որոնց մեջ միախառնվում էին աղերսանքն ու սպառնալիքը: Այդ ամենը, սակայն, նրան քիչ էր օգնում: Վերջապես տղերքը, հոգնելով, իրենք թողին խաղը: Այստեղ նրանք էլ քաշեցին, նստեցրին Սանչոյին փալանի վրա և վերմակը գցեցին նրա ուսին, իսկ սրտացավ Մարիտոնեսը, տեսնելով, թե նա ինչպես է տանջվել, վճռեց, որ պատեհ կլինի կազդուրել նրան մի գավաթ ջրով, որը և բերեց նրա համար ջրհորից: Սանչոն վերցրեց գավաթը և արդեն տարել էր բերանը, որ հանկարծ կանգ առավ, լսելով իր տիրոջ բարձր ճիչը.

— Սանչո, զավակս, ջուր մի՛ խմիր: Մի՛ խմիր, զավակս, եթե չես ուզում մեռնել: Տես, ահա հրաշագործ բալասան (այս խոսքերի վրա նա ցույց տվեց թիթեղյա ամանը), որի երկու կաթիլը քեզ իսկույն կբուժի:

Բայց, ի պատասխան, Սանչոն միայն խեթ-խեթ նայեց նրան և ոչ պակաս բարձր բղավեց.

— Ձերդ ողորմածությունը մոռացել է, հա՞, որ ես ասպետ չեմ և կամենում է, որ ես այս գիշերվանից մնացած վերջին փորոտիքս փսխե՞մ: Ձեր խմիչքը՝ ձեզ մնա, հազար սատանա, իսկ ինձ հանգիստ թողեք:

Վերջին խոսքերը նա արտասանեց արդեն քիթը կոխած գավաթի մեջ: Սակայն առաջին իսկ կումից նկատելով, որ հասարակ ջուր է, նա չկամեցավ շարունակել և գինի խնդրեց: Գինին խմելուց հետո՝ նա կրունկներով տվեց էջի կողերին և, դարպասը լայն բանալով, դուրս եկավ բակից, սաստիկ գոհ մնալով, որ բան չվճարեց և իր ասածը եղավ, թեև ոչ առանց վնասի իր սովորական երաշխավորների՝ կողերի համար: Ծիշտ է, իջևանատեղը պահել էր նրա ճամփորդական պայուսակը՝ հաշվի դիմաց, բայց Սանչոն դուրս գալուց այնքան հուզված էր, որ դա չնկատեց:

ՈՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է  
ՍԱՆՉՈ ՊԱՆՍԱՅԻ ԶՐՈՒՅՑԸ ԻՐ ՏԻՐՈՋ ՀԵՏ,  
ԻՆՉՊԵՍ ԵՎ ԶԱՆԱԶԱՆ ՈՒՐԻՇ ԱՐԿԱԾՆԵՐ,  
ՈՐ ԱՐԺԱՆԻ ԵՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ

Սանչոն հասավ իր տիրոջը այնքան ջարդված ու թուլացած, որ ուժը չէր պատում նույնիսկ էշին շու ասելու: Տեսնելով նրան այդ վիճակում, դոն Կիխոտն ասաց.


— Հիմա ես սկսում եմ հավատալ, իմ բարի Սանչո, որ այդ դոյակը կամ իջևանատունը իրոք կախարդված է: Որովհետև ովքե՞ր կարող էին լինել քեզ ծաղրուծանակ անող այն էակները, եթե ոչ ուրուներ և այն աշխարհից դուրս եկած ոգիներ: Դրա հաստատումը ես նրա մեջ եմ տեսնում, որ երբ ցանկապատի վրայով հետևում էի քո տխուր ողբերգության ընթացքին, ես ի վիճակի չէի ոչ միայն ցանկապատի մյուս կողմն անցնելու, այլև անգամ Ռոսինանտից վայր գալու: Անտարակույս, ինձ հմայել էին: Որովհետև, երգվում եմ իմ պատվով, եթե միայն ես կարողանայի բակն անցնել կամ իջնել ձիուց, ես քո վրեժն այնպես կլուծեի, որ նրանք ամբողջ կյանքում չէին մոռանա:

Հանկարծ դոն Կիխոտը ճանապարհին նկատեց իրենց դիմաց սլացող ահագին ու թանձր փոշու ամպ: Տեսնելով այդ, նա ետ դառավ Սանչոյին և ասաց.

— Հասավ այն օրը, օ՛, Սանչո, երբ դու կտեսնես, թե ինչ հաջողություն է պատրաստել ինձ համար բախտը: Ահա այն օրը, ասում եմ քեզ, երբ իմ բազուկի ողջ զորությունը պիտի հայտաբերվի, և երբ ես կկատարեմ գործեր, որոնք կգրվեն Փառաց մատյանում՝ գալիք սերունդների համար: Տեսնո՞ւմ ես, Սանչո, փոշու այն ամպը, որ բարձրանում է այնտեղ: Դա մի ահագին զորք է զանազան, բազմաթիվ ցեղերից, որ մեր կողմն է դիմում:

— Որ այդպես է,— հայտարարեց Սանչոն,— կնշանակի երկու զորք է, որովհետև մյուս կողմից ճիշտ դրա նման մի ուրիշ ամպ էլ է բարձրանում:

Շուտ գալով, դոն Կիխոտը համոզվեց, որ Սանչոն ճիշտ էր ասում: Եվ ծայր աստիճան ուրախացած, նա, առանց տատանվելու, որոշեց, որ երկու բանակ է շարժվում, որոնք պիտի մոտենան իրար և կռվեն լայնածավալ դաշտում: Որովհետև ամեն ժամ, ամեն վայրկյան, նրա երևակայության մեջ նրկարվում էին մարտեր, կախարդանքներ, արկածներ, սխրագործություններ, սիրային խելագարություններ, որոնց մասին պատմում են ասպետական վեպերը, և նրա բոլոր խոսքերը, գործողություններն ու մտքերը այդ կողմն էին ուղղված: Իրականում փոշու ամպերը, որ նա նկատել էր, բարձրացրել էին ոչխարների երկու հոտերը, որ առաջ էին շարժվում միևնույն ճամփով՝ հակառակ ծայրերից, բայց փոշին խանգարում էր տեսնել նրանց, մինչև որ նրանք բոլորովին չմոտեցան: Սակայն դոն Կիխոտն այնքան կրակոտ էր պլենդում, թե դա երկու բանակ է, որ Սանչոն ի վերջո ինքն էլ հավատաց և ասաց.



— Բա հիմա ի՞նչ պիտի անենք, պարոն:

— Ի՞նչ անենք,— բացականչեց դոն Կիխոտը,— օգնության հասնենք և պաշտպանենք ավելի թույլ կողմը, որ պաշտպանության կարիք ունի: Իմացած եղիր, Սանչո, որ մեզ ընդառաջ եկող բանական առաջնորդում է Ալիֆանֆարոն կայսրը, Տրապորանա\* խոշոր կղզու տիրակալը, իսկ մեր հետևից եկող զորքի առաջնորդը նրա թշնամին է, գարամանտների\*\* թագավորը, «թևը վեր քաշած» Պենտապոլինը, որը նրա համար է այդպես կոչվել, որ կովի գնալուց միշտ մերկացնում է իր աջը:

Եվ շարունակելով նույն եղանակով, դոն Կիխոտը բազմաթիվ ասպետների անուններ հիշատակեց, որ գտնվում էին երկու կարծեցյալ բանականերում, յուրաքանչյուրին հատուկ զինանշան, գույն, նշան ու ազդանշան տալով, որ հուշում էր նրան շտեմնված խելագարությունը:

Քանի՛-քանի երկրի անուն տվեց նա, քանի՛ ժողովուրդ հիշատակեց, վայրկենապես ամեն մեկին առանձին հատկություն վերագրելով: Եվ այս ամենը նա քաղում էր իր կարդացած սուտ վեպերից, որոնցով լի էր նրա գլուխը:

Սանչոն ուշի-ուշով ունկնդրում էր նրան, սիրտ շանելով խոսք անգամ ասելու և միայն մեկ-մեկ գլուխը շուտ էր տալիս, որ տեսնի այն ասպետներին ու հսկաներին, որոնց հիշատակում էր իր տերը: Բայց որովհետև նրան շահ-ջողվեց երևան բերել նրանցից և ոչ մեկին, նա վերջ ի վերջո ասաց.

— Ո՞ր ջհաննամն են կորել, պարոն, բոլոր այդ ասպետներն ու հսկաները, որոնց մասին խոսում է ձերդ ողորմածությունը: Ես, գոնե, նրանցից և ոչ մեկին չեմ տեսնում: Թե՞ նրանք բոլորն էլ նույնպես հմայված են, ինչպես ուրտները, որ հայտնվեցին մեզ անցած գիշեր:

— Այդ ինչե՞ր ես խոսում դու,— բացականչեց դոն Կիխոտը:— Մի՞թե դու չես լսում ձիերի խրխնջոցը, թմբուկների թնդյունը և եղջերափողերի ձայնը:

— Ես ոչինչ չեմ լսում,— պատասխանեց Սանչոն,— բացի գառան ու ոչխարի մայունից:

\* Ասված է Տրապորանա փոխանակ Տապորանա, որ Յելլոն կղզու հին անունն է:

\*\* Ըստ հին հեղինակների, այդպես է կոչվել Աֆրիկայի խորքում բնակվող ժողովուրդը:

Եւ դա զուտ ճշմարտութիւնն էր, որովհետեւ այդ միջոցին երկու հոտը բո-  
լորովին մոտեցել էին իրար:

— Ահ, որ քեզ պատել է,— ասաց դոն Կիխոտը,— խանգարում է, Սան-  
չո, ճիշտ տեսնել ու լսել: Երկյուղի արտահայտութիւններին մեկն էլ այն է,  
որ մեր զգացմունքները կորցնում են պայծառութիւնը և ամեն ինչ մեզ աղ-  
ճատված է ներկայանում: Թե որ դու այդքան վախեցել ես, ապա մի կողմ  
քաշվիր և թող որ ես մենակ գործեմ, որովհետեւ ես մենակ էլ հերիք եմ, որ-  
պեսզի ապահովեմ հաղթանակը նրանց, որոնց օգնելու լինեմ:

Այս խոսքերով նա խթանները խրեց Ռոսինանտի կողերը և, նիզակը ճո-  
ճելով, կայծակի արագութեամբ սլացավ բլուրն ի վար:

— Տե՛ր իմ, պարո՛ն դոն Կիխոտ,— սկսեց բղավել Սանչոն,— վերադար-  
ձե՛ք, ես իմ հոգին, դուք գառների ու ոչխարների վրա եք հարձակվում: Վե-  
րադարձե՛ք, աղաչում եմ հանուն իմ հոր: Այդ ի՛նչ խելագարութիւնն է: Հա-  
վատացեք ինձ, այստեղ ո՛չ հսկա կա, ո՛չ ասպետ, ո՛չ կատու, ո՛չ շղթահ, ո՛չ  
ամբողջ, ո՛չ էլ քառափեշ վահաններ, ո՛չ կապույտ երկինք, ո՛չ էլ ձեր բոլոր  
սատանայական բաները: Այդ ի՛նչ է անում նա:

Բայց ոչինչ չէր կարող կանգնեցնել դոն Կիխոտին, որ բարձրաձայն բա-  
ցականչում էր.

— Համարձակ, «թեք վեր քաշած» Պենտապոլին, ազնիվ կայսեր դրո-  
շակներին հավատարիմ ասպետներ: Հառաջ, ինձ հետ: Դուք կտեսնեք, թե ինչ  
արագ ես վրիժառու կլինեմ նրա թշնամի Ալիֆանֆարոն Տրապոբանացու:

Այս կոչերով նա ներխուժեց ոչխարի հոտի խորքն ու սկսեց նրանց ծակ-  
ծկել իր նիզակով այնպիսի կատաղի խիզախութեամբ, ասես իր մահացու  
թշնամիները լինեին:

Հովիվները փորձեցին աղաղակներով նրան կանգնեցնել, սակայն տես-  
նելով, որ խոսքերը չեն օգնում, նրանք դիմեցին իրենց պարսատիկներին, և  
դոն Կիխոտի ականջներն սկսեցին ողջունել բռունցքի մեծութեան քարեր:

Սակայն դոն Կիխոտը քարերին էլ ուշ չդարձրեց:

Մի բավական մեծ քար դիպավ նրան և ջարդեց նրա երկու կողը: Զգա-  
լով հարվածը, դոն Կիխոտը վճռեց, որ մեռնում է կամ մահացու վերք է ստա-  
ցել: Սակայն մտաբերելով, որ բալասան ունի, նա ամանը բռնեց, տարավ բե-  
րանն ու սկսեց հեղուկը փորն ածել: Սակայն նա, իր կարծիքով, դեռ բավա-  
կանաչափ կուլ չէր տվել, որ վրա հասավ երկրորդ քարը, որ ճարպկորեն նետ-  
ված լինելով, դիպավ նրա ձեռքին և ոչ միայն ջարդեց ամանը, այլև փշրեց  
նրա երեք-չորս ատամը, ու ճզմեց երկու մատը: Եթե առաջին հարվածը վատ  
չէր, ապա երկրորդը գետին գլորեց խեղճ ասպետին:

Հովիվները մոտ վազեցին, կարծելով, որ նա վախճանվեց: Հավաքելով  
իրենց հոտը, նրանք գցեցին ուսերին սպանված յոթ ոչխարները և, առանց  
երկար ու բարակ խորհելու, արագ-արագ հեռացան:

Սանչոն, որ մնացել էր բլուրի վրա և դիտում էր իր տիրոջ խելագարու-  
թիւնը, փետտում էր մազերը և անիծում այն օրն ու ժամը, երբ բախտը  
միացրեց իրենց: Տեսնելով, որ դոն Կիխոտը պառկած է գետնին և որ հովիվ-  
ներն արդեն հեռացել են, նա իջավ բլուրից և մոտեցավ դոն Կիխոտին, որ  
սաստիկ ողբալի վիճակի մեջ էր, թեև ուշագնաց չէր եղել:

— Զէի՞ աշխատում ես, պարոն դոն Կիխոտ,— ասաց Սանչոն,— ձեզ ետ կասեցնել: Զէի՞ ասում, թե դա բանակ չէ, այլ ոչխարի հոտ:

— Ահա թե իմ ստոր թշնամին, կախարդը, ինչ փոփոխում և կերպարանափոխութիւն է սարքում: Իմացած եղիր, Սանչո, որ կախարդների համար լավելի հեշտ բան չկա, քան մեզ ստիպել տեսնելու այն ամենը, ինչ նրանք կամենան: Այսպես էլ այս անպիտանը, որ հալածում է ինձ, խանդելով իմ փառքին, որ պիտի վայելի այս ճակատամարտից հետո, թշնամի բանակը ոչխարի հոտ դարձրեց: Եթե չես հավատում, խնդրեմ, մի բան արա, որ ցրես քո տարակուսանքն ու համոզվես, որ ես ճիշտ եմ ասում: Նստիր քո էջը և կամաց-կամաց գնա նրանց հետևից, և դու կտեսնես, որ մի քիչ հեռանալով, նրանք իրենց նախկին կերպարանքը կընդունեն և ոչխարից կրկին ամենախսկական մարդիկ կդառնան, այնպես, ինչպես ես նկարագրել եմ նրանց: Միայն թե իսկույն մի՛ գնա, որովհետև հիմա ես կարոտ եմ քո խնամքին և օգնութեանը: Մոտ եկ և տես՝ քանի՞ ատամ եմ կորցրել: Ինձ թվում է, թե այլևս ոչ մեկը չի մնացել:

Դոն Կիխոտը բարձրացավ և, ձախ ձեռքը դնելով բերնին, որ ատամները շթափվեն գետին, աչ ձեռքով բռնեց Ռոսինանտի սանձը, որ ամբողջ այդ ժամանակ ոչ մի քայլ չէր հեռացել իր տիրոջից (այդքա՞ն հանգիստ ու հավատարիմ անասուն էր) և մի կերպ հասավ այնտեղ, որտեղ կանգնած էր Սանչոն, կուրծքը հենած իր էջին և ձեռքով բռնած թուշը, դառը մտածմունքի մեջ: Տեսնելով նրան այդ դիրքում, որ խորունկ վիշտ էր արտահայտում, դոն Կիխոտն ասաց.

— Իմացած եղիր, Սանչո, ով որ ուզում է ուրիշներից բարձր լինել, նա ուրիշներից շատ էլ պիտի անի: Մեր գլխին ճայթած բոլոր այս փոթորիկները վկայում են, որ շուտով երկինքը կբացվի, և մեր գործերը լավ կընթանան: Որովհետև ո՛չ վիշտը, ո՛չ խինդը չափազանց տևական չեն լինում, իսկ դրանից բխում է, որ եթե վիշտը շատ երկար է տևել, ապա ուրեմն մոտ է խինդը: Ուստի ինձ հասած և քեզ բնավ չդիպած տառապանքների համար այլևս մի վըշտանար:

— Ո՞նց թե չդիպած,— գոռաց Սանչոն:— Իսկ նրան, որին վերմակի վրա վեր-վեր թոցրին, մայր չի՞ բերել: Իսկ պայուսա՞կը, որ կորել է բոլոր իմ ունեցած-չունեցածով, ուրիշի՞նն է, իմը չէ՞:

— Պայուսակը կորե՞լ է,— հարցրեց դոն Կիխոտը:

— Ցավն էլ այն է, որ կորել է,— պատասխանեց Սանչոն:

— Ասել է թե մենք այսօր ճաշելու հնարավորութիւն չենք ունենալու,— ասաց դոն Կիխոտը:

— Դե իհարկե չէինք ունենա,— պատասխանեց Սանչոն,— եթե այս արոտներում չլինեին, ձերդ ողորմածութեան ասելով, ձեզ լավ ծանոթ խոտերը, որոնք հաջողութեամբ կարող են փոխարինել սովորական անդին՝ ձերդ ողորմածութեան պես ճախորդ թափառական ասպետի համար:

— Այնուամենայնիվ,— նկատեց դոն Կիխոտը,— ես կնախընտրեի լավ հացը կամ նույնիսկ հացի կտոր, հետն էլ մի երկու ապխտած սարդին:

Նրանք առաջ ընթացան, բայց շատ դանդաղ, որովհետև դոն Կիխոտի ծնոտների անդադրում ցավը թույլ չէր տալիս արագացնելու ընթացքը:

## ՍԱՆՇՈ ՊԱՆՍԱՅԻ

ԵՎ ՆՐԱ ՏԻՐՈՋ ԽԵԼԱՑԻ ԶՐՈՒՅՑԻ, ՆՆՋԵՑՅԱԼԻ, ԻՆՉՊԵՍ ԵՎ ԱՅԼ  
ԱՐՏԱՍՈՎՈՐ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Վրա հասավ գիշերը, իսկ դոն Կիխոտն ու Սանչո Պանսան մնացել էին ճամփին, առանց օթևանի: Բացի այդ, նրանց սկսել էր կեղեքել քաղցը, որովհետև պայուսակի հետ կորցրել էին իրենց պաշարը: Եվ այստեղ, ի լրումն ամենի, նրանց պատահեց ամենախսկական, բնավ ոչ մտացածին արկած: Թեև գիշերը մութն էր, նրանք առաջ էին շարժվում, որովհետև, Սանչոյի կարծիքով, քանի որ սա բանուկ ճանապարհ է, ապա մի երկու մղոնից հետո պետք է որ իջևանատուն լիներ:

Եվ ահա երբ նրանք, երկուսով՝ սոված զինակիրն ու իր տերը, որ նույնպես դեմ չէր մի բան ուտելու, այսպես թափառում էին մթության մեջ, հանկարծ ճամփին բազմաթիվ կրակներ տեսան, որ ընդառաջ էին շարժվում և նման էին մոլորված աստղերի: Նրանց տեսքից Սանչոն սարսափահար բռնեց ձիու սանձը, և երկուսն էլ կանգ առան, ուշի-ուշով մտիկ տալով, թե դա ինչ կարող է լինել:

Նրանք նկատեցին, որ կրակները իրենց կողմն են շարժվում և քանի մոտենում, այնքան մեծանում են: Այդ տեսնելով, Սանչոն սկսեց դողդողալ, ինչպես սնդիկից թունավորված մարդ, ասենք, դոն Կիխոտի մազերն էլ բիզբիզ կանգնեցին:

— Անտարակույս, Սանչո, սա ամենամեծ և վտանգավոր արկածներից մեկն է, երբ ես պետք է ի հայտ բերեմ իմ ողջ ուժն ու արիությունը:

— Կորա՛,— բացականչեց Սանչոն:— Եթե սրանք էլ են տեսիլներ, ապա որտեղի՞ց կողեր գտնեմ, որ դիմանամ նոր քոթակին:

— Եթե նույնիսկ ամենախսկական տեսիլներ էլ լինեն,— հայտարարեց դոն Կիխոտը,— դարձյալ ես թույլ չեմ տա, որ քո շորի մեկ թելին անգամ դիպնե: Եթե անցյալ անգամ նրանք քեզ փորձանքի մեջ գցեցին, ապա միմիայն այն պատճառով, որ ես չկարողացա ցանկապատից բախն անցնել: Բայց հիմա մենք բաց դաշտում ենք, այստեղ թուր քաշելու տեղ կա: Համենայն դեպս, Սանչո, մի վհատիր: Դու հիմա գործով կտեսնես, թե ես ինչ արիություն տեր եմ:

Ճանապարհից մի քիչ ծովելով, նրանք նորից սկսեցին պրպտող հայացքով զննել, ճգնելով հասկանալ, թե ինչ կրակներ են շարժվում իրենց կողմը:

Շուտով նրանք նշմարեցին լայն վերարկուներ հագած բազմաթիվ կերպարանքներ: Այս ահավոր տեսարանից Սանչոն սարսափեց: Նրա ատամները զարկվում էին իրար, երբ նրանք ամեն ինչ տեսան: Նրանց հայացքի առջև ներկայացան մոտ քսան հեծյալ ճերմակ, լայն վերարկուներով, որ գալիս էին ջահերը ձեռքներին, հուղարկավոր սայլի առջևից, որին հետևում էին ևս վեց նման հեծյալ, որոնց սգո հագուստները հասնում էին մինչև իրենց ջորիների սմբակները: Ոչ դրանք ջորիներ էին և ոչ թե ձիեր, իսկույն երևում էր նրանց դանդաղ քայլերից:



Լայն վերարկուներով հեծյալները դանդաղ շարժվում էին առաջ, քթի տակ ինչ-որ մրմնջալով կամացուկ ու լալազին ձայնով:

Այսպիսի արտասովոր մի տեսարան, այսքան տարածամ և այսպիսի ամայի մի վայրում, կարող էր խռովել ում ասես, ոչ միայն Սանչոյին: Ավա՛ղ, ինչո՞ւ նույնը չպատահեց դոն Կիխոտին, որի երևակայությանը պատկերվեց մեկն այն արկածներից, որ նկարագրված են նրա սիրած վեպերում:

Նրան թվաց, թե հուղարկավորման սայլը սգո կառք է, որով տանում են ծանր վիրավորված կամ սպանված մի ասպետի և որ հենց ինքը, դոն Կիխոտը, պետք է նրա վրեժը լուծի: Ուստի, առանց երկար խորհելու, նա ճոճեց իր նիզակը, ամրացավ թամբի վրա և վեհ ու կտրիճ տեսքով դուրս ելավ ճամփի մեջտեղը, որտեղից պիտի անցնեին լայն վերարկուներով հեծյալները: Երբ նրանք բոլորովին մոտեցան, դոն Կիխոտը բարձրաձայն գոչեց.

— Կանգ առեք, ասպետներ, կամ ովքեր էլ լինեք և իսկույն ասացեք ինձ, թե ովքե՞ր եք դուք, ո՞ւր եք գնում, որտեղի՞ց եք գալիս և ո՞ւմ եք տանում սայլով: Որովհետև, ըստ ամենայնի, երևում է, որ դուք ինչ-որ ոճրագործության մեղապարտներ եք կամ զոհեր: Ուստի ես պետք է իմանամ, թե բանն ի՞նչ է, որպեսզի կամ պարտեմ ձեզ՝ ձեր արածի համար, կամ վրեժ լուծեմ ձեզ հասցրած վիրավորանքի համար:

— Մենք շտապում ենք,— ասաց լայն վերարկու հագածներից մեկը,— իսկ մինչև իջևանատուն դեռ հեռու է: Ուստի մենք ժամանակ չունենք՝ քեզ երկար ու բարակ բացատրություն տալու:

Եվ, խթանելով ջորուն, կամեցավ նրա կողքից անցնել:

Դոն Կիխոտը, այդպիսի պատասխանից սաստիկ վիրավորված, բռնեց ջորու նոխտան և ասաց.

— Կանգ առեք, համբակներ, և պատասխանեցեք իմ հարցերին: Հակառակ դեպքում՝ ես ձեզ բոլորիդ մարտի եմ կանչում:

Ջորին վախկոտ էր և, երբ նրա նոխտան բռնեցին, նա այնպես խրտնեց, որ ծառս եղավ և վրան նստածին գետին գցեց: Կողքից գնացող ծառան, տեսնելով, որ տերը վայր ընկավ, սկսեց հայհոյել դոն Կիխոտին: Այդ ժամանակ առանց այն էլ կատաղած դոն Կիխոտը իսկույն նշան բռնեց իր նիզակով և հարձակվեց սև հագնված մարդկանցից մեկի վրա, որ սաստիկ ջարդ կրելով, գետին գլորվեց: Ապա դոն Կիխոտը հարձակվեց մյուսների վրա և պետք էր տեսնել, թե ի՞նչ արագությամբ էր նրանց հախիցը գալիս: Թվում էր, թե Ռոսինանտը թև էր առել, այնպես թեթև և հպարտ սուրում էր ետ ու առաջ: Լայն վերարկուներով հեծյալները բոլորն էլ երկչոտ ու անզեն մարդիկ էին, ուստի մեկ ակնթարթում, առանց յայքարի, նրանք թողին ճամփան և փախան դաշտի զանազան կողմերը, վառ ջահերը ձեռքներին: Նրանք նման էին դիմակահասնդեսում ուրիշի շորեր հագած մարդկանց, որ զվարճանում են բարեկենդանի գիշերներին: Իսկ սզվորների ոտքերին փաթաթվել էին իրենց լայնարձակ վերարկուների փեշերը, ուստի նրանք չէին կարող արագ շարժվել, մի բան, որ դոն Կիխոտին թույլ էր տալիս առանց դժվարության փառավորապես ջարդուբուրդ անել նրանց բոլորին և ստիպել, որ կամա-ակամա կովի դաշտը իրեն զիջեն: Եվ նրանց թվում էր, թե դա մարդ չէ, այլ սատանա, որ հանդես է եկել դժոխքից, որպեսզի սայլի վրա դրած դին գողանա:



Նայելով այս ամենին, Սանչոն միայն զարմանում էր իր տիրոջ խիզախությանից և խորհում.

— Օրևի, իրոք, իմ տերը այնպես խիզախ ու զորեղ է, ինչպես որ ասում է:

Ջորուց վայր ընկածի մոտ, գետնին, մի վառ ջահ կար, որի լույսից դոն Կիխոտը նկատեց ընկածին: Մոտենալով, նա իր նիզակի սուր ծայրը մոտեցրեց նրա դեմքին և հրամայեց, որ անձնատուր լինի, թե չէ կսպանի: Սա պատասխանեց.

— Ես ավելի քան անձնատուր եմ եղել, որովհետև ոտքս շարդված է և շեմ կարող տեղիցս շարժվել: Աղաչում եմ, որ ձերդ ողորմածությունը չսպանի ինձ:

— Ո՞ր սատանան ձեզ այստեղ բերեց, — հարցրեց դոն Կիխոտը:

— Իմ շար բախտը, պարոն, — պատասխանեց պարտվածը:

— Ջեր բախտն առավել վատթար կլինի, — ասաց դոն Կիխոտը, — եթե դուք կարգին չպատասխանեք այն հարցերին, որ ես նոր տվի ձեզ:

— Սիրով կբավարարեմ ձերդ ողորմածությանը, — պատասխանեց գետնին ընկածը: — Թույլ տվեք զեկուցեմ ձերդ ողորմածությանը, որ մենք ուղեվորվում էինք Սեզովիա, ուղեկցելով սալի վրա դրած մի ազնվականի դիակին, որ վախճանվել է Բահսում: Նա սկզբում այնտեղ է թաղված եղել, իսկ հիմա մենք նրա աճյունը փոխադրում ենք նրա ծննդավայրը՝ Սեզովիա, իր տոհմական դամբարանը:

— Ո՞վ է սպանել նրան, — հարցրեց դոն Կիխոտը:

— Ջերմը, որ նրան գերեզման տարավ:

Դոն Կիխոտը ձայն տվեց Սանչոյին: Սակայն սա ստիպեց իրեն երկար սպասել, զբաղված լինելով մի շորու բեռ քակելով: Այդ շորին գալիս էր այս բարի մարդկանց հետևից՝ բեռնված ամեն տեսակ ուտելիքներով: Իր վերարկուն պարկ դարձնելով և մեջը դնելով այնքան բարիք, ինչքան կարողացավ վերցնել և մեջը տեղավորել, Սանչոն բեռը զցեց էջի վրա և միայն դրանից հետո գնաց տիրոջ մոտ: Սա օգնեց վայր ընկածին դուրս գալու շորու տակից և ապա, խեղճին փալանի վրա նստեցնելով, ջահը տվեց ձեռքը: Հետո առաջարկեց նրան, որ գնա հասնի իր ուղեկիցներին և հայտնի նրանց, որ ինքը՝

դոն Կիխոտը, ներողութիւն է խնդրում ահամա հասցրած վիրավորանքների համար:

Սանչոն դրան ավելացրեց.

— Եթե այդ պարոնները ցանկանալու լինեն իմանալ, թե ով է այն քաշարին, որ այնքան ճարպիկ իրենց հախիցը եկավ, ասացեք նրանց, ձերդ ողորմածութիւն, որ հռչակավոր դոն Կիխոտ Սանչացին է, Վշտակերպ Ասպետ կոչեցյալը:

Երբ շորին շարժվեց. դոն Կիխոտը հարցրեց Սանչոյից, թե ինչու հանկարծ նրա խելքին փշեց իրեն Վշտակերպ Ասպետ անվանել:

— Իսկույն բացատրեմ ձեզ,— պատասխանեց Սանչոն:— Զահի լույսի տակ մի վայրկյան ձեզ տեսա թե չէ, այն ջահի, որ դժբախտը հիմա տանում է, իսկույն ինձ թվաց, որ ձեր տեսքը, ճիշտն ասած, այնքան թշուառ է, որքան առաջ երբեք չէի տեսել: Երևի դա նրանից է, որ ձեզ սաստիկ հոգնեցրեց ճակատամարտը, գուցե և ատամների կորուստը:

— Պատճառը բնավ այդ չէ,— պատասխանեց դոն Կիխոտը,— այլ ամենից շուտ այն, որ իմաստունը, որին վիճակված է գրելու իմ սխրագործութիւնների պատմութիւնը, երևի հարմար է դատել, որ ես ինձ համար որևէ մականուն ընտրեմ, ինչպես անցած ժամանակների բոլոր ասպետները: Մեկը կոչվելիս է եղել Բոցավառ Թրի Ասպետ, մյուսը՝ Միապող, սա՛ Կույսերի Ասպետ, նա՛ Փյունիկի կամ Արծվի ասպետ, կամ թե չէ Մահվան Ասպետ, և այդ անուններով նրանք հայտնի դարձան երկրագնդի վրա: Այ, ես կարծում եմ, որ այդ իմաստունն է ներշնչել քեզ ինձ Վշտակերպ Ասպետ կոչելու: Այսուհետև ես ընդունում եմ այդ անունը, որպեսզի ընդմիշտ մնա, առաջին իսկ հնարավորութիւն դեպքում կհրամայեմ, որ վահանիս վրա մի վշտալից դեմք նկարեն:

— Կարիք չկա դրա վրա ժամանակ և փող ծախսելու,— ասաց Սանչոն:— Բավական է, որ դուք բաց անեք ձեր երեսը և ցույց տաք բոլոր ցանկացողներին, և ամեն մեկը, առանց վահանի վրա որևէ նկար տեսնելու, իսկույն ձեզ Վշտակերպ Ասպետ կկոչի, կարող եք վստահ լինել: Հավատացնում եմ ձեզ, պարոն, առական անխոտելի է, քաղցն ու ջարդված ատամները այնպես են պճնել ձեր դեմքը, որ կրկնում եմ, դուք կարող եք միանգամայն յոլա գնալ առանց վշտատեսիլ նկարի:

Երկու բլուր անցնելուց հետո նրանք շուտով հասան մի ընդարձակ հովիտ: Սանչոն ցած բերեց իր էշի բեռը, ապա, մեկնվելով կանաչ խոտի վրա, ասպետն ու զինակիրը, ի հաստատումն կանոնի, թե լավագույն խոհարարը քաղցն է, իսկույն նախաճաշեցին, ճաշեցին և ընթրեցին, լցնելով իրենց ըստամոքսը բազմաթիվ սառը խորտիկներով, որ պարոն տերտերները (հազվադեպ իրենց անձը մոռացող) տանում էին իրենց հետ՝ ջորու վրա դրած:

Սակայն այստեղ մի նոր ցավ դուրս եկավ, վատթարագույնը Սանչոյի աչքում, այսինքն՝ նրանք ոչ միայն գինի, այլ անգամ ջուր չունեին, որ կոկորդները թրջեին: Այստեղ ծարավից պապակվող Սանչոն նկատելով, որ դաշտը ծածկված է կանաչ, թարմ խոտով, դոն Կիխոտին դիմեց, իսկ թե ինչ ասաց, մենք կիմանանք հետևյալ գլխից:

ՉՏԵՄՆՎԱԾ ԵՎ ՉԼՍՎԱԾ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ,  
ՈՐ ԵՎ ՈՉ ՄԵԿ ՀՌՁԱԿԱՎՈՐ ԱՍՊԵՏ  
ԱՇԽԱՐՀԻՍ ԵՐԵՍԻՆ ԴԵՌ ԶԻ ԿԱՏԱՐԵԼ  
ՆՎԱԶ ՎՏԱՆԳՈՎ ԻՐ ՀԱՄԱՐ,  
ՔԱՆ ԿԱՏԱՐԵՑ ԱՐԻ ԴՈՆ ԿԻՍՈՏ ՄԱՆՉԱՑԻՆ

— Պարզ բան է, պարոն, այս խոտը վկայում է, թե ոչ հեռու աղբյուր կամ առու պիտի լինի: Ուստի մի քիչ հեռու կգնանք և, անշուշտ, բախտ կունենանք հագեցնելու այս սարսափելի ծարավը, որ, ճիշտն ասած, ամեն բանից խիստ է տանջում:

Խորհուրդը դուր եկավ դոն Կիխոտին:

Նա բռնեց Ռոսինանտի սանձը, Սանչոն՝ իր էշի նոխտան, նախապես բեռնելով նրա վրա ընթրիքի մնացորդները, և նրանք գնացին դաշտով, կույր-զկուրայն, որովհետև գիշերվա մութը խանդարում էր նրանց բան զանազանելու:

Սակայն հազիվ էին հարյուր քայլ անցել՝ նրանց ականջին հասավ վտակի շառաչը, որ թափվում էր, կարծես թե, ահագին ու բարձր ժայռից:

Այդ շառաչը նրանց սաստիկ ուրախացրեց: Նրանք կանգ առան, որ ականջ դնեն, թե որտեղից է գալիս, բայց այստեղ լսեցին նոր աղմուկ, որ խանդարեց նրանց բավականությունը, մանավանդ Սանչոյինը, որ բնականից երկշոտի մեկն էր:

Եվ իրավ, նրանք ինչ-որ հարվածների ձայն լսեցին և կարծես թե երկաթի ու շղթայի զնգզնգոց: Այդ հնչյունները, միախառնվելով ջրի կատաղի դղրդյունին, ընդունակ էին ահ ազդել ամեն ոքի սրտին, բայց ոչ դոն Կիխոտի:

Ինչպես արդեն ասացինք, գիշերը մութն էր, նրանք ծառերի տակով էին գնում, որոնց տերևները, օրորվելով մեղմ քամուց, սոսափում էին կամացուկ ու շարագուշակ: Այդ ամենը՝ ամայի վայր, խավար, ջրի շառաչ, տերևների սոսափյուն, — ակամա ահ էին ազդում: Սակայն սարսափն առավել սաստկացավ, երբ նրանք համոզվեցին, որ հարվածները շեն դադարում, քամին չի թուլանում, և լույսը դեռ չի բացվում: Համ էլ նրանք չգիտեին, թե որտեղ են:

Դոն Կիխոտը, մղված իր աննկուն խիզախությամբ, թռավ Ռոսինանտի գավակը, բռնեց վահանը, ճոճեց նիզակն ու ասաց.

— Սանչո, բարեկամ, դու պետք է իմացած լինես, որ երկինքը հաճել է ինձ այս երկաթե դարում աշխարհ բերելու, որպեսզի ես ոսկե դարին հարություն տամ, կամ թե ինչպես արտահայտվում են ոմանք, ոսկեջրած դարին: Նկատի առ, իմ հավատարիմ և անձնվեր զինակիր, թե ինչ մթամած է գիշերը, ինչ անօրինակ լուսթյուն, ինչ խուլ ու անըմբռնելի են սոսափում տերևները, ինչ ահազդով է շնչում վտակը, որին ուրոնելու ելանք մենք և որը, ասես, թափվում է բարձրաբերձ լեռներից: Ինչպես են խոցում ու խոշտանգում մեր լսողությունը այս անդադրում հարվածները: Բոլոր այս երևույթները միասին վերցրած և, յուրաքանչյուրը առանձին, կարող են երկյուղ, ահ ու սարսափ ազդել: Սակայն իմ նկարագրած սարսափները արթնացնում ու բորբո-

քում են իմ արհուլթյունը, և սիրտս պատրաստ է դուրս թռչելու կրծքիցս, այն-  
քան ծարավի եմ նետվելու այս արկածի մեջ, որքան էլ նա դժվարին ներ-  
կայանա: Ուստի, ամրացրու Ռոսինանտի փորկապը, ինքդ այստեղ մնա և  
սպասիր ինձ երեք օր, ոչ ավել, և եթե այդ ժամկետում ես չվերադառնամ,  
կարող ես ետ գնալ գյուղ, իսկ այնտեղից գնա Տորոս և հայտնիր իմ անը-  
ման տիրուհի Դուլսինեային, թե նրա գեղի ասպետը կործանվեց, կամենա-  
լով կատարել մի սխրագործություն, որ իրեն արժանի դարձնեք նրա ծառան  
կոչվելու:

Լսելով տիրոջ խոսքերը, Սանչոն այնպես զգացվեց, որ չացը եկավ:

— Չեմ հասկանում, պարոն, ի՞նչ խելք է այս սարսուղիի արկածի մեջն  
ընկնելը: Հիմա գիշեր է, այստեղ մեզ ոչ ոք չի տեսնում, և մենք շատ լավ  
կարող ենք մի կողմ ծովել և խուսափել վտանգից, փուլթ չէ, թե երեք օր էլ  
խմելու բան չունենանք: Եվ քանի որ ոչ ոք այդ չի տեսնում, ոչ ոք մեզ վախ-  
կոտ չի համարի: Ես թողել եմ իմ ծննդավայրը, կնոջս ու երեխաներիս, որ-  
պեսզի ծառայեմ ձերդ ողորմածությանը, հուսալով, որ այդ գործում ես չեմ  
վնասվի, այլ կշահեմ: Բայց ինչպես ասվում է՝ ազահուլթյունը՞ պատռում է  
պարկը: Որովհետև այն իսկ պահին, երբ ես առանձնապես մեծ հույս ունեի  
ստանալու այն անիծյալ, շարաբաստիկ կղզին, որ ձերդ ողորմածությունը քա-  
նիցս խոստացել էր ինձ, դրա փոխարեն դուք ուզում եք ինձ լքել՝ մարդկա-  
յին բնակավայրից այսքան հեռու մի տեղում:

— Թող իմ մասին ոչ հիմա, ոչ էլ ապագայում, ոչ ոք չասի, թե մեկնու-  
մեկի արցունքն ու աղերսանքը ինձ ետ պահեց իմ ասպետական պարտքը կա-  
տարելուց: Քեզնից միայն պահանջվում է, որ դու Ռոսինանտի փորկապը քա-  
շես և ինձ այստեղ սպասես: Իսկ ես շուտով կվերադառնամ, կենդանի թե մե-  
ռած:

Տեսնելով, որ տիրոջ վճիռն անդրդվելի է և որ իր բոլոր արցունքները,  
խորհուրդներն ու աղերսանքը անզոր են, Սանչոն որոշեց խորամանկութուն  
բանեցնել և աշխատել նրան մի կերպ ետ գցել մինչև առավոտ:

Ուստի Ռոսինանտի փորկապները պնդացնելիս, նա ճարպիկ ու աննկատ  
կերպով էլի նոխտայով կապեց ձիու ետի ոտքերը, այնպես որ, երբ դոն Կի-  
խոտը հեծավ, չկարողացավ տեղից շարժվել, որովհետև Ռոսինանտը կարող  
էր միայն ցատկոտելով առաջ շարժվել:

Համոզվելով, որ իր հնարագիտությունը գլուխ եկավ, Սանչո Պանսան  
ասաց.

— Ռոսինանտը չի կարողանում տեղից շարժվել, տեսա՞ք: Եթե դուք հա-  
մառեք, խթանեք ու խփեք նրան, դրանով բախտին կովի կոչ արած կլինեք և,  
ինչպես ասում են, սմբակով քացի կտաք մեխին:

Դոն Կիխոտը հուսակտուր էր լինում: Ինչքան շատ էր խթանում ձիուն,  
այնքան քիչ էր հաջողվում նրան տեղից շարժվել:

Գլխի շրնկնելով, որ Ռոսինանտի ոտքերը կարող են կապած լինել, նա  
որոշեց հաշտվել և սպասել կամ լուսաբացին, կամ այն վայրկյանին, երբ ձին  
ցանկանա ճամփա գնալ: Հաստատ համոզված լինելով, որ այս անհաջողու-  
թյունն առաջ է եկել ուրիշ պատճառից և ոչ երբեք Սանչոյի գործադրած խո-  
րամանկութունից, նա ասաց.

— է՛հ, ինչ արած, Սանչո: Քանի որ Ռոսինանտը չի կարող շարժվել, ես հարկադրված եմ սպասելու, մինչև որ երկնքում խնդա արշալույսը, թեև ողբում եմ նրա գալստյան դանդաղկոտությունը:

Դոն Կիխոտն ու Սանչո Պանսան երկար խոսակցություն ունեցան, մինչև որ Սանչոն տեսավ, թե ուր որ է օրը կծագի: Նա թաքուն արձակեց Ռոսինանտի ոտքերը: Թեև Ռոսինանտը բնականից երբեք տաքարյուն ձի չի եղել, բայց հիմա, իրեն ազատ զգալով, ասես թե ուրախացավ և գլուխը թափ տվեց: Ցատկելը՝ չէր ցատկում, որովհետև, թող վիրավորական չլինի նրա համար ասել, չէր կարող:

Դոն Կիխոտը տեսնելով, որ ձին շարժվեց, բարի նշան համարեց այդ և վճռեց, որ այդ նշանը կոչում է նրան ահավոր սխրագործություն կատարելու: Մինչ այս, մինչ այն, լույսը բացվեց և երբ որ շուրջը ամեն ինչ պարզ տեսանելի դարձավ, դոն Կիխոտը համոզվեց, որ գտնվում է շագանակի բարձր ծառերի տակ, որոնք թանձր ստվեր են գցում: Նա լսում էր, որ հարվածները տակավին չեն դադարել, բայց թե որտեղի՞ց են գալիս՝ չէր երևում: Ուտտի, առանց հապաղելու, խթանեց Ռոսինանտի կողերը և, երկրորդ անգամ հրածեշտ տալով Սանչոյին, հրամայեց, առաջին անգամվա պես, որ նա սպասի ամենաշատը երեք օր: Ապա կրկնեց Սանչոյին, որ նա պետք է իր անունից զեկուցի և տեղեկացնի Դուլսինեսային և խնդրեց, որ անհանգիստ չլինի իր աշխատանքի վարձի համար, որովհետև տնից դուրս գալուց առաջ ինքը կազմել է իր կտակը, համաձայն որի Սանչոյի ոռճիկը կվճարվի նրա ծառայության ամբողջ ժամանակի համար: Իսկ եթե նրա տերը այս վտանգներից ողջ ու առողջ դուրս գալու լինի՝ Սանչոն կարող է իրեն խոստացված կղզու տտացումը միանգամայն ապահով համարել:

Սանչոն ոտքով հետևեց տիրոջը, ըստ սովորականի, հետևից քաշելով էշին՝ իր հավերժական ուղեկցին բախտի թե դժբախտության պահին: Բավական տարածություն անցնելուց հետո շագանակի և այլ սաղարթախիտ ծառերի ստվերի միջով, նրանք դուրս եկան մի փոքրիկ հովիտ, որ փովել էր բարձր ժայռերի տակ, որոնց զագաթից գահավիժում էր մի ահագին ջրվեժ: Լեռան ստորոտին կքել էին խղճուկ հյուղեր, որ ավելի ավերակների էին նմանում, քան բնակարանների: Նրանք հարյուր քայլի շափ էլ անցան, թեքվեցին ժայռի դուրս ցցած կողքով և այստեղ բացվեց ահավոր ու սարսափելի աղմուկի պատճառը, որ ողջ գիշեր նրանց ահ ու տազնապի մեջ էր պահել: Դա ոչ այլ ինչ էր (մի՛ բարկանար և նեղանար, ընթերցող), բայց եթե մահուդ գործող մուրճեր, որ իրենց փոխեփոխ հարվածներով այդպիսի դղրոց էին հանում:

Տեսնելով այդ բանը, դոն Կիխոտը քարացավ տեղում:

Սանչոն աչքը գցեց նրա վրա և տեսավ, որ իր տերը գլուխը կախ է արել և ծայրաստիճան շփոթված տեսք ունի: Իսկ դոն Կիխոտը, իր հերթին, նայեց Սանչոյին և տեսավ, որ նա ուռցրել է թշերը, որ նա խեղդվում է ծիծաղից և որ, ըստ երևույթին, քիչ է մնում ծիծաղից տրաքի: Ինչքան էլ ուժգին էր իր տրամությունը, բայց տեսնելով Սանչոյին, նա ծիծաղեց: Իսկ Սանչոն հենց նկատեց, որ տերը ծիծաղում է, այնպես փոթկաց, որ ստիպված էր կողերը բռունցքներով հուպ տալ, որ ծիծաղից փորը չպայթի:



ԳԼՈՒԽ XVII

ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է ՄԵԾ ԱՐԿԱԾԻ ՄԱՍԻՆ  
ԵՎ ՄԱՄԲՐԻՆԻ ԹԱՆԿԱԳԻՆ ՍԱՂԱՎԱՐՏԻ ՆՎԱԾՄԱՆ ՄԱՍԻՆ,  
ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԼ ԱՆՑՔ ՈՒ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ,  
ՈՐ ՊԱՏԱՀԵՑԻՆ ՄԵՐ ԱՆՀԱՂԹ ԱՍՊԵՏԻՆ

Անձրև մաղեց, և Սանչոն ցանկացաւ պատսպարվել մահուղի գործարանի ծածկի տակ: Սակայն բախտի ծաղրից հետո դոն Կիխոտը այնպիսի ատելությամբ էր լցվել դեպի գործարանը, որ ոչ մի դեպքում չկամեցավ ներս մտնել: Ուստի ծովեց դեպի աջ և դուրս եկավ մի ճանապարհ, որը նման էր իրենց այստեղ բերած ճանապարհին: Շուտով դոն Կիխոտը հեռվում նշմարեց մի ձիավոր, որի գլխին սսկու պես փայլող ինչ-որ առարկա կար: Նա դիմեց Սանչոյին.

— Ինձ թվում է, Սանչո, որ յուրաքանչյուր առածի մեջ մի ճշմարիտ բան կա, որովհետև այդ բոլոր առածները ծագել են կյանքի փորձից, իսկ փորձը՝ բոլոր գիտությունների մայրն է: Հատկապես արդարացի է այն առածը, որ ասում է. մի դուռը փակվեց՝ մյուսը բացվեց: Ասելս այն է, որ երեկ բախտը փակեց մեր առջև մեր որոնած արկածի դուռը և խաբեց մեզ մահուղի գործարանով, իսկ այսօր այն բաց է անում մի ուրիշ դուռ, որ շտանում է դեպի մի այլ և աներկբայելի արկած: Եթե ինձ չհաջողվի մտնել այս դռնով, մեղքը իմը կլինի և անկարելի կլինի այլևս արդարանալ գիշերվա խավարով: Ասելս այն է, որ, եթե չեմ սխալվում, մեր դիմաց մի մարդ է գալիս, որի գլխին Մամբրինի սաղավարտն է դրած, հենց այն սաղավարտը, որ ես երգվել եմ ձեռք բերել:

— Մտածեցեք, ձերդ ողորմածություն, թե ինչ եք անում,— պատասխանեց Սանչոն,— ավելի ևս, թե ի՞նչ եք ասում: Սա էլ երկրորդ մահուղի գործարանը դուրս չգա:

— Գրո՞ղը տանի քեզ,— գոչեց դոն Կիխոտը,— ինչ առնչություն կա սաղավարտի և մահուղի գործարանի միջև:

— Ես ի՞նչ իմանամ:

— Ինչպե՞ս կարող եմ սխալվել, թուլամորթ դավաճան: Մի՞թե դու

չես տեսնում, որ մեր դիմաց ձիավոր է գալիս, տակին աշխատ ձի, գլխին՝ ոսկե սաղավարտ:

— Տեսնելը՝ տեսնում եմ,— պատասխանեց Սանչոն:— Ինչ-որ մարդ է գալիս, էշ նստած: էշն էլ իմի պես, մոխրագույն է: Մարդու գլխին էլ մի փայլուն բան:

— Ահավասիկ՝ Մամբրինի սաղավարտը,— պատասխանեց դոն Կիխոտը:— Մի կողմ քաշվիր և թող ինձ նրա հետ երես առ երես, և դու կտեսնես, թե առանց ավելորդ խոսքերի և ժամավաճառ լինելու ձեռ կզցեմ բաղձալի սաղավարտը:

Հիմա պատմենք, թե այդ ինչ սաղավարտ, ձի և ձիավոր էր տեսել դոն Կիխոտը: Այդ շրջանում երկու գյուղ կար, որոնցից մեկն այնքան փոքր էր, որ ոչ դեղատուն ուներ, ոչ սափրիչ, իսկ մյուսը, որ հարևան էր, ա՛յս էլ ուներ, ա՛յն էլ: Մեծ գյուղի սափրիչը սպասարկում էր նաև փոքրիկ գյուղը, որտեղ հենց այդ ժամանակ մի գյուղացի ածիլվելու կարիք ուներ, իսկ մի ուրիշը հիվանդացել և պիտի արյուն առնել տար:

Դրա համար էլ գնում էր այնտեղ, հետն առած պղնձե լազան: Իսկ որովհետև բախտի բերմամբ ճամփին անձրև էր բռնել, ապա նա, չկամենալով գլխարկը թրջել (երևի նոր էր), լազանը դրել էր գլխին:

Պղնձե լազանը այնքան լավ էր մաքրված, որ փայլում էր կես մղոն հեռավորութունից: Գնում էր նա մոխրագույն էշով, ինչպես ճիշտ նկատել էր Սանչոն:

Տեսնելով, որ խեղճ մարդը բոլորովին մոտ է, դոն Կիխոտը հարկ չհամարեց նրա հետ խոսակցության բռնվել, այլ սաստիկ արագությամբ, նիզակը ճոճելով, վրա տվեց, մտադրված լինելով խոցել նրա մարմինը:

Սակայն մոտենալով, մեր ասպետը առանց ձին պահելու գոռաց.

— Պաշտպանվի՛ր, թշվառ արարած, կամ թե կամովին տուր ինձ այն, ինչ որ ամենայն իրավամբ ինձ պիտի պատկանի:

Տեսնելով, որ անսպասելի կերպով ինչ-որ տեսիլ հարձակվում է իր վրա, սափրիչը հարվածից խուսափելու համար ավելի լավ բան չգտավ, քան էջից գետին թրմփալ: Հագիվ էր նա գետնին դիպել, որ եղնիկի ժրությամբ ոտի կանգնեց և ծլկեց այնպիսի արագությամբ, որ քամին էլ նրան չէր հասնի: Լազանը մնաց ընկած գետնին, և դոն Կիխոտը բավականացավ դրանով: Նա հրամայեց, որ Սանչոն վերցնի սաղավարտը:

Վերջինս, բարձրացնելով լազանը, ասաց.

— Աստված վկա, վատ աման չի: Ութը ունից պակաս չի արժենա:

Ապա նա մատուցեց տիրոջը, որը իսկույն դրեց գլխին և սկսեց շուռումուռ տալ, որ գտնի դիմակալը: Սակայն չգտնելով, ասաց.


— Այս սաղավարտի տերը սաստիկ մեծ գլուխ է ունեցել, իսկ ամենավատն այն է, որ սրա կեսը պակաս է:

Սանչոն, լսելով, որ սափրիչի լազանը սաղավարտ են անվանում, չկարողացավ ծիծաղը զսպել:

— Ինչի՞ համար ես ծիծաղում, Սանչո,— հարցրեց դոն Կիխոտը:

— Ծիծաղս գալիս է,— պատասխանեց Սանչոն,— թե ինչ մեծ գլուխ





պիտի ունենա այս սաղավարտի տերը: Ախր այս սաղավարտը երկու կաթիլ ջրի պես նման է սափրիչի լազանի:

**70** — Գիտե՞ս, մտքովս ինչ անցավ, Սանչո: Այս հռչակավոր կախարդված սաղավարտը, երևի արտասովոր դիպվածով, այնպիսի մարդու ձեռք է ընկել,

որ չի իմացել և չի կարողացել ըստ արժանվույն գնահատել, և ահա, տեսնելով, որ սաղավարտը զուտ ոսկուց է, առանց հասկանալու իր արածը, նա կեսը հալել, փող է դարձրել, իսկ մյուս կեսից շինել է այն, ինչ որ քո ասելով՝ լազան է: Միևնույն է՝ ինչ էլ լինի, ես հո գիտեմ, թե ինչ բան է, և ինձ համար այդ կերպարանափոխությունը նշանակություն չունի: Իսկ մինչ այդ ես կկրեմ սա ինչպես որ կա, որովհետև ավելի լավ է մի բան, քան ոչինչ: Սա հո կարող է ինձ լիովին պաշտպանել քարերի կարկուտից:

— Այո, իհարկե,— պատասխանեց Սանչոն,— եթե միայն թշնամին քարը պարսատիկից նետելու շինի, ինչպես այն անգամ, երկու զորքերի բախման միջոցին, երբ որ նա ձերդ ողորմածություն ատամները ջարդեց և կոտրեց ամանը այն օրհնած խմիչքի, որից քիչ էր մնում բոլոր փորոտիքս դուրս թափեր:

Այստեղ նրանք նախաճաշեցին, կերան գիշերային թափորից Սանչոյի ավար առած մթերքների մնացորդը և ջուր խմեցին մահուդի գործարանի մոտով հոսող առվից: Նրանք անգամ գլուխները շուռ շտվին գործարանի կողմը՝ այնքան էին լցվել ատելություն մեզ գցելու համար:

Վերջապես, դոն Կիխոտը հեծավ իր ձին, Սանչոն նստեց էջի վրա և առանց որոշակի ուղղության (որովհետև գնալ, ուր որ աչքը տեսնի՝ միանգամայն թափառական ասպետների սովորովն է) նրանք շարժվեցին ճամփով, որ ընտրեց Ռոսինանտը, որի կամքին հնազանդեց ոչ միայն նրա տերը, այլև էջը, որ եղբայրաբար և բարեկամաբար միշտ հետևում էր նրան: Այնուհանդերձ նրանց հաջողվեց բանուկ ճամփա ելնել, որով նրանք, առանց որոշակի նպատակի, շարունակեցին իրենց ճանապարհը:

Եվ ահա, հանկարծ, Սանչոն ասաց տիրոջը.

— Ահա քանի օր է, ինչ ես միտք եմ անում, թե ի՞նչ քիչ օգուտ և շահ բերին մեզ այս թափառումները: Չերդ ողորմածությունը արկածներ է որոնում ճամփաբաժիններում և ամայի վայրերում, որտեղ ձեր բոլոր հաղթանակներն ու քաջագործությունները, միևնույն է, ոչ ոք չի տեսնի:

Ինձ թվում է, թե ավելի լավ կլիներ, եթե մենք ծառայության մտնեինք որևէ կայսեր կամ թագավորի մոտ, որ պատերազմ է մղում մեկնումեկի դեմ: Ահա թե որտեղ ձերդ ողորմածությունը կարող կլիներ երևան բերել իր բոլոր արժանիքները՝ մեծ ուժը ու առավել ևս մեծ խելքը:

— Դու վատ շես դատում, Սանչո,— պատասխանեց դոն Կիխոտը:— Բայց նախքան այդպիսի ծառայություն գտնելը, ասպետը պետք է իբրև փորձություն թափառի աշխարհիս երեսին և արկածներ որոնի, որպեսզի այդ գործում աչքի ընկնելուց հետո հուշակ ու փառք վայելի, այնպես որ այդ ասպետին բոլորն էլ ճանաչեն իր գործերով: Եվ ահա հենց որ նա որևէ մեծ միապետի արքունիքը գնալու լինի, և մանուկները տեսնեն, որ նա է ներս մըտնում դարպասով, իսկույն հավաքվեն, շրջապատեն նրան և ճշան՝ «Ահա Արևի Ասպետը» կամ «Օձի Ասպետը», կոչելով նրան այն մականունով, որ նա հըռշակել է իր մեծամեծ գործերով:

«Ահա նա,— կասեն,— որ մենամարտում հաղթեց մեծ ուժի տեր հսկա Բրոկաբրունոյին, ահա նա, որ ցրեց սոսկալի կախարդանքը, որի կապանքներում Պարսկաստանի մեծ մամելյուկը ամբողջ ինը հարյուր տարի տառա-

պեց»։ Այսպես, բերնե-բերան, կտարածվի նրա փառավոր գործերի համբավը։

— Շիտակ, հենց այդ էլ պետք է ինձ,— ասաց Սանչոն։— Ես հավատացած եմ, որ ամեն ինչ հենց այդպես էլ կլինի բառ առ բառ, քանի որ ձերդ ողորմածությունը կոչվում է Վշտակերպ Ասպետ։

### ԳԼՈՒԽ XVIII

#### ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԴՈՆ ԿԻԽՈՏԸ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՑ ԲԱԶՄԱԹԻՎ ԹԵՎԱՌՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ՏԱՆՈՒՄ ԷԻՆ ՀԱԿԱՌԱԿ ԻՐԵՆՑ ԿԱՄՔԻ ԱՅՆՏԵՂ, ՈՒՐ ՆՐԱՆՔ ՉԷԻՆ ՈՒՋՈՒՄ ԳՆԱԼ

Դոն Կիխոտը տեսավ, որ իր դիմաց, նույն ճամփով, որով ինքն էր գրնում, մոտ քսան մարդ էր շարժվում ոտքով։ Նրանք շարված էին մի մեծ, երկաթե շղթայի վրա, ինչպես թագբեհի հատիկներ։ Նրանց պարանոցը շղթայված էր և բոլորն էլ ձեռքերին կապանք էին կրում։ Նրանց ուղեկցում էին երկու ձիավոր և երկու հետիոտն։ Ձիավորները զինված էին պատրույգավոր հրացաններով, իսկ հետիոտները՝ թուր ու նիզակով։

Սանչոն, նրանց տեսնելուն պես, ասաց.

— Ահա տաժանակիր աշխատանքի դատապարտվածների մի խումբ, որոնց տանում են նավերի վրա աշխատեցնելու։

— Մի խոսքով,— նկատեց դոն Կիխոտը,— այս մարդկանց քարշ են տալիս, և նրանք գնում են, ենթարկվելով բռնության և ոչ թե իրենց բարի կամքով։

— Հենց այդպես է, որ կա,— պատասխանեց Սանչոն։

— Որ այդպես է,— շարունակեց դոն Կիխոտը,— հենց այստեղ է, որ ես պետք է կատարեմ իմ պարտականությունը՝ ոչնչացնեմ բռնությունը և օգնեմ թշվառներին։

— Նկատի առեք սակայն,— առարկեց Սանչոն,— որ արդարադատությունը ոչ թե բռնանում ու հալածում է այս մարդկանց, այլ միայն պատժում է նրանց ոճրագործությունների համար։

Այդ միջոցին թիապարտների շարանը մոտեցավ, և դոն Կիխոտը ամենախիտալիք արտահայտություններով խնդրեց պահակախմբից, որ բարի լինեն հայտնել և բացատրել իրեն պատճառը կամ պատճառները, թե ինչու են այդ մարդկանց նման եղանակով տանում։

Հեծյալ պահակներից մեկը պատասխանեց, թե դրանք տաժանակիր աշխատանքի դատապարտվածներ են, թագավորի թիապարտները և որ նրանց տանում են նավերի վրա աշխատեցնելու։

— Այնուհանդերձ,— պատասխանեց դոն Կիխոտը,— ես կկամենայի նրանցից ամեն մեկին հարցուփորձ անել, թե ի՞նչն է նրանց դժբախտության պատճառը։



Այս խոսքերին նա այնքան համոզիչ փաստարկումներ ավելացրեց, որ, վերջապես, պահակախմբի երկրորդ հեծյալն ասաց.

— Թեև մենք այս դժբախտների դատավճիռների լիակատար արձանագրությունները տանում ենք հետներս, բայց հիմա ժամանակ չկա կանգ առնելու, թղթերը հանելու և կարդալու: Ավելի լավ է, ձերդ ողորմածություն, ինքներդ մոտենաք նրանց և հարցուփորձ անեք: Եթե նրանք կամենան՝ իրենք կպատմեն ձեզ, իսկ նրանք անշուշտ կուզենան, որովհետև այս տղերքի համար ավելի մեծ բավականություն չկա, քան սրիկայություն անելը և արածի մասին պատմելը:

Ստանալով այս թույլտվությունը (առանց որի նա շատ լավ կարող էր լուր գնալ), դոն Կիխոտը ձին քշեց խմբի մոտ և առաջին իսկ թիապարտից հարցրեց, թե ի՞նչ մեղադրանքի համար է նա այդ օրն ընկել:

Սա պատասխանեց, որ սիրահարված է եղել:

— Ինչպե՞ս թե: Միայն դրա համա՞ր,— բացականչեց դոն Կիխոտը:— Եթե բոլոր սիրահարվածներին թիապարտներ դարձնեն, ապա ես վաղուց պիտի թիավարելիս լինեի նավի վրա:

— Ձերդ ողորմածությունն այն սիրո մասին չի խոսում,— պատասխանեց դատապարտվածը:— Իմ սերն այն տեսակ էր, որ ես սիրահարված էի ձերմակեղենով լիքը կողովի վրա և այնպիսի կրքով էի սեղմել նրան կրծքիս, որ եթե արդարադատությունը ուժով խլած չլիներ, ես մինչև օրս հոժարակամ չէի բաժանվի նրանից: Ես բռնվեցի տեղնուտեղը, ուստի կարիք չեղավ տանջանք գործադրելով հարցաքննել, վճիռը իսկույն հանեցին՝ մտրակով հարյուր հարված տվին մեջքիս, վրան էլ երեք տարի գուրապ:

— Գուրապ ի՞նչ ասել է,— հարցրեց դոն Կիխոտը:

— Գուրապը թիանավն է,— պատասխանեց դատապարտվածը, որ մոտ քսանչորս տարեկան մի տղա էր:

Նույն հարցով դոն Կիխոտը դիմեց երկրորդին, որ տխուր-տրտում էր և բան չասաց: Նրա փոխարեն պատասխանեց առաջինը:

— Սրան, պարոն, նրա համար են աքսորում, որ դեղձանիկ է եղել, այսինքն՝ երաժիշտ ու երգիչ:

— Ինչպե՞ս թե,— հարցրեց դոն Կիխոտը:— Մի՞թե երաժիշտներին ու երգիչներին թիապարտ են դարձնում:

— Այո, պարոն,— պատասխանեց դատապարտվածը,— ավելի վատ բան չկա, քան վշտից երգելը:

— Իսկ ես հակառակն եմ լսել,— առարկեց դոն Կիխոտը,— «ով որ երգում է՝ նրան դժբախտություն չի պատահում»:

— Սրա բանն ուրիշ է,— վրա բերեց դատապարտվածը,— ով մի անգամ երգի՝ ողջ կյանքում արցունք կթափի:

— Բան չեմ հասկանում,— հայտարարեց դոն Կիխոտը:

Սակայն այստեղ պահակներից մեկն ասաց նրան.

— Պարոն կաբալյերո, այս ամբարիշտների լեզվով՝ վշտից երգերը նըշանակում է հարցաքննության ժամանակ խոշտանգումներին շղիմանալը և խոստովանելը մեղքը: Այս հանցագործին տանջել են, և նա խոստովանել է իր ոճիրը: Նա անասնագործ է եղել, այսինքն՝ ամեն տեսակ անասուն է գողացել, և երբ որ նա խոստովանել է, նրան վեց տարի թիապարտության են դատապարտել, վրան էլ երկու հարյուր մտրակի հարված հասցրել: Հետքը նրա մեջքի վրա է արդեն: Նա մտախոհ է ու վշտաբեկ, որովհետև մյուսները, որ նրա հետ գնում են, արհամարում են նրան, նախատում ու հալածում խոստովանելու համար: Որ նա սիրտ չի ունեցել ուրանալու, որովհետև, ասում են նրանք, այն-ն նույնքան տառ ունի, որքան և ոչ-ը և յուրաքանչյուր հանցագործի համար շատ ձեռնտու է, որ նրա կյանքն ու մահը կախված են ոչ թե վկաններից կամ փաստերից, այլ սեփական լեզվից: Ծս կարծում եմ, որ նրանք բավական ճիշտ են դատում:

— Ծս էլ նույն կարծիքին եմ,— պատասխանեց դոն Կիխոտը:

Ապա նա մոտեցավ երրորդին և նրանից նույն բանը հարցրեց, ինչ-որ առաջին երկուսից: Սա առանց քաշվելու պատասխանեց.

— Ծս դատապարտված եմ հինգ դուկատ շունենալու պատճառով:

— Ծս ամենայն սիրով ձեզ քսան դուկատ կտամ, միայն թե ազատեմ այս դժբախտությունից,— գոչեց դոն Կիխոտը:

— Ծս նման կլինեմ այն մարդուն,— պատասխանեց դատապարտվածը,— որ հայտնվել է ծովի մեջ, նավի վրա և շատ փող ունի, իսկ ինքը սովամահ է լինում, որովհետև ուտելիք չի գտնում, որ գնի: Ասելս այն է՝ որ եթե այն միջոցին ես ունենայի այդ քսան դուկատը, որ առաջարկում է ինձ ձերդ ողորմածությունը, ես դրանք կքսեի իմ քարտուղարի գրչին և կթարմացնեի իմ պաշտպանի ուղեղը:

Ամենավերջինը մոտ երեսուն տարեկան մի մարդ էր, շատ հրապուրիչ արտաքինով, թեև շիլ աչքերով: Նա մնացածների պես չէր կաշկանդված: Նրա



ուղերին երկար շղթա կար, որ փաթաթված էր ողջ մարմնին, իսկ պարանոցին երկու երկաթե վզկապ կար՝ մեկը կպցրած էր շղթային, իսկ մյուսը՝ երկու երկաթե ձողերով գոտիի մոտ միանում էր կապանքներին, դրանցով շղթայված էին նրա ձեռքերը և կողաված էին ահագին կողպեքով, այնպես որ

նա չէր կարող ձեռքը բերանը տանել, թեքել գլուխը և շքթունքը հասցնել ձեռքերին:

Դոն Կիխոտը հարցրեց, թե ինչու այս մարդու կապանքներն ավելի շատ են: Պահակը նրան պատասխանեց.

— Նրա համար, որ նա մենակ ավելի հանցանք է գործել, քան բոլորը մնացյալները միասին: Համ էլ նա այնքան լկտի է, որ նրան բոլոր այս շրդթաներով կաշկանդելուց հետո էլ հավատացած չենք, թե տեղ կհասցնենք և վախենում ենք, որ չլինի թե փախչի:

— Ի՞նչ հանցանքներ է գործել նա,— հարցրեց դոն Կիխոտը:

— Նա դատապարտված է տասը տարով,— ասաց պահակը,— իսկ դա միևնույն է, թե քաղաքացիական մահ: Բավական է ասեմ ձեզ, որ այդ տղան հռչակավոր երեսնուհինգ Պասամոնտեն է:

Դոն Կիխոտը դարձավ դատապարտվածների ամբողջ խմբին և ասաց.

— Այն ամենից, ինչ դուք ինձ պատմեցիք, թանկագին եղբայրներ, ես պարզ հասկացա հետևյալը՝ թեև դուք ըստ արժանվույն եք պատժված, սակայն առաջիկա պատիժը, ինչպես երևում է, ձեր սրտովը չէ և դուք նավ եք գնում մեծ դժկամությունով և հակառակ ձեր կամքի: Շատ հնարավոր է, որ ձեզանից մեկի կորստյան պատճառը եղել է փոքրոգությունը հարցաքննության՝ տանջանքի միջոցին, մյուսինը՝ փողի պակասությունը, երրորդինը՝ հովանավորողի բացակայությունը, չորրորդինը՝ դատավորի անարդար վճիռը: Ահա թե ինչու ճշմարտությունը, որ ձեր կողմն է եղել, չի հաղթանակել: Ես միտք արեցի բոլոր այդ հանգամանքները և այժմ ուզում եմ հավաստել, թե ինչ նպատակով է աստված ինձ աշխարհ բերել, հրամայե՛լ, որ հարեմ ասպետական ուխտին, որի մեջ եմ ներկայիս, և ուխտել, որ պաշտպանեմ աշխարհիս զորավորների կողմից բոլոր զրկվածներին ու կեղեքվածներին: Բայց ես գիտեմ,— և դա իմ խոհեմության կանոններից մեկն է,— որ պետք չէ ուժ գործադրել այնտեղ, որտեղ ամեն ինչ կարելի է խաղաղ կարգավորել. ուստի նախապես կհարցնեմ պահակներից ու կոմիսարից՝ շե՛ն հաճի արդյոք նրանք արձակել ձեր կապանքներն ու բաց թողնել խաղաղություն: Ես խընդրում եմ ձեզանից մեղմությունով ու հեղուկությամբ, որպեսզի տեղիք լինի ձեզ շնորհակալ լինելու, եթե դուք իմ խնդիրը կատարելու լինեք: Իսկ եթե դուք հոժարակամ կատարելու չլինեք, այս թուրն ու նիզակը և իմ բազկի զորությունը կհարկադրեն, որ դուք անեք՝ հակառակ ձեր ցանկության:

— Այս ի՞նչ հիմար կատակ է,— բացականչեց կոմիսարը:— Տեսեք, թե ինչ դատարկ բաներ է դուրս տալիս: Նա կամենում է, որ մենք բաց թողնենք թագավորապատկան հանցագործներին, կարծես թե մենք իշխանություն ունենք նրանց կապանքն արձակելու, իսկ ինքը՝ իրավունք նման հրամաններ տալու մեզ: Գնացեք, ձերդ ողորմածություն, բարով-խեղով շտկեցեք ձեր գլխի լազանը և միք որոնի կատվի հինգերորդ ոտքը:

— Դուք ինքներդ եք կատու, գարշելի անասուն,— գոչեց դոն Կիխոտը, և այդ խոսքերն ասելով այնպիսի արագությունով հարձակվեց նրա վրա, որ խեղճը ժամանակ չունեցավ դիմադրելու հարվածին և գետին գլորվեց, սաստիկ շարդված նիզակի հարվածից:

Դոն Կիխոտի բախտը բերեց՝ այդ պահակը միակն էր զինված պատու-  
րույզավոր հրացանով: Մնացածները շփոթվեցին և գլուխները կորցրին այդ-  
պիսի անսպասելի հարձակումից: Բայց, ուշքի գալով, ձիավորները քաշեցին  
թրերը, իսկ հետիոտները՝ նիզակները, և միասին հարձակվեցին դոն Կիխո-  
տի վրա, որ սպասում էր նրանց մեծ պաղարյունությունամբ:

Անշուշտ, նրա բանը բուրդ կլինեիր, եթե դատապարտվածները, տեսնե-  
լով, որ ազատվելու առիթ է ներկայացել, չլարեին բոլոր ուժերը և չխորտա-  
կեին իրենց կաշկանդող շղթաները: Իրարանցում առաջ եկավ: Պահակները  
չգիտեին, թե ինչ անեն՝ դատապարտվածների՝ վրա հարձակվեն, թե պաշտ-  
պանվեն դոն Կիխոտից:

Սանչոն այդ պահին օգնեց խինես դե Պասամոնտեին, որ կապանքներն  
արձակի, և սա, շղթայազերծ եղավ թե չէ, մոտ վազեց գետնին ընկած կոմի-  
սարին, խլեց նրա ձեռքից հրացանն ու թուրը և սկսեց հերթով դեմ անել պա-  
հակներին մեկ թրի, մեկ՝ հրացանի բերանը: Սակայն հրացան արձակելու  
կարիք չեղավ, որովհետև շուտով ուղմի դաշտում ոչ մի թշնամի չմնաց՝ նը-  
րանք բոլորն էլ ծլկել էին Պասամոնտեի հրացանից ու դատապարտվածների  
քարկոծությունից:

Այդ հանգամանքը սաստիկ վշտացրեց Սանչոյին, որովհետև նա վճռեց,  
որ փախստականները ամեն ինչ կհասցնեն Սանտա Հերմանդադի ականջին,  
իսկ վերջինս ահազանգ կտա և կաշխատի գտնել հանցագործներին: Նա այդ  
մասին հաղորդեց իր տիրոջը և սկսեց համոզել նրան որքան կարելի է շուտ  
հեռանալ և թաքնվել մոտակա լեռների կիրճերում:

— Կավ,— պատասխանեց դոն Կիխոտը,— ես գիտեմ, թե հիմա մենք  
ինչ պիտի անենք:

Ապա նա հավաքեց դատապարտվածներին, որոնք անկարգ այս ու այն  
կողմ էին ցրվել, նախապես կողոպտելով կոմիսարին և թողնելով նրան մորե-  
մերկ: Բոլորը եկան և շրջան կազմեցին, սպասելով նրա հրամանին, և դոն  
Կիխոտը սկսեց այսպես.

— Երախտապարտ մարդիկ միշտ շնորհակալ են լինում իրենց բարերար-  
ներից, և չկա ավելի զայրացուցիչ մեղք, քան ապերախտությունը: Ասելս այն  
է, պարոններ, որ դուք հենց նոր սեփական փորձով համոզվեցիք, որ ես ձեր  
բարերարն եմ: Փոխարենը կամենում եմ, որ դուք կրկին կաշկանդվեք շղթա-  
ներով, որոնցից ես ձեզ ազատեցի և անհապաղ ճամփա ընկնեք, գնաք Տո-  
բոսո քաղաքը: Այնտեղ դուք կներկայանաք տիրուհի Դուլսինեսա Տոբոսցուն և  
կասեք, թե Վշտակերպ Ասպետը ողջուն է ուղարկում նրան, ապա թե բոլորը  
մանրամասնություններով կպատմեք այն փառավոր արկածի մասին, որին  
դուք պարտավոր եք ձեր բաղձալի ազատագրությունամբ: Դրանից հետո կարող  
եք գնալ, ուր որ կամենաք:

Բոլոր դատապարտվածների փոխարեն պատասխանեց խինես Պասա-  
մոնտեն, խոսելով այսպես.

— Պարոն փրկիչ, ոչ մի կերպ հնարավոր չէ կատարել այն, ինչ որ ձերդ  
ողորմածությունը մեզ հրամայում է, որովհետև հնարավոր չէ, որ մենք բոլոր-



րըս միասին գնանք միևնույն ճամփով: Մենք կբաժանվենք և յուրաքանչյուրը մենակ կերթա, աշխատելով թաքնվել երկրագնդի ծոցում, որպեսզի Սանտա Հերմանդադի ձեռքը չընկնի, որն անկասկած հետապնդելու է մեզ: Կարծել, թե մենք կվերադառնանք մեր եգիպտական շարշարանքին, այսինքն՝ մեր շղթաներին, և ճամփա կընկնենք Տոբոսո՝ միևնույն է, թե կարծել, որ հիմա գիշեր է, երբ իրոք առավոտյան ժամը տասն է, և խնդրել մեզնից այդ բանը միևնույն է, թե ծփենու վրա տանձ որոնել:

— Երդվում եմ,— գոչեց դոն Կիխոտը տաքացած,— դոն անպիտան, դոն Խինեսիլյո դե Պարոպիլյո կամ ինչ որ է ձեր անունը, դուք մենակ կերթաք այնտեղ պոչերդ ձեզ քաշած և շղթաներով պատված:

Պասամոնտեն շատ էլ համբերողներից չէր (համ էլ նա նկատել էր, որ դոն Կիխոտի խելքը տեղը չի՝ չէ՞ որ այնպիսի անմտություն էր թիապարտներից բաց թողնելը), ուստի լսելով մեր ասպետի վիրավորական խոսքերը, նա աչքով արեց ընկերներին, և նրանք բոլորն էլ մի կողմ քաշվեցին: Եվ դոն Կիխոտի վրա քարերի այնպիսի մի կույտ տեղաց, որ նա հագիվ էր ծածկվում վահանով, իսկ խեղճ Ռոսինանտը այլևս խթանները չէր զգում, ասես թե բրոնզից ձուլված լիներ:

Սանչոն թաքնվեց իր էշի հետևը և այդպիսով պաշտպանվեց քարերի կարկուտից, որ տեղում էր երկուսի վրա էլ: Ինչքան էլ դոն Կիխոտը խույս էր տալիս հարվածներից, սակայն մի քանի քար այնպիսի ուժով դիպան նրան, որ նա վայր ընկավ գետնին: Վայր ընկնելուն պես նրա վրա հարձակվեց ուսանողը, վերցրեց նրա գլխի լագանը, որով երեք-չորս անգամ խփեց մեր ասպետի մեջքին, հետո տվեց գետնովը և ամանը ջարդուհիշուր արեց: Ապա դատապարտվածները հանեցին նրա հագի բաճկոնը, որ նա զրահի վրայից էր հագնում և ուզում էին գուլպաներն էլ քաշել հանել, բայց ոտքի զրահները խանգարեցին: Նրանք խլեցին Սանչոյի կապան: Վերջապես իրար մեջ բաժանելով մնացած ուղեգնական ավարը, նրանք ցրվեցին, յուրաքանչյուրը մի կողմ, հոգալով միայն, որ կարողանան փախչել ահագի Սանտա Հերմանդադից և ամենևին չմտածելով տիրուհի Դուլսինեա Տոբոսոյու մոտ շղթայակապ գնալու մասին:

Մնացին էշն ու Ռոսինանտը, Սանչոն ու դոն Կիխոտը: Էշը մնացել էր կանգնած, գլուխը մտախոհ կախ արած և ժամանակ առ ժամանակ թափ տալով ականջները, երևի երևակայելով, որ քարե կարկուտը դեռ չի դադարել, որովհետև նրա ականջները դեռ խշխշում էին: Ռոսինանտը պառկած էր գետնին, իր տիրոջ կողքին, որովհետև քարերի հարվածները նրան էլ էին տապալել: Սանչոն, որ զրկվել էր կապայից, դողում էր Սանտա Հերմանդադի ահից, իսկ դոն Կիխոտը խորապես վշտացած էր, որ իր փրկած մարդիկ այսքան վատ վարվեցին հետը:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉ ՊԱՏԱՀԵՑ  
 ՀՌՁԱԿԱՎՈՐ ԴՈՆ ԿԻՒՈՏԻՆ  
 ՍՅԵՐՐԱ-ՄՈՐԵՆԱՅՈՒՄ,  
 ԱՅԼ ԿԵՐՊ ԱՍԱԾ՝ ԱՄԵՆԱՀԱԶՎԱԴԵՊ  
 ԱՐԿԱԾՆԵՐՈՑ ՄԵԿԻ ՄԱՍԻՆ,  
 ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է ԱՅՍ ԾԾՄԱՐԻՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Տեւնելով, թե ինչ ցավալի վիճակի մեջ է ընկել, դոն Կիխոտը ասաց իր զինակրին.

— Շատ անգամ եմ լսել ես, որ ստոր մարդկանց լավութիւնն անելը միևնույն է, թե ջուրը ծովն ածես: Եթե ես հավատայի քո խոսքերին, այս անախորժութիւնից խուսափած կլինեի: Բայց քանի որ եզածը եղել է, ապա տուկանք ու աշխատենք խելք ու խրատ սովորել:

— Ձերդ ողորմածութիւնը խելք ու խրատ կսովորի,— պատասխանեց Սանչոն,— երբ որ ես թուրք դառնամ: Բայց քանի որ դուք ասում եք, եթե ինձ հավատայիք, այդ աղետից խուսափած կլինեիք, ապա հավատացեք հիմա, և դուք կխուսափեք վատթարագույնից: Որովհետև Սանտա Հերմանդադի դեմ ձեզ չի օգնի ձեր ասպետութիւնը: Սանտա Հերմանդադը բոլոր թափառական ասպետներին կոտորած գրողով էլ չի գնի: Ինձ արդեն թվում է, թե նրա նետերը բզզում են ականջիս տակ:

— Դու բնականից երկչոտ ես, Սանչո,— ասաց դոն Կիխոտը:— Բայց որպեսզի դու շասես, թե ես համառ եմ և երբեք չեմ անում այն, ինչ որ դու ես խորհուրդ տալիս, այս անգամ կհետևեմ քո խորհուրդին և կհեռանամ, որ քո ահն անցնի, բայց մի պայմանով միայն՝ դու երբեք, ո՛չ կենդանի, ո՛չ մահից հետո, ոչ ոքի չպիտի ասես, թե՛ ես երկչուդից խուլս տվի և նահանջեցի վտանգի առջև, որովհետև ես այդ միմիայն նրա համար եմ անում, որ անսում եմ քո աղերսին:

— Պարո՛ն,— պատասխանեց Սանչոն,— հեռանալը փախչել չի նշանակում, իսկ սպասել թշնամուն, երբ վտանգը գերազանցում է բոլոր ենթադրութիւնները՝ կատարյալ խելագարութիւն է: Խոհեմութիւնը պահանջում է, որ մարդս այսօր իրեն պահպանի վաղվա համար և մեկ օրում ամեն ինչ թղթի վրա վեր չգա: Իմացած եղեք, թեև ես տգետ եմ և գեղջուկ, այնուամենայնիվ շատից-քչից գլուխ եմ հանում, թե որն է խելացի վարքը, ուստի մի՛ք ափսոսա, որ լսեցիք իմ խորհուրդը: Հեծեք Ռոսինանտին, եթե ի վիճակի եք, իսկ եթե չեք կարող, ես կօգնեմ և եկեք իմ հետևից, որովհետև իմ խելքն այնպես է կտրում, որ հիմա ոտքերը մեզ ավելի են հարկավոր, քան ձեռքերը:

Դռն Կիխոտը ոչ մի խոսքով չառարկեց, հեծավ ձին և հետևեց Սանչոյին: Իրիկնադեմին նրանք հասան Սյերրա-Մորենայի խորքերը, որտեղ Սանչոն ենթադրում էր անցկացնել գիշերը և մնալ մի քանի օր, ինչքան պաշարը հերիք աներ: Նրանք տեղավորվեցին երկու ժայռի արանքում, կաղնիների տակ՝ գիշերելու: Սակայն ճակատագիրն այնպես էր դասավորել, որ հռչակավոր գողավազակ Խինես դե Պասամոնտեն, որ ազատվել էր կապանքներից դոն Կիխո-




տի արիութեան և խելագարութեան շնորհիվ, Սանտա Հերմանդադի վախից դրդված նմանապես վճռել էր թաքնվել այս իսկ լեռներում և պատահամբ, դեռ մութը չընկած, երկյուղը նրան բերեց նույն տեղը, որտեղ թաքնվել էին դոն Կիխոտն ու Սանչո Պանսան: Նա սպասեց, մինչև որ սրանք քնեն և, որովհետև շարագործները միշտ ապերախտ են լինում, իսկ անհրաժեշտությունը հրում է անթույլատրելի գործեր կատարելու և ներկայի շահը ավելի գրավիչ է լինում, քան ապագայինը, բոլոր այս պատճառներով խինեսը, որ ոչ երախտապարտութեան զգացմունքով էր աչքի ընկնում, ոչ էլ բարեմտութեամբ, վրձուեց գողանալ Սանչոյի էջը (Ռոսինանտին նա հանգիստ թողեց, որովհետև այդ ավարը նրան պիտանի չէր թվում թե վաճառելու, թե գրավ դնելու տեսակետից):

Սանչո Պանսան քնած էր: Խինեսն էջը գողացավ: Եվ լույսը դեռ չբացված այնքան հեռու էր փախել, որ նրան գտնելն անկարելի էր արդեն:

Արշալույսը բացվեց, արար աշխարհին բերելով ուրախություն, իսկ Սանչո Պանսային՝ տխրություն, որովհետև նրա գորշ ավանակը չկար: Նկատելով կորուստը, նա սկսեց աղեկտուր ու դառնակոծ հոգոցներ հանել, այնպես որ նրա ձայնից դոն Կիխոտը զարթնեց և լսեց մրմունջը.

— Օ՛, իմ սիրասուն դավակս, ծնված իմ սեփական տանը, իմ երեխաների զվարճալիք, իմ կնոջ խնդություն, իմ հարևանների նախանձ, օ՛, իմ աշխատանքը թեթևացնող, իմ անձի կեսի կերակրող, որովհետև այն քսանվեց մարավեղիսը\*, որ դու օրական աշխատում ես, իմ ապրուստի կեսն է: Դոն Կիխոտը, լսելով այս ողբը և իմանալով պատճառը, սկսեց կարյաց



չափ մխիթարել Սանչոյին, խնդրելով, որ համբերի և խոստանալով թուղթ տալ, որով նա կստանա իր կալվածքում եղած հինգ ավանակներից երեքը:

Դա մխիթարեց Սանչոյին: Նա սրբեց արցունքը, զսպեց հեկեկոցը և շնորհակալություն հայտնեց դոն Կիխոտին նրա ողորմածության համար:

6 Դոն Կիխոտ

Այնինչ դոն Կիխոտը, հենց որ լեռներն ընկավ, լցվեց ցնծությամբ, որովհետև նրան այդ վայրերը շատ հարմար թվացին արկածներ որոնելու համար: Նրա միտն էին գալիս հրաշալի եղելություններ, որ պատահել են թափառական ասպետներին նման ամառի և խուլ վայրերում: Նա գնում էր արբած ու հափշտակված այդ մտքերով, մոռանալով ամեն ինչ աշխարհիս երեսին: Իսկ Սանչոն, վերջապես, իրեն անվտանգ զգալով, միայն այն էր խորհում, թե փնչպես հագեցնի իր ատամոքսը պաշարով, որ մնացել էր վանականների բեռներից: Նա քարշ էր գալիս տիրոջ հետևից շալակած այն ամենը, ինչ որ պիտի իր գորշ ավանակը կրեր, և հա՛ հանում էր պարկից կտոր-կտորի հետևից ու բերանը կոխում: Նա գրոշ չէր տա արկածի համար՝ հենց այդպես թափառելը թվում էր նրան ամենահաճելի բանը:

## ԳՆՈՒՄ XX

### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է ՄԱՆՉԱՑԻ ԱՐԻ ԱՍՊԵՏԻ ՀԵՏ ԱՅԵՐՈՒ-ՄՈՐԵՆԱՅՈՒՄ ՊԱՏԱՀԱԾ ԱՐՏԱՍՈՎՈՐ ԴԵՊՔԵՐԻ ԵՎ ԱՅՆ ԱՊԱԾԽԱՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՆԱ ԻՆՔԸ ԴՐԵՑ ԻՐ ՎՐԱ

Կամաց-կամաց նրանք մոտեցան ամենավայրի կիրճերին: Սանչոն մեռնում էր, որ խոսի իր տիրոջ հետ, սակայն սպասում էր, որ առաջինը նա սկսի, որպեսզի նրա պատվերը խախտած չլինի:

Սակայն այդքան երկար լռությանը չդիմանալով, նա այնուամենայնիվ խոսեց.

— Պարոն դոն Կիխոտ, օրհնեցեք ինձ, ձերդ ողորմածություն, և արտոնություն շնորհեցեք, որ վերադառնամ տուն, կնոջս ու երեխաներիս մոտ, նրանց հետ ես, գոնե, կարող եմ խոսել և դատողություն անել, ինչքան սիրտս ուզի: Իսկ ձերդ ողորմածությունը պատվիրում է ինձ թափառել գիշեր-ցերեկ այս անապատում, այն էլ առանց խոսելու, երբ որ սիրտս ուզենա: Որ այդպես է, ինձ ողջ-ողջ թաղեցեք, պրծնի գնա: Եթե բախտը կամենա, որ անասունները կարողանային խոսել, էլի մի բան է՝ ես կպատմեի իմ էշին այն ամենը, ինչ որ խելքիս փշեր և այդպիսով կկարճեի իմ տխուր օրերը: Հե՞շտ բան է և կարո՞ղ է մարդկային համբերությունը բավել՝ դու ողջ կյանքդ արկածներ որոնիր, իսկ փոխարենը՝ քեզ ջարդուխուրդ անեն, վերմակի վրա վեր-վեր թռցնեն, քարկոծեն, բռունցքներով խփեն, իսկ այդ ամենի վրա ավելացրու՝ շհանդգնես բերանդ բաց անել, շհանդգնես արտահայտել այն ամենը, ինչ-որ դադել է սիրտդ, ասես համր լինես:

— Ես հասկանում եմ քեզ, Սանչո,— պատասխանեց դոն Կիխոտը:— Դու մեռնում ես ցանկությունից, որ ես վերացնեմ քո լեզվի վրա դրածո արգելքը: Է՛հ, թող այդպես լինի, վերացնում եմ, ասա ինչ որ կամենաս, բայց պայմանով, որ այս թուլտվությունն ուժ ունենա, քանի որ մենք լեռներում ենք գտնվում:



— Թող այդպես լինի,— պատասխանեց Սանչոն,— տեր իմ, հիմա մի կուշտ խոսեմ, իսկ հետո կտեսնենք, թե ինչ կլինի: Օգտվելով ձեր թույլտվությունից, ես ահա թե ինչ կասեմ՝ ձեր ի՞նչ գործն է սրան-նրան պաշտպանելը: Ես ուրիշների գործին խառնվողը չեմ: Ով որ խարդախում է, նա այդ զգում է իր սեփական քսակում: Ես ոչ տարել եմ, ոչ էլ տանուլ տվել: Հաճախ կարծում եմ, թե մարդիկ ճարպ ունեն, դու մի ասա, ճարպը կախ տալու համար կեռ էլ շունեն: Դաշտը կողպեքի տակ չի դրվի, իսկ բամբասանքը... Աստծուն էլ են բամբասել:

— Տե՛ր ողորմյա,— բացականչեց դոն Կիխոտը,— այդ ի՞նչ դատարկ բաներ ես դուրս տալիս, Սանչո: Ի՞նչ առնչություն ունի մեր զրույցը այն առածների հետ, որ դու շարում ես մեկը մյուսի հետևից: Լարիք քո բոլոր հինգ զգայարանները և հասկացիր վերջապես, որ ամենը, ինչ որ ես արել եմ և կանեմ, միանգամայն խելացի է և համաձայն ասպետական օրենքների:

— Ասացեք, պարոն,— առարկեց Սանչոն,— սա է՞լ է ըստ ասպետական օրենքի, որ մենք առանց ճամփի և ուղիի թափառենք լեռներում:

— Մեկ էլ եմ ասում քեզ, Սանչո, լռի՛ր,— ասաց դոն Կիխոտը:— Նկատի առ, որ ես մտադիր եմ այս վայրերում այնպիսի սխրագործություն կատարել, որն աշխարհիս երեսին առհավետ հռչակի իմ անունը և պսակի բոլոր գործերը, որոնց շնորհիվ թափառական ասպետը կարող է հասնել փառքի և կատարելություն:

— Իսկ այդ սխրագործությունը շա՞տ է վտանգավոր,— հարցրեց Սանչո Պանսան:

— Ո՛չ,— պատասխանեց Վշտակերպ Ասպետը,— թեև գործը կարող է այնպես էլ շուռ գալ, որ հաջողության փոխարեն մենք տուժենք: Ասենք, ամեն ինչ քո ջանասիրությունից է կախված:

— Իմ ջանասիրութիւնի՞ց,— բացականչեց Սանչոն:

— Այո՛,— շարունակեց դոն Կիխոտը:— Ես մտադիր եմ քեզ մի տեղ ուղարկել: Եթե դու շուտ վերադառնաս, իմ փորձութիւններն էլ շուտ կ'ալրածենն, և կսկսվի իմ փառքի շրջանը:

— Ի՞նչ է մտադիր ձեռնարկելու ձերդ ողորմածութիւնը այս ամառի վայրում,— հարցրեց Սանչոն:

— Չէ՞ որ ես քեզ ասացի,— պատասխանեց դոն Կիխոտը,— որ ես մտադիր եմ նմանվել Ամադիսին և այնպես վարվել, իբրև թե կորցրել եմ խելքս, հուսահատվել ու կատաղել: Միաժամանակ կնմանվեմ նաև արի Ռոլանդին:

— Ինձ թվում է,— հարեց Սանչոն,— թե ասպետները հարկադրված են եղել անելու այդ ամենը: Իսկ ձերդ ողորմածութիւնն ի՞նչ պատճառ ունի գժվելու:

— Բանն էլ հենց այդ է,— պատասխանեց դոն Կիխոտը,— գործի ամբողջ նրբութիւնն էլ այստեղ է: Եթե թափառական ասպետը խելագարվում է, ունենալով կատարյալ հիմք՝ դրա մեջ ոչ արժանիք կա, ոչ սխրագործութիւն: Այլ բան է խելագարվել հենց այնպես, առանց որևէ պատճառի: Թող հասկանան, թե ինչի ընդունակ կլինեմ ես, որ ինձ հրացանի պես լցնելու լինեմ, եթե առանց լցնելու էլ ես կարող եմ այդպես վարվել:

Այսպես զրուցելով նրանք հասան մի բարձր լեռան ստորոտը, որ սլանում էր վեր ուրիշ լեռների բազմութեան միջից: Ոլորվում էր վտակը նրա լանջերով և եզերում մի սքանչելի կանաչ հովիտ: Ծառ ու ծաղիկները առավել ևս դուրեկան էին դարձնում այս վայրը: Մեր վշտակերպ Ասպետը հենց այդ տեղն ընտրեց իր աշխատանքի վայրը: Նա արագ ցած թռավ Ռոսինանտից և, վայրկենապես հանելով նրա թամբն ու սանձը, խփեց նրա գավակին ու ասաց.

— Օ՛, երիվար, նույնքան հոշակված սեփական սխրագործութիւններով, որքան և ապերախտ: Քեզ ազատութիւն է շնորհում նա, ով ինքը գուրկ է ազատութիւնից: Գնա, ուր որ կամենաս:

Այդ տեսնելով, Սանչոն ասաց.


— Եթե ձերդ ողորմածութիւնը լուրջ մտադիր է ինձ տեղ ուղարկել և ապա խելագարվել, ուրեմն պետք է Ռոսինանտին թամբել: Նա կփոխարինի իմ կորած էշին, և ես ավելի շուտ կերթամ ու կվերադառնամ: Իսկ եթե ես ոտքով գնալու լինեմ, գլուխ չեմ հանում՝ այդ ե՞րբ տեղ կհասնեմ և ե՞րբ ետ կգամ, որովհետև, շիտակ ասած, ես ոտքով գնալու հավես չունեմ:

— Ինչ կա որ,— պատասխանեց դոն Կիխոտը,— թող քո ասածը լինի, քո կարծիքը վատ չէ: Դու այստեղից դուրս կգաս երեք օրից, որովհետև ես ուզում եմ, որ դու տեսած լինես, թե ես ինչեր եմ անում և ասում, հետո էլ պատմես նրան:

— Էլ ի՞նչ տեսնեմ,— առարկեց Սանչոն,— քի՞չ եմ տեսել:

— Դու բան չես հասկանում,— պատասխանեց դոն Կիխոտը:— Հիմա ես կսկսեմ պատառոտել իմ շորերը, զրահներս կշարտեմ դեսուդեն, գլուխս քարովը կտամ և սրանց նման այնպիսի բաներ կանեմ, որ դու մնաս զարմացած:

— Ի սեր աստծո,— ասաց Սանչոն,— զգույշ խփեցեք ձեր գլուխը քարին. չէ՞ որ կարող է այնպիսի ժայռ պատահել, որին ձեր գլուխը խփելուց



հետո էլ ոչ մի աշխատանքի կարիք չլինի: Ահա թե ինչ խորհուրդ կտամ, ձերդ  
ողորմածություն, եթե անհրաժեշտ է ճակատը քարին խփելը և առանց դրան  
յուրա գնալ չի լինի, արդյոք բավական չէ՞ր լինի, եթե ձերդ ողորմածությունը  
գլուխը ջրին խփեր, կամ թե ուրիշ ավելի փափուկ առարկաների, ասենք՝



բամբակի, իսկ մնացածը թողնել ինձ: Ես էլ տիրուհի Դուլսինեային կասեմ, ձերդ ողորմածութիւնը գլուխը սրածայր ժայռին է տալիս, որ ալմաստի պես ամուր է:

— Շնորհակալ եմ քո բարի ցանկութեան համար, Սանչո բարեկամ,— պատասխանեց դոն Կիխոտը,— բայց պետք է քեզ ասեմ, որ այդ ամենը կատակի համար չեմ անում, այլ լուրջ, որովհետև այլապես խախտած կլինեի ասպետականութեան օրենքը, որ արգելում է սուտը: Մի՞թե խաբեբայութիւն չէ մեկ բան անելը և մյուս բան ասելը: Իմ գլուխը քարով տալը պետք է իսկական լինի, ուժգին, կատարյալ, առանց կեղծիքի և ձևացնելու որևէ խառնուրդի: Անհրաժեշտ է, որ ինձ համար թողնես մի քիչ սպեղանի բուժվելու համար, քանի որ դժբախտաբար մենք կորցրել ենք բալասանը:

— Ավելի վատն այն է, որ մենք կորցրինք էջին,— պատասխանեց Սանչոն:— Չէ՞ որ նրա վրա էր սպեղանին էլ, մնացած բաներն էլ, իսկ այն անիծված խմիչքի անունը, աղաչում եմ, ձերդ ողորմածութիւն, էլ չտաք, թե չէ ոչ միայն հոգիս, այլևս ստամոքսս է շուռ գալիս նրա անունը լսելիս: Մի բան էլ խնդրեմ՝ երևակայեցեք, որ ձեր նշանակած երեք օր ժամանակը լրացել է և ձեր բոլոր գժութիւնները ես տեսել եմ, իսկ ես ձեր տիրուհուն հրաշք բաներ կփչեմ: Դե նամակը գրեցեք և ինձ շուտով ճամփու դրեք, որովհետև ես շատ եմ ուզում շուտ վերադառնալ, որպեսզի փրկեմ ձերդ ողորմածութեանը այս քավարանից:

— Բայց ինչպե՞ս նամակ գրեմ,— հարցրեց Վշտակերպ Ասպետը:

— Եվ գրութիւն՝ էջի քուռակներն ստանալու համար,— ավելացրեց Սանչոն:

— Ամեն ինչ կլինի, ամեն ինչ,— պատասխանեց դոն Կիխոտը,— միայն մենք թուղթ չունենք և պետք է հին մարդկանց օրինակով ծառերի տերևների և մոմած տախտակների վրա գրենք, թեև այստեղ մոմած տախտակ գտնելը նույնքան դժվար կլինի, որքան թուղթը: Ինչքան հիշում եմ, Դուլսինեան ոչ գրել գիտե, ոչ կարդալ և իր օրում նամակի երես չի տեսել: Մեր փոխադարձ սերը միշտ պղատոնական է եղել և պարկեշտ հայացքներից դենը չի անցել: Նայելն էլ է շատ հազվադեպ եղել, և ես խղճի մտոք կարող եմ ասել, թե տասներկու տարվա ընթացքում, որ ես նրան իմ աչքի լույսից ավելի եմ սիրում, ես նրան չորս անգամ էլ տեսած չեմ լինի և շատ հնարավոր է, որ նա ինքն էլ նկատած չլինի, որ ես նայել եմ նրան՝ ահա թե ինչքան խիստ ու փակ են կրթել Դուլսինեային: Նրա հայրն ու մայրը՝ Լորենցո Կորչուելոն և Ալդոնսա Նոգալեսը:

— Պա՛-պա՛-պա՛-պա՛,— բացականչեց Սանչոն:— Կնշանակի՞ տիրուհի Դուլսինեա Տոբոսցին ոչ այլ ոք է, քան եթե Լորենցո Կորչուելոյի և Ալդոնսա Լորենցոյի աղջի՞կը:

— Այո,— պատասխանեց դոն Կիխոտը,— և նա արժանի է ողջ աշխարհի թագուհին լինելու:

— Ես նրան շատ լավ եմ ճանաչում,— պատասխանեց Սանչոն:— Նա լավն է ու լիքը՝ տոռ՛ւզ աղջիկ: Ինչ ասպետի ասես մորուքից կրունի, ցեխից կհանի: Գետինը մտնեմ՝ ի՛նչ ուժ ունի, ի՛նչ ձայն: Մի օր բարձրացել է զանգակատունը և կանչել հոր բատրակներին, որ աշխատելիս են եղել դաշ-

տում, և թեև նրանք գյուղից կես մղոն հեռու են եղել, այնքան պարզ լսել են նրա ձայնը, ասես դանդաղատան կողքին են կանգնած եղել: Նա նազուտուզ ծախող չի, բոլորի հետ հանաք-մասխարություն կանի, դատարկ բանից կծիծաղի և կզվարճանա: Հիմա ես կարող եմ ասել, պարոն Վշտակերպ Ասպետ, որ դուք ոչ միայն կարող եք, այլև պետք է նրա համար գծություններ անեք: Ձերդ ողորմածությունն ունի կատարյալ հիմք՝ հուսակտուր լինելու և նույնիսկ կախվելու: Եվ եթե մեկնումեկը այդ բանն իմանա, անշուշտ կասի, թե դուք շատ ճիշտ եք վարվել, անգամ եթե ինքը սատանան ձեզ դժոխքը տանելու լինի: Ես անհամբեր եմ ճամփա ընկնելու, որպեսզի շուտով նրան տեսնեմ: Քանի՞ օր է, ինչ նրան չեմ տեսել: Նա փոխված կլինի: Չէ՞ որ նա միշտ դաշտում է լինում, բաց օդում, բարկ արևի տակ, իսկ դրանից կնոջ դեմքը փշանում է: Հիմա խոստովանեմ, ձերդ ողորմածություն, որ մինչև օրս ես խորին տղիտության մեջ եմ եղել, որովհետև հաստատ հավատացած եմ եղել, թե տիրուհի Դուլսինեան առնվազն իշխանուհի է: Լավ միտք արեք հիմա. Ալդոնսա Լորենցոյին, ուզում եմ ասած լինեմ՝ Դուլսինեա Տորոսցուն ի՞նչ օգուտ, որ ձերդ ողորմածությունը նրա մոտ հաղթվածներ է ուղարկում, որ ծունկ չոքեն նրա առջև: Չէ՞ որ կարող է պատահել, որ նրանց գալստյան վայրկյանին նա կտավհատ լինի գզելիս կամ կալ կալսելիս: Նրանք կբարկանան, տեսնելով նրան այդպիսի գործ անելիս, իսկ նա կծիծաղի ձեր նվերի վրա և կնեղանա:

— Քանի՞-քանի անգամ ես քեզ արդեն ասել եմ, Սանչո,— պատասխանեց դոն Կիխոտը,— որ դու շատ բերանբացն ես և, թեև բթամիտ ես, բայց շարունակ սրախոսում ես: Ինձ համար միանգամայն բավական է երևակայել և հավատալ, որ այդ փառասպանծ Ալդոնսա Լորենցոն գեղեցիկ և ազնիվ աղջիկ է: Գալով նրա ցեղի մաքրության, այդ էական չէ: Ուստի, իմ աչքում նա ամենաազնվազարմ իշխանուհին է աշխարհիս երեսին: Դու պետք է իմացած լինես, Սանչո, եթե միայն չգիտես, որ երկու բան առանձնապես սեր են հարուցանում, այն է՝ մեծ գեղեցկությունը և բարի համբավը: Այդ երկուսն էլ հատուկ են Դուլսինեային: Ոչ ոք չի հասնի նրան գեղեցկությամբ, իսկ բարի համբավով նրա հետ քիչ կին կմտցի: Մի խոսքով, ես համարում եմ, որ իմ բոլոր խոսքերը զուտ ճշմարտություն են, և երևակայությանս մեջ ես նրան այնքան չքնաղ ու ազնիվ եմ պատկերում, որքան կամենում եմ նրան տեսած լինել:

Դոն Կիխոտը հանեց հուշատետրը և, մի կողմ քաշվելով, սկսեց նամակ գրել, ապա, ավարտելով, մոտ կանչեց Սանչոյին և ասաց, որ կամենում է նրան կարդալ իր թուղթը, որպեսզի նա անգիր հիշի, եթե բան է, ճամփին կորցնելու լինի: Բախտն այնքան դաժան է իր նկատմամբ, որ ամեն բանից պետք է զգուշանալ:

— Դե, լսիր, թե ինչ եմ գրել,— ասաց նա:

ԴՈՆ ԿԻՒՈՏԻ ՆԱՄԱԿԸ ԴՈՒԼՍԻՆԵԱ ՏՈՐՈՍՅՈՒՆ

Վ ս ե մ ա շ ու ք և ի շ խ ա ն ա զ ո Ր տ ի Ր Ո Ւ Տ Ի

անշատման խայթից մինչև սրտի խորքը վիրավորված ու խոցված ասպետը, օ՛հ քաղցրագույն Դուլսինեա Տորոսցի, քեզ ողջութուն է ցանկանում, ինչից զուրկ է ինքը: Եթե քո գեղեցկու-

թյունը արհամարհում է իմը, եթե քո արժանիքները կովի են ելնում իմ դեմ, եթե քո արհամարհանքը ինձ կործանում է բերում,—թեև ես սովոր եմ տառապանքի,—այդ ցավը ես չեմ տանի, քանի որ նա ոչ միայն խորը, այլև տևական է: Իմ բարի զինակիր Սանչոն քեզ լիակատար հաշիվ կտա, օ՛, խստասիրտ զեզեցկուհի, օ՛, իմ սիրած թշնամի, թե դու ինձ ինչ վիճակի ես հասցրել: Եթե ինձ օգնության արժանի նկատես, ես քոնն եմ, իսկ եթե ոչ, վարվիր, ինչպես քեզ հաճելի լինի՝ բաժանվելով կյանքից ես հույս ունեմ հագեցնել քո խստասրտությանը և իմ կիրքը:

Մինչ գերեզման ձերդ՝

Վ շ տ ա կ ե ր ա Վ Ա ս պ ե տ

— Իմ հոր արևը վկա,— բացականչեց Սանչոն, լսելով այս գիրը,— ես կյանքումս ավելի բարձր բան լսած չկամ: Արմանք ու զարմանք, թե ինչ սիրուն է ձերդ ողորմածությունն իր մտքերն արտահայտում և ինչ ճարպիկ է այդ ամենը հարմարեցրած «Վշտակերպ Ասպետ» ստորագրությանը: Շիտակ՝ ձերդ ողորմածությունը իսկական սատանա է: Ինչե՛ր ասես, որ դուք չգիտեք:

— Իմ գործում,— պատասխանեց դոն Կիխոտը,— ամեն բան պիտի իմանաս:

— Դե հիմա,— շարունակեց Սանչոն,— հետևին մի ստացական գրեցեք երեք քուռակների մասին և ինչքան կարելի է պարզ ստորագրեցեք, որպեսզի ամեն ոք, տեսնելուն պես, իսկույն ձեր ձեռքը ճանաչի:

— Սիրով,— պատասխանեց դոն Կիխոտը և, գրելով, կարդաց հետևյալը. «Կարգադրեցեք, ձերդ ողորմածություն, սիրելի զարմուհիս, հանձնել իմ այս առաջին կտրոնը ներկայացնող՝ իմ զինակիր Սանչո Պանսային երեք քուռակ այն հինգից, որ ես մեկնելով թողել եմ և հանձնել ձերդ ողորմածության հոգատարությանը: Այդ երեք քուռակներին հրամայում եմ հանձնել նրան ի տրիտուր այստեղ նրանից ստացածս երեք այլ քուռակների: Այդ անելուց և նրանից գրություն ստանալուց հետո՝ նրա մեզ հետ ունեցած հաշիվները պետք է փակված համարել: Գրված է Սյերրա-Մորենայի խորքերում, սույն ընթացիկ տարվա օգոստոսի 22-ին»:

— Հրաշալի՛ է,— ասաց Սանչոն,— իսկ հիմա, ձերդ ողորմածություն, ստորագրեցեք:

— Ստորագրելու կարիք չկա,— առարկեց դոն Կիխոտը,— բավական է, որ տակին խազ քաշեմ, դա միևնույն է, թե ստորագրություն է, և հերիք է ոչ թե երեք, այլ երեք հարյուր քուռակ ստանալու համար:

— Գիտե՞ք, ձերդ ողորմածություն, թե ինչից եմ վախենում ես,— հարցրեց Սանչոն:— Սա այնպիսի խուլ տեղ է, որ ես, գուցե թե, ետ գալուց ճանապարհը չգտնեմ:

— Իսկ դու մտքումդ լավ պահիր նշանները,— պատասխանեց դոն Կիխոտը,— ես էլ կաշխատեմ այստեղից հեռու չգնալ և ժամանակ առ ժամանակ կբարձրանամ ամենաբարձր ժայռերի վրա, որ տեսնեմ՝ վերադառնո՞ւմ ես դու արդյոք:

Սանչոն հեծավ Ռոսինանտին և, դոն Կիխոտից ստանալով պատվեր՝ խնայել ու խնամել ձիուն, ինչպես իրեն, ուղևորվեց դեպի դաշտավայրը և շուտով անհետացավ:

ՈՐ ՊԱՏՄՈՒԽ Է ՍԱՆՉՈՅԻ ԳԼԽԻՆ ԵԿԱԾ  
ՆՈՐ ՈՒ ՀԱԾԵԼԻ ԱՆՑՔԻ ՄԱՍԻՆ

Դուրս գալով բանուկ ճանապարհ, Սանչոն սկսեց որոնել Տոբոսոյի ճանապարհը և հետևյալ օրը հասավ այն իջևանատունը, որտեղ նրան թոցրել էին վերմակի վրա: Իջևանատունը տեսավ թե չէ, զգաց իրեն օդում, ուստի չկամեցավ ներս մտնել, թեև պետք էր՝ ճաշի ժամանակ էր, և նա սաստիկ ուզում էր տաք կերակուր ուտել, որովհետև երկար ժամանակ միայն սառը բան էր կերել: Այս անհրաժեշտութիւնը հարկադրեց նրան մոտենալ դարպասին, բայց նա դարձյալ տատանվում էր՝ նե՞րս մտնել թե ոչ: Մինչ նա խորհում էր, դուրս եկան երկու հոգի, որոնք նրան իսկույն ճանաչեցին, և նրանցից մեկն ասաց մյուսին:

— Ասացեք, պարոն լիցենցիատ, այս ձիավորը Սանչո Պանսան չի՞, որի մասին մեր արկածախնդրի տնտեսուհին ասում էր, թե ուղևորվել է իր տիրոջ հետ որպէս զինակիր:

Սրանք այն քահանան ու սափրիչն էին, որ դատաստան էին տեսել դոն Կիխոտի մատենադարանի հետ, այդ պատճառով էլ հեշտութեամբ ճանաչեցին Սանչոյին, որն իրենց գյուղից էր:

Ճանաչելով Սանչո Պանսային և Ռոսինանտին, նրանք մոտեցան, որ դոն Կիխոտից տեղեկութիւն քաղեն, և քահանան հարցրեց.

— Սանչո Պանսա, բարեկամ, որտե՞ղ է ձեր տերը:

Սանչո Պանսան էլ իսկույն ճանաչեց նրանց, բայց վճռեց թաքցնել, թե ինչ վայրում ու վիճակում է թողել իր տիրոջը: Ուստի պատասխանեց, թե տերը ինչ-որ տեղ զբաղված է ծայրաստիճան կարևոր գործով, իսկ ինչ գործով, չի կարող ասել, անգամ եթե նրա աչքերը հանելու լինեն:

— Ո՛չ, ո՛չ, Սանչո Պանսա,— ասաց սափրիչը,— եթե դուք մեզ չասեք, թե որտեղ է նա, մենք կկարծենք,— ասենք հիմա էլ արդեն այդ մտքին ենք,— որ դուք նրան սպանել ու կողոպտել եք, քանի որ հեծել եք նրա ձին: Վերադարձրեք մեզ այդ քնձոտ ձիու տիրոջը, թե չէ ձեր բանը վատ կլինի:

— Զուր եք սպառնում, ես այն տեսակ մարդ չեմ, որ մարդ սպանեմ և կողոպտեմ: Թող ամեն ոք մեռնի, երբ որ ճակատին գրած է կամ երբ որ աստված կամենա: Իմ տերը մնացել է լեռներում և այնտեղ ինչքան քեֆն ուզի թող ապաշխարանք անի:

Եվ առանց շունչ առնելու և կանգ առնելու, նա պատմեց, թե ինչ վիճակում մնաց դոն Կիխոտը և ինչ արկածներ պատահեցին նրան: Ապա նա ավելացրեց, որ ինքը նամակ է տանում Դուսինեա Տոբոսոյուն՝ Լորենցո Կորչուելոյի աղջկան, որին իր տերը սիրահարված է մինչև ականջները:

Քահանան ու սափրիչը զարմացած մնացին Սանչո Պանսայի պատմութիւնից: Թեև նրանք գիտեին դոն Կիխոտի խելագարութեան մասին, ինչպես գիտեին և այն, թե ինչ տեսակ խելագարութիւն է այդ, այնուհանդերձ ամեն անգամ, երբ լսում էին նրա մասին, նորից էին զարմանում: Նրանք խնդրեցին Սանչո Պանսայից, որ ցույց տա դոն Կիխոտի նամակը Դուսինեա Տոբոսոյուն:

Սանչոն ձեռքը տարավ գրպանը, որ հուշատետրը հանի, բայց չգտավ և

չէր էլ գտնի, եթե մինչև օրս էլ որոնելու լիներ, որովհետև հուշատետրը մնացել էր դոն Կիխոտի մոտ: Դոն Կիխոտը մոռացել էր տալ նրան, իսկ Սանչոյի մտքովն էլ չէր անցել խնդրել նրանից:

Հուշատետրը շփոթելով, Սանչոն մեռելի պես գունաթափվեց և սկսեց արագ-արագ փնտրել բոլոր գրպաններում: Համոզվելով, որ նամակը չկա, նա, առանց երկար մտածելու, երկու ձեռքով բռնեց իր մորուքը, մազերի կեսը պոկեց, սկսեց իր քիթ ու մոթին արագ-արագ բռունցքով հարվածել, մինչև որ վերջապես քթիցն արյուն եկավ:

Տեսնելով այդ ամենը, քահանան ու սափրիչը հարցրին, թե ի՞նչ է պատահել և ինչո՞ւ է այդպես ինքն իրեն խոշտանգում:

— Ի՞նչ է պատահել,— պատասխանեց Սանչոն,— այն, որ ես մեկ վայրկյանում ձեռքիցս երեք ավանակ բաց թողի, որոնցից յուրաքանչյուրը մի դոլակ արժե:

— Դա ի՞նչ կնշանակի:

— Ես կորցրել եմ հուշատետրը,— ասաց Սանչոն,— որտեղ գրած էր նամակ Դուլսինեային և գրություն իմ տիրոջ ստորագրությամբ, որով նա հրամայում է իր քրոջ աղջկան շորս թե հինգ ավանակներից, որ պատկանում են իրեն, երեքը տալ ինձ:

Այստեղ նա պատմեց իր էջի կորուստի մասին: Քահանան նրան մխիթարեց, ասելով, որ երբ գտնվի նրա տերը, ինքը կհամոզվի նրան հաստատել իր խոստումը և վերստին գրել, միայն թե առանձին թղթի վրա, ինչպես որ հարկն է, քանի որ հուշատետրի մեջ եղած վկայաթղթերը երեք շեն ընդունվում և շեն վճարվում:

Դրանից հետո՝ Սանչոն հանգստացավ և հայտարարեց, որ եթե գործը այդպես է, Դուլսինեայի նամակի կորուստը նրան շատ էլ չի վշտացնում, քանի որ գրեթե անգիր գիտե և կարող է թելադրել որտեղ և երբ հարկավոր լինի:

— Դե ասա մեզ, Սանչո,— խնդրեց սափրիչը,— իսկ մենք գրի կառնենք:

Սանչոն սկսեց քորել ծոծրակը, որպեսզի իր հիշողությունից դուրս բերի նամակի բովանդակությունը և երկար ժամանակ մեկ մի ոտքի վրա էր հենվում, մեկ՝ մյուս: Նա մեկ գետնին էր մտիկ տալիս, մեկ երկնքին:

Նա մի մատի եղունգի կեսը կրծեց և, վերջապես, իր ունկնդիրներին, որ սպասում էին, թե ինչ պիտի ասի, բավական շարշարելուց հետո ընդհատեց երկարատև լուռությունը:

— Գրողը տանի ինձ, պարոն լիցենցիատ, ոչ մի կերպ չեմ կարողանում մտաբերել այդ սատանի նամակը: Գիտեմ միայն, որ այդպես էր սկսում՝ «բարձր ու տարող տիրուհի»:

— Անկարելի է, որ «տարող» լինի,— առարկեց սափրիչը,— երևի նա «տիրող» է գրել:

— Ճիշտ որ,— համաձայնեց Սանչոն:— Իսկ հետո, միտքս է գալիս, ասված էր՝ «ծեծվածն ու անքունը, խոցոտվածը համբուրում է ձերդ ողորմածության ձեռները, խստասիրտ և անհայտ գեղեցկուհի» և էլի ինչ-որ առողջության և հիվանդության մասին, որ տերս ցանկանում է նրան. շատ լավ էր

գրված, իսկ վերջում ասված էր. «Մինչև գերեզման ձերդ՝ Վշտակերպ Ասպետ»:

Քահանային ու սափրիչին բավական զվարճություն պատճառեց Սանչոյի լավ հիշողությունը: Նրանք խնդրեցին, որ Սանչոն երկու անգամ էլ կրկնի նամակը, որպեսզի իրենք անգիր հիշեն և ժամանակին գրի առնեն:

Սանչոն երեք անգամ էլ կրկնեց և դարձյալ հազար ու մի դատարկ բաներ ասաց:

Ապա նա պատմեց իր տիրոջ գործերից: Սակայն վերմակի վրա իր վերվեր թռչելու մասին այս իսկ իջևանատանը, որտեղ այնքան շէր ուզում մըտնել, նա ոչ մի խոսք չասաց:

Մեր բարեկամները երկար ու բարակ խորհրդակցեցին, թե ինչ անեն, որ իրենց նպատակին հասնեն և ի վերջո քահանայի գլխով մի միտք անցավ, որ լիովին դոն Կիխոտի ճաշակով էր և շատ հարմար իրենց ձեռնարկած գործին՝ նա հայտնեց սափրիչին, որ մտածել է թափառական աղջկա զգեստ հագնել, իսկ սափրիչը պետք է զինակիր ներկայանա: Այդ կերպ նրանք կգնան լեռները, դոն Կիխոտի մոտ: Քահանան վիրավորված և անպաշտպան աղջկա տեսք կընդունի, կխնդրի դոն Կիխոտից շնորհ անել իրեն, և նա, իբրև արի թափառական ասպետ, չի կարողանա մերժել: Իսկ այդ շնորհը այն կլինի, որ դոն Կիխոտը նրա հետևից գնա ամենուր և վրեժխնդիր լինի վիրավորանքի համար, որ հասցրել է նրան մի շար ասպետ:

Սափրիչը հավանություն տվեց քահանայի ծրագրին, և նրանք իսկույն ձեռնամուխ եղան այն ի կատար ածելու:

Նրանք խնդրեցին իջևանատան տիրուհուց մի շրջագգեստ և գլխաշոր, գրավ թողնելով քահանայի փարաջան: Սափրիչը իր համար մորուք շինեց եզան պոչի շեկ մազերից: Իջևանատիրոջ կինը քահանային այնպես զուգեց, որ ավելի լավ անհնարին էր:

Հագիլվ էին նրանք մի քիչ հեռացել իջևանատնից, որ քահանայի մտքովն անցավ, թե նրանք վատ բան են անում, որ այդպիսի շորերով ման են գալիս, որովհետև վայել չէ հոգևոր անձին կնոջ զգեստ հագնելը, անգամ ամենալավ դիտավորությամբ: Նա, այդ ասելով, խնդրեց սափրիչին, որ նրանք իրենց շորերը փոխեն, որովհետև շատ ավելի վայելուչ է, որ նա աղջիկը լինի, իսկ զինակիր՝ քահանան:

Սափրիչը համաձայնեց կատարել քահանայի ցանկությունը, և քահանան, շարադրելով նոր ծրագիր, սկսեց խրատել, թե անպաշտպանը ինչպես պետք է պահի իրեն և ինչ խոսքեր ասի, որպեսզի դոն Կիխոտին կարողանան դրդել և հարկադրել հետևելու իրենց և լքել այն որջը, որ նա ընտրել է իր ապարդյուն ապաշխարանքի համար:

Սանչոն ասաց նրանց, թե ավելի լավ կլինի, եթե ինքն առաջ ընկնի և հաղորդի դոն Կիխոտին նրա սրտի տիրուհու պատասխանը: Գուցե հենց այդ բավական լինի նրան այնտեղից հանելու համար և քահանային ու սափրիչին անհանգստանալու կարիք չի լինի:

Բարեկամները հավանություն տվին Սանչոյի մտքին և վճռեցին կանգ առնել ու սպասել նրա վերադարձին, որպեսզի տեղեկանան, գտե՞լ է նա արդյոք իր տիրոջը:

ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է ՆՈՒՅՆ ԼԵՌՆԵՐՈՒՄ  
ՔԱՀԱՆԱՅԻ ԵՎ ՍԱՓՐԻՉԻ ԳԼՆԻՆ ԵՎԱԾ  
ՆՈՐ ՈՒ ՀԱԾԵԼԻ ԱՆՑՔԻ ՄԱՍԻՆ

— Տե՛ր աստված: Մի՞թե այս լեռներում ես վերջապես գտա գաղտնի դամբարանը իմ մարմնի, որ ակամա քարը եմ տալիս իբրև բեռ: Այո, գտա, եթե այս կիրճերի ամայությունն ինձ չի խաբում: Ի՞նչ դժբախտ կին եմ եղել ես:

Քահանան ու նրա ուղեկիցները այս ձայնն առան և այս խոսքերը լսեցին, և նրանց թվաց, թե դա բոլորովին մոտիկ տեղից է գալիս (իրոք այդպես էլ էր): Ուստի նրանք գնացին որոնելու խոսողին և քսան քայլ շանցած, հանկարծ, դուրս ցցված ժայռի հետևում, բարձրաբուն հացենու տակ նրանք գեղջկական հագուստով մի երիտասարդ տեսան:

Երիտասարդը գլխարկը հանեց և գլուխը թափ տվեց: Իսկույն արձակվեցին և մինչև ուսերը թափվեցին նրա մազերը, որոնց կարող էին նախանձել արևի ճառագայթները: Այստեղ մեր բարեկամները գլխի ընկան, որ կարծեցյալ շինականը կին է:

Աղմուկի ձայն առնելով, ծպտված աղջիկը գլուխը բարձրացրեց և աչքերը ծածկող մազերը երկու ձեռքով ետ պցելով, եկվորների կողմը նայեց: Ապա, խոր հոգոց հանելով, խզեց լուսթյունը.

— Քանի որ այս լեռների ամայությունն էլ չկարողացավ թաքցնել ինձ, իսկ իմ բաց ու արձակ մազերը թույլ չեն տալիս, որ լեզուս ստի, ապա զուր կլինեք, որ ես ուրիշ մարդ ձևանայի: Միայն թե ես երկյուղ եմ կրում, որ իմ տառապանքների պատմությունը ձեր մեջ կհարուցի ոչ միայն կարեկցություն, այլև հուսահատություն, որովհետև դուք ոչ դեղ կգտնեք դրանք բուժելու, ոչ խորհուրդ՝ թեթևացնելու համար:

Չքնաղ աղջիկը այնպիսի սահուն ոճ ուներ և այնքան քնքուշ ձայն, որ նրա խելքը պակաս չէր հիացնում, քան գեղեցկությունը: Նրանք նորից սկսեցին առաջարկել իրենց ծառայությունը և թախանձել, որ նա իր խոստումը կատարի: Աղջիկը մեծագույն համեստությամբ կոշիկները հագավ և մազերը կարգի բերեց, ապա նստեց նրանց միջև՝ ժայռի փոս տեղում և դժվարությամբ գլուխով արցունքը, հանդարտ ու պայծառ ձայնով այսպես սկսեց իր կյանքի պատմությունը.

— Մեր Անդալուզիայում կա մի քաղաք, որի անունով կոչվում է իր դուրսը, Իսպանիայի մեծամեծներից մեկը: Իմ ծնողները այդ դուքսի ծառաներն են: Նրանի՞ց էր արդյոք, որ ծնողներս ուրիշ ժառանգ չունեին, թե նրանից, որ ինձ սաստիկ սիրում էին, սակայն երբեք, կարծեմ, ծնողներն իրենց զավակներին այնպես երես տված չեն եղել, ինչպես նրանք՝ ինձ: Օրերս անընդհատ աշխատանքի և մենության մեջ էին անցնում: Ես հավատացած էի, որ բացի տան ծառաներից, ինձ ոչ ոք չի կարող տեսնել: Այնինչ դուքսի կրտսեր որդի դոն Ֆերնանդոն նկատել էր ինձ:

Նա ինձ տեսավ թե չէ, համակվեց սաստիկ սիրով: Նա կաշառել էր տան

բուր ծառաներին, ծնողներին վրա թափվում էին նվերներ ու շնորհներ: Ամեն օր մեր փողոցում տոն ու խնդություն էր, գիշերները՝ սերենադները ոչ ոքի չէին թողնում քնել: Այդ ամենը ոչ միայն չէր սիրաշահում իմ սիրտը, այլ, ընդհակառակն՝ խստասիրտ էր դարձնում ինձ, ասես թե նա իմ մահացու թըշնամին լիներ, և այն ամենը, ինչ որ նա անում էր իմ սիրտը գրավելու համար, հակառակ ներգործություն էր ունենում: Դոն Ֆերնանդոն իմացավ, որ ծնողներս մտադիր են ինձ մարդու տալ, որպեսզի ինձ ավելի լավ պաշտպանած ու պահպանած լինեմ: Այդ լուրը կամ կոահումը նրան մղեց անելու այն, ինչի մասին դուք հիմա կլսեք: Մի օր, աշնանը, երբ ես մենակ նստած էի իմ սենյակում, — չեմ կարող ըմբռնել, ոչ էլ երևակայել, թե ինչպես պատահեց, — հանկարծ տեսա նրան իմ առջև: Նրա հայտնվելը ինձ այնպես շժմեցրեց, որ աչքերս մթնեցին, լեզուս պապանձվեց, և ես չկարողացա անգամ ճշալ: Ուշքի գալով առաջին երկյուղից, սիրտ արի և կտրուկ, — չէի էլ կարծում, որ ընդունակ կլինեմ, — ասացի՝ «Եթե ես քո գրկում չլինեի, այլ ամենհի առյուծի ճիրաններում և եթե իմ փրկության համար ինձ առաջարկեին ասել կամ անել իմ պարտականության հակառակ որևէ բան, ես կպատասխանեի, որ դա նույնքան անհնար է, որքան եղածը՝ չեղած դարձնելը: Ես քո հպատակն եմ, բայց ոչ ստրկուհին: Քո արյան ազնվությունը չունի և չի կարող ունենալ իշխանություն իմ ոչ ազնվական արյունը խայտառակելու: Ես, հասարակ լինելով, հարգում եմ ինձ ոչ պակաս, քան դու, պարոն կաբալյերո: Քո ուժը քեզ չի օգնի, քո հարստությունը չի ազդի: Քո խոսքերը ինձ չեն խաբի, իսկ քո ախ ու վախն ու արցունքը չեն շարժի իմ սիրտը»:

Դոն Ֆերնանդոն, հանդիսավոր հավաստիացումներով և արտասովոր երդումներով խոսք տվեց ինձ, որ կդառնա իմ ամուսինը:

Հետևյալ գիշերն էլ նա եկավ, բայց դրանից հետո այլևս չերևաց: Անցավ մի ամբողջ ամիս, իսկ ես զուր էի փորձում տեսակցել նրա հետ: Մինչդեռ ես գիտեի, որ նա ապրում է միևնույն քաղաքում և օրերով որս է անում. դա նրա սիրած զբաղմունքն է:

Շուտով մեր կողմերում լուր տարածվեց, թե դոն Ֆերնանդոն հարևան քաղաքում ամուսնացել է արտասովոր գեղեցկության տեր և շատ ազնիվ տոհմից սերած մի աղջկա հետ, թեև, ճիշտ է, ոչ այնքան էլ հարուստ, որ իր օժիտի համեմատ աղջիկը կարող լիներ այդքան բարձր միություն ակնկալել:

Այդ տխուր լուրը հասավ իմ ականջին, և իմ սիրտը սառույց չկտրեց, ընդհակառակն՝ այնպիսի կատաղության մեջ ցասումով բորբոքվեց, որ քիչ էր մնացել ես դուրս վազեմ փողոց, գոռամ-գոռեմ դավադրության ու դավաճանության մասին, որոնց զոհ էի դառել ես: Սակայն առժամանակ զսպեցի վրդովմունքս և վճռեցի նույն գիշերն անել այն, ինչ որ արեցի էլ:

Երկուս ու կես օրից, շորերս փոխած, ես հասա քաղաք: Առաջին իսկ մարդը, որին պատահեցի, հաղորդեց ինձ ավելին, քան թե ես կկամենայի լսել: Ճիշտ է, ես դոն Ֆերնանդոյին չգտա, սակայն այսպես ավելի լավ էր, քան եթե նրան ամուսնացած գտնեի: Քանի որ նա ամուսնացած չէ, խորհում էի ես, իմ փրկության դուռը դեռ փակ չէ: Ես ասում էի ինքս ինձ՝ ինքը երկինքը խանգարել է երկրորդ ամուսնությունը նրա համար, որ նա զգա իր պարտականությունները առաջինի նկատմամբ: Միտք էի անում, միտք, և,





անմխիթարս, մխիթարվում էի, հնարելով հեռավոր, սակայն թույլ հույս: Դո Տերնանդոյին չէի գտնում և ապրում էի քաղաքում, առանց իմանալու, թ ինչ ձեռնարկեմ: Մեկ էլ հանկարծ լսեցի մունետիկների ձայնը, որոնք հայ տարարում էին պարզև նրան, ով գտնի ինձ և հաղորդում էին իմ նշանները հասակս ու հանդերձս: Լուր էր պտտում, թե ինձ փախցրել է ծառան, որ հետ հեռացել էր տնից: Մունետիկի խոսքը լսեցի թե չէ, հեռացա քաղաքից ծառայիս հետ և այդ միջոցին նկատեցի, որ հավատարմությունն ու անձնվիրությունը, որոնցով նա երդվում էր ինձ, տատանվում են նրա մեջ: Գիշերու մենք հասանք այս լեռների խորքերը, զգուշանալով, որ մեզ չգտնեն:

Զգիտեմ, արդյոք քանի ամիս անցկացրի լեռներում: Այստեղ ես հանդիպեցի մի հովվի, որ ապրում է ամենամայի կիրճերից մեկում: Նա ինձ իր մոտ աշխատանքի առավ, և ամբողջ այս ժամանակամիջոցում ես ծառայում էի որպես հովվի օգնական, աշխատելով ամբողջ ցերեկը բաց երկնքի տակ անցկացնել, որպեսզի կարողանամ ծածկել մազերս, որ հիմա այնպես անսպասելի մատնեցին ինձ: Սակայն իմ ողջ աշխատանքը և ուժերիս լարումը ապարդյուն անցան, որովհետև վերջ ի վերջո տերս իմացավ, որ ես տղամարդ չեմ և նրա սրտում ծագեցին նույն վատ մտքերը, ինչ որ իմ ծառայի մեջ: Ուստի ես փախա և թաքնվեցի այս ժայռի մեջ, որտեղ դուք ինձ գտաք:

Դորոթեան (այսպես էր աղջկա անունը) իսկույն իր կապոցից հանեց նուրբ ու թանկագին կտորից կարած զգեստ և կանաչագույն կերպասից գեղեցիկ վերնարկ, իսկ տուփից՝ մանյակ և այլ թանկագին իրեր և վայրկենապես զուգվեց, որպես հարուստ և ազնվագարմ տիկին: Բոլորը հավանեցին նրա նրբությունն ու գրավչությունը: Առանձնապես հիացած էր Սանչո Պանսան որովհետև իր օրում այդպիսի շքնաղ արարած չէր տեսել:

— Այս շքնաղ տիկինը, Սանչո եղբայր,— ասաց քահանան,— ոչ այլ ոք է քան եթե իշխանուհի, Միկոմիկոն մեծ թագավորության ժառանգը, որ որոնում է ձեր տիրոջը, նրանից շնորհ խնդրելու համար: Նա պիտի խնդրի պաշտպանել իրեն շար հսկայից, որ իրեն վիրավորանք է հասցրել:

Սանչոն նույնչափ բավարարված էր, որքան քահանան հիացած նրա պարզամտությունից:

Մինչ այս, մինչ այն, Դորոթեան նստեց քահանայի ջորու վրա, սափրիչը ծնոտին կայցրեց եզան պոչից շինած մորուքը, և նրանք խնդրեցին, որ Սանչոն իրենց առաջնորդի դոն Կիխոտի մոտ, նախազգուշացնելով, որ տիրոջը շասի, թե լիցենցիատին ու սափրիչին ճանաչել է:

Երբ որ նրանք հասան դոն Կիխոտին, զինակիրը վայր թռավ ջորուց և մոտեցավ Դորոթեային, որպեսզի ձեռքերով բռնի նրան և իջեցնի ցած:

Բայց աղջիկը վայր թռավ և իսկույն ծունկի իջավ դոն Կիխոտի առջև:

Թեև ասպետը փորձում էր նրան բարձրացնել, բայց նա, առանց վեր կենալու, սկսեց այսպես խոսել.

— Ես վեր չեմ կենա, օ՛, քաջ ու հզոր ասպետ, մինչև որ ձերդ բարությունն ու սիրալիրությունը շերտանկացնի ինձ շնորհով, որը ձեր անձին փառք ու պատիվ կբերի, իսկ ինձ, աշխարհիս ամենամաքամիթար ու անարգված կույսին՝ մեծ օգուտ:

Այդ միջոցին մոտեցավ Սանչո Պանսան և դոն Կիխոտի ականջին շշնջաց.

— Ձերդ ողորմածությունը հանգիստ կարող է այդ շնորհը խոստանալ, որովհետև նրա խնդրածը մի շնչին բան է, պետք է սպանել ինչ-որ հսկայի և պրծավ գնաց: Ախր խնդրողը ազնիվ իշխանուհի Միկոմիկոնն է, և Միկոմիկոնի մեծ թագավորության թագուհին:

— Ով որ լինում է լինի,— պատասխանեց դոն Կիխոտը,— ես կանեմ այն, ինչ որ հրամայում է պարտականությունս և թելադրում խիղճս, համաձայն իմ ասպետական ուխտի օրենքներին:

Սանչոն վերցրեց ծառի վրա ավարի պես կախ արած զրահները և ձիու փորկապներն ամրացնելով, վայրկենապես սպառազինեց իր տիրոջը: Վերջինս, զինվեց թե չէ, արտասանեց.

— Գնանք, պաշտպանենք այս ազնվագարմ տիկնոջը:

Սափրիչը դեռ մնացել էր շոքած, ամեն կերպ աշխատելով զսպել ծիծաղը և ձեռքով պահելով մորուքը, որովհետև եթե մորուքը վայր ընկներ, հնարավոր է, որ նրանց բոլոր ծրագրերը խորտակվեին:

Մեր ասպետը թռավ Ռոսինանտի վրա, իսկ սափրիչը հեծավ իր ջորին:

Մենակ Սանչոն մնաց առանց գրաստի և դարձյալ մտաբերեց իր էջի կորուստը:

### ԳԼՈՒԽ XXIII

ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է ԴՈՐՈԹԵԱՅԻ ՍՐԱՄՏՈՒԹՅԱՆ

ԵՎ ԱՅԼ ՉԱՓԱԶԱՆՑ ՀԱԾԵԼԻ ՈՒ ԶՎԱՐՃԱԼԻ

ԲԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երբ որ դոն Կիխոտն ու նրա ուղեկիցները դուրս եկան կիրճերից և առաջ ընթացան հարթավայրով, քահանան հեռվից տեսավ նրանց և սկսեց նշաններով ցույց տալ, թե ճանաչում է նրանց, ապա գրկաբաց ընդառաջ վազեց գոչելով:

— Բարի՛ հանդիպում, ո՛վ ասպետութեան տիպար, բարի հայրենակիցդ իմ, դոն Կիխոտ Մանչացի, ազնվութեան ծաղիկ և սեր, զրկվածների պատվար ու օթևան, ուղնուծուծը թափառական ասպետութեան:

Այս խոսքերով նա սեղմեց կրծքին դոն Կիխոտի ձախ ոտքը: Սա էլ զարմացած նրա խոսքերից ու վարմունքից, սկսեց նայել նրան զննող հայացքով և, վերջապես, ճանաչելով, սաստիկ շփոթված այդ անակնկալ հանդիպումից, ուժ գործադրեց, որ ձիուց իջնի, բայց քահանան նրան ետ պահեց: Ապա քահանան ասաց.

— Չերդ ողորմածությունը մեզ ո՞ւր կհաճի տանել: Երևի Միկոմիկոն թագավորությունը:

Դորոթեան գլխի ընկավ, որ պետք է դրական պատասխան տա, ուստի ասաց.

— Այո, տեր իմ, իմ ճանապարհը դեպի այդ թագավորությունն է:

— Որ այդպես է,— շարունակեց քահանան,— ապա պիտի մեր գյուղից անցնենք, իսկ այնտեղից ձերդ ողորմածությունը կերթա Կարտախենա, որտեղ բարենպաստ պարագաներում և հաջող քամի լինելու դեպքում դուք կարող կլինեք նավ նստել: Եվ եթե ծովում փոթորիկ չլինի, դուք ինք տարվա ընթացքում կհասնեք Մեոնեական, թե Մեոտիական մեծ լիճը, իսկ այնտեղից հազիվ հարյուր օրից քիչ ավելի ճամփա լինի մինչև ձեր թագավորությունը:


— Դրա ժամանակը դեռ գալու է,— ընդհատեց դոն Կիխոտը,— իսկ հիմա պատմեցեք ինձ, պարոն լիցենցիատ, ինչպե՞ս է եղել, որ այս վայրերն եք ընկել, այն էլ մեն-մենակ, թեթև և առանց ծառանների:

— Կպատասխանեմ ձեզ կարճառոտ,— պատասխանեց քահանան:— Տեր իմ, դոն Կիխոտ, թող հայտնի լինի ձերդ ողորմածության, որ ես, իմ բարեկամ սափրիչի՛ վարպետ Նիկոլասի հետ, ուղևորվում եմ Սևիլիա որոշ գումար ստանալու նպատակով, որ ուղարկել է ինձ տարիներ առաջ Հնդկաստան գաղթած իմ ազգականներից մեկը: Երբ որ երեկ մենք անցնում էինք այս կողմերով, մեզ վրա հարձակվեցին չորս ավազակներ և ամեն ինչ մեզանից խլեցին, անգամ մորուքներս, այնպես որ սափրիչը հարկադրված էր արհեստականը կպցնել: Սակայն ամենազարմանալին այն է, որ շրջակա բնակիչների ասելով, մեր կողոպտիչները ոչ այլ ոք են եղել, քան տաժանակիր աշխատանքի դատապարտվածներ, որ ազատ են թողնվել այստեղից ոչ հեռու: Եվ ասում են, թե այդ արեւ է ինչ-որ քաջ մարդ, հակառակ կոմիսարի և պահակների դիմադրության: Անշուշտ, դա կամ մի խելագար է եղել կամ այն անպիտանների նման մեկը, կամ թե չէ անհոգի և անխիղճ մի մարդ: Չէ՞ որ նա բաց է թողել գայլերին՝ գառների, աղվեսներին՝ հավերի, կամ թե չէ ճանճերին՝ մեղրի վրա:

Հազիվ էր քահանան ավարտել իր խոսքը, որ Սանչոն բացականչեց.

— Ազնիվ խոսք, պարոն լիցենցիատ, այդ քաջագործությունը իմ տերն է կատարել: Այն պահին էլ ես ասում ու մատնանշում էի, որ նա խորհի, թե ինչ է անում և որ նրանց ազատելը մեղք է, չէ՞ որ նրանց մեծամեծ ոճիրների համար են թիապարտության ուղարկում:

— Տխմար,— վրա բերեց դոն Կիխոտը,— թափառական ասպետներին պարտ ու պատշաճ չէ ստուգելը՝ մեղավոր են, թե անմեղ այն ճնշվածները,



վիրավորվածները և շղթայվածները, որոնց նրանք հանդիպում են բանուկ ճամփաներում: Նրանց վայել է լուկ օգնել տկարներին, ուշ դարձնելով նրանց տառապանքների և ոչ թե ոճիրների վրա: Ես դեմ առա տանջված ու դժբախտ մարդկանց, շարված շղթայի վրա, ինչպես տեր ողորմյա կամ ուլունքը՝ մանյակի վրա և վարվեցի այնպես, ինչպես պատվիրում է իմ դավանանքը, իսկ մնացածը՝ թող դատեն երկնքում: Ում աչքին դա վատ բան է երևում, նա տառանգամ չի հասկանում ասպետականությունից և ստում է, ինչպես բռի գյուղացի կամ սրիկա:

Հնարագետ և սրամիտ Դորոթեան, իմացած լինելով, որ դոն Կիխոտի խելքը վնասված է և որ, բացի Սանչո Պանսայից, ամենքը նրան ծաղրում են, չկամեցավ ուրիշներից ետ մնալ և ասաց վիրավորված ասպետին.

— Պարոն ասպետ, մտաբերեցեք այն շնորհը, որ դուք ինձ խոստացաք և այն, որ դուք ուրիշ արկածների մեջ չեք ընկնի, որքան էլ նրանք անհետաձգելի լինեն: Մեղմեցեք, ուրեմն ձեր ցասումը:

— Ես կլռեմ, տիրուհիդ իմ, — պատասխանեց դոն Կիխոտը, — և կզսպեմ արդարացի զայրույթը, որ եռ է գալիս իմ կրծքում: Այսուհետև ես կլինեմ հանգիստ ու խաղաղասեր, մինչև որ իմ խոստումը կատարեմ: Սակայն ի տրիտուր իմ բարի մտադրությունների, խնդրում եմ ինձ ասեք, եթե դա ծանր չի ձեզ համար, ի՞նչն է ձեր վիշտը, քանի՞ հոգի են նրանք, ի՞նչ մարդիկ են և ի՞նչ դասից, որոնց վրա պիտի պայթի իմ արդարացի, օրինավոր և արժանավոր վրեժը:

— Սիրով կպատասխանեմ, եթե միայն ձեզ ձանձրույթ չի պատճառի իմ դժբախտությունների և աղետների պատմությունը:

— Խոսիր, տիրուհի:

— Որ այդպես է, ականջ դրեք, պարոններ՛ր: Իմ հոր, թագավորի անունը՝

Տինակրիո Իմաստուն էր, որովհետև շատ հմուտ էր կախարդանք կոչված գիտութեան մեջ: Այդ գիտութեան միջոցով նրան հայտնվեց, որ մայրս, թագուհի Խարամիլյան, իրենից շոտ պիտի մեռնի և որ դրանից հետո շուտով իրեն էլ է վիճակված լքելու այս աշխարհը, իսկ իմ ճակատագիրն է՝ մնալու որբ, անհայր և անմայր: Թեև նա դրանից վշտացած էր, բայց նրան ավելի մեծ վիշտ էր պատճառում, իր ասելով, մի ուրիշ բան: Նա ստույգ գիտեր, որ մեր պետութեան գրեթե կողքին մեծ կղզու վրա, հրեշավոր մի հսկա է իշխում Պանդաֆիլանդո Դժնաչք անունով (բոլորին հայտնի է, որ թեև նրա աչքերը կանոնավոր են և իրենց տեղը, բայց նա մի քիչ շեղ է նայում, ասես թե շղթիկ լինի, այն էլ նենգութունից, որպեսզի վախեցնի և հաբեկի նրանց, որոնց վրա նայում է): Հայրս իմացավ, որ երբ իմ որբութեան լուրը հասնի հսկային, նա մեծ զորքով կհարձակվի մեր թագավորութեան վրա և ինձանից ամեն ինչ կխլի, առանց գեթ մի փոքրիկ գյուղ թողնելու, որտեղ՝ ես կարողանայի ապաստան գտնել: Սակայն ես կարող կլինեի խուսափել այդ աղետից ու կործանումից, եթե կամենայի նրա կինը դառնալ: Հայրս ինձ ասաց, որ երբ ինքը մեռնի, և Պանդաֆիլանդոն արշավի իմ թագավորութեան վրա, ես դիմադրութեան մասին անգամ չմտածեմ, որովհետև դա հավասարազոր կլինի կործանման: Որ եթե ես կամենում եմ իմ բարի և հավատարիմ հպատակներին փրկել մահից և կատարյալ բնաջնջումից, ապա պետք է իմ բարի կամքով լքեմ թագավորությունս: Նա ինձ կտակեց, որ անմիջապես, մի քանի հավատարիմ մարդկանց հետ ճամփա ընկնեմ Իսպանիա, որտեղ կգտնեմ ինձ բոլոր աղետներից փրկող թափառական ասպետին, որի փառքը այդ միջոցին տարածված կլինի բովանդակ պետութեան մեջ և որի անունը կլինի, եթե ես լավ եմ հիշում, դոն Ասոտե կամ դոն Խիզոտե\*\*:

— Նա դոն Կիխոտ ասած կլինի,— ընդհատեց Սանչո Պանսան,— այլապես՝ վշտակերպ Ասպետ:

— Հենց այդպես,— հաստատեց Դորոթեան:— Համ էլ նա ավելացրեց, որ այդ ասպետը բարձրահասակ կլինի, նիհար դեմքով և որ նրա աչքերը կողի վրա, ձախ ուսից քիչ ցած կամ դրա մոտ մի տեղ թուփ խալ պիտի լինի խոզի մազի պես կոշտ մազով ծածկված:

Լսելով այդ, դոն Կիխոտը ասաց իր զինակրին.

— Ապա այստեղ եկ, եղբայր Սանչո, օգնիր շորերս հանեմ: Ես կամենում եմ համոզվել՝ իրո՞ք ես այն ասպետն եմ, որի մասին գուշակել է իմաստուն թագավորը:

— Ի՞նչ կարիք կա, որ ձեր ողորմածությունը շորերը հանի,— հարցրեց Դորոթեան:

— Որ տեսնեմ, կա՞ արդյոք ինձ վրա այն խալը, որի մասին ասել է ձեր հայրը:

— Դրա համար շոր հանելու կարիք չկա,— ասաց Սանչոն,— ես առանց դրան էլ գիտեմ, որ ձեր ողորմածութեան մեջքի մեջտեղում հենց այդ տեսակ մի խալ կա, որը նշան է առնականութեան:

\* Աստե — խարազան, մտրակ, պատիժ: Մ. Թ.:

\*\* Խիզոտե — կտրտած միս: Մ. Թ.:

— Դա միանգամայն բավական է,— ասաց Դորոթեան,— որովհետև բարեկամները նման մանր-մունր բաների վրա ուշք չեն դարձնում և կարևոր չէ, խալն ուսի՞ն է, թե մեջքին: Գլխավորն այն է, որ խալը կա, իսկ թե որտեղ է՝ միևնույն է, մարմնի բոլոր մասերը միատեսակ են: Անկասկած, իմ բարի հայրը ճիշտ է նախագուշակել, ես էլ չեմ սխալվել, դիմելով պարոն դոն Կի-խոտին, որովհետև անտարակույս հայրս նրան է նկատի ունեցել: Չէ՞ որ մարմնի նշաններին համապատասխանում է նաև բարի համբավը, որ պտըտում է նրա մասին ոչ միայն Իսպանիայում, այլ բովանդակ Մանչայում: Հազիվ էի ես ափ իջել, որ արդեն ականջիս հասավ նրա գործերի պատմությունը: Սիրտս ասաց՝ իմ որոնածը հենց նա է:

— Ահա, պարոննե՛ր,— շարունակեց Դորոթեան,— իմ պատմությունը: Մնում է ասեմ, որ իմ թագավորությունից՝ հետո դուրս բերած ամբողջ շքախմբից մենակ այս մորուքավոր զինակիրս է մնացել, իսկ մնացածները՝ բոլորն էլ խեղդվեցին սարսափելի փոթորկից, որ վրա հասավ մեզ նավահանգրստի մոտերքում: Ես ու նա, երկու տախտակի վրա, հրաշքով ափ հասանք:

#### ԳԼՈՒԽ XXIV

### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է

## ԴՈՆ ԿԻՒՍՏԻ ԵՐԵՎԵԼԻ ԶՐՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ ԻՐ ԶԻՆԱԿԻՐ ՍԱՆՁՈ ՊԱՆՍԱՅԻ ԼԵՏ

Դոն Կիխոտը առաջարկեց Սանչո Պանսային առաջ անցնել իր հետ, ասելով, թե պետք է նրան հարցուփորձ անի և խոսի շատ կարևոր բաներից: Սանչոն հնազանդվեց, և երբ որ նրանք առաջ ընկան մնացածներից, դոն Կիխոտն ասաց.

— Քո վերադարձից հետո առիթ չեղավ, որ մանրամասն տեղեկանայի, թե հանձնարարությունս ինչպե՞ս ես կատարել և ի՞նչ պատասխան ես բերել: Իսկ հիմա, երբ բախտը շնորհում է մեզ և՛ տեղ, և ժամանակ, մի՛ զրկիր ինձ Դուսինեայից բարի լուր լսելու բախտից:

— Հարցրեք, ձերդ ողորմածություն, ամեն բան, ինչ որ կամենաք,— պատասխանեց Սանչոն:— Իմ բերանը հիմա կկրկնի այն, ինչ որ մտել է ականջս:

Նրանց խոսակցության միջոցին ճամփին երևաց էշ նստած մի մարդ: Երբ որ նա մոտեցավ՝ գնչուի տեղ դրին նրան: Սակայն Սանչոն, որի աչքերը էշ տեսնելուց քիչ էր մնում դուրս թռչեին, անծանոթին տեսավ թե չէ, իսկույն ճանաչեց Խինես Պասամոնտին և, բռնելով թելից, այսինքն՝ գնչուից, կծիկը քակեց, այն է՝ գլխի ընկավ, որ էշը, որի վրա նստած էր Պասամոնտեն՝ իր թեփականն է: Այսպես էլ դուրս եկավ: Պասամոնտեն, որպեսզի իրեն չճանաչեն և շխանգարեն էշը ծախել, գնչուի պես էր հագնվել: Նա խոսում էր գնչուների, ինչպես և շատ ուրիշ լեզուներով, ինչպես իր մայրենի լեզվով: Տեսավ նրան Սանչոն և ճանաչեց, իսկ տեսնելուց ու ճանաչելուց հետո բարձրաձայն գոչեց.

— Խինեսսիլյո, գող, ավագակ, ետ տուր իմ ապրանքը, վերադարձրու կյանքըս, մի՛ խռովիր հանգիստս, թող ինձ մնա իմ էջը, ետ տուր իմ զվարճությունը: Ճղի՛ր, սրիկա, կորի՛ր, գող, և թող այն, ինչ որ քոնը չէ:

Այդքան հիշոցի ու հայհոյանքի կարիք էլ չկար: Առաջին իսկ խոսքից Խինեսսը վայր թռավ էջից և, զոռ տալով ոտքերին, վազեց ու վայրկենապես անհետացավ: Սանչոն մոտեցավ իր գորշուկին և, գրկելով, ասաց.

— Քեֆդ ինչպե՞ս է, ի՛մ գանձ, ի՛մ հոգու էջ, ի՛մ սրտագին բարեկամ: Նա այնպես էր ասում ու համբուրում, ասես մարդու հետ լինեիր: Իսկ էջը լուռ էր: Թույլ տալով, որ իրեն գրկեն ու համբուրեն, նա ոչ մի խոսք չէր արտասանում:

Հասան ետ մնացածներն ու սկսեցին շնորհավորել Սանչոյին գտածի համար, ամենից ջերմ՝ դոն Կիխոտը, որ հայտարարեց, թե շնայած դրան, նա չի փոխում իր խոստումը երեք քուռակի մասին:

Սանչոն շնորհակալ եղավ:

Երբ որ խումբը կրկին առաջ ընթացավ, դոն Կիխոտը շարունակեց իր ընդհատված զրույցը Սանչոյի հետ:

— Բարեկամս, դե ասա՝ որտե՞ղ, ե՞րբ և ինչպե՞ս տեսար դու Դուլսինեսային: Ի՞նչ էր անում նա, ի՞նչ ասացիր դու նրան, ի՞նչ պատասխանեց նա քեզ և դեմքի ի՞նչ արտահայտությամբ կարդաց իմ նամակը: Ո՞վ արտագրեց նամակս:

— Պարոն,— պատասխանեց Սանչոն,— եթե ճշմարիտն ասեմ, ձեր նամակը ոչ ոք չի արտագրել, որովհետև ես հետս չէի վերցրել:

— Դու ճիշտ ես ասում,— վրա բերեց դոն Կիխոտը,— որովհետև հուշատետրը, որի մեջ ես գրել էի, քո գնալուց երկու օր անց գտա մոտս և դա ինձ չափազանց վշտացրեց, որովհետև ես չգիտեի, թե դու ինչ ես անելու, երբ նկատես մոռացածդ և կարծում էի, թե նկատելուն պես կվերադառնաս:

— Ես այդպես էլ կանեի,— պատասխանեց Սանչոն,— եթե անգիր արած չլինեի:

— Մինչև հիմա՞ էլ անգիր հիշում ես,— հարցրեց դոն Կիխոտը:

— Ոչ, պարոն,— պատասխանեց Սանչոն,— հենց որ նամակը հանձնեցի, իսկույն ևեթ, տեսնելով, որ այլևս բանի պետք չէ, մոռացության տվի: Եթե մի բան միտս է մնացել դա՝ իշազոր, ասել կուզե՞ իշխանազոր տիրուհին է և վերջը՝ մինչև գերեզման ձերդ՝ Վշտակերպ Ասպետը:

— Այդ ամենը վատ չէ, շարունակի՛ր,— ասաց դոն Կիխոտը:— Դու տեղ հասար: Ի՞նչ գործի էր գեղեցկության թագուհին: Երևի մարգարիտ էր շարում կամ ոսկի թելերով տոհմանշան էր գործում իր գերի ասպետի համար:

— Ո՛չ, պարոն,— պատասխանեց Սանչոն,— նա բակում երկու ֆանեգա\* ցորեն էր մաղում:

— Այո՛, բայց նկատի առ,— առարկեց դոն Կիխոտը,— որ ցորենի հատրկները մարգարիտներ էին դառնում, դիպչելով նրա գեղեցիկ ձեռքերին: Բայց, ասա ինձ, եթե դու ուշ ես դարձրել, հատիկները ճերմակ էին, թե սև:

— Դեղին,— պատասխանեց Սանչոն:

— Հավատացնում եմ,— ասաց դոն Կիխոտը,— նրա ձեռքով մաղած ցորենից անշուշտ ձերմակ հաց դուրս կգա: Բայց շարունակիր՝ երբ որ դու հանձնեցիր նրան իմ նամակը, համբուրե՞ց նա նամակս: Թե՞ գլխին դրեց: Թե՞ ուրիշ արարողություններ կատարեց, որ արժանի են իմ նամակին: Ի՞նչ ասաց:

— Երբ որ նրան մատուցեցի նամակը, նա ժրաշան թափահարում էր մաղը, որի մեջ բավական ցորեն կար: Նա ասաց՝ դրեք, բարեկամս, այնտեղ, ջվալի վրա, ես կարդալու ժամանակ շունեմ, մինչև որ այս ամենը շմաղեմ:

— Օ՛, իմաստուն տիրուհի,— բացականչեց դոն Կիխոտը:— Նա կամեցել է կարդալ առանց շտապելու, որ լիովի բավարարվի: Շարունակիր, Սանչո, իսկ նրա այդչափ զբաղված միջոցին դուք ի՞նչ խոսակցություն ունեցաք: Ինձնից հարցուփորձ արա՞վ: Դու ի՞նչ պատասխանեցիր: Ամեն բան պատմիր, տակին բան չմնա:

— Նա բան չհարցրեց,— ասաց Սանչոն,— բայց ես նրան պատմեցի, որ ձերդ ողորմածությունը, ծառայելով նրան, ինքն իր վրա ապաշխարանք է դրել՝ թափառում է լեռներում մինչև գոտին մերկ, վայրենու պես, քնում է կոշտ հողի վրա, հացը առանց սուփրի է ուտում, մորուքը չի սանրում և լալիս ու անիծում է իր բախտը:

— Լավ, իսկ երբ որ նա վերջացրեց ցորեն մաղելը և ջրաղաց ուղարկեց, ի՞նչ ասաց նամակս կարդալուց հետո:

— Նա չկարդաց էլ: Նա հայտարարեց, որ ո՛չ կարդալ գիտե, ո՛չ գրել: Նամակն առավ ու պատառոտեց, չկամենալով, որ մեկնումեկը կարդա և գյուղում իր գաղտնիքներն իմացվեն: Ասաց թե՛ այն, ինչ ես իմ խոսքով պատմեցի ձերդ ողորմածության սիրո և զարմանալի ապաշխարանքի մասին, որ դուք նրա պատճառով դրել եք ձեզ վրա՝ հերիք է ու հերիք: Վերջն էլ խնդրեց, որ ձերդ ողորմածությանն ասեմ, թե ինքը համբուրում է ձեր ձեռքը, թե իրեն համար ավելի ցանկալի կլիներ տեսնվել ձեզ հետ, քան ձեզ նամակ գրել: Դրան ավելացրեց, որ աղաչում ու հրամայում է պատասխանն ստանալուն պես դուրս գաք այդ խորխորատներից, դադարեք հիմարություններ անելուց և շուտով դառնաք Տոբոսո, եթե միայն ավելի կարևոր բան ձեզ պահելու չլինի, որովհետև ինքը շատ կկամենար տեսնել ձերդ ողորմածությանը: Նա սաստիկ ծիծաղեց, երբ որ իրեն ասացի, թե ձերդ ողորմածությունը կոչվում է Վշտակերպ Ասպետ:

— Առայժմ ամեն ինչ լավ է,— ասաց դոն Կիխոտը:— Բայց ասա տեսնեմ՝ հրածեղտ տալիս ի՞նչ թանկարժեք իր նվիրեց քեզ, բերածդ լուրերի համար: Զէ՞ որ տիկիներին և թափառական ասպետների միջև հնուց ազմատացած սովորույթ կա՞ զինակիրներին, բարեկամուհիներին կամ թզուկներին, որ լուր են բերում տիկիներին կավալերներին կամ կավալերներից տիկիներին, սովորաբար թանկարժեք իրեր են նվիրում, իբրև պարգև առաքելության համար:

— Հնարավոր բան է: Իմ կարծիքով, լավ սովորույթ էլ է: Սակայն, ըստ երևույթին, հնում է այդպես եղել, իսկ հիմա ընդունված է մի կտոր հաց ու պանիր նվիրել, այն հացի կտորի պես, որ ցանկապատի վրայով ինձ մեկնեց տիրուհի Դուլսինեան, երբ որ ես մնաս բարով էի ասում:



— Նա սովորաբար առատաձեռն է,— ասաց դոն Կիխոտը,— երևի այդ վայրկյանին ձեռքի տակ թանկագին իրեր չեն եղել, այդ պատճառով էլ չի տվել: Ասենք, ձուն գատկից հետո էլ պետքական կլինի: Ես կտեսնեմ նրան, և դու բավարարված կլինես: Սակայն գիտե՞ս, ինչն է զարմացնում ինձ, Սանչո: Ինձ թվում է, թե դու ոգով թուար այնտեղ և ետ դառար՝ չէ՞ որ դու երեք օրից քիչ ավել ժամանակամիջոցում գնացիր Տոբոսո և վերադարձար, մինչդեռ ճանապարհը երեսուն մղոնից ավել է: Դրանից ես եզրակացնում եմ, որ այն իմաստուն մոզը, որ հոգ է տանում իմ մասին և հովանավորում ինձ (իսկ այդ տեսակ մեկը ես ունեմ և պետք է որ ունենամ, այլապես իսկական թափառական ասպետ չէի լինի), ահա այդ մոզը, երևի օգնել է, որ ճամփան կտրես, իսկ դու չես էլ նկատել: Որովհետև երբեմն պատահում է, որ նույն միջոցին, երբ մեկը մարտնչում է Հայաստանի լեռներում որևիցե անդրիակի\*, դաժան մի հրեշի, կամ այլ մի ասպետի դեմ, հանկարծակի, կովի ամենատաք միջոցին, մահացու վտանգի վայրկյանին, մեկ էլ տեսար ամպի վրա կամ հրեղեն կառքով հանդես է գալիս նրա բարեկամ ասպետը, որ մինչ այդ Անգլիայում էր և, օգնության հասնելով՝ փրկում է նրան մահից: Իսկ իրիկնադեմին նա արդեն իր տանը հանգիստ ընթրում է: Մինչդեռ մի տեղից մյուսը՝ երկու կամ երեք հազար մղոնից պակաս չէ: Դա իմաստուն կախարդների շնորհքն է, նրանք հսկում են ասպետներին: Ուստի, Սանչո, բարեկամս, ես չեմ դժվարանում հավատ ընծայել, որ դու կարող էիր այդքան կարճ ժամանակամիջոցում Տոբոսոյում եղած լինել և վերադառնալ, որովհետև, ինչպես արդեն ասացի, իմ իմաստուն հովանավորողներից մեկնումեկը փոխադրած կլինի քեզ օդով, իսկ դու այդ չես էլ նկատել:


ԳԼՈՒԽ XXV

ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է ԴՈՆ ԿԻՒՈՏԻ  
ԴԺՆԴԱԿ ԵՎ ԱՐՏԱՍՈՎՈՐ ՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ  
ԿԱՐՄԻՐ ԳԻՆՈՎ ԼԻ ՏԿԵՐԻ ԴԵՄ

Մի կտոր հաց ուտելուց հետո խումբը ճամփա ընկավ և, առանց հիշատակության արժանի որևէ պատահարի, հետևյալ օրը հասավ Սանչոյին ահուսարսափ ազդող իջևանատունը: Սանչոն կգերադասեր խուսափել ներս մտնելուց, բայց այդ նրան շահջողվեց:

Իջևանատեղը, տիրուհին, նրանց աղջիկն ու Մարիտոնեսը, տեսնելով դոն Կիխոտին ու Սանչոյին, ընդառաջ վազեցին, բարձրաձայն արտահայտելով իրենց ուրախությունը: Մեր ասպետը նրանց ընդունեց ծանր ու զուսպ, խնդրելով, որ իրենց անցյալ անգամվանից ավելի լավ անկողին տան: Տիրուհին պատասխանեց, որ եթե նա ավելի լավ վճարելու լինի՝ իշխանավայել անկողին կունենա: Դոն Կիխոտը համաձայնեց, և նրա համար պատրաստեցին

\* Անդրիակը հրեշ է, կես-մարդ, կես-զազան, որ ծնվել է Բանդազուփոդ հսկայից ու նրա հարազատ աղջկանից: Այդ պատկերը «Ամադիս Գաղիացի» ասպետական վեպից է: Մ. Բ.:



մի բավական տանելի անկողին, նույն տեղը, որ նախընթաց անգամ գրավել էր նա: Նա իսկույնեւթ պառկեց, որովհետև սաստիկ հոգնած էր և միտքը՝ մռայլ:

Հագիվ էր նա փակել իր սենյակի դուռը, որ իջևանատան տիրուհին մոտեցավ սափրիչին և, բռնելով նրա մորուքից, ասաց.

— Ազնիվ խոսք, ես թույլ չեմ տա, որ դուք իմ կովի պոչից ձեզ համար մորուք շինեք: Իսկույն ետ տվեք, թե չէ մարդուս իջը... ասել կուզե՞ սանրը, որ ես սովորաբար խրում էի այդ պոչի մազի մեջ, ամոթ է ասել, ընկած է հատակին:

Սափրիչը շէր ուզում վերադարձնել, իսկ տիրուհին քաշում-քաշքշում էր: Սակայն լիցենցիատը կարգադրեց, որ տա, ասելով, թե նա այլևս կարիք չունի դիմակի և թե հիմա կարող է ցուցադրել իր իսկական կերպարանքը, իսկ դոն Կիխոտին կասվի, թե թիապարտների ձեռքով կողոպտվելուց հետո նա փախել-փրկվել է այս իջևանատանը:

Իսկ եթե դոն Կիխոտը հարցնելու լինի, թե որտե՞ղ է իշխանուհու գինակիրը, պետք է պատասխանել, թե նախապես ճամփա է գցված, որպեսզի թագավորության մեջ լուր տա, թե շուտով գալու է իշխանուհին իր փրկիչի հետ: Դրանից հետո սափրիչը հոժարությամբ իջևանատան տիրուհուն վերադարձրեց եզան պոչը և բոլոր այլ առարկաները, որ վերցրել էր դոն Կիխոտին փրկելու համար:

Ճաշին իջևանատիրոջ, նրա կնոջ, աղջկա, Մարիտոռնեսի և բոլոր ճամփորդների ներկայությամբ խոսք բացվեց դոն Կիխոտի տարօրինակ խելագարության մասին և թե ինչպես նրան կարողացան գտնել: Իջևանատիրոջ կինը պատմեց այն ամենը, ինչ որ տեղի էր ունեցել դոն Կիխոտի և ջորեպանների

միջև, ապա, տեսնելով, որ Սանչոն ներկա չէ, պատմեց, թե ինչպես նրան վերմակի վրա վեր-վեր գցեցին, մի բան, որ մեծ զվարճութուն պատճառեց ամբողջ հասարակությանը:

Այդ միջոցին դոն Կիխոտի սենյակից լավեց սաստիկ աղմուկ և աղաղակ.

— Կաց, գո՛ղ, ավազա՛կ, դավաճա՛ն, դու իմ ձեռքում ես, և քո դաշույնը քեզ չի օգնի:

Միաժամանակ թվում էր, թե նա կատաղի հարվածներ է հասցնում պատերին: Սանչոն ասաց.

— Ի՞նչ եք կանգնել ականջ դնում, եկեք բաժանեցեք նրանց կամ թե օգնեցեք տիրոջս, կարծեմ, կարիք չկա, որովհետև հսկան անշուշտ անշունչ է: Ես տեսա, թե ինչպես էր արյունը թափվում, ինչպես թռավ նրա կտրած գլուխը, որ գինով չիքը տկի շափ կլիներ:

— Գետինը մտնե՛մ,— ասաց իջևանատերը,— այդ դոն Կիխոտը թե դոն Դևը ճղած կլինի կարմիր գինով լիքը տկերից մեկը, որ կախված է նրա գլխի վերևը: Գինիս է թափվել, իսկ այդ կտրիճը երևակայել է, թե արյուն է:

Այս խոսքերն ասելով, նա, բոլոր մնացածների ուղեկցությամբ, ներս մտավ սենյակը, և նրանք տեսան դոն Կիխոտին ամենազարմանալի հագուստով:

Նա մի շապիկ ուներ հագին, այն էլ այնքան կարճ, որ առջևից հազիվ էր ծածկում ազդրերը, իսկ հետևից մի վեց մատ ավելի կարճ էր: Նրա մազմզոտ, երկար ու նիհար ոտքերը բավական կեղտոտ էին, գլխին՝ կարմիր ու յուղոտ գիշերաչին գլխարկ էր դրած, որ պատկանում էր իջևանատիրոջը: Չախ ձեռքին փաթաթել էր Սանչոյի համար ատելի վերմակը՝ իրեն լավ հայտնի պատճառով, իսկ աջ ձեռքով բռնել էր մերկ թուրը, որով հարվածում էր աջ ու ձախ այնպիսի գոռոցով, ասես թե իսկ որ հսկայի հետ կռվելիս լիներ: Սակայն ամենազվարճալին այն էր, որ նա այդ ամենը անում էր աչքերը փակ: Նա քնել էր և երազում տեսել, իբր թե կռվում է հսկայի հետ: Նրա երևակայությունն այնքան էր զբաղված առաջիկա մարտի մտքերով, որ երազում տեսել էր, իբր թե հասել է Միկոմիկոն թագավորությունը և մարտնչում է իր թշնամու դեմ: Տկերը ընդունելով հսկայի տեղ, նա այնպես էր դրանք բզիկ-բզիկ արել, որ ողջ սենյակը ողողված էր գինով: Այդ տեսնելով, իջևանատերը կատաղեց և, բոռնցքնեյը սեղմելով, հարձակվեց դոն Կիխոտի վրա, սկսեց նրան այնպես ծեծել, որ եթե քահանան չլիներ, կռիվը հսկայի հետ ավարտված կլիներ: Սակայն ծեծն էլ շարթնացրեց խեղճ ասպետին: Սափրիչը ստիպված ջրհորից մի մեծ կաթսա սառը ջուր բերեց և թափեց նրա գլխին: Այստեղ միայն նա զարթնեց, այն էլ ոչ այն աստիճան, որ նկատեր, թե ինչ ուներ հագին:

Սանչոն ամենուրեք հսկայի գլուխը փնտրելուց և չգտնելուց հետո ասաց.

— Ես արդեն գիտեի, որ այս տանը ամեն ինչ կախարդված է: Անցյալ անգամ, հենց այս տեղում, որտեղ ես կանգնած եմ, հազար հարված ստացա, իսկ թե ումից՝ չգիտեմ: Այնպես էլ աներևույթ մնաց նա: Հիմա էլ ահա գլուխը կտրավ, մինչդեռ ես սեփական աչքով տեսա, ինչպես կտրեցին, ինչպես արյունը հորդեց շատրվանի պես:

— Արյո՞ւնս որն է, շատրվանս որը,— գոռաց իջևանատերը,— մի՞թե, սրիկա, դու չես տեսնում, որ արյան այս ամբողջ շատրվանը ծակծկված տկե-



րից է և այստեղ կարելի է կարմիր գինու մեջ լող տալ: Թող նա հանդերձյալ կյանքում սատանաների մոտ այդպես լողանա: Տես, ինչպես է ծակծկել, է՛:

— Բան չեմ հասկանում,— ասաց Սանչոն,— միայն կասեմ, որ եթե այդ գլուխը չգտնեմ, իմ կոմսուսթյունը կլուծվի, ինչպես աղը՝ ջրի մեջ:

Սանչոն արթմնի ավելի վատթար էր, քան իր տերը՝ Բրազում, այնպես էին դոն Կիխոտի խոստումները պտտեցրել նրա գլուխը:

Իջևանատերը կատաղած՝ ծառայի պաղարյունությունից և տիրոջ անկարգություններից, երդվում էր, որ այս անգամ, առաջվա պես, առանց վճարելու նրանց չի հաջողվի գնալ: Ասպետական արտոնություններն այլևս նրանց չեն օգնի: Նա կստիպի վճարել անգամ ծակծկված տկերի կարկատանների գինը:

Քահանան բռնել էր դոն Կիխոտի ձեռքերը, իսկ դոն Կիխոտը, համարելով, որ սխրագործությունն արդեն կատարված է և որ իր առջև Միկոմիկոնի իշխանուհին է, շոքեց քահանայի առջև և ասաց.

— Այսուհետև, ձերդ մեծություն, բարձրագարմ ու ազնիվ տիրուհի, դուք կարող եք ապրել հանգիստ, առանց երկյուղ կրելու այդ ստոր էակի դավերից:

— Ես չէի՞ ասում,— բացականչեց Սանչոն:— Հո հարբած չէի՞: Մտիկ տվեք, թե իմ տերը ինչպես է աղաչոյի մեջ դրել հսկայի գլուխը: Եզների ճաշն եփած է, կոմսությունս՝ կորած:

Ինչպե՞ս մարդ ծիծաղը պահեր, լսելով այս երկու ցնդածներին՝ տիրոջն ու ծառային:

Ի վերջո սափրիչին ու քահանային մի կերպ հաջողվեց դոն Կիխոտին անկողին պառկեցնել: Նա քնեց և երևում էր, որ ծայր աստիճան հյուծված էր:

Նրանք թողին քնածին և դուրս եկան նախասենյակը մխիթարելու Սանչո Պանսային, որը շկարողանալով գտնել հսկայի գլուխը, բոլորովին հուսահատվել էր: Սակայն ամենադժվարը նրանց համար պանդոկապանին հանգստաց-

նելն էր, որ լաց էր լինում հանկարծամահ տկերի համար: Իջևանատան տիրուհին էլ էր լացուկոծի մեջ:

— Տարածամ եկավ մեզ մոտ այդ թափառական ասպետը և անիծված վայրկյանին: Երանի նրան տեսած չլինեի, այնքան թանկ նստեց մեզ վրա: Անցյալ անգամ նա զնաց առանց վճարելու ընթրիքի, անկողնու, դարմանի և վարսակի գինը: Նա հայտարարեց, որ ինքը ասպետ է, արկածախնդիր,— աստված նրա և ուրիշ ասպետների գլխին թող այնպիսի արկած բերի, որ նրանք ողջ կյանքում հիշեն,— և որ նա պարտավոր չէ վճարելու: Իբրև թե թափառական ասպետների կանոնադրության մեջ այդպես էլ գրած է: Հետո, նրա երեսից, այս պարոնը եկավ մոտս և տարավ կովի պողը, որ վերադարձրեց ինձ այնքան փշացած, մազը այնքան պոկած, որ մարդ այլևս չի կարող գործածել: Այդ ամենը լրացնելու և պսակելու համար այդ անիծյալ ասպետը տկերս ծակծրկեց և միջի գինին ողջ թափեց: Թող նրա արյունն այդպես թափվի: Թող նա շերևակայի, որ էժան կարծնի՝ երդվում եմ հորս ոսկորներով և մորս կյանքով, նա կվճարի այդ ամենի համար մինչև վերջին կոպեկը, թե չէ՝ ես՝ ես չեմ լինի, ոչ էլ հորս աղջիկը:

Սանչոն, որ գլխի ընկավ, թե հսկան գինու տիկ է եղել, սաստիկ վշտացավ, իսկ երբ բացվեց, որ Միկոմիկոնի շքնաղ թագուհին՝ Դորոթեան է, վարչապետ դառնալու նրա բոլոր հույսերը հօդս ցնդեցին, և նա մռայլ դեմքով ներս մտավ իր տիրոջ սենյակը, որ այդ միջոցին զարթնել էր, և ասաց.

— Դե, հիմա, ձերդ ողորմածություն, վշտակերպ պարոն, դուք կարող եք քնել, որքան կամենաք և կարող եք հոգ շտանել հսկա սպանելու և իշխանուհուն թագավորություն վերադարձնելու մասին: Այդ գործն արդեն գլուխ է եկել ու պրծել:

— Ես էլ եմ այդ կարծիքին,— պատասխանեց դոն Կիխոտը,— քանի որ հսկայի հետ այնպիսի դաժան ճակատամարտ ունեցա, որպիսին ես, երևի, այլևս ոչ ոքի հետ չեմ ունենա: Ես նրան այնպիսի մի հարված հասցրի, որ գլուխը թռավ, և արյունը հոսեց, որպես գետի ջուր:

— Ավելի լավ է ասենք՝ ինչպես կարմիր գինի,— պատասխանեց Սանչոն,— որովհետև, ամոթ չլինի ասել, եթե ձերդ ողորմածությանն այդ հայտնի չէ, սպանված հսկան մի ծակծկված տիկ է եղել, արյունը՝ կարմիր գինի, իսկ գլուխը... ձեր երևակայության արդյունքը, սատանան տանի այդ ամենը:

— Ինչե՞ր ես դուրս տալիս, ախմա՛խ,— բացականչեց դոն Կիխոտը:— Խելքդ տե՞ղն է:

— Ավելի լավ է վեր կենաք, ձերդ ողորմածություն, և տեսնեք, թե ինչե՞ր եք արել և ինչքա՛ն եք ստիպված վճարել: Դուք կտեսնեք, որ թագուհին մի սովորական տիկին է դառել, անունը՝ Դորոթեա, և շատ ուրիշ բաներ, որ ձեզ անշուշտ զարմանք կպատճառեն:

— Ինձ ոչ մի բան չի զարմացնի,— պատասխանեց դոն Կիխոտը,— որովհետև արդեն անցյալ անգամ, երբ մենք այստեղ իջևանեցինք, ես քեզ ասացի, անշուշտ դու հիշելիս կլինես, որ այս տանը ամեն ինչ կախարդված է: Զարմանալի չի լինի, որ հիմա էլ նույն բանը տեղի ունենա:

— Ես այդ ամենին կհավատայի,— առարկեց Սանչոն,— եթե վերմակը, որի վրա ինձ վեր-վեր թոցրին, նույնպես հմայված լիներ: Բայց արի տես,

որ իսկական և իրական վերմակ էր: Ես հիշում եմ, որ նույն պանդոկապանը, որ հիմա էլ այստեղ է, բռնել էր վերմակի ծայրից և ամբողջ ուժով ինձ վեր էր թռցնում, այն էլ ծաղրուծանակ անելով: Թեև ես ուսումնական մարդ չեմ, այնուհանդերձ կարծում եմ, թե քանի որ նրանց բոլորի երեսը ճանաչեցի, ուրեմն այստեղ ոչ մի կախարդանք չկա և չի եղել, այլ պարզապես սաստիկ ծեծ է եղել և մեծ անախորժություն:

— Իմացած լինես, Սանչո բարեկամ, որ քեզ նման անպիտանը բովանդակ Իսպանիայում մենակ դու ես, որ կաս: Երդվում եմ... (նա աչքերը վեր բարձրացրեց և սեղմեց ատամները), որ քեզ պատառ-պատառ կանեմ, բոլոր ստախոս գինակիրներին սաստելու համար:

— Հանգստացե՛ք, ձերդ ողորմածություն, տեր իմ,— պատասխանեց Սանչոն,— շատ կարող է պատահել, որ ես տիրուհի Միկոմիկոնի կերպարանափոխության վերաբերյալ մի բան շփոթած լինեմ: Գալով հսկայի գլխին, ավելի ճիշտ՝ ծակծկված տկերին և այն բանին, որ արյունը կարմիր գինի է եղել, ապա երդվում եմ աստծով, որ չեմ սխալվում, որովհետև ծակծկված տկերը մինչև հիմա ձերդ ողորմածության անկողնի գլխատեղի մոտ են, իսկ կարմիր գինին լճացել է սենյակում: Իսկ եթե չեք հավատում, համբերեցե՛ք մինչև ձեր ճաշը եփեն՝ դուք կտեսնեք, թե պարոն իջևանատերը ի՞նչ հաշիվ կներկայացնի իր վնասների համար: Իսկ մնացած բաներում, եթե տիրուհի իշխանուհին նույնն է մնացել, ինչ որ եղել էր, ապա սրտանց ուրախ եմ, կնշանակի՝ ինձ էլ, ինչպես աշխարհի ամեն մի զավակի, կհասնի իմ բաժինը:

— Ահա թե ինչ կասեմ քեզ, Սանչո,— պատասխանեց դոն Կիխոտը,— ներիր ինձ, բայց դու շատ տխմար ես:

## ԳԼՈՒԽ XXVI

### ԻՋԵՎԱՆԱՏԱՆԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԱՐՐԻՆԱԿ ԱՆՑՔԻ ՈՒ ԴԵՊՔԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Իջևանատանը մեծ աղմուկ բարձրացավ:

Երկու կենվոր, որ այդ գիշեր իջևանել էին, նկատելով որ բոլորի գլուխը խառն է, ուզում էին առանց վճարելու փախչել: Սաեկայն իջևանատերը, որի համար իր շահը ավելի բարձր էր, քան ուրիշինը, դռան առջև նրանց բռնեց և պահանջեց վճարը, այնպիսի՝ լուտանք թափելով նրանց գլխին, որ նրանք, ի պատասխան, կռիվ սկսեցին և այնպես էին ծեծում նրան, որ խեղճը աղաղակ բարձրացրեց և սկսեց օգնություն կանչել:

Իջևանատիրոջ կինն ու աղջիկը դոն Կիխոտից բացի պարապ և խեղճին օգնել կարող մարդ չգտնելով, դիմեցին նրան.

— Ձերդ ողորմածություն, պարոն ասպետ, օգնեցե՛ք այդ խեղճ մարդուն, որին շարագործները ձավարի պես թակում են:

Դոն Կիխոտը դրան պատասխանեց ծանր ու հանգիստ:

— Ես հապաղում եմ, որովհետև վայել չէ, որ սուր բարձրացնեմ ստոր ամբոխի դեմ: Կանչեցե՛ք իմ գինակիր Սանչոյին, որովհետև նրան է վայել նման դեպքերում պաշտպան ու վրեժխնդիր լինել:

Մինչ այս, մինչ այն, կենվորները հաշտվեցին իջևանատիրոջ հետ և վճարեցին նրան, ինչ որ հասնում էր՝ հատկապես դոն Կիխոտի խելացի փաստարկումների ու համոզումների հետևանքով: Սակայն այդ իսկ պահին իջևանատուն մտավ այն սափրիչը, որից դոն Կիխոտը խլել էր Մամբրինի սաղավարտը, իսկ Սանչո Պանսան փոխանակել էր իր էշի սարքը: Ահա նա իր էշին ներս տարավ գոմ և այնտեղ տեսավ Սանչո Պանսային, որ զբաղված էր փալանը կարգի բերելով: Նա իսկույն ճանաչեց իր փալանը, վրա տվեց և բղավեց.

— Հե՛յ, դոն-ավազակ, հո բռնեցի՞ր քեզ: Ապա դեսը բեր իմ լագանը, փալանն ու նոխտան:

Հանկարծակի գրոհն զգալով և հիշոցը լսելով, Սանչոն մի ձեռքով բռնեց փալանը ու մյուսով այնպիսի հարված հասցրեց սափրիչին, որ խեղճի բերանը արյունով լցվեց: Չնայած դրան, սափրիչը ձեռքից բաց չէր թողնում ավարը, այսինքն՝ փալանը, և այնքան բարձր էր գոռում, որ աղմուկի վրա հավաքվեցին բոլոր կենվորները: Սափրիչը կոչ էր անում.

— Ո՞վ արդարադատութուն, այստեղ արի: Ես ապրանքս ետ եմ վերցնում, իսկ այս գողը, այս ավազակը ուզում է ինձ սպանել:

— Սո՛ւտ ես ասում,— բղավում էր Սանչոն,— ես ավազակ չեմ: Այս ավարը իմ տերն է առել ազնիվ մարտում, դոն Կիխոտը:

Դոն Կիխոտը կանգնել և մեծ գոհունակութամբ դիտում էր, թե ինչպես է հարձակվում ու պաշտպանվում իր զինակիրը, և այդ վայրկյանին վճռեց, որ Սանչոն քաջ է: Նա մտքում դրեց առաջին իսկ բարեհաջող դեպքում նրան ասպետ կարգել:

Իսկ սափրիչը վիճելով Սանչո Պանսայի հետ, ի միջի այլոց ասաց հետևյալը.

— Որ փալանը իմն է, պարոններ, նույնքան ճիշտ է, որքան այն, որ ես մահկանացու եմ: Ես այդ փալանն այնքան լավ եմ ճանաչում, որ ասես թե ինքս ծնած լինեմ: Ասե՛նք, հենց ախոռում կապված է էշս, որը սուտ չի ասի: Չեք հավատո՞ւմ դրեք մեջքին և շափեք: Եթե փալանը ճիշտ նրա շափովը ըլինի, ինձ սրիկա կոչեք: Դեռ ավելին, նույն օրը, որ իմ փալանը կորավ, նրանք իմ պղնձե լագանն էլ տարան, բոլորովին նորը, դեռ գործ չածած:

Դոն Կիխոտն այդտեղ այլևս չկարողացավ զսպել իրեն: Նա կանգնեց վիճողների մեջտեղը և, փալանը գետնին դնելով, այնպես որ բոլորին տեսանելի լինի, մինչև որ պարզվի, թե ում կողմն է արդարութունը, պատասխանեց.

— Պարոններ, ձեզ համար հիմա պարզ ու ակներև կդառնա այն մոլորութունը, որի մեջ է այս բարի զինակիրը, սափրիչի լագան անվանելով այն, որը եղել է և կլինի Մամբրինի սաղավարտը: Այդ սաղավարտը ես նրանից խլել եմ ազնիվ կովում, ու այդ պահից ես եմ նրա օրինական և անվիճելի տերը: Գալով փալանի խնդրին, դա իմ գործը չէ: Կասե՛մ միայն, որ իմ զինակիր Սանչո Պանսան ինձնից թույլտվութուն խնդրեց այդ հաղթված վախկոտի փալանը հանել և իր էշը փալանել: Ես նրան թույլ տվի, և նա հանեց: Այս ամենը հաստատելու համար, հապա, Սանչո, զավակս, վազ տուր, բեր այստեղ սաղավարտը, որ այս բարի մարդուն լագան է թվում:



Սանչոն վազ տվեց, լազանը բերեց, դոն Կիխոտն առավ ու ասաց.

— Ինքներդ դատեցեք, պարոններ, այս գինակրի հանդգնությունը, որ պընդում է, թե սա սաղավարտ չէ, այլ լազան: Երդվում եմ ասպետական ուխտով, որին ես պատկանում եմ, սա այն սաղավարտն է, որ խլել եմ նրանից և այն պահից ոչինչ չեմ ավելացրել նրան, ոչինչ էլ չեմ պակսեցրել:

Մեր սափրիչ Նիկոլասը, որ ներկա էր և լավ ճանաչում էր դոն Կիխոտին, մտածեց հրահրել նրա խելագարությունը և, բոլորին զվարճություն պատճառելու համար, երկարաձգել այս կատակը: Ուստի, դիմելով նորեկ սափրիչին, նա ասաց.

— Պարոն սափրիչ, կամ ով որ եք, իմացած եղեք, որ ես էլ եմ այդ արհեստը բանեցնում: Քսան տարուց ավել է, ինչ ես վկայական ունեմ և չկա այնպիսի գործիք, որ ինձ անծանոթ լինի: Ես հաստատում եմ, որ այս սիրալիր պարոնի ձեռքում բռնած առարկան սափրիչի լազան չէ և նույնքան նման չէ սափրիչի լազանի, որքան ճերմակ գույնը սև չէ, և ճշմարտությունը սուտ չէ: Կավելացնեմ միայն, որ թեև սա սաղավարտ է, բայց լրիվ չէ:

— Իհարկե լրիվ չէ,— ասաց դոն Կիխոտը,— որովհետև կեսը չկա, ծնոտակալը պակաս է:

— Միանգամայն արդարացի է,— հարեց քահանան, կռահելով իր բարեկամ սափրիչի միտքը:

Դոն Կիխոտն ասաց.

— Չէի՞ ասում ես, պարոններ, որ այս դղյակը կախարդված է: Որ նրա մեջ առնվազն մի լեգիոն դևեր են ապրում: Տեսեք՝ այստեղ բոլորը կովում են մեկը՝ թրի համար, մյուսը՝ ձիու, երրորդը՝ արծվի, չորրորդը՝ սաղավարտի: Մենք բոլորս կովում ենք և մեկը մյուսին չի հասկանում: Երդվում եմ, մեզ



համար, ազնիվ կոչման մարդկանց համար, մեծ ամոթ է այսքան շնչին առիթով իրար սպանելը:

Հագիվ էր ամեն ինչ խաղաղվել, որ ներս մտան ոստիկաններ, որոնք դոն Կիխոտին կալանավորելու հրաման ունեին: Սանտա Հերմանդադը հրաման էր արձակել կալանավորել նրան թիապարտներին ազատություն տալու համար (հենց դրա համար, որ Սանչոն երկյուղ էր կրում): Գլխավոր ոստիկանը վճռեց ստուգել՝ ճիշտ են արդյոք դոն Կիխոտի նշանները, որ հիշատակված են հրամանի մեջ: Ուստի նա գրպանից հանեց թուղթը, գտնավ ուզած տեղը և լավ գրագետ շինելով, սկսեց վանկ-վանկ կարդալ, ամեն խոսքից հետո դոն Կիխոտի վրա նայելով և համեմատելով դոն Կիխոտի արտաքինի հետ այն նշանները, որ նշված էին հրամանի մեջ: Վերջապես համոզվեց, որ դոն Կիխոտը այն մարդն է, որին հրամայված է կալանավորել: Այդ բանում համոզվելուց հետո նա փաթաթեց թուղթը, բռնեց ձախ ձեռքով, իսկ աջով բռնեց դոն Կիխոտի օձիքից այնքան ուժգին, որ մեր ասպետի շունչը կտրեց: Ոստիկանը գոչեց.

— Հնազանդություն Սանտա Հերմանդադին: Իսկ ով չի հավատում, որ ես Սանտա Հերմանդադի անունից եմ գործում, թող կարդա այս հրամանը: Նրա մեջ գրված է, որ ես պետք է կալանավորեմ այս ավազակին:

— Իմ տիրոջ խոսքը, թե այս դղյակը կախարդված է՝ ճիշտ է դուրս գալիս: Այստեղ մեկ ժամ հանգիստ ապրելն անհնար է,— բացականչեց Սանչոն:

Դոն Կիխոտը տեսնելով, որ ոստիկանները կոչ են անում բոլոր ներկա գտնվողներին օգնելու Սանտա Հերմանդադին և պահանջում, որ ավազակը կալանավորված լինի, քմծիծաղ էր տալիս, քպա միանգամայն պաղարյուն կերպով ասաց.

— Մոտ եկեք, ստոր մարդուկներ: Դուք ավազակ եք անվանում նրան, ով ազատություն է տալիս շղթայակապներին, արձակում է բանտարկյալներին, օգնում դժբախտներին, բարձրացնում ընկածներին, պաշտպանում զրկվածներին: Օ՛հ, ստորաքարշ արարածներ, մոտ եկեք, ոստիկան-կողոպտիչներ, Սանտա Հերմանդադի թույլտվությամբ ավազակներ, և ասացեք ինձ այն տգետի անունը, որ ստորագրել է ինձ նման ասպետի կալանավորման հրամանը: Մի՞թե նրան հայտնի չի եղել, որ թափառական ասպետները ենթակա չեն սովորական դատարանին, որ նրանց օրենքը՝ սուրն է, նրանց օրենսգիրքը՝ արիությունը, նրանց հրամանը՝ սեփական կամքը: Ո՞վ է, կրկնում եմ, այն բթամիտը, որին անհայտ է եղել, որ ոչ մի ազնվականության թուղթ այնքան առաջնություն ու արտոնություն չի տալիս, որքան շնորհվում է թափառական ասպետին այն օրը, երբ նա օձվում է և իր կյանքը նվիրում ասպետականության դժվարին գործին: Այն ո՞ր ասպետն է երբևիցե վճարում հարկ ու տուրք, և զանազան մաքսեր: Այն ո՞ր դերձակն է զգեստ կարելու համար ասպետից փող վերցնում: Այն ո՞ր դղյակի տերն է, ընդունելով նրան իր մոտ, հաշիվ ներկայացնում:

Մինչդեռ դոն Կիխոտը արտասանում էր իր ճառը, քահանան համոզում էր ոստիկաններին, որ նա խենթ է, մի բան, որ նրանք կարող են դատել նրա խոսքերից ու վարքից և որ կարիք չկա այդ գործն սկսելը, քանի որ միևնույն

է, եթե կալանավորեն ու տանեն էլ, հարկադրված են լինելու բաց թողնել որպես խելագարի:

Այն ոստիկանը, որի ձեռքին էր կալանավորելու հրամանը, դրան առարկեց, թե իր գործը դոն Կիխոտի խելագարութեան մասին դատելը չէ, այլ իր պետի հրամանը ի կատար ածել, և թե կալանավորել կարելի է մեկ անգամ, իսկ բաց թողնել, թե հարկ եղավ, երեք հարյուր անգամ:

— Այնուհանդերձ, — ասաց քահանան, — որքան խելքս կտրում է, այս անգամ ո՛չ ձեզ կհաջողվի նրան բռնել, ո՛չ նա կընկնի ձեր ձեռքը:

Վերջ ի վերջո քահանան կարողացավ համոզել նրանց, իսկ դոն Կիխոտն այնքան գծութուններ արեց, որ ոստիկաններն ավելի անխելք կլինեին, եթե չհամոզվեին, որ դոն Կիխոտը խելքից պակաս է: Ուստի նրանք մեղմացան, անգամ միջնորդ եղան սափրիչի և Սանչո Պանսայի միջև, որոնք շարունակ վիճում էին:

Գալով Մամբրինի սաղավարտին, քահանան, դոն Կիխոտից ծածուկ, տիրոջը վճարեց լազանի համար, նրանից ստացական վերցնելով, որ այլևս ոչ մի պահանջ չի ներկայացնի:

Իջևանատեղը, հաշվի առնելով, որ սափրիչը քահանայից ստացավ շնորհակալութուն և վնասների հատուցում, դոն Կիխոտին հաշիվ ներկայացրեց օթևանի և տկերի ու գինու վնասի համար, երդվելով, որ բաց չի թողնի գոմից ոչ Ռոսինանտին, ոչ էլ Սանչոյի էշին, մինչև որ շտանավերջին կոպեկը:


Քահանան այդ էլ շտկեց: Այսպիսով, վերականգնեց խաղաղութիւնն ու անդորրութիւնը:

## ԳԼՈՒԽ XXVII

### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է ՄԱՆՉԱՑԻ ԿԱՆԱՐԴՎԱԾ ԱՍՊԵՏԻ ԾԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅՆ ՀԱԶՎԱՐԵՊ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Երկու օր էր արդեն, ինչ այս փայլուն հասարակութիւնը իջևանատանն էր կենում: Գնալու ժամը հասել էր: Վճուվեց այնպես սարքել, որ Դորոթեան ստիպված չլինի ուղեկցելու դոն Կիխոտին մինչև գյուղ: Քահանան ու սափրիչը նրան պիտի տանեին և տեղում փորձեին բժշկել խելագարութիւնը:

Այդ նպատակով համաձայնութեան եկան մի գյուղացու հետ, որ պատահմամբ սայլով անցնում էր այդ ճանապարհով, և վճռեցին՝ տախտակից վանդակի պես մի բան շինել այնպիսի մեծութեամբ, որ մեր ասպետը բոլորովին հարմար կարողանար մեջը նստել: Ապա քահանայի կարգադրութեամբ բոլորը շորերը փոխեցին և դիմակներ հագան, այնպես որ դոն Կիխոտը չկարողանար իջևանատան կենվորներին ճանաչել: Այդ ամենն անելուց հետո նրանք, լուսային, ներս մտան այն սենյակը, որտեղ ննջել էր դոն Կիխոտը իր ապրած հուզմունքներից հետո: Նրանք մոտեցան, բռնեցին և արագ-արագ կապկպեցին դոն Կիխոտի ձեռն ու ոտը, այնպես որ երբ մեր ասպետը զարթնեց, նա այլևս ի վիճակի չէր շարժվելու: Նրա խանգարված երևակայութեանը թվաց,



Թե այս բոլոր մարդիկ դոյակի կախարդված ուրուններն են, թե նա ինքն էլ, փնտարակույս կախարդված է, քանի որ չի կարողանում շարժվել, ոչ էլ պաշտպանվել: Մի խոսքով, ամեն ինչ կատարվեց այնպես, ինչպես ծրագրել էր այդ խորամանկութունը հնարող քահանան: Բոլոր ներկա գտնվողներից միայն Սանչոն էր իր սովորական տեսքն ու խելքը պահպանել: Նա իսկույն ճանաչեց, թե ովքեր են շորերը փոխած մարդիկ: Սակայն սիրտ շարեց բերանը բանալ, սպասելով, որ տեսնի, թե իր տիրոջ բռնելուց ու գերելուց ինչ դուրս կգա:

Ուրվականները վանդակը բարձրացրին իրենց ուսերին, տարան և դրեցին եզները լծած սայլի վրա:

Քահանան համոզեց ոստիկաններին, որոշ վարձատրությամբ ուղեկցել իրենց մինչև գյուղ: Մինչև սայլի շարժվելը իջևանատիրոջ կինը, աղջիկը և Մարիտոռնեսը դուրս եկան դոն Կիխոտին հրաժեշտ տալու և, լաց լինելով, ցավակցութուն հայտնեցին նրան պատահած դժբախտության առթիվ:

Դոն Կիխոտը պատասխանեց նրանց.

— Միք տխրի, իմ բարի տիրուհիներ: Այսպիսի աղետները անբաժան են այն ծառայութունից, որին ես նվիրվել եմ: Եթե նրանք չպատահեին, ես ինձ հռչակավոր թափառական ասպետ չէի համարի:

Եվ դոն Կիխոտը կապկպած ձեռքերով նստած էր վանդակի մեջ, ոտքերը մեկնած և հենված վանդակի պատին, այնքան համբերող և անխոս, որ ավելի շուտ քարե արձան էր հիշեցնում, քան կենդանի մարդ: Այսպես, համբարալ և լուելյան նրանք անցան մոտ երկու մղոն և հասան մի հովիտ, որտեղ սայլապանը հայտնեց, թե սա հարմար վայր է հանգիստ առնելու և եզներին կեր տալու համար:

Քահանան շուռ եկավ և տեսավ, որ հետևից վեց թե յոթ լավ հագնված ձիավոր են գալիս: Շուտով սրանք հասան մեր ճամփորդներին: Տեսնելով այս տարօրինակ թափորը՝ սայլը, ոստիկաններին, Սանչոյին, Ռոսինանտին, քահանային, սափրիչին, վերջապես՝ կապկպված և վանդակի մեջ զցած դոն Կիխոտին, նորեկներից մեկը հարցրեց, թե ինչո՞ւ են այդ մարդուն այսքան տարօրինակ կերպով տանում (թեև տեսնելով հրացանով զինված և զավազանը ձեռքին ոստիկաններին, նա ինքն էլ արդեն կռահել էր, որ գերին վտանգավոր ավազակ կամ ոճրագործ է, որին Սանտա Հերմանդադը մտադիր է պատժելու):

Ոստիկաններին մեկը պատասխանեց.

— Պարոն, թող այդ ասպետը ինքը բացատրի, թե ինչու են նրան այդ կերպով տանում: Մեզ ոչինչ հայտնի չէ:

Դոն Կիխոտը, լսելով այս խոսակցությունը, ասաց.

— Պարոնայք ասպետներ, արդյոք բավականաչափ տեղյակ և հմուտ եք թափառական ասպետության գործերին: Եթե այո, ապա ես կպատմեմ իմ շարադետ պատահարները, իսկ եթե ոչ՝ ապա իմաստ չունի, որ բացատրություններով ինքս ինձ հոգնություն պատճառեմ:

Եկվորը, որ հոգևորական էր և վանքի միաբան, պատասխանեց.

— Ճիշտն ասած, որդի, ես բազմաթիվ ասպետական վեպեր եմ կարդացել, այնպես որ դու հանգիստ սրտով կարող ես ինձ ամեն ինչ պատմել:

— Որ այդպես է,— պատասխանեց դոն Կիխոտը,— ապա իմացած եղեք, պարոն ասպետ, որ ինձ կախարդել են նենգ ու նախանձոտ շար կախարդները, ահա թե ինչու են այս վանդակի մեջ տանում ինձ: Չարամիտներն ավելի ուժգին են ատում առաքինությունը, քան բարեմիտներն են սիրում: Ծս թափառական ասպետ եմ, բայց ո՛չ նրանցից, որոնց երբեք չի հիշատակում անմահություն շնորհող Փառքը, այլ նրանցից, որոնց վիճակված է գրել իրենց անունը անմահության տաճարում, որպեսզի նմուշ և օրինակ դառնան գալիք սերունդների համար:

Քահանան այստեղ մեջ մտավ.

— Պարոն դոն Կիխոտ Մանչացին արդարացի է: Նա իրոք նստած է այս սայլի վրա՝ կախարդված: Այն էլ ոչ թե իր մեղքերի և ոճրագործությունների համար, այլ շարագործների դավադրությունների հետևանքով, որոնց համար առաքինությունն անտանելի է և արիությունն՝ ատելի: Մեր առջև է Վշտակերպ Ասպետը, որի մասին, դուք, երևի, լսած կլինեք: Նրա փառապանծ գործերը, մեծամեծ սխրագործությունները երբևիցե պիտի գրվեն ամուր բրոնզի և մշտնջենական մարմարի վրա, որքան էլ նախանձը ճգնի նսեմացնել, իսկ շարամտությունը՝ սևացնել:

Այստեղ Սանչո Պանսան, որ մոտեցավ լսի, թե ինչից են խոսում, կամենալով գործի էությունը պարզել, հայտարարեց.

— Պարոններ, դուք կարող եք ինձ գովել կամ պարսավել, բայց ես ձեզ կասեմ, որ իմ տեր դոն Կիխոտը կախարդված է նույնպես, ինչպես իմ մայրը: Նրա խելքը տեղն է: Նա ուտում, խմում և բավառարում է իր բնական պահանջները, ինչպես այլ մարդիկ, ճիշտ այնպես, ինչպես երեկ նախքան նրան վանդակի մեջ գցելը:

Եվ, դառնալով քահանային, նա շարունակեց.

— Ա՛խ, պարոն քահանա, պարո՞ն քահանա, մի՞թե ձերդ ողորմածությունը կարծում է, որ ես ձեզ չճանաչեցի: Մի՞թե դուք ենթադրում եք, որ ես հոտ չեմ առել և չեմ գլխի ընկել, թե ուր են տանում բոլոր այս նոր կախարդանքները: Եթե ձերդ արժանապատվությունը չլիներ, իմ տերը հիմա ամուսնացած կլիներ Միկոմիկոնի թագաժառանգուհու հետ, իսկ ես առնվազն կոմս կդառնայի: Մե՛ղք իմ կինն ու երեխաները: Նրանք ամենայն իրավամբ կարող էին հուսալ, որ իրենց հայրը տուն կդառնա որպես վարչապետ որևէ կղզու կամ որևէ թագավորության փոխարքա, մինչդեռ հիմա ես վերադառնում

եմ որպէս ձիապան: Այդ ամենը, պարոն քահանա, ես նրա համար եմ ասում, որ ձեր մեջ հայրական գուժ շարժեմ, և դուք զղջաք ձեր անբարի վերաբերմունքի համար իմ տիրոջ նկատմամբ:

— Ա՛յդ էր պակաս,— բացականչեց սափրիչը,— ուրեմն դու էլ, Սանչո, քո տիրոջ կտորն ես: Աստված վկա, մտքիցս անցնում է, քեզ էլ շնատացնե՞նք նրա կողքին, վանդակի մեջ, եղբայրութեան համար, որովհետև երևի դուք էլ եք կախարդված, վարակվելով նրա ասպետական ցնդաբանութուններից: Անժամանակ եք դուք ուռել նրա խոստումներից և անժամանակ կոխել ձեր գլուխը այդ սիրեցյալ կղզին:

— Ոչ ոք ինձ չի ուռցրել,— պատասխանեց Սանչոն,— ես այնպիսի մարդ չեմ, որ մեկնում եկը ինձ ուռցնի, նույնիսկ ինքը՝ թագավորը: Կղզին ուզում եմ, ի՞նչ կա որ: Ուրիշները ավելի վատ բաներ են ուզում:

Սափրիչը նախընտրեց Սանչոյին շպատասխանել, զգուշանալով, որ միգուցե նա իր պարզամտութեամբ երևան բերի այն, ինչ որ ինքն ու քահանան այնքան խնամքով թաքցնում էին:

Քահանան կարճառոտ պատմեց մեր ասպետի հիվանդության սկիզբն ու պատճառը, նրա բոլոր արկածները մինչև այս վանդակի մեջ ընկնելը: Նա հաղորդեց իր մտադրութունը՝ տանելու նրան ծննդավայր և փորձելու որևէ կերպ բժշկել:

Այդ միջոցին Սանչոն, օգտվելով իր տիրոջ հետ մենակ խոսելու հնարավորութունից, առանց քահանայի և սափրիչի հսկողության, մոտեցավ վանդակին և ասաց.

— Պարոն, խիղճս թեթևացնելու համար ես պետք է ձեզ, ձեր կախարդվածութեան մասին, բան ասեմ: Այս երկու դիմակավորները, որ ուղեկցում են ձեզ, մեր գյուղի քահանան ու սափրիչն են: Ինձ թվում է, որ նրանք ձեզ այդ եղանակով են տանում, նախանձից դրդված: Նրանք տեսնում են, որ դուք ձեր բխրագործութուններով գերազանցել եք նրանց: Դուրս է գալիս, որ դուք իսկի էլ կախարդված չեք, այլ պարզապես խաբված ու թակարդն ընկած:

— Հանգիստ կաց և այդպես մի՛ մտածիր՝ նրանք այնքան են քահանա ու սափրիչ, որքան ես՝ տաճիկ: Իսկ հիմա հարցրու ինձնից, ինչ որ քեֆդ ուզում է, ես քեզ պատասխան կտամ, անգամ եթե մինչև առավոտ հարցուփորձ անելու լինես:

— Ես այն կարծիքին եմ, որ ձերդ ողորմածութունը պիտի փորձի ազատվել այդ բանտից (ես այդ գործում խոստանում եմ, ուժերս ներածին չափ, ձեզ օգնել և, թերևս, ձեզ դուրս բերել): Հեծեք ձեր բարի Ռոսինանտին, որ կարծես թե նույնպես կախարդված լինի՝ տեսեք որքան տխուր ու մտածկոտ է նա: Իսկ ազատվելուց հետո մենք նորից արկածախնդրության հետևից կընկնենք:

— Ես համաձայն եմ քո առաջարկին, Սանչո եղբայր: Հենց որ նպատավոր ժամ լինի, որ դու քո ծրագիրը կատարես և ազատես ինձ, ես կհնազանդեմ քեզ ամեն բանում:

Սանչոն խնդրեց քահանայից, որ իր տիրոջը թույլ տա մի բոպեով դուրս գալ վանդակից, պատճառաբանելով, որ եթե այդ շարվի, ապա բանտը կապա-



կանվի, մի բան, որ անհամատեղելի է հարգելի ասպետի արժանապատվու-  
թյան հետ:

Քահանան գլխի ընկավ գործի էությունը և պատասխանեց, որ մեծ պատ-  
րաստակամությամբ կկատարեր նրա խնդիրքը, եթե վախենալու չլիներ, որ

դոն Կիխոտը իրեն ազատ զգա թե չէ, նորից իր էջը կըջի և այնպես կփախչի, որ այլևս նրան գտնելու հնար չի լինի:

— Ես երաշխավորում եմ, որ նա չի փախչի, — ասաց Սանչոն:

Դոն Կիխոտին բաց թողին: Նա թեթևացավ և խոսակցութեան բռնվեց եկվոր եկեղեցականների հետ:

## ԳԼՈՒԽ XXVIII

### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է ԴՈՆ ԿԻՒՈՏԻ ՎԵՃԻ ՄԱՍԻՆ ՀՈՎՎԻ ՀԵՏ

Վանականների ծառաները, որ գնացել էին մոտակա իջևանատունը կերակուր բերելու, վերադարձան: Կանաչ դաշտում գորգ փռեցին, որ փոխարինեց սեղանին, ու բոլորը նստեցին ծառերի ստվերի տակ՝ ճաշի: Սայլապանը այդ ընթացքում պիտի եզներին արածացներ դաշտում:

Ճաշի ժամանակ հանկարծ մեծ աղմուկ բարձրացավ և բոժոժների զրնգ-զնգոց լսվեց մերձակա թավ մացառուտի հետևից: Նույն վայրկյանին թավուտից դուրս թռավ մի սիրունիկ այծ՝ ծածկված սև, սպիտակ և շեկ բծերով: Նրա հետևից դուրս վազեց հովիվը, որ ճիշով ու փաղաքուշ խոսքերով աշխատում էր նրան կանգնեցնել և ետ տանել: Երկշտ փախստականը, շփոթմունքից, ուղղակի մարդկանց վրա վազեց, ասես թե նրանց պաշտպանությունը հայցելով և հասավ թե չէ՝ կանգ առավ: Հովիվը վրա հասավ, բռնեց նրա եղջյուրներից և սկսեց հետը խոսել, որպես բանական ու խոհական էակի հետ:

— Ա՛խ, վայրենի, վայրի, ի՞նչ ես վերջերս շարութուն անում: Այդ ի՞նչ գայլեր են քեզ վախեցրել, աշիկս: Ասա ինձ, սիրունիկս, քեզ ի՞նչ է եղել:

Այծարածն սկսեց դիտել դոն Կիխոտին: Տեսնելով նրա դեմքի խենթ արտահայտությունն ու աղքատիկ հագուստը, հարցրեց իր կողքին գտնվող սափրիչին.

— Պարոն, ո՞վ է այս մարդը, որ այսքան տարօրինակ տեսք ունի:

— Էլ ո՞վ, — պատասխանեց սափրիչը, — հռչակավոր դոն Կիխոտ Մանչացին, — վերավորանքի վրեժխնդիրը, արդարության վերականգնողը, կույսերի հովանավորողը, հսկաների ահ ու սարսափը և հաղթողը կռիվներում:

— Դա հո նման է վեպերում թափառական ասպետների մասին գրածներին: Հայտնի է, որ նրանք են կատարում այն, ինչ ձերդ ողորմածությունը վերագրում է այս մարդուն: Սակայն, թվում է, թե կամ ձերդ ողորմածությունը կատակ է անում, կամ այս ազնիվ պարոնի գլուխը դատարկ է:

— Անպատկա՛ռ, անպիտա՛ն, — բացականչեց դոն Կիխոտը, — դատարկ գլուխը դուք եք:

Եվ, խոսքից գործի անցնելով, նա իր առջև դրած հացը վերցրեց և խմիչեց այծարածի երեսին այնպիսի ուժով, որ նրա քթից արյուն եկավ: Հովիվը, չըզնահատելով ըստ արժանվույն այդ կատակը և տեսնելով, որ իրեն լուրջ հարվածում են, սփռոցի վրայով վրա տվեց և երկու ձեռքով այնպես սեղմեց դոն



Կիխոտի կոկորդը, որ անշուշտ խեղդամահ կաներ նրան, եթե նույն վայրկյանին վրա չհասներ Սանչո Պանսան: Հավատարիմ զինակիրը բռնեց հովվի ուսերից, և նրանք երկուսով գլորվեցին սփռոցի վրա, ջարդուփշուր անելով ափսեները, թասերը, թափելով դրանց բովանդակությունն ու ցաքուցրիվ տալով:

Դոն Կիխոտը, ազատվելով, նորից հարձակվեց այծարածի վրա: Հովվիլը արյունլվա, Սանչոյից սաստիկ ջարդ կերած, սկսեց սողալ փորի վրա դեպի սփռոցը, աշխատելով գտնել դանակից-բանից, որ արյունոտ դատաստան տեսնի:

Սակայն վանականն ու քահանան արգելք եղան: Իսկ սափրիչն այնպես սարքեց, որ այծարածին հաջողվեց դոն Կիխոտին տակովն անել և մեր խեղճ ասպետի վրա հարվածների այնպիսի կարկուտ տեղաց, որ նրա քթից նույնքան արյուն թափվեց, ինչքան հովվի քթից:

Վանականն ու քահանան մեռնում էին ծիծաղից, ոստիկանները ցատկոտում բավականությունից և կովոզներին ք՛ս էին անում իրար դեմ, ինչպես կովոզ շներին: Մենակ Սանչոն էր հուսակտուր, որովհետև ինչ էլ չէր անում, չէր կարողանում դուրս պրծնել վանականի ծառայի ձեռքից, որ օգնության հասնի իր տիրոջը:

Վերջապես, այծարածը բաց թողեց դոն Կիխոտին, բոլորին հրաժեշտ տվեց և հեռացավ: Ոստիկանները հրաժարվեցին ճամփան շարունակել: Քահանան վճարեց, ինչ որ հասնում էր և բնց թողեց նրանց: Վանականը խնդրեց քահանայից, որ իրեն իմաց անի, թե ինչով վերջացավ դոն Կիխոտի պատմությունը՝ բժշկվե՞ց նա իր խելագարությունից, թե ոչ:

Այսպիսով բոլորն անջատվեցին իրարից և գնացին տարբեր կողմեր: Մնացին միայն քահանան, սափրիչը, դոն Կիխոտը, Սանչո Պանսան և բարի Ռոսինանտը, որ՝ ինչ էլ հետը պատահեր, տանում էր նույնպիսի համբերատարություն, ինչպես և իր տերը:

Սայլապանը լծեց եզները, դոն Կիխոտին նստեցրեց մի խորոմ խոտի վրա և, իր սովորական անդորրություն, գնաց քահանայի ցույց տված ճամփով:

Վեց օր անց նրանք տեղ հասան և մտան դոն Կիխոտի գյուղը, օրը ցերեկով:

Գյուղացիները հավաքվեցին, որ տեսնեն, թե ով է սայլով եկել և, ճանաչելով իրենց համագյուղացուն, ապուշ կտրեցին: Ինչ-որ տղա վազ տվեց լուրը տանի դոն Կիխոտի տնտեսուհուն և քրոջ աղջկան, որ եկել է մեկի տերը, մյուսի՝ քեռին, մաշված ու դեղնած, եզներով լծած սայլով, պառկած մի խորոմ խոտի վրա:

Լսելով դոն Կիխոտի վերադարձի մասին, Սանչո Պանսայի կինն էլ վազվազ եկավ: Նրան հայտնի էր, որ իր մարդը գնացել է մեր ասպետի հետ,



իբրև նրա զինակիր: Սանչոյին տեսավ թե չէ, նա նախ և առաջ հարցրեց՝  
ինչպե՞ս է էջը: Սանչոն պատասխանեց, թե էջի քեֆը ավելի լավ է, քան  
տիրոջ:

— Դե, հիմա պատմիր տեսնեմ, բարեկամս, քո ծառայությունից ի՞նչ շահ  
ունեցար: Ի՞նչ նվեր ես բերել ինձ համար: Ոտնամաններ գնե՞լ ես զավակնե-  
րիդ համար:

— Այդ տեսակ բաներ չեմ բերել,— պատասխանեց Սանչոն,— ավելի  
լուրջ ու կարևոր բան եմ բերել:

— Շատ ուրախ եմ,— ասաց կինը,— դե ցույց տուր, թե ինչ ավելի լուրջ  
ու կարևոր բան ես բերել: Չեմ համբերում, բարեկամս, սիրտս ուրախացրու,  
ախրք ես այնքա՛ն եմ դարդ արել ու սիրտ մաշել քո բացակայության ժամա-  
նակ:

— Տանը ցույց կտամ, կնիկ ջան, իսկ առայժմ կասեմ միայն, որ եթե  
աստված տա, մեկ էլ ճամփա ընկնենք արկածներ որոնելու, ապա շուտով դու  
ինձ կղզու կոմս կամ վարչապետ կտեսնես, այն էլ ոչ թե մի քոսոտ կղզու,  
այլ՝ ամենալավի:

— Աստված տա, մարդ ջան, կղզին մեզ շատ ու շատ պետք կգա: Միայն  
թե բացատրիր ինձ, ի՞նչ բան է կղզին, ես գլխի չեմ ընկնում:

— Թան չէ, մածուն չէ, ամեն մարդու բան չէ,— պատասխանեց Սան-  
չոն,— վախտը կգա՝ կհասկանաս, կնիկ ջան: Համա կզարմանաս, հա՛, երբ  
որ հպատակներդ քեզ ձերդ ողորմածություն կոչեն:

— Ինչե՞ր ես խոսում պայծառափայլությունից, կղզուց, հպատակներից,—  
հարցրեց Թերեսա Պանսան (այդպես էր Սանչոյի կնոջ անունը, թեև նրանք  
ազգականներ չէին, բայց Մանչայում ընդունված է կնոջը մարդու ազգանու-  
նով կոչել):

— Մի՛ շտապիր, Թերեսա, ամեն բան միանգամից իմանալ: Բավական է  
իմանաս, որ ես ճիշտ եմ ասում և բերանդ փակ պահես: Կարող եմ քեզ ասել,  
որ աշխարհիս երեսին ավելի հաճելի բան չկա, քան արկածախնդիր թափառա-  
կան ասպետի ամենքից հարգված զինակիր լինելը: Ճիշտ է, պետք է խոստով-  
անել, որ այդ արկածների մեծ մասը մեր ուզածի պես չեն դուրս գալիս, հար-  
յուր արկածներից իննսունինը, սովորաբար, փրստ է անցնում: Ես սեփական  
փորձով գիտեմ, պատահել է, որ ինձ վերմակի վրա վեր-վեր են թոցրել, ջար-  
դուբուրդ են արել: Բայց էլի քաղցր բան է բախտ որոնելը, լեռներ մազլցելը,  
թափառել անտառներում, վեր ելնել ժայռերը, այցելել դղյակներ, իջևանել  
հյուրանոցներում ձրի, առանց մի գրոշ վճարելու:

Ահա թե ինչ զրույց էին անում Սանչո Պանսան և Թերեսա Պանսան, մինչ-  
դեռ դոն Կիխոտի զարմուհին ու տնտեսուհին, մեկն իր քեռուն, մյուսը՝ տիրոջը  
դիմավորելուց հետո արդեն նրա շորերը հանել և պառկեցնում էին հին մահ-  
ճակալի վրա:

Դոն Կիխոտը նայում էր նրանց շաղված աչքերով և գլխի չէր ընկնում,  
թե որտեղ է:

Քահանան խնդրեց դոն Կիխոտի զարմուհուց խնամել իր քեռուն և ձեռք  
առնել բոլոր միջոցները, որ նա կրկին տնից չփախչի և պատմեց աղջկան, թե  
ինչ դժվարություններով է ինքը վերադարձրել նրան:

ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է ՍԱՆՉՈ ՊԱՆՍԱՅԻ  
ԵՎ ԹԵՐԵՍԱ ՊԱՆՍԱՅԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՀԻՇՍՏԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ ԱՅԼ ԱՆՑՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Սանչոն վերադարձավ տուն ուրախ ու զվարթ:

— Քեզ ի՞նչ է եղել,— հարցրեց կինը,— ինչի՞ց ես այդքան ուրախացել:

— Լսիր, Թերեսա,— պատասխանեց մարդը,— նրանից եմ այսքան ուրախ, որ որոշել եմ վերադառնալ ծառայութեան իմ տիրոջ՝ դոն Կիստոսի մոտ: Նա կամենում է երրորդ անգամ գնալ արկածներ որոնելու: Ես էլ կերթամ նրա հետ: Առաջիկա երեք օրը լավ խնամիր գորշուկիս, որ պատրաստ լինի ճանապարհի: Վարսակը կրկնակի տուր, փալանը և այլն լավ նայիր, պակաս բան չմնա, մենք հո հարսանիք չենք գնում: Խոստովանութուն լինի, կնիկ ջան, եթե ես հույս չունենայի մոտիկ ապագայում կղզու վարչապետ դառնալու, տեղնուտեղը վեր կընկնեի կմեռնեի:

— Ինչե՞ր ես խոսում, սիրելիս,— բացականչեց Թերեսան,— գրողը տանի վարչապետութունը, դու ողջ լինես: Հո մորդ արգանդից վարչապետ չես դուրս եկել, հո մինչև օրս որպես վարչապետ չես ապրել և իբրև վարչապետ չես մեռնելու և հողի բաժին դառնալու: Աշխարհիս երեսին ամենքն էլ վարչապետ հո չեն, ինչ կա որ, բոլորն էլ կամաց-կամաց ապրում են և մարդ համարվում: Աշխարհիս երեսին ամենալավ համեմը՝ քաղցրն է, որ անպակաս է աղքատին, ուստի նա միշտ ուտում է հաճույքով: Սակայն, տես հա՛, Սանչո, եթե պատահամա՞ք դու որևէ տեղ վարչապետ դառնալու լինես, չմոռանաս ինձ ու երեխաներիդ: Հիշիր, որ Սանչիկոն արդեն տասնհինգ տարեկան է դառել և ժամանակն է, որ դպրոց գնա, չէ՞ որ նրա արբահայր հորեղբայրը խոստացել է նրան հոգևոր պաշտոն տալ: Հիշիր նաև, որ քո դուստրը պակաս չի ուզում մարդու գնալ, քան դու՝ վարչապետ դառնալ:

— Ազնիվ խոսք,— պատասխանեց Սանչոն,— եթե աստված վարչապետութեան պես մի բան տալու լինի ինձ, ես, կնիկ ջան, Մարիսանչային այնքան բարձրաստիճան մի տղայի մարդու կտամ, որ նրան էլ ուրիշ բան չեն կոչի, քան տիրուհի:

— Միտք արա, թե ինչեր ես ասում, ա՛յ մարդ,— առարկեց Թերեսան:— Վայ թե կոմսութունը կործանի մեր աղջկան: Քո կամքը լինի, մարդու տուր դուքսի կամ իշխանի, միայն թե կասեմ, որ ես երբեք չեմ համաձայնի և միշտ հակառակ կմնամ: Ես միշտ սիրել եմ հավասարութունը և ատելով ատել՝ անհիմն գոռոզութունը: Քանի աստված դեռ չի զրկել ինձ հինգ թե վեց զգայարաններից,— չգիտեմ՝ թե քանիսն է լինում,— ես թույլ չեմ տա, որ այդ դժբախտութունը գլխիս գա: Իսկ դու, սիրելիս, վարչապետ դառ, կղզի առ և, որքան սիրտդ ուզի՝ հպարտացիր: Սակայն մորս արևը վկա, ո՛չ ես, ո՛չ իմ աղջիկը գյուղից ուրիշ տեղ չենք գնա: Ազնիվ կինը տանը կնստի, ասես թե ոտը կտորած լինի, իսկ ազնիվ աղջկա համար ամեն աշխատանք՝ տոն է: Գնա քո դոն Կիստոսի հետ արկած որոնելու, իսկ մեզ թող մեր դառը բախտին:

— Սատանան է մտել մեջդ, ինչ է, կնիկ,— պատասխանեց Սանչոն:—

Ապա միտք արա՝ եթե ես կամենայի, որ իմ աղջիկը աշտարակից գլխիվայր ընկներ, կամ գնար թափառելու աշխարհովս մեկ, դու կունենայիր իրավունք չհամաձայնելու: Իսկ եթե ես, մեկ հարվածով, այնպես, որ դու աչք ճպելու ժամանակ չունենաս, նրան ազնվական տիրուհի դարձնեմ, դարմանի միջից հանեմ և ամպհովանու ներքո նստացնեմ, փափուկ բարձերի բլուրի վրա, ապա ինչո՞ւ դու չպիտի համաձայնես և չկամենաս այն, ինչ որ ես եմ ցանկանում:

— Գիտե՞ս ինչու,— պատասխանեց Թերեսան,— որովհետև աղքատների վրա մարդիկ հարևանցիորեն են նայում, իսկ հարուստների վրա՝ երկար-երկար: Եթե հարուստը նախապես աղքատ է եղել, ահա այդտեղից էլ սկիզբ են առնում ասեկոսներն ու բամբասանքները:

Սանչոն կնոջը մխիթարեց, ասելով, որ ճար չկա: Աղջկան պիտի կոմսուհի դարձնի, բայց կաշխատի, որքան կարելի է, ուշ անել այդ բանը:

### ԳԼՈՒԽ XXX


#### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉ ՊԱՏԱՀԵՑ ԴՈՆ ԿԻԽՈՏԻ ԵՎ ՆՐԱ ԶԱՐՄՈՒՀՈՒ ՈՒ ՏՆՏԵՍՈՒՀՈՒ ՄԻՋԵՎ. ԱՅՍ ՊԱՏՄԻԹՅԱՆ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳԼՈՒԽԸ

Նույն պահին, երբ Սանչո Պանսան, իր կնոջ՝ Թերեսա Կասկախոյի հետ վերը մեր հիշատակած անմիտ խոսակցությունն էր վարում, դոն Կիխոտի զարմուհին ու տնտեսուհին էլ անգործ չէին նստել, որովհետև հազար ու մի նըշաններից նրանք կռահել էին, որ մեկի բռնին, մյուսի՝ տերը պատրաստվում է երրորդ անգամ դուրս պրծնել և դարձյալ շարաքաստիկ (նրանց կարծիքով) թափառական ասպետ դառնալ: Բոլոր հնարավոր միջոցներով աշխատում էին նրան ետ պահել այդ վնասակար մտքից, սակայն նրանք ապարդյուն բարբառում էին անապատում և սառը երկաթ կռում:

Դուռը թակեցին: Հարցրին, թե ո՞վ է: Սանչո Պանսան պատասխանեց՝ ես եմ: Տնտեսուհին նրա ձայնն առավ թե չէ, իսկույն փախավ, որ նրա երեսը չբտեսնի՝ ուղղակի տանել չէր կարող նրան: Դուռը բաց արեց դոն Կիխոտի զարմուհին: Դոն Կիխոտը գրկաբաց դիմավորեց զինակրին, հետո նրանք, երկուսով մնալով, դուռը կողպեցին, և նրանց միջև սկսվեց մի խոսակցություն, որը նախընթացից պակաս չէր:

Հենց որ տնտեսուհին տեսավ, թե դոն Կիխոտն ու Սանչո Պանսան փակվեցին սենյակում, իսկույն գլխի ընկավ, թե ինչ է դուրս գալու դրանից և, կարծելով, որ այդ խոսակցությունը հանգելու է երրորդ արշավը գործելու որոշման, իսկույն վերցրեց իր թիկնոցը և, տազնապի ու տխրության մեջ՝ վազեց բակալավր Սամսոն Կարրասկոյի տունը: Նրան թվում էր, թե Կարրասկոն, իբրև պերճախոս մարդ և իր տիրոջ նոր բարեկամը, կկառողանա համոզել նրան հրաժարվել այդ խենթ ծրագրից:

Կարրասկոն զբոսնում էր բակում, և տնտեսուհին, տեսնելով նրան, ընկավ ոտքերը՝ քրտնաթոր ու շնչակտուր: Տեսնելով նրան այդպիսի տազնապի և վշտի մեջ, Կարրասկոն հարցրեց.



— Ի՞նչ է պատահել, տիրուհի:

— Թանկագին պարոն բակալավր, իմ տերը դարձյալ մտադիր է երրորդ անգամ արշավել որոնելու այն, ինչ ինքը արկած է անվանում, իսկ ես գլխի չեմ ընկնում, թե ինչ բան է դա: Առաջին անգամ նա վերադարձավ էշի վրա՝ ջարդված, երկրորդ անգամ՝ նրան բերին վանդակի մեջ, սայլով: Նա ուներ այնպիսի ցավալի տեսք, որ նրան աշխարհ բերող մայրն էլ չէր ճանաչի՝ դեղնած, նիհար, աչքերը փոս ընկած: Գեթ մի քիչ նրան կարգի բերելու համար ես վեց հարյուրից ավելի ձու եմ վատնել: Վկա են՝ աստված, մեր հարեվաններն ու հավերթ:

— Բան չկա, — պատասխանեց բակալավրը, — հանգիստ տուն դարձեք, մի տաք կերակուր պատրաստեցեք, ես հիմա կգամ:

Տնտեսուհին հեռացավ, իսկ բակալավրը իսկույն գնաց քահանայի մոտ, որ խորհրդակցի:

Այդ միջոցին դոն Կիխոտե ու Սանչոն, փակված սենյակում, զրույց էին անում:

Սանչոն ասաց իր տիրոջը.

— Տե՛ր իմ, վերջապես ինձ հաջողվեց համոզել կնոջս, որ պարտավոր եմ հետևելու ձեր ողորմածությանը, որտեղ դուք հաճեք գնալ:

— Կա՛մ:

— Թերեսան ասում է, — շարունակեց Սանչոն, — որ ես պայմանս ամուր կապեմ ձեր ողորմածության հետ, որովհետև գրածը՝ խոսում է, բերանացին՝ լուում, որ թուղթ բաժանողը չի կարող խառնել և քո ունեցած մեկը՝ ունենալիք երկուսից լավ է: Ես գիտեմ, որ կնոջ խորհուրդը քիչ արժեք ունի, բայց ով որ չի հետևում՝ խելագար է:

— Համաձայն եմ, — պատասխանեց դոն Կիխոտը, — բայց խոսքդ շարունակիր, Սանչո բարեկամ, որովհետև այսօր մարգարիտներ են թափվում քո շուրթերից:

— Ասելու այն է,— շարունակեց Սանչոն,— որ ձերդ ողորմածութիւնն ինձ հաղորդի, թե ինչ ոտճիկ է ամասկան վճարելու ինձ իմ ծառայութեան ընթացքում և որ այդ որոշ ոտճիկը դուք վճարեք հիմա, որովհետև նվերներ ըստանալու հուսով ես ծառայել չեմ կամենում, քանի որ նվերները կամ ուշ, կամ անպատեհ են շնորհվում, կամ ամենևին չեն լինում: Իհարկե, եթե գլուխ գա (թեև ես չեմ հավատում և հույս չունեմ), որ ձերդ ողորմածութիւնը նվիրի ինձ խոստացած կողին, ես անշնորհակալ և ազահ չեմ լինի: Ո՛չ, ես կխընդրեմ ճշգրիտ որոշել, թե ինչ եկամուտ կունենամ այդ կողուց, որ դրանից հանեք իմ ոտճիկը:

— Լսիր, Սանչո,— պատասխանեց դոն Կիխոտը,— ես սիրով քեզ ոտճիկ կնշանակեի, եթե թափառական ասպետների մասին վեպերում ես գեթ մեկ օրինակ հիշեի, թե սովորաբար զինակիրները ինչքան էին աշխատում մեկ տարում կամ մեկ ամսում: Ուստի, Սանչո բարեկամ, վերադարձեք տուն և հայտնեցեք իմ որոշումը ձեր Թերեսային. եթե նա և դուք համաձայն եք ծառայելու նվերների հուսով՝ լավ, եթե ոչ, ապա կբաժանվենք որպես բարեկամներ: Ի վերջո կասեմ՝ եթե դուք չեք կամենում նվերների հուսով ծառայել և բաժանել ինձ հետ իմ բախտը, ապա մնաք բարով: Ես կունենամ զինակիրներ ալվելի հնազանդ և ջանասեր, ոչ թե ձեզ պես անշնորհք ու բերանբաց:

Սանչոն որ լսեց տիրոջ հաստատ որոշումը, աչքերը սևացան, և նրա քաջութիւնը թեւաթափ եղավ, որովհետև հավատացած էր, որ տերը չի գնա առանց իրեն: Շփոթ ու մտամոլոր կանգնած էր նա, երբ ներս մտան Սամսոն Կարրասկոն, տնտեսուհին ու դոն Կիխոտի զարմուհին: Կանայք կամենում էին լսել, թե ինչպես է բակալավորը համոզելու, որ դոն Կիխոտը չգնա արկած որոնելու, իսկ Կարրասկոն, հայտնի հանաքչի լինելով, մոտեցավ նրան, գրկեց ու բարձրաձայն ասաց.

— Օ՛, ծաղիկդ թափառական ասպետութեան: Օ՛, ռազմական արվեստի պայծառափայլ լույս: Օ՛, իսպանական ժողովրդի պատիվն ու հայելին: Հառա՛ջ, քաջ և հիասքանչ տեր իմ դոն Կիխոտ, թող ձերդ ողորմածութիւնը, իր ողջ վեհութեամբ, ուղևորվի ոչ թե վաղը, այլ այսօր: Եվ եթե ձերդ շքեղութիւնը զինակրի կարիք ունի, ապա ես մեծագույն երջանկութիւն կհամարեի ծառայել ձեզ:

Այստեղ դոն Կիխոտը դիմեց Սանչոյին և ասաց.

— Ի՞նչ կասես, Սանչո, չէի՞ ասում, որ զինակիրներ միշտ կգտնվեն: Սակայն երկինքը թույլ չի տա, որ ես սեփական հաճույքի համար ջարդեմ ու փրշրեմ գիտութեան այս սյունը և գիտական անոթը, որ ես կտրեմ արգո և ազատ արվեստների այս բարձր արմավը: Ես կբավականանամ մի ուրիշ զինակրով, քանի որ Սանչոն չի հաճում ուղեկցել ինձ:

— Ոչ, հաճո՛ւմ է,— գոչեց Սանչոն, լցված ու արտասովթոր:

Դոն Կիխոտն ու Սանչոն գրկախառնվեցին և նորից բարեկամացան:

Մեծն Կարրասկոյի խորհրդով և բարեհայեցողութեամբ, որ նրանց համար արդեն պատգամախոս էր դարձել, վճովեց, որ գնալը երեք օրից կլինի: Այդ ժամանակամիջոցում պիտի պատրաստվեին ճամփորդութեան համար բոլոր անհրաժեշտ բաները, պիտի գտնվեր երեսկալը վրան սաղավարտ, որովհետև դոն Կիխոտը հայտարարեց, որ անպատճառ պիտի երեսկալով սաղավարտ

ունենա: Սամսոնը հանձնառու եղավ գտնելու, որովհետև տեղյակ էր, թե այդ տեսակ մի սաղավարտ ունի իր բարեկամներից մեկը:

Երեք օրից դոն Կիխոտն ու Սանչոն պատրաստել էին այն ամենը, ինչ որ նրանց անհրաժեշտ էր թվում: Սանչոն հանգստացրեց իր կնոջը, դոն Կիխոտը՝ զարմուհուն ու տնտեսուհուն, և ահա, իրիկնապահին, բոլորից աննկատելի, բռնեցին Տոբոսո տանող ճամփան, դոն Կիխոտը՝ իր Ռոսինանտի, իսկ Սանչոն՝ իր էշի վրա, նախապես լցնելով ճամփորդական պայուսակները հազար ու մի ուտեստով, քսակն էլ փողով, որ համենայն դեպս հանձնել էր նրան դոն Կիխոտը:

## ԳԼՈՒԽ XXXI

### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉ ԽՈՐԱՍԱՆԿՈՒԹՅԱՄԲ ՍԱՆՉՈՆ ԿԱԽԱՐԴԵՑ ԴՈՒԼՄԻՆԵԱՅԻՆ

Իրիկնապահին նրանց առջև բացվեց Տոբոսո մեծ քաղաքը:

Այդ տեսարանից դոն Կիխոտի ոգին ցնծաց, իսկ Սանչոյինը՝ տխրեց, որովհետև մեր զինակիրը չգիտեր, թե որտեղ է ապրում Դուլսինեան և իր օրում նրան տեսած չկար, ինչպես, ասենք, նաև իր տերը: Այսպիսով նրանք երկուսով էլ հուզված էին՝ մեկը Դուլսինեային տեսնելու փափագից, մյուսը՝ նրան երբեք տեսած չլինելու պատճառով: Սանչոն պոչիս շէր հանում՝ ինչ պիտի անի, երբ որ տերը իրեն Տոբոսո ուղարկի:

Դոն Կիխոտը վճռեց մինչև գիշեր քաղաք չմտնել և, սպասելով, որ մութը ընկնի, նրանք կանգ առան Տոբոսոյի մոտերքում գտնվող կաղնուտում:

Կեսգիշերին դոն Կիխոտն ու Սանչոն մտան Տոբոսո:


Քաղաքն ընկղմված էր խաղաղ լուսթյան մեջ, որովհետև բոլոր բնակիչները, ինչպես ասում են, ոտքերը մեկնած՝ քնած էին: Քացի շների հաշտցից, բան էջը լսվում: Ժամանակ առ ժամանակ մի էջ էր զոռում, խոզ էր խանչում, կատու՝ մլավում, և այդ տեսակ-տեսակ ձայներից ավելի էր սաստկանում գիշերային լուսթյունը:

Սանչոն, տեսնելով, որ տերը մտատանջության մեջ է և դժգոհ, ասաց.

— Տեր իմ, շուտով լույսը կբացվի: Անխոհեմություն կլիներ սպասել փողոցում, ավելի լավ չէ՞ր լինի դուրս գալ քաղաքից: Զերդ ողորմածությունը կթաքնվի մոտակա ծառաստանում, իսկ ես քաղաքում ցերեկով ման կգամ բոլոր ծակուծուկերը, մինչև որ գտնեմ ձեր տիրուհու տունը, ապարանքը կամ դրդյակը:

— Սանչո՞,— քացականչեց դոն Կիխոտը,— դու սակավ ու կարճառոտ խոսքերով հազար ու մի միտք արտահայտեցիր: Ես ջերմագին և մեծամեծ պատրաստակամությամբ ընդունում եմ քո խորհուրդը:

Դոն Կիխոտը մնաց ձիու վրա, ոտքերը ասպանդակների մեջ, հենված նիզակի վրա, տխուր ու տաքտամ խոհերով լեցուն: Սանչոն էլ թողեց իր տիրոջը նույնպես վհատ ու վշտոտ: Դուրս գալով անտառից, նա շուտ եկավ և



համոզվելով, որ դոն Կիխոտն այլևս չի երևում, վաչր թռավ էշից և մի ծառի տակ նստելով, սկսեց ինքն իր հետ խոսել.

124

— Ապա ասա հիմա, եղբայր Սանչո, ո՞ւր է գնում ձերդ ողորմածություն-

նր: Ի՞նչ ես որոնում, դու:— Ոչ ավել, ոչ պակաս մի իշխանուհու, որը և գեղեցկութեան արև է, և միաժամանակ ողջ երկինքը:— Որտե՞ղ ես ապա ուզում գտած լինել, Սանչո, որտե՞ղ:— Տոբոսո մեծ քաղաքում:— Շատ քարի, իսկ ո՞ւմ անունից ես որոնում նրան:— Դոն Կիխոտ Մանչացու անունից, հուշակավոր մի ասպետի, որ վերականգնում է արդարութունը, կերակրում է ծարավներին և ջուր խմեցնում՝ քաղցածներին\* :— Բարի՛, գեղեցի՛կ: Իսկ դու, Սանչո, գիտե՞ս, թե որտեղ է նրա տունը: Իմ տերն ասում է, թե նա ապրում է արքայական ապարանքում կամ շքեղ դղյակում:— Իսկ դու ապարանք կամ դղյակ տեսած կա՞ս:— Ո՛չ, ոչ ես եմ տեսել, ոչ էլ իմ տերը: Ի՞նչ իմ բանն է ուրիշի քեֆի համար կատվի հինգերորդ ոտը որոնելը:

Այսպես խոսեց Սանչոն ինքն իր հետ և հետևյալ եզրակացություն հանգեց.

— Աշխարհիս երեսին, մահից բացի, ամեն ինչ ուղղելի է: Հազար ու մի նշաններից երևում է, որ իմ տերը կապելու գիժ է: Ասենք, ես էլ նրանից պակաս չեմ, դեռ նրանից ավելի խենթ եմ, որովհետև ծառայում և ուղեկցում եմ նրան: Խենթությունը հարկադրում է տիրոջս շարունակ մեկ բան ընդունել մյուսի տեղ, սևը՝ սպիտակի, սպիտակը սևի տեղ: Քանի որ այդպես է, դժվար չի լինի հավատացնել նրան, որ առաջին իսկ գեղջկուհին, որ մեր աչքին ընկնի՝ Դուլսինեան է:

Այս խորհրդածությունները հանգստացրին Սանչոյի հոգին, և նա վճռեց որ իր գործը կատարել է: Նա ծառի տակ նստած մնաց մինչև երեկո, որպեսզի դոն Կիխոտը չկասկածի, որ նա իրոք Տոբոսո է գնացել-եկել:

Նրա բախտից այն միջոցին, երբ վեր կացավ, որ իր իշուկի վրա նստի, նայեց Տոբոսոյի կողմը ու երեք գեղջկուհի տեսավ, որ գալիս էին էջ նստած:

Սանչոն շտապով գնաց դոն Կիխոտի մոտ, որը դեռ շարունակում էր իր սիրային ախ ու վախը:

— Դե՞, Սանչո, տղա՞ է, թե աղջիկ:

— Ձերդ ողորմածությունը մնում է խթանել Ռոստինանտին և արձակ դաշտ դուրս գալ:— պատասխանեց Սանչոն:— Տիրուհի Դուլսինեա Տոբոսոյին, իր երկու նաժիշտների ուղեկցությամբ, հյուր է գալիս ձերդ ողորմածության մոտ:

— Ողորմած աստված,— բացականչեց դոն Կիխոտը,— այդ ի՞նչ ես ասում, Սանչո բարեկամ: Տես, չխաբես ինձ և չփորձես պատիժ ուրախությամբ ամոքել իմ անխարդախ տխրությունը:

Նրանք դուրս եկան անտառից և տեսան երեք գեղջկուհիներին, որ հեռու չէին: Դոն Կիխոտը ուշի-ուշով աչք ածեց Տոբոսոյի ճամփան և, տեսնելով միմիայն երեք գեղջկուհիներին, սաստիկ շփոթվեց և հարցրեց Սանչոյից, թե իրո՞ք Դուլսինեան և նրա ուղեկցուհիները դուրս են եկել քաղաքից:

— Ինչպե՞ս թե դուրս են եկել,— բացականչեց Սանչոն:— Ձերդ ողորմածության աչքերը ծոծրակի վրա՞ են, ինչ է: Մի՞թե դուք չեք տեսնում, որ ահա նրանք են մեզ ընդառաջ գալիս, շողալով ինչպես արևը կեսօրին:

— Ես միայն երեք գեղջկուհի եմ տեսնում, էջերի վրա նստած:

Սանչոն առաջ գնաց, որ դիմավորի գեղջկուհիներին: Նա վեր եկավ էջից և, բռնելով նրանցից մեկի էջի նոխտան, ծնկի իջավ ու ասաց.

\* Սանչոն, ըստ իր սովորության, խառն ու սխալ է դասավորում քառերը: Մ. Թ.:



— Գեղեցկութեան թագուհի և իշխանուհի, թող ձերդ ողորմածութիւնը բարեգութ և բարեմիտ ընդունի ձեզնով գերված ասպետին: Ահա կանգնած է նա, որպէս մարմարե սյուն, շմած ու շփոթ ձեր շքեղութեան հանդեպ: Ես նրա զինակիր Սանչո Պանսան եմ, իսկ նա՝ մոլորաշրջիկ ասպետ դոն Կիխոտ Մանչացին, այլապէս՝ Վշտակերպ Ասպետը:

Այստեղ դոն Կիխոտն էլ ծնկի իջավ Սանչոյի կողքին և, մթնած աչքերը չռած, նայում էր այն գեղջկուհուն, որին Սանչոն տիրուհի և թագուհի էր կոչում: Սակայն իր առջև լոկ գեղջկուհի տեսնելով, այն էլ բավական տգեղ, կլորադեմ և քիթը վեր ծռած, նա մնացել էր զարմացած, ապշել էր և սիրտ չէր անում բառ անգամ արտասանել: Գեղջկուհիներն էլ էին ապշել, նկատելով, որ երկու իրար բնավ չնմանող մարդ ծնկի են իջել իրենցից մեկի առջև և արգելում են, որ առաջ ընթանան: Վերջապէս, աղջիկներից մեկը խիստ ու զայրացած գոչեց.

— Մի՛ք կտրի մեր ճամփան, իսկույն թողեք գնանք, մենք շտապում ենք: Սանչոն դրան պատասխանեց.

— Օ՛, իշխանուհի և Տոբոսոյի գերագույն տիրակալ: Մի՞թե ձեր վեհանձն սիրտը չի մեղմանում, տեսնելով, թե ինչպէս ձեր գերապատիվ դեմքի առջև ծունկ է խոնարհել թափառական ասպետութեան այս սյունն ու հաստատութիւնը:

Կսելով այդ խոսքերը, մյուս գեղջկուհիներից մեկն ասաց.

— Ա՛յ քեզ բան: Տեսեք, թե այս պարոնները ինչպէս են ծաղրում գեղջկուհիներին: Դուք ձեր ճամփով գնացեք և մեզ թողեք հանգիստ:

— Վեր կաց, Սանչո,— ասաց դոն Կիխոտը,— հիմա ես տեսնում եմ, որ բախտը չի հագեցել իմ դժբախտութիւններով և որ մարմնիս մեջ տառապող իմ թշվառ հոգու համար ուրախութեան բոլոր ուղիները կտրված են: Իսկ դու, օ՛, բարձրագույն առաքինութիւն, օ՛, սահման մարդկային ազնվութեան և քեզ պաշտող վշտալից սրտի միակ ուրախութիւն: Թեև ինձ հալածող շարաններգ կախարդը իմ աչքերը մշուշով է պատել, ուստի և մենակ ինձ է թվում, որ քո աննման գեղեցիկ դեմքը աղքատ գեղջկուհու երես է դարձրել, սակայն եթե նա ինձ էլ չի կերպարանափոխել, հրեշի վերածել, որ իմ տեսքն ատելի դարձնի քո աչքերին, ապա նայիր ինձ քնքուշ ու կաթոգին, ես ծնկաչոք եմ քո այլայլված գեղեցկութեան առջև, և դու տեսնում ես, թե ինչ հնազանդութեամբ է պաշտում քեզ իմ հոգին:

— Այդ իմ պապին պատմիր,— պատասխանեց աղջիկը:— Շատ հարկավորս է ձեր սիլի-բիլիները: Դեն կաց, ճամփա տուր:

Սանչոն մի կողմ քաշվեց, բաց թողեց գեղջկուհուն և սաստիկ ուրախ էր, որ իր խորամանկութիւնն այդքան բարեհաջող վերջացավ:

Դուստինեայի դերը խաղացող աղջիկը, ազատվելով, բզով ծակեց իր էշի կողն ու քշեց դաշտ: Բայց էշը, զգալով, որ բիզը սովորականից խոր խրվեց, սկսեց քացի-քացի տալ և տիրուհի Դուստինեային վայր գցեց: Այդ բանը տեսնելով, դոն Կիխոտը մոտ վազեց, որ նրան բարձրացնի, իսկ Սանչոն էլ վազեց, որ կապի էշի փորին փալանը:

Երբ որ փալանը պնդացրած էր, և դոն Կիխոտը պիտի բարձրացներ իր կախարդված տիրուհուն ու էշին նստացներ, աղջիկը նրան ազատեց այդ գոր-

ծից, մի քիչ ետ գնաց, վազ տալով եկավ, երկու ձեռքը դրեց էջի գավակին, բազեից թեթև թռավ փալանի վրա և տղամարդու պես բազմեց իր էջին: Մյուս երկու աղջիկներն էլ տեսնելով, որ Դուսիսեան նստեց, իրենց էջերը քշեցին և, առանց ետ նայելու, կես մղոն տարածութուն անցան:

Դոն Կիխոտը նրանց ճամփա դրեց հայացքով, իսկ երբ նրանք անհետացան, դարձավ Սանչոյին և ասաց.

— Ի՞նչ կասես սրան, Սանչո: Ահա թե ինչեր եմ քաշում կախարդների երեսից: Երբ որ մոտեցա Դուսիսեային, որ նրան օգնեմ՝ հեծնի ձին (դու պընդում ես, թե ձի էր, իսկ ինձ էջ թվաց), նրանից սխտորի սաստիկ հոտ փչեց. գլուխս պտտվեց և քիչ էր մնում խեղդվեի:

— Անզգամներ, — բացականչեց Սանչոն: — Չարավնաս և շարանեղ վրձուկներ: Սիրտս ասում է՝ վերցրու և ձկների պես շարիր նրանց թելի վրա:

## ԳԼՈՒԽ XXXII

### ՈՐ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է ԱՐԻ ԴՈՆ ԿՐԵՈՏԻՆ ՀԱՆԴԻՊԱԾ ԿԱՌՔԻ ԿԱՄ «ՄԱՀՎԱՆ ՍԱՅԼԻ» ՏԱՐՈՐԻՆԱԿ ԱՐԿԱԾԸ

Դոն Կիխոտը մտախոհ ընթանում էր ճամփով, մտաբերելով շար կատակը, որ խաղացին իր գլխին կախարդները: Այդ մտքերը նրան այնքան կլանեցին, որ նա, իր համար աննկատելի կերպով, բաց թողեց Ռոսինանտի սանձը: Ձին ազատ զգալով, ամեն քայլափոխում կանգ էր առնում և խոտ արածում, որ առատ աճել էր դաշտում:

Հանկարծ նրանց դիմաց դուրս եկավ մի սալլ՝ լիքը այնպիսի տարօրինակ և այլազան դեմքերով ու կերպարանքներով, որ դժվար է երևակայել:

Եզները քշում ու սայլապանի պարտականություն էր կատարում ինչ-որ անճոռնի դև: Սայլը բաց էր, առանց կտավե ծածկոցի և ոստերից հյուսած կողերի: Առաջին կերպարանքը, որ ներկայացավ դոն Կիխոտի աչքերին՝ ինքը Մահն էր, մարդու դեմքով: Նրա կողքին Հրեշտակ էր նստած՝ մեծ, ներկած թևերով: Մյուս կողմից կանգնած էր Կայսրը և նրա գլխին թագ կար, արտաքուստ՝ զուտ ոսկուց: Մահվան ոտքերի ներքո մի փոքրիկ աստված էր նստած, անունը՝ Կուպիդոն: Նրա աչքերը կապած շէին, ձեռքին աղեղ և նետերով լի կապարճ կար: Ապա ոտից գլուխ զինված ասպետ էր կանգնած, միայն թե գլխին, սաղավարտի փոխարեն, գուլնզգուլն փետուրներով զարդարված գրլխարկ էր դրած: Հետևում ևս շատ ուրիշ մարդիկ կային, զանազան տեսքով և տարբեր հագուստով:

Դոն Կիխոտը շփոթվեց այդ անակնկալ տեսարանից, իսկ Սանչոյի սիրտը կուչ եկավ երկյուղից: Սակայն մի ակնթարթից մեր ասպետը արիացավ, վրձուներով, որ նոր ու վտանգավոր արկած է սպասում իրեն: Այդ միտքը գլխում և լի կատարյալ պատրաստակամությամբ նետվելու ամեն տեսակ վտանգի մեջ, նա ձիու գլուխը պահեց սալլի առջև և քարձր ու խրոխտ ձայնով գոչեց.

— Ով էլ որ լինես՝ սայլապան, կառապան կամ ինքը՝ դևը, անմիջապես բացատրիր ինձ՝ ո՞վ ես դու, ո՞ւր ես գնում և ի՞նչ մարդիկ ես փոխադրում քո սայլով:



Դեք քաշեց սանձափոկերը և հեզ պատասխանեց.

— Պարոն, մենք դերատաններ ենք: Այսօր առավոտյան մենք խաղացել ենք գյուղում, որն այն բլրի հետևն է, իսկ երկոյան խաղալու ենք մի ուրիշ գյուղում, որ այստեղից երևում է: Քանի որ մոտ է, մենք խորհեցինք, որ շորերը հանելն ու կրկին հագնելը ավելորդ աշխատանք կլինի, ուստի և գնում ենք այն զգեստներով, որոնցով խաղում ենք: Այս տղան ներկայացնում է Մահը, նա՛ Հրեշտակին, այս կինը, մեր տիրոջ տիկինը՝ թագուհուն, ահա նա՛ Զինվորին, մյուսը՝ Կայսրին, ես՛ Դեհն:

— Տերը ձեզ հետ, բարի մարդիկ, գնացեք, խաղացեք ձեր ներկայացումը և միտք արեք, շե՛մ կարող արդյոք ես որևէ բանով ձեզ օգտակար լինել. ամենայն սիրով և սրտանց կկատարեմ ձեր խնդիրքը, որովհետև մանկությունից սիրել եմ թատերական դիմալը, իսկ պատանի հասակում դերասաններին նայելուց աչքս չի կշտացել:

Մինչդեռ նրանք այսպիսի զրույց էին անում, բախտի բերմամբ մոտ եկավ այդ խմբի դերատաններից մեկը, որ միմոսի զգեստ էր հագել և վրայից բոժոժներ կախել: Նրա ձեռքին փայտ կար, որի ծայրին կապած էր երեք եզան փուչիկ: Մոտենալով դոն Կիխոտին, այդ ծաղրածուն սկսեց փայտով սրախաղություն անել, փուչիկները խփել գետնին, բարձր ցատկոտել, բոժոժները զնգզնգացնել: Այս վտանգավոր տեսարանն այնպես վախեցրեց Ռոսինանտին, որ շնայած գոն Կիխոտի ձիգերին նրա գլուխը պահելու, ձին գլուխն առավ ու փախավ դաշտ այնպիսի արագությամբ, որ այդ կմախքից ամենևին չէր կարելի սպասել:

Սանչոն, տեսնելով, որ տիրոջը վայր ընկնելու վտանգ է սպառնում, թրուով իր իշուկի վրա և հեխհե սլացավ օգնության: Սակայն երբ նա տեղ հասավ, տերն արդեն գլորվել էր գետնին և նրա կողքին փովել էր Ռոսինանտը:

Հագիվ էր Սանչոն էշից վայր ցատկել և վազել դոն Կիխոտի մոտ, որ պար եկող Դեք թռավ նրա էշի վրա և սկսեց զարկել նրան իր փուչիկներով: Ոչ այնքան ցավից, որքան անհողորդ հարվածներից էջը վազեց դաշտով դեպի այն գյուղը, որտեղ պիտի տեզի ունենար տոնակատարությունը: Սանչոն մեկ նայում էր սլացող էշին, մեկ՝ գետնատարած տիրոջը և շփտեր՝ նախ

ո՞ր ցավին օգնի: Սակայն նա բարի զինակիր էր և բարի ծառա, ուստի տիրոջ սերը հաղթեց:

Չարաչար շփոթմունքով մոտեցավ նա դոն Կիխոտին, որն ավելի ողբալի վիճակի մեջ էր, քան կկամենար և, օգնելով նրան հեծնել Ռոսինանտին, ասաց.

— Պարոն, Դևը քշեց-տարավ իմ իշուկին:

— Ի՞նչ Դև,— հարցրեց դոն Կիխոտը:

— Այն, որ փուչիկներ ունի,— պատասխանեց Սանչոն:

— Բան չկա,— ասաց դոն Կիխոտը,— ես դուրս կբերեմ, անգամ եթե նրան դժոխքի ամենախոր ու մութ անդունդներում թաքցնելու լինեն: Հետևիր ինձ, Սանչո:

— Շտապելու կարիք չկա, պարոն,— առարկեց Սանչոն,— մեղմեցեք ձեր զայրույթը, կարծեմ, սատանան արդեն թողեց իշուկին, որը հտ է գալիս:

— Այնուամենայնիվ,— ասաց դոն Կիխոտը,— այդ Սատանայի անբեկության համար արժեք սալլով գնացողներից մեկնումեկին պատժել, օրինակ համար, ասենք, հենց Կայսերը:

Այս խոսքերով նա ձին քշեց դեպի սալլը, որն արդեն մոտենում էր գյուղին, և բարձրաձայն գոչեց.

— Կանգ առե՛ք, սպասեցե՛ք, միմոսներ ու ծաղրածուներ: Ես ձեզ խրատ պիտի տամ, թե ինչպես պիտի վարվել թափառական ասպետների զինակիրների էշերի և անասունների հետ:

Դոն Կիխոտն այնքան բարձր էր գոռում, որ սալլում նստած դերասանները լսեցին, խոսքերն ըմբռնեցին և գլխի ընկան նրա թշնամական մտադրությունների մասին: Վայրկենապես ցած թռան սալլից Մահը, Կայսրը, սալրապան Դևը, Հրեշտակը և վերջապես Թագուհին ու փոքրիկ աստված Կուպիդոնը, բոլորն էլ քարեր վերցրին և շարքի կանգնեցին ռազմական կարգով, պատրաստվելով դոն Կիխոտին դիմավորել քարե կարկուտով:

Իսկ դոն Կիխոտը, տեսնելով, որ նրանք քաջ-քաջ պատրաստվել են կռվի և բարձրացրել են ձեռքերը, որ քար գցեն, Ռոսինանտի գլուխը պահեց և սկսեց մտմտալ, թե որ կողմից հարձակվի նրանց վրա, որպեսզի նվազագույն չափով իր անձը վտանգի ենթարկի:

Մինչդեռ նա խորհում էր, վրա հասավ Սանչոն և, տեսնելով, որ իր տերը մտադիր է հարձակվելու այսպիսի մի կազմ ու պատրաստ խմբի վրա, ասաց.

— Չարժե վրեժխնդիր լինել, պարոն: Ես կհամոզեմ իմ էշին, որ իր վիրավորանքը իմ կամքին հանձնի: Իսկ իմ կամքը՝ խաղաղ ապրելն է:

— Եթե քո վճիռն այդ է,— ասաց դոն Կիխոտը,— իմ բարի, իմ խելացի և մաքուր սրտով Սանչո, ապա հանգիստ թողնենք այդ խրովիլակներին և ավելի լավ ու ազնիվ արկածներ որոնենք, որովհետև ինձ թվում է, թե այս կողմերում մեզ սպասում են բազմաթիվ հրաշալի անցք ու դեպքեր:

Նա շուտ տվեց Ռոսինանտի գլուխը, Սանչոն նորից նստեց իր էշին, իսկ Մահը իր խմբով վերադարձավ դեպի սալլը, որ շարունակի ճանապարհը:

Ահա թե ինչ բախտավոր վախճանի հանգեց սալլի անավոր արկածը:

ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է ԱՆՏԱՌԻ ԱՍՊԵՏԻ  
ԱՐՏԱՍՈՎՈՐ ԱՐԿԱՏԻ ՄԱՍԻՆ

Մահին հանդիպելուց հետո դոն Կիխոտն ու զինակիրը գիշերն անցկացրին բարձր ու սովերաշատ ծառերի տակ: Նախապես Սանչոն համոզեց իր տիրոջը ճաշակել պաշարից, որ բերել էր հետ կապոցի մեջ:

Ընթրիքից հետո Սանչոն քնեց խցանի ծառի տակ, իսկ դոն Կիխոտը ննջեց վիթխարի կաղնու տակ: Հանկարծ նա զարթնեց, հետևից ինչ-որ աղմուկ լսելով: Նա հուզված վեր թռավ և սկսեց ականջ դնել, կամենալով հասկանալ, թե որտեղից է աղմուկը գալիս: Նա տեսավ երկու ձիավոր, որոնցից մեկը, իջնելով ձիուց, ասաց մյուսին.

— Վեր եկ ձիուց, բարեկամս, ձիերի սանձերն արձակիր, ինձ թվում է, թե այստեղ առատ խոտ կլինի նրանց համար, իսկ իմ սիրային խոհերի համար՝ այն, որ ամենից շատ է պետք,— լռություն ու մենություն:

Այդ խոսքերն ասելն ու խոտի վրա պառկելը մեկ եղավ: Նրա հագի զենքուզրահը զնգզնգաց. բացահայտ նշան, որից դոն Կիխոտը եզրակացրեց, թե անձանոթը թափառական ասպետ է: Մտանալով քնած Սանչոյին, քաշեց նրա ձեռքը, մեծ դժվարությամբ նրան ուշքի բերեց, ապա շնչաց.

— Ահավասիկ արկած, եղբայր Սանչո:

— Ի՞նչ գիտեք,— հարցրեց Սանչոն:

— Սուս, ասպետը կարծեմ լարում է իր վինը թե ջութակը, և ասես թե պատրաստվում է երգել՝ հազում ու թքում է, մաքրելով կոկորդը:

Հնչեց մի երգ, ոչ վատ, ոչ էլ լավ ձայնով: Մեր բարեկամները ուշի-ուշով ունկնդրում էին:

Երգիչն ավարտեց երգը, ապա, խոսակցության ձայն առնելով, վեր կացավ տեղից և հնչեղ ձայնով ու քաղաքավարի հարցրեց.

— Ովքե՞ր եք, ի՞նչ մարդիկ եք: Ուրախների՞ թվին եք պատկանում, թե վշտահարների:

— Վշտահարների,— պատասխանեց դոն Կիխոտը:

— Որ այդպես է, մոտ եկեք,— ասաց Անտառի ասպետը,— և իմացած եղեք, որ դուք կմոտենաք վիշտ ու թախծի մարմնացումին:

Լսելով այդ սիրալիկ ու վայելուչ պատասխանը, դոն Կիխոտը մոտ գնաց, և Սանչոն հետևեց նրան:

Տխրահեծ ասպետը բռնեց դոն Կիխոտի ձեռքն ու ասաց.

— Համեցեք, նստեցեք, պարոն ասպետ: Տեսնում եմ, որ դուք թափառական ասպետ եք:

Դոն Կիխոտը պատասխանեց.

— Դուք արդարացի եք: Եվ թեև իմ հոգում, ինչպես իրենց սեփական բնակարանում բնակվել են՝ վիշտ, աղետներ ու արհավիրքներ, այնուհանդերձ իմ սրտում չի հանգել կարեկցության զգացումը ուրիշի ցավի նկատմամբ:

Նրանք, կոշտ հողի վրա իրար կողքի նստած, հաշտ ու հանգիստ զրույց էին անում, առանց գուշակելու, որ լուսաբացին իրար գլուխ են ջարդելու:

Անտառի ասպետի զինակիրը բռնեց Սանչոյի ձեռքն ու ասաց.

— Մի կողմ քաշվենք և խոսենք իբրև հասարակ զինակիրներ, ինչից որ մեր սիրտն ուզենա:

— Շատ բարի,— պատասխանեց Սանչոն,— ես կպատմեմ ձերդ ողորմածութեանը, թե ով եմ ես, և դուք կըմբռնեք, որ ես շատախոս զինակիրներից չեմ:

Երկու զինակիրները քաշվեցին մի կողմ, և բացվեց մի խոսակցութիւն, որ նույնքան զվարճալի էր, որքան լուրջ էր նրանց տերերի զրույցը:

Անտառի ասպետի ծառան ասաց Սանչոյին.

— Թեթև կյանք չենք վարում մենք, թափառական ասպետների զինակիրներս, տեր իմ: Ճշմարիտ որ մեր երեսի քրտինքով ենք աշխատում մեր կերած հացը:

— Դուք կարող էիք ասել նմանապես,— հարեց Սանչոն,— թե մենք ցըրտահար մարմնով ենք մեր հացն ուտում, որովհետև ո՞վ է շոգ ու ցրտից ավելի տառապում, քան թափառական ասպետի զինակիրը: Դեռ լավ է, թե դրանից հաց դուրս գա. ախր հաց որ եղավ, ցավն էլ կես ցավ է, հաճախ այնպես է պատահում, որ մի ամբողջ օր, երկու օր, մենք միմիայն քամի ենք կուլ տալիս:

— Այդ ամենը կարելի է տանել և համբերել,— առարկեց Անտառի ասպետի ծառան,— որովհետև եթե թափառական ասպետը, որին ծառայում է զինակիրը, մահկանացուներից ամենաանհաջողակը չէ, ապա կարճ ժամանակամիջոցում նրա ծառան կարող է որևէ սիրուն կղզի ստանալ ի կառավարութիւն կամ շատ հաճելի մի կոմսութիւն:

— Ես արդեն հայտնել եմ տիրոջս,— պատասխանեց Սանչոն,— որ ինձ միանգամայն կբավարարի կղզու կառավարիչ լինելը: Իմ տերն այնքան ազնիվ ու առատաձեռն է, որ քանիցս խոստացել է:

Անտառի ասպետի ծառան ասաց.

— Պարոն զինակիր, ես ենթադրում ու խորհում եմ թողնել բոլոր այս ասպետական դատարկաբանութիւնները, վերադառնալ գյուղ և զբաղվել զավակներիս կրթութեամբ: Ես երեքն ունեմ, երեքն էլ արեւելյան մարգարիտներ:

— Իսկ ես՝ երկուսը,— ասաց Սանչոն,— որոնց ամոթ չի լինի ներկայացնել անգամ Հոռմի պապին, մանավանդ աղջկանս, որին մտադիր եմ, հակառակ մոր ցանկութեան, կոմսուհի դարձնել:

— Քանի՞ տարեկան կլինի աղջիկդ,— հարցրեց Անտառի ասպետի ծառան:

— Մոտ քսանհինգ,— պատասխանեց Սանչոն,— բայց հասակը նիզակից կարճ չէ, թարմ է, ինչպես ապրիլի առավոտը և ուժեղ, որպես բեռնակիր:

— Այդպիսի արժանիքներով,— ասաց Անտառի ասպետի ծառան,— նա կարող է ոչ միայն կոմսուհի, այլև կանաչ անտառի հավերժահարս դառնալ: Սանչոն հարց տվեց.

— Ասպետը, որին դուք ծառայում եք, իմ տիրոջ պես խելագա՞ր է:

— Նա խելագար է, բայց քաջ,— առարկեց մյուս զինակիրը,— իսկ խենթութիւնից ու քաջութիւնից՝ ավելի խորամանկ:

— Չէ, իմը բնավ այդպիսին չի,— պատասխանեց Սանչոն:— Մեջը իսկի խորամանկութիւն չկա: Նրա սիրտը, կուժի պես, բաց է: Նա ոչ ոքի շարիք չի անի, ամենքին բարութիւն կանի և մեջը մազաշափ խարդախութիւն չկա:

Մանուկն էլ կարող է համոզել նրան, որ հիմա գիշեր է, մինչդեռ իրոք կեսօր է: Հոգու այդ պարզութեան համար ես նրան աչքի լույսի պես սիրում եմ և շքնայած նրա ողջ խելագարութեանը՝ շեմ կարողանում շքեյ:

— Եղբայր և տեր իմ,— դիմեց Սանչոյին մյուս զինակիրը,— երբ որ մեկ կույր առաջնորդում է մյուսին, երկուսին էլ փոսն ընկնելու վտանգ է սպանում: Ավելի լավ չէ՞ր լինի, եթե մենք շուտ տուն դառնանք: Չէ՞ որ արկածախնդիրները հաճախ այնքան էլ հաճեցի արկածներ չեն գտնում:

Այստեղ նա վեր կացավ գնաց և շուտով վերադարձավ, բերելով մի մեծ տիկ գինի և մի գազ երկարութեամբ կարկանդակ, որի մեջ այնպիսի մեծ ճագար էր դրած, որ Սանչոն շոշափեց ու վճռեց, թե դա ուլիկ էլ չէ, այլ ամբողջ այծ:

— Ձերդ ողորմածութիւնը մի՞շտ հետը այսպիսի բաներ է տանում,— հարցրեց նա:

— Իսկ դուք ի՞նչ էիք կարծում,— պատասխանեց մյուսը:— Ես քոսոտ զինակիր եմ, ինչ է: Ոչ մի գեներալ արշավանքի ելնելուց հետը այնպիսի պաշարներ չի տանում, ինչպիսին ես եմ բեռնել ձիուս գավակին:

Առանց նազուտուզ անելու Սանչոն սկսեց արագ-արագ ուտել, կուլ տալով մեծ-մեծ կտորներ:

— Դուք ճշմարիտ որ հավատարիմ և նվիրված զինակիր եք, ճշմարիտ ու իսկական, շքեղ ու պերճ, ինչպես ցույց է տալիս ձեր սարքած այս խնջույքը, որ առես թե կախարդանք է, և ոչ թե ինձ նման՝ խեղճ ու ողորմելի: Խուրջինիս մեջ եղած-չեղածը մի կտոր պինդ պանիր է, որով կարելի է հսկայի գլուխ ջարդել, հետն էլ շորս տասնյակ քաղցր հաց և նույնքան տկողին ու ընկույզ: Եվ այս ամենի պատճառն այն է, որ իմ տերը աղքատ է և այն կարծիքին է, թե թափառական ասպետները պիտի հետևեն կանոնին՝ բերանը չղնել և շճաշակել այլ բան, բացի շոր մրգից և բուսեղենից:

— Երդվում եմ պատվովս, եղբայր,— առարկեց Անտառի ասպետի զինակիրը,— խոտերը, արմտիքը և վայրի տանձը իմ ստամոքսի համար չեն: Թող մեր տերերը ինչ կարծիքի կամենան լինեն, ինչ ասպետական օրենքների ուղեման հետևեն և ուտեն, ինչ որ խելքներին փչի: Իսկ ես սառը մսի պաշար ունեմ և, համենայն դեպս, թամբից կապած մի տիկ գինի:

Վերջապես մեր բարի զինակիրները կշտացան խոսելուց ու խմելուց, և քունը կաշկանդեց նրանց լեզուներն ու հագեցրեց ծարավը: Շուտով նրանք գրեթե դատարկ տիկը գրկած և դեռ կուլ չգնացած կարկանդակի կտորները բերաններում՝ քուն մտան:

#### ԳԼՈՒԽ XXXIV

### ՈՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՆՏԱՌԻ ԱՍՊԵՏԻ ԱՐԿԱԾԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երկար ու բարակ զրույցից հետո Անտառի ասպետն ասաց դոն Կիխոտին.

— Պարոն ասպետ, թող ձեզ հայտնի լինի, որ բախտի կամքով, ավելի լավ է ասել՝ իմ սեփական ընտրությամբ, ես սիրեցի աննման Կասիլդեա Վանդա-

լիաեցուն: Ես նրան աննման եմ անվանում, որովհետև ոչ ոք չի կարող նմանվել նրան հասակի բարձրութեամբ, ծագման ազնվութեամբ և գեղեցկութեամբ: Ահա վասիկ այդ Կասիլդեան, բոլոր իմ ազնիվ մտադրութիւններին և պարկեշտ զգացմունքներին ի տրիտուր հատուցեց նրանով, որ նմանվեց Հերկուլեսի խորթ մորը, հրամայեց, որ ես հաղթահարեմ բազմաթիվ ու բազմազան դժվարութիւններ և, երբ որ ես հաղթող էի դուրս գալիս մեկ փորձութիւնից, նա հավատացնում էր, որ հետևյալը վերջինը կլինի և որ վերջապես նա կպսակի իմ հույսերը: Սակայն իմ սխրագործութիւնների շղթան երկարում ու երկարում է, ես արդեն անկարող եմ դրանք համբելու և շփտեմ, թե դրանցից ո՞րն է վերջինը լինելու և ո՞րը սկիզբ դնելու իմ համեստ ցանկութիւնների կատարմանը: Ես ոտի տակ եմ տվել Իսպանիայի բոլոր գավառները և հարկադրել, որ այնտեղ շրջող բոլոր թափառական ասպետները ճանաչեն, որ գեղեցկութեամբ Կասիլդեան գերազանցում է աշխարհիս բոլոր կանանց, իսկ ես աշխարհիս երեսին ամենախիզախ և սիրահարված ասպետն եմ: Նրա հրամանով ես ոտքի տակ եմ տվել գրեթե ողջ Իսպանիան և հաղթել բազմաթիվ ասպետների, որոնք հանդգնել են հակաճառել ինձ: Բայց ես առանձնապես հպարտանում ու պարծենում եմ, որ մենամարտի մեջ հաղթեցի հուշակավոր ասպետ դոն Կիխոտ Մանչացուն և ստիպեցի, որ իմ Կասիլդեային իր Դուսինեայից ավելի շքնաղ ճանաչի: Այդ մի հատիկ հաղթանակը աշխարհիս բոլոր ասպետների վրա տարած հաղթանակին է հավասար, քանի որ դոն Կիխոտը նրանց բոլորին ջարդել է և, հետևաբար, քանի որ ես նրան եմ հաղթել, ապա նրա փառքը, պատիվն ու մեծութիւնը փոխադրվում ու փոխանցվում են իմ անձին:

Դոն Կիխոտը զարմացած լսում էր Անտառի ասպետին, մեռնում էր միջամտելու և ասելու համար, որ նա ստում է և «ստում եք»-ը արդեն լեզվի ծայրին էր, բայց ճիգ գործադրեց, զսպեց իրեն, որպեսզի նա ինքը խոստովանի իր սուտը, ուստի հանգիստ պատասխանեց.

— Որ ձերդ ողորմածութիւն պարոն ասպետը հաղթել է Իսպանիայի և, եթե կամենաք, ամբողջ աշխարհի գրեթե բոլոր թափառական ասպետներին, ես չեմ առարկում, բայց ես կասկածում եմ, որ դուք դոն Կիխոտ Մանչացուն հաղթած լինեք: Թերևս դուք որևէ ուրիշին հաղթած լինեք, որ նման է նրան, քի՛չ կա նրան նման մարդ, ի՞նչ է:

— Ինչպե՞ս թե չեմ հաղթել,— բացականչեց Անտառի ասպետը:— Երկինքը վկա, ես կռվել եմ դոն Կիխոտի հետ և հաղթել նրան, և նա խնդրել է, որ ես խնայեմ իրեն: Ինքը՝ բարձրահասակ, նիհար դեմքով, վտիտ մարմնով, ճերմակախառն մազերով, արծվաքիթ, երկար ու ցամփ իջնող բեղերով մարդ է: Նա մարտնչում է վշտակերպ Ասպետ անվան տակ, մի գլուղացի էլ զինակիր ունի, Մանչո Պանսա անունով: Նա խթանում ու քշում է Ռոսինանտ անունով նշանավոր մի ձի և վերջապես նրա սրտի հատորը՝ Դուսինեա Տոբոսցին է, որ մի ժամանակ Ալդոնսա Լորենցո է կոչվելիս եղել: Ես էլ եմ իմ տիրուհուն Կասիլդեա Վանդալիանցի կոչում, բայց նրա իսկական անունը՝ Կասիլդա է, ծնընդարձաբար՝ Անդալուզիան: Եթե բոլոր այս նշանները չեն համոզում ձեզ, որ ես ճիշտ եմ ասում, ահավասիկ իմ թուրը, որ անգամ թերահավատին կստիպի հավատ ընծայել:

— Հանգիստ կացեք, պարոն ասպետ,— ասաց դոն Կիխոտը:— Լսեցեք,



թե ինչ եմ ասում: Իմացած եղեք, որ դոն Կիխոտը, որի մասին դուք պատմում եք, աշխարհիս երեսին իմ ամենալավ բարեկամս է, և մենք այնքան սերտ բարեկամներ ենք, որ կարելի է ասել, որ ես ու նա մեկ անձ ենք: Ձեր թված նըշանները այնքան ճշգրիտ են և անսխալ, որ հարկադրում են ինձ հավատալ, որ դուք հենց նրան եք հաղթել: Սակայն, մյուս կողմից, իմ աչքերն ու շոշափելիքը համոզում են ինձ, որ դա չէր կարող լինել, եթե միայն իմ բազմաթիվ թշնամի-կախարդները (ամենից շուտ նրանցից մեկը, որ շարունակ հալածում է ինձ) չի ընդունել նրա կերպարանքը, որպեսզի հնարավորություն տա ձեզ հաղթելու և դրանով նրան զրկելու փառքից, որ նա վաստակել ու ձեռք է բերել մեզ ծանոթ բովանդակ աշխարհում իր վսեմ գործերով: Վերջապես ձեզ համոզելու համար, որ իմ ասածները զուտ ճշմարտություն են, անհավաստիկ ձեր առջև ինքը դոն Կիխոտը, որը՝ զենքը ձեռքին կապացուցի ձեզ, ձիով կամ ոտքով, մարտի միջոցով կամ առհասարակ ինչպես ձեզ հաճելի կլինի:

Այս խոսքերով նա վեր թռավ տեղից և բռնեց թուրը, սպասելով, թե ինչպես կվարվի ասպետը, սակայն վերջինս, ոչ պակաս հանգիստ, պատասխանեց.

— Լավ վճարողը երբեք գրավից չի վախենա, պարոն դոն Կիխոտ: Նա, որ մեկ անգամ կարողացել է հաղթել ձեզ կերպարանափոխված վիճակում, ունի իրավունք հույս տածելու, որ կհաղթի նաև ձեր իսկական կերպարանքի մեջ: Սակայն վայել չէ, որ ասպետները կռվեն խավարում, գողերի և քստմենլի ավազակների պես, ուստի համբերենք մինչև լույս, և թող արևը վկա լինի մեր քաջագործություններին: Մենք կմտնենք մարտի մեջ մի պայմանով, որ հաղթվածը ճանաչի հաղթողի կամքը և հնազանդի չրա հրամանին, եթե միայն վերջինս ասպետի համար ստորացուցիչ չլինի:

— Ես միանգամայն բավարարված եմ նման պայմանից,— ասաց դոն Կիխոտը:

Այս խոսքերից հետո նրանք գնացին իրենց զինակիրների մոտ և գտան նրանց խումփալիս նույն դիրքով, ինչ դրություն մեջ նրանց վրա էր հասել քունը: Ասպետները նրանց արթնացրին և պատվիրեցին պատրաստել ձիերին, որովհետև լուսաբացին նրանց միջև պիտի տեղի ունենար անլուր, արյունոտ և վտանգավոր մարտ: Այդ լուրից Սանչոն վախեցավ ու նվաղեց, որովհետև Անտառի ասպետի զինակիրը նրան այնքան էր դուրս տվել իր տիրոջ արիության մասին, որ Սանչոն դոն Կիխոտի կյանքը վտանգված տեսավ: Այնուհանդերձ, զինակիրները, առանց բառ անգամ արտասանելու, գնացին իրենց երամակի մոտ, որովհետև էշն ու երեք ձի, իրար հոտոտելուց հետո, միասին էին արածում:

Ճանապարհին Անտառի ասպետի զինակիրն ասաց Սանչոյին.

— Պետք է իմանաս, եղբայր, որ մեզ մոտ, Անդալուզիայում, սովորություն կա, որ մենամարտի ժամանակ վկանները ձեռքերը ծալած, պարապ չեն մնում, մինչ կողմերը կռվում են իրար դեմ: Ասելս այն է, որ դուք նկատի ունանք՝ մեր տերերի մենամարտության միջոցին մենք էլ պետք է իրար ջարդուբուրդ անենք:

— Այդ սովորությունը, պարոն զինակիր,— պատասխանեց Սանչոն,— կարելի է պահպանել ու պաշտպանել կռվարարների շրջանում և վկանների մոտ, որոնց մասին դուք ակնարկեցիք, սակայն ոչ մի դեպքում չի կարելի կիրա-

ուել թափառական ասպետների զինակիրներին: Գոնե իմ տերը նման սովորության մասին երբեք ինձ բան չի ասել, իսկ նա անգիր գիտի թափառական ասպետության կանոնադրությունը: Բայց թող դա ճիշտ լինի և իրոք ճշգրիտ կանոն լինի, որ զինակիրները կովեն իրենց տերերի մենամարտելու միջոցին: Ես գերադասում եմ այդ կանոնը խախտել և խաղաղասեր զինակիրներից գանձվող տուգանքը վճարել: Հավատացած եմ, որ այդ տուգանքը երկու գրվանքա մոմից շատ չի լինի: Համ էլ ես թուր չունեմ և ծնածա օրից չեմ ունեցել:

— Այդ ցավին ես դարման կանեմ, հոգ չէ,— պատասխանեց Անտառի ասպետի զինակիրը:— Ես հետս երկու քաթանն պարկ եմ վերցրել: Մեկը՝ դուք կվերցնեք, մյուսը՝ ես, և մենք հավասար զենքով կկռվենք:

— Դա ուրիշ բան է,— պատասխանեց Սանչոն,— այդ տեսակ կռվում վիրավոր չի լինի, մենք միայն իրարից փոշի կհանենք:

— Դա այնքան էլ ճիշտ չէ,— առարկեց մյուսը,— որպեսզի քամին շտանի մեր պարկերը, մենք մեզը մի վեց հատ միանման քար կգցենք, ապա թե իրար կհարվածենք առանց վնասի և կորուստի:

— Այդ մեկը շեղավ,— պատասխանեց Սանչոն:— Անգամ եթե բոժոժներ լցնելու լինեք մեզը, ես դարձյալ չեմ կռվի: Կարիք չկա միջոցներ որոնել մեր կյանքը կարճելու սահմանված ժամկետից առաջ: Երբ որ հասնենք՝ վայր կընկնենք ծառից: Մեկ էլ ես այնքան ապերախտ չեմ, որ կռվեմ մի մարդու հետ, որի հետ կերել-խմել եմ: Մանավանդ որ ինձ ոչ վիրավորել են, ոչ նեղացրել:

— Դրա դեմ էլ ճար կգտնվի,— ասաց մյուսը:— Կոխվն սկսելուց առաջ ես կմոտենամ ձերդ՝ ողորմածությունը և մի երեք-չորս ապտակ կտամ, այնպես որ դուք վայր ընկնեք գետին, այն ժամանակ ձեր ցասումը կզարթնի, թեկուզ դուք արջամկից էլ քնկոտ լինեք:

— Այդ տեսակ ոտնձգության դեմ,— պատասխանեց Սանչոն,— ես պաշտպանվելու հնար կգտնեմ: Մի լավ մահակ կվերցնեմ, նախքան ձերդ ողորմածությունը իմ զայրույթը արթնացնի, այնպիսի հարվածներ կհասցնեմ, որ ձեր ցասումը կքնի և թերևս այն աշխարհում կզարթնի:

Հազիվ էր լույսը բացվել և հնարավոր դարձրել տեսնել և զանազանել առարկաները, առաջին բանը, որ ներկայացավ Սանչո Պանսայի աչքերին, Անտառի ասպետի զինակրի քիթն էր: Քիթն այնքան մեծ էր, որ ստվերը ծածկում էր իր տիրոջ գրեթե ողջ մարմինը: Այդ արտասովոր մեծության քիթը բազրիջանի պես մանուշակագույն էր, ամբողջապես ծածկված գորտնուկներով: Քիթի մեծությունը, գույնը, ծոռությունն ու գորտնուկները զինակրի դեմքը այնքան այլանդակ էին դարձնում, որ Սանչոն երեխայի պես սկսեց ձեռք ու ոտները թափահարել և վճռեց, որ ավելի շուտ կհամաձայնի երկու հարյուր ապտակ ստանալ, քան գրգռել այդ հրեշի զայրույթը և հետը կռիվ անել:

Դոն Կիխոտը, իր հերթին, նայեց հակառակորդին, բայց վերջինս սաղավարտը դրել ու երեսակալը իջեցրել էր, այնպես որ նրա դեմքը տեսնել չկարողացավ: Նա միայն նկատեց, որ անժանոթը թիկնեղ էր և ոչ բարձրահասակ:

Դոն Կիխոտը ամեն ինչ զննեց, դիտեց և եզրակացրեց արտաքին նշաններից, որ այդ ասպետը ահագին ուժի տեր պիտի լինի:

— Մինչև մենք ձի հեծնենք,— ասաց դոն Կիխոտը,— դուք կարող եք ինձ ասել, իրո՞ք ես այն իսկ դոն Կիխոտն եմ, որին, ձեր ասելով, հաղթել եք:

— Դրան ես կպատասխանեմ,— պատասխանեց Անտառի ասպետը,— որ դուք նմանք եք հաղթված ասպետին, ինչպես մեկ ձուն՝ մյուսին: Սակայն քանի որ դուք պնդում եք, թե ձեզ հալածում են կախարդները, ապա ես չեմ վրստահում հաստատել, դո՞ւք եք արդյոք ծպտվել այն արտաքինի մեջ, թե՞ մեկ ուրիշը:

— Այդքանն էլ բավական է ձեր մոլորութիւնը հաստատելու համար,— ասաց դոն Կիխոտը:— Դուք իսկույն կհամոզվեք, որ իմ տիրուհու ու թրի օգնութեամբ շատ ավելի կարճ ժամանակում ես կտեսնեմ ձեր երեսը, քան ձեզ պետք կգար սաղավարտի երեսկալը բարձրացնելու համար, և դուք կհամոզվեք, ձեր հաղթած դոն Կիխոտը չեմ, որի տեղ դուք ինձ ընդունում եք:

Սրանով վերջացավ նրանց խոսակցութիւնը: Նրանք ձի հեծան: Դոն Կիխոտը շուռ տվեց Ռոսինանտի գլուխը, որպեսզի հակառակորդի վրա հարձակվելու համար հեռվից թափ վերցնի: Նույնն արեց նաև Անտառի ասպետը:

Սանչոն, տեսնելով, որ իր տերը ետ գնաց թափ առնելու համար, չկամեցավ երես առ երես մնալ մեծքթանու հետ: Բավական է, որ նա քիթը խփի իր քթին, անցավ նրա մտքից, ու կռիվը վերջանա, որովհետև ինքը հարվածից կամ երկյուղից գետին կտապալվի: Ուստի նա ընկավ իր տիրոջ հետևից, բռնելով Ռոսինանտի ասպանդակից և, երբ որ նրա հաշվով ետ դառնալու ժամանակը հասավ, ասաց.


— Ձերդ ողորմածութիւն, աղաչում եմ, նախքան թշնամու վրա հարձակվելը օգնեցեք բարձրանամ այս կաղնու ծառը, որտեղից ինձ համար ավելի հարմար կլինի դիտել ձերդ ողորմածութեան քաջարի մենամարտը այն ասպետի հետ:

— Ավելի ճիշտ կլինեք ասել, Սանչո,— պատասխանեց դոն Կիխոտը,— որ դու ուզում ես ծառը բարձրանալ, որ կատարյալ ապահովութեամբ նայես ցլամարտին:

— Ճիշտն ասած,— պատասխանեց Սանչոն,— գինակրի հրեշավոր քիթը իմ սիրտն այնպիսի ահով է լցնում, որ ես սիրտ չեմ անում նրա հետ երես առ երես մնալ:

— Այո, նա այնպիսի քիթ ունի,— ասաց դոն Կիխոտը,— որ եթե ես դոն Կիխոտը չլինեի, ինձ էլ կվախեցներ: Ի՞նչ արած, եկ այստեղ, որ օգնեմ ծառը բարձրանաս:

Մինչդեռ դոն Կիխոտը, Սանչոյին բարձրացնելով ծառը, հապաղում էր, Անտառի ասպետը սահմանված տարածութիւնն անցավ և, կարծելով, թե դոն Կիխոտն էլ նույնը արած կլինի, առանց սպասելու, որ փող փչեն, կամ այլ ազդանշան տան, շուռ տվեց իր ձիու գլուխը, որ Ռոսինանտից ավելի արագընթաց ու լավը շէր և շափ տվեց, այսինքն՝ միջակ վազքով սլացավ թշնամու դեմ: Սակայն տեսնելով, որ դոն Կիխոտն զբաղված է Սանչոյին ծառի վրա նստացնելով, նա սանձը քաշեց և կես ճանապարհին կանգ առավ: Ձին նրանից շատ շնորհակալ մնաց, որովհետև ի վիճակի չէր այլևս առաջ շարժվելու: Իսկ դոն Կիխոտին թվաց, թե թշնամին վրա տվեց, կատաղի խթանեց Ռոսինանտի վտիտ կողերը և, ձիու գլուխը տաքացնելով, շտեմնված արագութեամբ արշավեց Անտառի ասպետի վրա, որ հա խթանում ու խթանում էր իր ձին, բայց չէր կարողանում մազաչափ շարժվել տեղից: Այսպիսի նպաստավոր



պայմաններում և հաջող վայրկյանին դոն Կիխոտը հարձակվեց իր թշնամու վրա, որի գլուխը ձիու պատճառով այնքան խառն էր, որ շկարողացավ, թե ժամանակ չունեցավ նիզակը կանոնավոր ձեռքում պահել: Դոն Կիխոտը նրա շփոթմունքին ուշ չդարձնելով, առանց մի որևէ վտանգի իր համար, այնպիսի դորեղ հարված հասցրեց Անտառի ասպետին, որ վերջինս ետ-ետ սողաց ձիու գավակին ու այնպես տապալվեց գետին, որ դրանից հետո այլևս անկարող էր շարժել ձեռքն ու ոտքը, ասես սպանված լիներ:

Հենց որ Սանչոն տեսավ, թե դոն Կիխոտի հակառակորդը վայր ընկավ, իսկույն իջավ կաղնուց և վազեվազ գնաց տիրոջ մոտ: Դոն Կիխոտն արդեն վայր էր թռել Ռոսինանտից և արձակում էր թշնամու սաղավաբուր, որպեսզի իմանա՝ հո սպանված չէ՞, իսկ եթե կենդանի է՝ օգնի, որ անարգել շնչի: Հանկարծ նա տեսավ... Բայց ինչպես ասենք, թե ո՞ւմ տեսավ, որ ընթերցողին զարմանք ու զարդանդ շաստենք: Նա տեսավ բակալավր Սամսոն Կարրասկոյի դեմքը, կերպարանքը, տեսքը, պատկերն ու նմանությունը: Տեսնելու պես նա բարձրաձայն գոչեց.

— Ապա վազիր, եկ այստեղ, Սանչո, սրան տես, ու դու շես հավատա քո աչքերին: Շուտ արա, զավակս, տես թե մոգությունն ինչե՞ր կարող է անել և որքան հզոր են կախարդներն ու վհուկները:

Գետնատարած ասպետը կենդանության նշան չէր ցույց տալիս, ուստի Սանչոն ասաց դոն Կիխոտին.

— Իմ կարծիքով, տեր իմ, պետք է համենայն դեպս թուրը խփել ու խրել այս այլակերպվածի բերանը, որ իբր թե Սամսոն Կարրասկոն է: Դուք, այդպիսով, թերևս, ոչնչացրած լինեք ձեր կախարդ թշնամիներից մեկին:

— Ճիշտ է, — համաձայնեց դոն Կիխոտը, — որքան քիչ թշնամի՝ այնքան լավ:

Նա թուրը քաշեց, որ Սանչոյի խորհուրդը կատարի: Սակայն այդ վայրկ-

յանին մոտ վազեց Անտառի ատպետի զինակիրը, արդեն առանց քթի, որն այնքան այլանդակում էր նրա դեմքը, ու բղավեց.

— Կա՛նգ առեք, ձերդ ողորմա՞ծություն, պարոն դոն Կիխոտ: Ի՛նչ եք ա-  
նում: Ախր ձեր ոտքերի տակ ձեր բարեկամ Սամսոն Կարրասկոն է, ես էլ՝  
նրա զինակիրը:

Սանչոն, տեսնելով նրա դեմքն առանց նախկին զարդի, հարցրեց.

— Բա քի՞թդ:

Նա պատասխանեց.

— Դրել եմ գրպանս:

Նվ ձեռքը աջ գրպանը տանելով, նա հանեց հաստ թղթից սարքված դը-  
նովի քիթը, իսկ Սանչոն աչքերը սևեռեց զինակրին և զարմացած բացական-  
չեց.

— Մարիա՛մ աստվածածին, դու ինձ ողորմիր, սա իմ հարևան և խնամի  
Տոմե Սեսիալը չի՛:

— Բա չէ՛,— պատասխանեց դնովի քից ազատված զինակիրը:— Ես  
հենց Տոմե Սեսիալն եմ, որ կամ, Սանչո Պանսայի բարեկամն ու խնամին և  
խկույն պատմեմ, թե ինչ-ինչ արարքների, խորամանկությունների և դավերի  
երեսից ես եկա ընկա այստեղ: Միայն թե աղաչեցեք, պաղատեցեք, որ ձեր  
տերը ձեռք չտա, շնեղացնի, չվիրավորի և չսպանի նրա ոտքերի տակ մեկնված  
Անտառի ատպետին, որովհետև, հավատացնում եմ ձեզ, նա ոչ այլ ոք է, քան  
թե ամբարտավան և անխոհեմ բակալավր Սամսոն Կարրասկոն, մեր համա-  
գյուղացին:

Մինչ այս, մինչ այն, Անտառի ատպետը ուշքի էր եկել, և դոն Կիխոտը,  
տեսնելով այդ, մերկ սրի ծայրը դնելով նրա դեմքին, ասաց.

— Դուք կմեռնեք, ասպետ, եթե ընդունելու չլինեք, որ աննման Դուլսի-  
նեա Տոբոսցին իր գեղեցկությամբ գերազանցում է Կասիլդեա Վանդալիաե-  
ցուն, բացի այդ, դուք պետք է խոստանաք, եթե միայն այս պարտությունից  
ու անկուսից հետո կենդանի մնալու լինեք, որ կուղևորվեք Տոբոսո քաղաքը և  
կներկայանաք նրան իմ անունից, իսկ նա արդեն կտնօրինի ձեր բախտը, ինչ-  
պես կամենա: Սակայն անգամ եթե նա ձեզ ազատություն պարգևելու լինի,  
այնուամենայնիվ դուք պետք է վերադառնաք ինձ մոտ և պատմեք ձեր հան-  
դիպումի մասին: Բոլոր այս պայմանները շեն խախտում թափառական ասպե-  
տականության օրենքները:

— Ընդունում եմ,— պատասխանեց տապալված ասպետը,— որ Դուլսի-  
նեա Տոբոսցու կեղտոտ ու պատռած կոշիկը ավելի արժե, քան Կասիլդիաեցու  
վատ սանրած, թեև մաքուր մորուքը, և խոսք եմ տալիս, որ կերթամ ձեր տիկ-  
նոջ մոտ և ետ կգամ ու մանրամասը հաշիվ կտամ, ինչպես դուք եք պահան-  
ջում:

— Բացի այդ, դուք պետք է ընդունեք և հավատաք,— շարունակեց դոն  
Կիխոտը,— որ ձեր հաղթած ատպետը դոն Կիխոտ Մանչացին չի եղել և չէր  
կարող լինել, չնայած որ ես նման եմ նրան, ինչպես ես եմ ընդունում ու հավա-  
տում, որ թեև դուք նմանվում եք բակալավր Սամսոն Կարրասկոյին, բայց է-  
լի դուք նա չեք, այլ ինչ-որ ուրիշ մարդ: Իմ թշնամիները ձեզ նրա տեսքն են

տվել, որ ես իմ կատաղության թափը զսպեմ ու սանձահարեմ և իմ հաղթանակի պտուղները համեստ շափով վայելեմ:

— Այդ ամենը ես ընդունում եմ,— պատասխանեց գետնատարած ասպետը:— Իսկ հիմա թույլ տվե՛ք՝ վեր կենամ:

Դոն Կիխոտն ու զինակիր Տոմե Սեսիալը օգնեցին, որ նա վեր կենա, իսկ Սանչոն աչք չէր կտրում վերջինից, շարունակ հարցուփորձ էր անում, և զինակրի պատասխանները նրան ակնբախ ապացույցներ էին տալիս, որ իր առջև իրոք Տոմե Սեսիալն էր: Սակայն դոն Կիխոտի ասածը, թե կախարդները Անտառի ասպետին բակալավր Կարրասկո են այլակերպել, այնպես էր նրան կասկածամիտ դարձրել, որ նա ոչ մի կերպ չէր կարողանում վստահել սեփական աչքերին:

Տերն էլ, ծառան էլ մնացին իրենց մոլորության մեջ:

#### ԳԼՈՒԽ XXXV

### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉ ԾԱՅՐԱՀԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂ Է ՀԱՍՆԵԼ ԵՎ ՀԱՍԱՎ ԴՈՆ ԿԻՏՈՏԻ ԱՆԼՈՒԻ ԱՐԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՅՈՒԾՆԵՐԻ ԱՐԿԱԾՈՒՄ, ՈՐ ՀԱՆԳԵՑ ՆՐԱ ՀԱՄԱՐ ԲԱՐԵԲԱՍՏԻԿ ՎԱՅԾԱՆԻ

Ճամփին երևաց մի սայլ, որը զարդարված էր մի քանի փոքրիկ դրոշակներով:

Սրբ որ դրոշակազարդ սայլը մոտեցավ՝ բացի ջորիներից մեկի վրա նստած ջորեպանից և սայլի առաջնակողմում նստած մեկ հոգուց, ուրիշ մարդ չերևաց:

Դոն Կիխոտը սայլի առաջը կտրեց և ասաց.

— Այդ ո՞ւր եք գնում, եղբայրներ: Սա ի՞նչ սայլ է, մեջը ի՞նչ եք տանում և այդ ի՞նչ դրոշակներ են:

Ջորեպանը պատասխանեց.

— Սայլը իմն է, վրան վանդակ է, որի մեջ ամեհի առյուծներ ենք տանում Օրանի գեներալից նվեր նորին մեծությանը: Այս դրոշակներն էլ մեր տեր թագավորինն են, նշան, որ մենք արքունական գույք ենք փոխադրում:

— Առյուծները մեծ-մեծ են,— հարցրեց դոն Կիխոտը:

— Այնքան մեծ,— պատասխանեց սայլի առջևում նստածը,— որ նրանցից մեծերը, նույնիսկ սրանց չափ մեծերը դեռ Աֆրիկայից Եվրոպա ուղարկված չեն եղել: Ես առյուծների վերակացուն եմ, շատ-շատ եմ իմ օրում դրանցից բերել, բայց սրանց նմանը դեռ բերած չկամ: Առյուծները շատ քաղցած են, ուստի, ձերդ ողորմածություն, բաց թողեք գնանք, շուտով այնպիսի տեղ հասնենք, որտեղ կարելի լինի կերակրել նրանց:

Դոն Կիխոտը, թեթև քմծիծաղով, պատասխանեց.

— Կորյուններ եք ասում, հա՞: Ես այն մարդկանցից չեմ, որ առյուծներից վախենամ: Քանի որ դուք եք վերակացուն, ապա բարի եղեք իջնել սայլից, բաց արեք վանդակը, բաց թողեք գազաններին, և ես այս դաշտում ցույց կը-

տամ, թե ով է դոն Կիխոտ Մանչացին: Թող ճաքեն ու տրաքեն այդ առյուծներին ինձ դեմ ուղարկող կախարդները:

Սանչոն մոտ եկավ ու արցունքն աչքերին սկսեց աղաչել.

— Տեր իմ, ի սեր աստծո, ձեռք քաշեք այս առյուծներից, թե չէ նրանք մեզ բոլորիս կհոշոտեն:

Դոն Կիխոտը դիմեց վերակացուին.

— Դոն անբան, եթե իսկույն կեթ վանդակը բաց շանեք, ես այս նիզակով ձեզ կգամեմ սայլին:

Ջորեպանը իջավ և արագ-արագ սկսեց արձակել ջորիներին, որ հեռու տանի:

— Ուշ դարձրեք, պարոն,— համոզում էր Սանչոն,— այստեղ ոչ մի կախարդանք չկա: Ես դոնակի փեղկերի արանքից տեսա իսկական առյուծի ճիրանները: Մի առյուծ, որ այդ տեսակ ճիրաններ ունի, սարի շափ մեծ կլինի:

— Երկյուղից քո աչքին կարող է երկրագնդի կեսի շափ մեծ էլ երևալ,— պատասխանեց դոն Կիխոտը:— Դե՛ն քաշվիր, Սանչո, թող ինձ մենակ, և եթե ես կործանվելու լինեմ, շիրուհուս մեր հին պայմանը՝ կերթաս Դուլսինեայի մոտ, իսկ մնացյալի մասին էլ չեմ խոսում:

Դոն Կիխոտը իջավ ձիուց, նիզակը դեն գցեց, բռնեց վահանը, թուրը քաշեց և դանդաղ քայլով՝ զարմանալի անվահներու հոգեկան հաստատակամությամբ, դիմեց դեպի սայլը:

Վերակացուն տեսնելով, որ դոն Կիխոտը կազմ ու պատրաստ կանգնել է վանդակի դիմաց, բաց արեց դոնակի փեղկերը:

Ահավոր ու ահռելի առյուծը շուտ եկավ վանդակում մի կողքից մյուսը, թաթերը բաց արեց և ամբողջ մարմնով ձգվեց ու դանդաղ հորանջեց, հանեց լեզուն՝ երկու գազ երկարությամբ, լպստեց աչքերն ու մոռեթը: Ապա գլուխը հանեց վանդակից և նայեց շորս դին՝ կրակի պես շողշողուն աչքերով: Նրա տեսքն ու շարժումները ում ասես չէին սարսափեցնի, բայց դոն Կիխոտը ուշի-ուշով գննում էր նրան և փափագում, որ առյուծը շուտով դուրս ցատկի սայլից, հետը կովի բռնվի, որովհետև մեր ասպետը հավատացած էր, որ ինքը ներքան պատառ-պատառ կանի: Ահա թե ինչ ծայրահեղ աստիճանի էր հասել ներքա խելագարությունը:

Սակայն վեհանձն առյուծն ավելի քաղաքավարի էր, քան հանդուգն: Նա ուշ շարժրեց դոն Կիխոտի մանկամիտ կովասիրության վրա, շուտ եկավ և ցույց տվեց մեր ասպետին իր գավակը, ապա հանգիստ ու անխոռով դարձյալ մեկնվեց վանդակի մեջ:

Այդ որ տեսավ դոն Կիխոտը, վերակացուին հրամայեց, որ փայտով մի քանի հարված հասցնի առյուծին, որպեսզի նրան զայրացնի և դուրս բերի վանդակից:

— Ես այդ չեմ անի,— պատասխանեց վերակացուն,— ախր եթե ես ներքան շարացնելու լինեմ, նա նախ և առաջ ինձ կհոշոտի: Եղածն էլ, պարոն ասպետ, արդեն բավական է: Քաջության իմաստով, սրանից լավ ապացույց հնարել իսկ չի լինի, ուստի պետք չէ փորձել բախտը երկու անգամ: Դուրս փեղկերը բաց են, առյուծը կարող է դուրս գալ, եթե կամենա, բայց քանի որ մինչև

հիմա դուրս չեկավ, ապա՝ վերջ, մինչև երեկո այլևս դուրս չի գա: Դուք, ձերո՞րդ ողորմածութիւնն, լիովին ի հայտ բերեցիք ձեր սրտի արիութիւնը:

— Դա ճիշտ է, — պատասխանեց դոն Կիխոտը: — Կողպեցեք դռնակը, բարեկամս, և, ամենալավ ձևով կազմած մի վկայական տվեք ինձ այն ամենի մասին, որ դուք նոր տեսաք, այն է՝ թե ինչպես դուք բաց արիք դռնակը, ինչպես ես սպասեցի առյուծի դուրս գալուն, իսկ նա դուրս չեկավ, ինչպես ես շարունակեցի սպասել, իսկ նա դարձյալ դուրս չեկավ և, վերջապես, մեկնվեց վանդակում: Ես իմ պարտքս կատարեցի: Ուստի փակեցեք դռնակը, լծեցեք ջորիները և գնացեք բարով:

Ապա դոն Կիխոտը, ձեռքի նշաններով, մոտ կանչեց Սանչոյին.

— Երկու ոսկի տուր, Սանչո, մեկը՝ վերակացուին՝ մյուսը՝ ջորեպանին, իբրև պարգև, որովհետև ես եմ մեղավոր, որ նրանք ուշացան այստեղ:

Սանչոն տվեց երկու ոսկին, ջորեպանը լծեց ջորիները, վերակացուն համբուրեց դոն Կիխոտի ձեռքը, շնորհակալ եղավ նրա ցույց տված ողորմածութեան համար և խոստացավ այս սխրագործութեան մասին պատմել իրեն՝ թագավորին, հենց որ հասնի մայրաքաղաք:

— Իսկ եթե նորին մեծութիւնը պատահաբար հարցնելու լինի, թե՞ ով է կատարել այդ քաջագործութիւնը, — ասաց դոն Կիխոտը, — ապա կպատասխանեք՝ Առյուծների Ասպետը, որովհետև ես այսուհետև կամենում եմ, որ մինչև օրս իմ կրած վշտակերպ Ասպետ անունը փոխվի, փոխարինվի, ուղղվի և դառնա այս նոր մականունը:

#### ԳԼՈՒԽ XXXVI

### ՈՐ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ՋՎԱՐԾԱԼԻ ԱՐԿԱԾԸ, ՆԱԵՎ ԳՈՒԾԱԿ ԿԱՊԻԿԻ ՆԾԱՆԱՎՈՐ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդեն գիշեր էր, երբ նրանք հասան մի իջևանատուն: Սանչոն ուրախացավ, տեսնելով, որ դոն Կիխոտը, հակառակ իր սովորութեան, իջևանատունը ոչ թե դղյակի, այլ հասարակ իջևանատան տեղ դրեց:

Նույն այդ պահին իջևանատան դռանը երևաց մի մարդ, որի ողջ հագուստը՝ գուլպաները, վարտիքը, կապան, ուղտի բրդից էր:

Նա բարձր ձայնով հարցրեց.

— Պարոն իջևանատեր, ինձ համար տեղ կճարվի՞: Հետս գուշակ կապիկ եմ բերել և տիկնիկներ, որ ներկայացնեմ Մելիսենդրայի ազատագրումը:

— Վա՛յ քեզ, — բացականչեց իջևանատերը, — սա հո մահես\* Պեդրոն է: Զվարճալի երեկո անց կկացնենք այսօր:

Մահես Պեդրոյի ձախ աչքին ու գրեթե այտի կեսին կանաչագույն մետաքսե սպեղանի էր կպցրած, այնպես որ կարելի էր կարծել, թե դեմքի ձախ մասը հիվանդ է:

\* Մահես՝ վարպետ, ուստա: Մ. Թ.:



— Բարի եք եկել, ձերոք ողորմածութիւն, պարոն մասն Պեղրոս,— շարունակեց իջևանատերը:— Որտե՞ղ են ապա ձեր կապիկն ու թատրոնը, ինչո՞ւ ես չեմ տեսնում նրանց:

— Ուր որ է կգան,— պատասխանեց ուղտի բրդից շոր հագածը,— ես առաջ ընկա տեսնեմ՝ կարելի կլինի՞ գիշերել ձեզ մոտ:

Գոն Կիխոտն իսկույն հարցրեց իջևանատիրոջից, թե ով է մասն Պեղրոն և այդ ի՞նչ թատրոնի ու կապիկի մասին էր խոսում:

Վերջինս պատասխանեց.

— Դա շատ հայտնի մարդ է, արկղով թատրոն ման ածող, որ վաղուց շրջում է Մանչայում և ներկայացնում, թե ինչպիս արի Գայֆերոսը ազատեց Մելիսենդրային: Բացի այդ, նա մի կապիկ էլ է հետը ման ածում, որի հագվազուտ արվեստին կարող են նախանձել ոչ միայն կապիկները, այլև մարդիկ: Եթե դուք նրանից բան եք հարցնում, նա ուշի-ուշով լսում է ձեզ, ապա արագ ցատկում տիրոջ ուսին և, թեքվելով նրա ականջին, շնջում է ձեր հարցի պատասխանը, իսկ մասն Պեղրոն բարձր կրկնում է:

Այդ միջոցին վերադարձավ մասն Պեղրոն, հետը՝ սայլ, որի վրա տիկնիկային թատրոն կար արկղի մեջ, և մի անպոչ, մեծ կապիկ էր նստած:

Գոն Կիխոտը տեսավ թե չէ, հարցրեց.

— Զերդ ողորմածութիւն, գուշակող տիկին, ասացեք, տեսնեմ, *que perce pigliamo\**, ի՞նչ կլինի մեր վերջը: Ահա ձեզ երկու ունալ:

Նա հրամայեց Սանչոյին, որ երկու ունալ տա մասն Պեղրոյին, որը կապիկի փոխարեն պատասխանեց և ասաց.

— Պարոն, այդ անասունը ապագայի վերաբերյալ ոչինչ չի պատասխանում ու հաղորդում: Նա շատից-քչից գիտե անցյալի և մասամբ ներկայի մասին:

— Գրո՞ղը տանի,— բացականչեց Սանչոն:— Ես քո գրոջ չեմ տա իմ անցյալը գուշակելու համար՝ ո՞վ կարող է այդ ինձնից լավ իմանալ: Իսկ փող տալ, որ քեզ ասեն այն, ինչ որ ինքդ գիտես՝ մեծագույն հիմարութիւն կլինի: Բայց քանի որ կապիկը գիտե նաև ներկան, ահա իմ երկու ունալը և թող նրա կապիկային ողորմածութիւնն ասի ինձ, թե ներկա վայրկյանում ի՞նչ է անում իմ կինը՝ Թերեսա Պանսան և ինչով է զբաղված:

Մասն Պեղրոն շկամեցավ վերցնել փողն ու ասաց.

— Ես չեմ ուզում վարձատրութիւն վերցնել, քանի դեռ չեմ աշխատել:

Այստեղ նա երկու անգամ աչ ձեռքով խփեց ձախ ուսին, կապիկը վայրկենապես թռավ ուսի վրա և, դունչը խոնարհելով տիրոջ ականջին, սկսեց արագ-արագ ատամները զարկել իրար, ապա արագ ցատկեց գետին, իսկ մասն Պեղրոն մեծ փութկոտութեամբ շոքեց դոն Կիխոտի առջև և, գրկելով նրա ոտքերը, ասաց.

— Ես գրկում եմ ձեր ոտքերը, որպես կգրկեի Հերակլյան սյունները, օ՛հ, մոռացութեան տրված թափառական ասպետութեան փառապանծ վերակենդանացնող: Օ՛հ, ասպետ, դոն Կիխոտ Մանչացի, որի արիութիւնը գերազանցում

\* Իտալերեն դարձվածք է, բառացի նշանակում է՝ ձուկ ենք բռնելու, այսինքն՝ ի՞նչ ենք անելու, ինչի՞ց ենք սկսելու: Մ. Թ.:

է ամեն գովասանք, օ՛հ, թուլլերի մխիթարություն, վայր ընկնողների հենարան, ընկածների պաշտպան, գավազան ու բերկրություն բոլոր դժբախտների:

Դոն Կիխոտը ապուշ կտրեց, Սանչոն՝ շշմեց, իջևանատերը շփոթվեց, մի խոսքով բոլորը ցնցված էին, իսկ տիկնիկների թատրոնի տերը շարունակեց.

— Իսկ դու, բարի Սանչո Պանսա, լավագույն զինակիրը աշխարհիս երեսի լավագույն ասպետի, արիացիր, որովհետև քո կին Թերեսան ողջ և առողջ է և ներկա վայրկյանիս մի գրվանքա կտավհատ է գգում: Որպեսզի առավել ճշգրիտ լինեմ, կավելացնեմ, որ նրա ձախ կողմից փողը կոտրած մի կուժ կա դրած, մեջը՝ բավական գինի, որ աշխատանքը տաղտկալի չլինի:

— Հիմա ես կասեմ,— սկսեց դոն Կիխոտը,— որ շատ կարդացողն ու ճամփորդողը շատ էլ տեսնում ու իմանում է: Ասելս այն է, որ ոչ ոք չէր կարող ինձ հավատացնել, որ աշխարհիս երեսին գուշակող կապիկ կա, ինչպես ես հիմա տեսա սեփական աչքերովս: Այո, ես հենց այն դոն Կիխոտ Մանչացին եմ, որի անունը տվեց այդ փառավոր անասունը, թեև գովասանքի շափն անցավ:

— Իսկ հիմա,— հայտնեց մասես Պեդրոն,— դոն Կիխոտի հարգանքից դրդված և նրան բավականութուն պատճառելու համար, ես կպատրաստեմ թատրոնս և իջևանատան բոլոր կենվորների համար ձրի ներկայացում կտամ:

Այդ լսելուն պես իջևանատերը, սաստիկ ուրախացած, ցույց տվեց որտեղ ավելի հարմար կլինի սարքել թատրոնը:

Շուտով դոն Կիխոտն ու Սանչոն գնացին թատրոնի տեղը: Բեմի շուրջը վառ մոմեր էին տնկված, և դրանց լույսի տակ թատրոնը շքեղ ու փայլուն էր երևում:

Մասես Պեդրոն բազմեց բեմի կենտրոնում, որովհետև նա պիտի շարժեր տիկնիկներին, իսկ բեմի առջև տեղավորեց իր օգնական տղային, որպեսզի բացատրի ներկայացման բոլոր գաղտնիքները:

Հանկարծ բեմի հետևից լսվեց ծնծղայի և փողերի ձայն և թնդանոթների դղրդոց, սակայն շուտով այդ աղմուկը դադարեց, և տղան բարձրացրեց ձայնն ու ասաց.

— Ճշմարտապատում պատմությունը, որ մենք ներկայացնելու ենք ձերդ ողորմած պարոնների համար, բառ առ բառ առնված է ֆրանսիական ժամանակագրություններից և իսպանական երգերից, որ ամենքի շուրթերին են, ոչ միայն մեծերի, այլև փողոցում վազվզող մանուկների: Պատմությունը գրուցում է, թե ինչպես դոն Գայֆերոսը\* ազատեց իր կնոջը՝ Մելիսենդրային, որն իբրև գերի գտնվում էր Իսպանիայում, մավրերի ձեռքին, Սանսուենյո քաղաքում, ինչպես այն ժամանակ կոչվում էր Սարագոսան: Տեսեք, պարոնայք, դոն Գայֆերոսը զառ է գցում, ինչպես ասված է երգում:

Գայֆերոսը գցում է զառ,  
Մելիսենդին մոռցած իսպառ:

Ահա երևան է գալիս մի ուրիշ կերպարանք, թագը՝ գլխին, գավազանը՝ ձեռքին: Դա Կարլոս Մեծ կայսրն է, գեղեցիկ Մելիսենդրայի ենթադրյալ հայրը:

\* Գայֆերոսը Կարլոս Մեծ կայսեր քրոջ տղան է, իսկ Մելիսենդրան (կամ՝ Մելիսենդան) հարազատ աղջիկը: Գայֆերոսի և Մելիսենդրայի նշանադրությանից հետո մավրերը առևանգել էին Մելիսենդրային և տարել Իսպանիա: Մ. Թ.:



Տեսնելով, որ իր փեսան անձնատուր է եղել անգործության, նա բարկանում ու հանդիմանում է նրան: Ուշ դարձրեք, թե ինչ խիստ է նախատում: Կայսրը երկար ու բարակ բացատրում է, թե նա պետք է ազատի իր կնոջը, թե չէ նրա պատիվը արատավորված կլինի և ի վերջո ավերացնում է.

«Ասացի. հիմա՛ խորհի՛ր»:

— Իսկ հիմա դուք տեսնում եք, ողորմած պարոնայք, որ կայսրը շուռ է գալիս, երևում է նրա մեջքը, նա թողնում է սաստիկ հուզված Գայֆերոսին, որ կատաղում-փրփրում է, դեն է գցում տախտակն էլ, զառն էլ և հրամայում է, որ անմիջապես բերեն զենքուզրահը: Նա հայտարարում է, որ կկարողանա ազատել իր կնոջը, եթե անգամ նա բանտարկված լինի երկրի ամենախոր ծոցում: Ու ճամփա է ընկնում:

— Իսկ հիմա, պարոնայք, ուշ դարձրեք այնտեղ երևացող աշտարակին, որ ներկայացնում է Սարագոսի դղյակի աշտարակներից մեկը: Պատշգամբում երևացող տիկինը, որ մավրի կնոջ զգեստ է հագել, աննման Մելիսենդրան է, նա հաճախ դուրս է գալիս այստեղ, նայելու Ֆրանսիա տանող ճանապարհը և երազելու Փարիզի մասին, իր ամուսնու մասին և մխիթարվելու:

— Հիմա ուշ դարձրեք այս մավրի վրա, որ մատները շրթունքներին դրած կամացուկ, հուշիկ քայլերով, հետևից մոտենում է Մելիսենդրային: Տեսեք, թե ինչպես է համբուրում նրա շուրթերը, ինչպես իսկույն տիկինը սկսում է թքել և իր շապկի ճերմակ թևով սրբել բերանը: Նա գանգատվում է, վշտից պոկում իր շքնաղ մազերը, ասես թե նրան վիրավորած լինեն: Նայեք նմանապես, նավում նստած այն մավրին: Դա Սանտուենյոյի թագավոր Մարսիլիոն է: Նա տեսավ առաջին մավրի անպատկառու թյունը, որին, թեև նա իր ազգականն ու մերձավորն է, հրամայում է իսկույն ևեթ կալանավորել և երկու հարյուր անգամ մտրակել: Տեսեք, ահա այնտեղից դուրս են գալիս դատավճիռը ի կատար ածելու համար, մինչդեռ հանցանքը դեռ նոր է կատարվել: Դա նրանից է, որ մավրերը «մեղադրանքի պատճենը հանձնելու» և «փաստերը ստուգելու» կարիքը չունեն, ինչպես մենք:

— Տղա՛,— գոչեց այստեղ դոն Կիխոտը,— ձեր պատմությունը շիտակ տարեք և մի շեղվեք կոր ու խաշաձևվող գծերով: Ճշմարտությունը պարզելու համար մեղադրանքը հայտնելու և փաստորեն ստուգելու կարիք լինում է:

Մահես դոն Պեդրոն բեմի հետևից ասաց.

— Այ տղա, ավելորդ բաներ դուրս մի տուր, այնպես արա, ինչպես հրամայում է այդ պարոնը:

— Շատ լավ,— պատասխանեց տղան ու շարունակեց.

— Սա էլ՝ ձիու վրա, ինքը տոն Գայֆերոսն է: Ահա և նրա տիկինը, որ ելնում է աշտարակը և անհայտ ճամփորդի տեղ դնելով իր ամուսնուն, սկսում է հետը խոսել: Տեսնո՞ւմ եք, թե ինչպես դոն Գայֆերոսը բաց է անում իր թիկնոցի կոճակները, իսկ Մելիսենդրան, ձեռքի ուրախ նշաններով հասկանալ է տալիս, թե ճանաչել է: Եվ ահա մենք տեսնում ենք, թե ինչպես նա իջնում է պատշգամբից, որ նստի իր սիրելի ամուսնու ձիու գավակին: Դոն Գայֆերոսը նրան նստեցնում է տղամարդու ձևով իր ձիու գավակին, ասում է, որ պինդ բռնի իրեն, և նրանք ուրախ ու զվարթ սլանում են դեպի Փարիզ:

Իհարկե, գտնվեցին պարապ լրտեսներ, որ միշտ ամեն ինչ տեսնում են և որոնք տեսան, թե ինչպես Մելիսենդրան իջավ ու նստեց ձիու գավակը: Նրանք լուրը տարան Մարսիլիոյին, որը հրամայեց իսկույն ահազանգ տալ: Տեսեք, թե այդ ամենն ինչ արագ է կատարվում: Ահա բոլոր մզկիթներում զանգ են տալիս, և ողջ քաղաքը դղրդում է զանգերից:

10 Դոն Կիխոտ

— Այդ արդեն ճիշտ չէ,— մեջ մտավ դոն Կիխոտը,— Մահես Պեդրոն, անտարակույս, զանգերի վերաբերյալ վրիպել է: Մավրերը զանգ չեն գործածում, այլ ծնծղա և կլարնետի պես մի գործիք, որ կոչվում է՝ դուլսային: Սանտուենյոյում զանգեր քաշելը մեծ անմտութիւնն է:

Մահես Պեդրոն, լսելով այդ, դադարեց զանգահարելուց և ասաց.

— Պարոն դոն Կիխոտ, ուշ մի՛ք դարձնի, ձերդ ողորմածութիւնն, այդ տեսակ շնչին բաների վրա և ճշգրտութեան հետևից մի՛ք ընկնի, մեկ է, չեք զըտնի: Գրեթե յուրաքանչյուր օր մեզանում ներկայացնում են կատակերգութիւններ, որոնք լի են անմտութիւններով ու անհեթեթութիւններով և, շնայած դրան, մեծ հաջողութիւն են վայելում, և հանդիսատեսները ոչ միայն ծափահարում, այլև հիանում են: Շարունակիր, տղա, թող նրանք ինչ ուզում են ասեն:

— Այո՛, դուք արդարացի եք,— պատասխանեց դոն Կիխոտը:

Տղան շարունակեց.

— Տեսեք, թե ի՞նչ բազմաթիւ և փայլուն հեծելագոր է դուրս գալիս քաղաքից՝ հետապնդելու սիրահար քրիստոնյաներին: Հնչում են դուլսային ու փողերը, թնդում ծնծղան ու թմբուկները: Ծա վախենում եմ, որ նրանք կհասնեն փախստականներին և ետ կբերեն, կապելով նրանց սեփական ձիու պոչից: Ի՞նչ սարսափելի տեսարան կլինի:

Տեսնելով իր առջև այդքան շատ մավրեր և լսելով նման դղրդոց, դոն Կիխոտը խորհեց, որ պետք է օգնութեան հասնել փախստականներին: Նա վերթուով տեղից և բարձրաձայն ասաց.

— Ծա թույլ չեմ տա, քանի կենդանի եմ, որ իմ ներկայութեամբ այդքան ստոր կերպով դավաճանեն հոշակավոր ասպետ և անահ սիրահար դոն Գայֆերոսին: Կա՛նգ առեք, անիծած սրիկաներ: Չհանդգնե՛ք հալածել և հասնել նրան, թե չէ ինձ հետ գործ կունենաք:

Ծվ, խոսքից անցնելով գործի, նա թուրը քաշեց, մեկ թռիչքով մոտեցավ բեմին և շտեմնոված կատաղութեամբ ու արագութեամբ սկսեց հարվածել մավրտիկնիկներին: Նա տապալում էր՝ գետնին, կտրում գլուխները, կտոր-կտոր անում նրանց: Իսկ մի անգամ թուրը տարավ-բերեց և այնպիսի ուժով զարկեց, որ եթե մահես Պեդրոն չպարզեր, կուշ չգար ու չթաքնվեր, դոն Կիխոտը նրա գլուխը նույնքան թեթև կթոցներ, ինչպես եթե այն նուշ ու շաքարից շինած լիներ: Մահես Պեդրոն ճշաց.

— Կա՛նգ առեք, ձերդ ողորմածութիւնն, պարոն դոն Կիխոտ, հասկացեք, որ դուք տապալում եք, կտոր-կտոր եք անում և սպանում ոչ թե իսկական, այլ թղթից շինած մավրերի: Տեր աստված, վա՛յ ինձ, ախր նա ոչնչացնում ու կործանում է իմ ողջ կարողութիւնը:

Իսկ դոն Կիխոտը, առանց ուշ դարձնելու, շարունակում էր ջարդել ու փրշորել, և նրա հարվածները տեղում էին կարկուտի պես: Ողջ թատրոնն արդեն թափվել էր գետնին, բոլոր թելերը՝ կտրտվել, բոլոր տիկնիկները՝ փշրվել, Մադրսիլիո թագավորը ծանր վիրավորվել էր, իսկ Կարլոս Մեծ կայսեր գլուխը, թագն էլ հետը՝ մեջտեղից պատռվել:

Բոլոր հանդիսատեսներն իրար անցան, կապիկը փախավ տան կտուրը, անգամ Սանչո Պանսան ահուդողի մեջ ընկավ (երբ որ արհամիրքն անցավ,

նա հավատացնում էր, որ երբեք իր տիրոջը չէր տեսել այսչափ կատաղի բարկությամբ բռնված)։

Ողջ թատրոնն ավերելուց հետո դոն Կիխոտը մի քիչ հանգստացավ և ասաց.

— Կկամենայի ես այս ըոպեիս տեսնել իմ առջև բոլոր նրանց, ովքեր շեն հավատում և շեն կամենում հավատալ, որ թափառական ասպետները մեծամեծ օգուտ են տալիս մարդկությանը։ Խորհեցեք, թե ինչ կլինեն փառավոր դոն Գայֆերոսի և չքնաղ Մելիսենդրայի ճարը, եթե պատահամբ ես այստեղ չլինեի։ Անշուշտ, այդ իսկ ըոպեին վրա կհասնեին շները և կենթարկեին նրանց ամեն տեսակ ստորացումների։ Արդ՝ կեցցե թափառական ասպետությունը, որ աշխարհիս երեսին ամեն բանից վեր է։

— Ասպետությունը կեցցե, իսկ ես՝ մեռնեմ,— ցավագին ձայնով պատասխանեց մահսե Պեդրոն։— Դեռ չի անցել կես ժամ, նույնիսկ կես ըոպե, ինչ ես թագավորների և կայսրերի իշխողն էի, ինչ իմ գոմերը, սնդուկներն ու պարկերը լի էին ձիերի և նրանց սարքերի ահագին բազմությամբ, իսկ հիմա ավերված ու ոչնչացած եմ, աղքատ ու մուրացկան, իսկ ամենից վատը՝ մնացել եմ առանց կապի։ Երևի թե ոչ այլ ոքի, քան եթե Վշտակերպ Ասպետին էր վիճակված իմ տիկնիկներին ոչնչացնել։

Մահսե Պեդրոյի խոսքերը շարժեցին Սանչո Պանսայի սիրտը, և նա ասաց.

— Մի լար և մի ցավիր, մահսե Պեդրո, սիրտդ շուտ մի տուր։ Իմացած եղիր, որ իմ տեր դոն Կիխոտը բարի և խղճմտանքով քրիստոնյա է։ Եթե նա խորհելու լինի, թե ինչ վնաս է հասցրել քեզ, նա կկարողանա և կկամենա վրձարել և վարձատրել, շահն էլ վրան։

— Եթե պարոն դոն Կիխոտը կտրած տիկնիկների գեթ մի մասի համար վճարելու լինի, ես բավարարված կլինեմ, որովհետև ինչպե՞ս կարող է իր հոգին փրկել նա, ով որ խլում է ուրիշի գույքը՝ հակառակ տիրոջ կամքի և փոխարենը չի հատուցանում։

— Դուք արդարացի եք,— պատասխանեց դոն Կիխոտը,— սակայն ինձ համար անհասկանալի է, ի՞նչ գույք եմ ես ձեզնից խլել, մահսե Պեդրո։

— Ինչպե՞ս թե,— բացականչեց մահսե Պեդրոն։— Իսկ այս գետնին ընկած փշուրները։ Ի՞նչ ուժ փշուր-փշուր արեց, եթե ոչ ձեր հզոր բազկի անհաղթելի ուժը։ Ո՞ւմ էին պատկանում այդ առարկաները, եթե ոչ ինձ։ Մի՞թե ես դրանցով չէի կերակրվում։

— Հիմա,— ասաց դոն Կիխոտը,— ես վերջնականապես այն մտքին եմ հանգում, որ քանիցս անցել է գլխովս։ Ինձ հալածող կախարդները նախ ինձ մարդիկ են ցույց տալիս իրենց բնական տեսքով, ապա փոխում ու կերպարանափոխում են նրանց իրենց ուզածի պես։ Պարոններ, ես ձեզ գուտ ճշմարտություն եմ ասում. այդ ամբողջ ներկայացումը ինձ երևաց իրականություն՝ Մելիսենդրան, դոն Գայֆերոսը, Մարսիլիոն, Կարլոս Մեծը կենդանի մարդիկ թվացին։ Ահա թե ինչու կատաղությունս բռնկեց և, որպեսզի թափառական ասպետի պարտականությունս կատարած լինեմ, վճռեցի օգնություն և պաշտպանություն ցույց տալ փախստականներին, և այս բարի մտադրությամբ ես կատարեցի այն, ինչին դուք վկա եղաք։ Իսկ եթե հակառակը դուրս եկավ, ա-

պա մեղավորը ես չեմ, այլ ինձ հալածող շարագործները: Այնուամենայնիվ, թեև իմ սխալանքը շար մտադրությունից չի բխում, ես ինքս ինձ պարտադրում եմ վճարման: Ասացեք, մաեսե Պեդրո, ի՞նչ կուզեք կոտրած տիկնիկների համար. ես պատրաստ եմ անմիջապես վճարելու:

Մաեսե դոն Պեդրոն գլուխ տվեց և ասաց.

— Դրանից պակաս բան բոլոր աղքատ ու չքավոր շրջմոլիկների ճշմարիտ օգնական պաշտպան՝ քաջարի դոն Կիխոտ Մանչացուց չէր էլ կարելի սպասել: Թող պարոն իջևանատերն ու Սանչոն լինեն գնահատողներ և միջնորդներ ձեր ողորմածության ու իմ միջև և որոշեն, թե ի՞նչ արժեն, կամ ավելի ճիշտ՝ ի՞նչ կարող են արժենալ ջարդված տիկնիկները:

Իջևանատերն ու Սանչոն համաձայնեցին:

Մաեսե Պեդրոն բարձրացրեց հատակից Սարագոսայի գլխատված Մարսիլիո թագավորին և ասաց.

— Դուք տեսնում եք, որ այս թագավորին անհնար է վերադարձնել իր նախկին վիճակը, ուստի ես կկամենայի ստանալ նրա մահվան, վախճանի և ոչնչացման համար շորս ու կես ռեալ:

— Հետո՞, — պատասխանեց դոն Կիխոտը:

Մաեսե Պեդրոն, իր ձեռքն առնելով միջից կես արած կայսր Կարլոս Մեծին, շարունակեց.

— Կարլոս Մեծի պատճած գլխի համար արդարացի կլիներ պահանջել հինգ ու մեկ քառորդ ռեալ:

— Տվեք, — ասաց դոն Կիխոտը:

— Այս տիկնիկի քիթը կոտրած է, — շարունակեց մաեսե Պեդրոն, — և աչքը ծակված: Սա չքնաղ Մելիսենդրան է, և ես, խղճի մտքը, երկու ռեալ ու տասներկու մարավեղին եմ խնդրում նրա համար:

— Թող գրողը ինձ տանի, — բացականչեց դոն Կիխոտը, — եթե հիմա Մելիսենդրան իր ամուսնու հետ Ֆրանսիայի սահմանն անցած չլինի, որովհետև նժույգը, որի վրա նրանք սլանում էին, ոչ թե վազում, այլ թռչում էր: Ուստի, խնդրում եմ, կատուն նապաստակի փոխարեն ինձ վրա չծախեք և չհավատացնեք, թե այդ քիթը կոտրած տիկնիկը Մելիսենդրան է, մինչդեռ իսկական Մելիսենդրան իր ամուսնու հետ հիմա խնդության մեջ է Ֆրանսիայում:

Մաեսե Պեդրոն տեսնելով, որ դոն Կիխոտը նորից խելագարվեց և դարձյալ իր էջն է քշում, վախենալով, որ նրան ձեռքից կզցի, ասաց.

— Սա, երևի, Մելիսենդրան չի, այլ նրա նաժիշտներից մեկնումեկը: Տրվեք տասնվեց մարավեղին, և ես գոհ կլինեմ:

Այսպիսով նա մեկը-մյուսի հետևից գնահատեց բոլոր կոտրած տիկնիկները, իսկ դատավոր-գնահատողները, երկու կողմերի հավանությամբ, կրոճատեցին նրա պահանջները, այնպես որ վնասների ընդհանուր գումարը դուրս եկավ՝ քառասուն ռեալ և երեք քառորդ, ինչը Սանչոն իսկույն հանեց քսակից: Բայց մաեսե Պեդրոն, բացի այդ, ևս երկու ռեալ պահանջեց, իբրև վարձ՝ կապիկին բռնելու համար:

— Վճարիր, Սանչո, — ասաց դոն Կիխոտը, — եթե նա չկարողանա բռնել այդ անասունին, թող գոնե հարբի անասունի պես: Բայց ես ուրախությամբ կնվիրեի երկու հարյուր ռեալ նրան, ով կարողանար ստուգապես հաղորդել

ինձ, թե տիրուհի Մելիսենդրան ու պարոն դոն Գայֆերոսը գտնվո՞ւմ են արդեն Տրանսխայում, իրենց ազգականների շրջանում:

— Ոչ ոք չի կարող ասել այդ ավելի լավ, քան իմ կապիկը,— նկատեց մանսե Պեդրոն,— միայն թե հիմա նրան սատանան էլ չի կարող բռնել: Ասենք, կարծում եմ, որ քաղցն ու սերը դեպի տերը կստիպեն նրան գիշերս ինձ որոնելու, այնպես որ լուսաբացին մենք կրկին կտեսնվենք:

Վերջ ի վերջո թատերական իրարանցումն անցավ, և ամենքը նստեցին ընթրելու հաշտ ու համաձայն: Ընթրիքը դոն Կիսոտի հաշվին էր, որի առատաձեռնությունը սահման չունեի:

Իջևանատերը, որ չէր ճանաչում դոն Կիսոտին, մնացել էր զարմացած նրա խենթությունից և առատաձեռնությունից:

Վերջապես Սանչոն, տիրոջ կարգադրությամբ, շատ լավ վճարեց իջևանատիրոջը, և հետևյալ օրը, առավոտյան ժամը ութին, նրանք հրաժեշտ տվին ու ճամփա ընկան:

#### ԳԼՈՒԽ XXXVII

### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉ ՊԱՏԱՀԵՑ ԴՈՆ ԿԻՍՈՏԻ ԵՎ ՈՐՍՈՐԴ ԳԵՂԵՑԿՈՒՀՈՒ ՄԻՋԵՎ

Իրիկնապահին դոն Կիսոտը դուրս եկավ անտառից և տեսավ մի կանաչ դաշտ, որի խորքում ինչ-որ մարդիկ կային: Մոտենալով նրանց, տեսավ, որ բազեներով որս անողներ են: Ավելի ևս մոտենալով, նրանց մեջ նկատեց մի գեղեցիկ տիկին, ձյունաթույր ձի հեծած: Չիու թամբը արծաթակապ էր, սարքը՝ կանաչ: Տիկինն էլ էր կանաչ հագած և այնքան հարուստ էր ու սիրուն, որ թվում էր գեղեցկության մարմնացում: Նրա ձախ ձեռքին բազե էր նստած: Այս նշանից դոն Կիսոտը որոշեց, որի իր առջև ազնվական անձնավորություն է, իսկ բոլոր մնացած որսորդները՝ նրա շքախումբը, ինչպես և հետագայում հաստատվեց: Նա ասաց Սանչոյին.

— Վազ տուր, Սանչո, զավակս, և այն ճերմակ ձի հեծած և բազեն ձեռքին տիկնոջը ասա, թե ես, Առյուծների Ասպետս, հարգանք խոնարհվում եմ նրա մեծ գեղեցկության առջև: Եվ եթե նրա շքեղությունը թույլ տա, ես կմոտենամ, որ համբուրեմ նրա ձեռքը և կատարեմ այն ամենը, ինչ որ նրա մեծությունը հաճի ինձ պատվիրել, որքան որ ուժերս ներեն: Միայն թե, տես, Սանչո, քաղաքավարի արտահայտվիր և ճառիդ մեջ խելքիդ փշած առածները չխցկես:

— Դուք էլ բա՛ն գտաք,— պատասխանեց Սանչոն:— Ո՞ւմ եք ասում: Առաջի՞ն անգամն է, ինչ է, որ ես ազնվազարմ տիկինների մոտ եմ գնում:

Սանչոն քշեց իր իշուկին և շու հա շու, հասավ որսորդ գեղեցկուհուն, ծնկի իջավ նրա առջև և ասաց.

— Չքնաղ տիկին, դուք տեսնո՞ւմ եք այնտեղ կանգնած Առյուծների Ասպետին: Նա իմ տերն է, իսկ ես՝ նրա զինակիրը: Տանը ինձ Սանչո Պանսա են անվանում: Ահա այդ Առյուծների Ասպետը, որ նորերս դեռ վշտակերպ



Ասպետ էր կոչվում, ուղարկել է ինձ խնդրելու, որ ձեր դ մեծութունը հաճի թույլ տալ, ձեր համաձայնութեամբ, բարեհայեցողութեամբ ու թույլտվութեամբ ներկայանալ ձեզ և կատարել իր ցանկութունը: Իսկ նրա ցանկութունը, ինչպես ինքն է հայտարարում, և ես նույնն եմ կարծում՝ ձեր դ վսեմ գեղեցկութեանը ծառայելն է: Եվ եթե այդ թույլատրվելու լինի, ապա դուք, տիկին, մեծ օգուտ կքաղեք, իսկ իմ տերը իր համար մեծ շնորհ ու հաճույք կհամարի:

— Անշուշտ, բարի զինակիր,— պատասխանեց տիկինը,— կատարելով ձեր առաքելութունը, դուք աչքաթող չարիք և ոչ մի մանրուք, որ պատշաճ է նման դեպքերում: Դե, վեր կացեք: Վայել չէ, որ վշտակերպ Ասպետի զինակիրը ծնկաչոք մնա: Վշտակերպ Ասպետի մասին մենք այս կողմերում արդեն շատ բան ենք լսել: Վեր կացեք, բարեկամ, և ասացեք ձեր տիրոջը, որ նա պատեհ ծամին հանդես եկավ և որ ես ու իմ ամուսին դուքսը ուրախ կլինենք ընդունելու նրան մեր ամառային ապարանքում, որն այստեղից հեռու չէ:

Կսելով այս հաճելի պատասխանը, Սանչոն, խորին գոհունակութեամբ, շտապեց իր տիրոջ մոտ և հաղորդեց նրան այն ամենը, ինչ որ ասաց այդ ազնււյզարմ տիկինը:

Դոն Կիխոտը շտկվեց թամբի վրա, ոտքերն ամրացրեց ասպանդակներում, ուղղեց իր երեսկալը, խթանեց Ռոսինանտին և ազնիվ հանդարտութեամբ դիմեց դեպի դքսուհին, նրա ձեռքը համբուրելու համար:

Մինչև դոն Կիխոտի տեղ հասնելը, մարդ ու կին վճռեցին հրահրել նրա տարօրինակութունները, նրա ամեն ասածին համաձայնել և վարվել հետը որպես թափառական ասպետի հետ, կատարելով բոլոր ծեսերը, որ նկարագրված են ասպետական վեպերում:

Դոն Կիխոտը բարձրացրեց երեսկալը և նշան արեց Սանչոյին, որ ուզում է իջնել ձիուց: Սանչոն ուզեց վազել, որ ասպանդակը բռնի, բայց նրա բախտը չբանեց և էշից գետին ցատկելու միջոցին փալանին կապած թուղ փաթաթվեց նրա ոտքին: Նա չկարողացավ ոտքը դուրս բերել և կախ ընկավ գլխի վայր, դեմքն ու կուրծքը հպած գետնին: Իսկ դոն Կիխոտը, սովոր լինելով, որ իջնելուց ասպանդակը բռնեն և հավատացած լինելով, որ Սանչոն արդեն մոտեցած կլինի, թափով մեկ ոտքը շուռ տվեց և մյուսով քարշ տվեց Ռոսինանտի թամբը: Ըստ երևույթին, փորկապը լավ շէր պնդացրած եղել, այնպես որ նա, թամբի հետ, թրմիաց գետին և, սաստիկ շփոթված, ատամների արանքից սկսեց անիծել չարաբաստիկ Սանչոյին, որ դեռևս իր ոտքը շէր արձակել: Դուքսը հրամայեց իր ծառաներին օգնել ասպետին էլ, զինակրին էլ: Նրանք բարձրացրին դոն Կիխոտին, որ կարգին շարդվել էր ընկնելուց: Ասպետը, կաղալով, փորձեց ծնկի գալ դքսուհու և նրա ամուսնու առջև, բայց դուքսը խանգարեց և, ձիուց ցած թռչելով, գրկեց դոն Կիխոտին ու ասաց.

— Խնդրում եմ, շնորհ բերեք, տեր իմ, Առյուծների Ասպետ, իմ դղյակը, որ մոտ է այստեղից: Դուք այնպիսի ընդունելութուն կգտնենք, որ ճշմարտապես վայել է ձեր բարձր անձին և որ ես ու դքսուհին սովոր ենք ցույց տալու բոլոր թափառական ասպետներին, որոնք մեզ մոտ հյուր են գալիս:

Սանչոն արդեն Ռոսինանտի թամբը շտկել և փորկապը ամուր կապել էր: Դոն Կիխոտը հեծավ ձին, դուքսը՝ իր փառավոր նժույզը, դքսուհին անցավ նրանց մեջտեղը, և նրանք ուղևորվեցին դղյակ:

Դքսուհին հրամայեց, որ Սանչոն իր կողքին լինի, որովհետև նրա խելացի խոսակցությունը անսահման բավականություն էր պատճառում: Սանչոն, առանց իրեն խնդրել տալու, միացավ այդ երրորդությանը և մասնակից եղավ զրույցին ի մեծ հաճույս դուքսի ու դքսուհու, որոնք մեծ բախտ էին համարում ընդունել իրենց ղղյակում նման թափառական ասպետին և նման տարօրինակ զինակրին:

Նախքան տեղ հասնելը դուքսը առաջ անցավ և կարգադրեց իր մարդկանց դոն Կիխոտի ընդունելության մասին:

Նվ ահա, երբ դոն Կիխոտը դքսուհու հետ ներս մտավ ղղյակի ընդարձակ բակը, երկու շքնաղ աղջիկ մոտեցան մեր ասպետին և նրա ուսերին նրբագույն կարմիր մահուդից թիկնոց գցեցին, և դուքսի բոլոր սպասավոր-սպասավորուհիները թափվեցին բակն ու բարձրաձայն բացականչեցին.

— Բարի գալուտ, թափառական ասպետության ծաղիկ ու զարդին:

Այդ օրը դոն Կիխոտը առաջին անգամ և վերջնականապես համոզվեց և հավատաց, որ ինքը ոչ թե մի կարծեցյալ, այլ ամենախիսկական թափառական ասպետ է, որովհետև տեսնում էր, թե բոլորը վարվում են հետը միանգամայն այնպես, ինչպես, դատելով ըստ վեպերի, անցած դարերում վարվելիս են եղել այդ կոշման ասպետների հետ:

Նրանք բարձրացան մի դահլիճ, որի պատերից կախված էին թանկագին դիպակներ և ոսկեհյուս գորգեր: Վեց աղջիկ հանեցին դոն Կիխոտի զենքուզրահը և սկսեցին սպասարկել նրան իբրև մանկլավիկներ:

Երբ որ նրա զենքուզրահը հանեցին, նա մնաց նեղ տաքատով, ուղտի բրդից կապալով, ինքը՝ երկար ու փայտի պես շոր ու ցամաք, այնպիսի փոս ընկած այտերով, որ ասես նրանք ներսից իրար համբուրելիս լինեին: Նրա տեսքն այնքան ծիծաղաշարժ էր, որ եթե նրան սպասարկող աղջիկները ճիգ չգործադրեին իրենց ծիծաղը զսպելու, ապա ծիծաղից կայաթեին:

Դոն Կիխոտը հագնվեց, գոտեպնդվեց թրով, կարմիր մահուդից թիկնոցը վրան գցեց, գլխին դրեց ծածկոց կանաչ կերպասից, որ մատուցեցին նրան սպասուհիները: Աղջիկները, կանգնած երկու շարքով, թասեր էին բռնել՝ լվացվելու համար: Այդ բոլոր արարողությունները նրանք կատարում էին բազմաթիվ ծիսական շարժումներով: Ապա ներս մտան տասներկու մանկլավիկներ արքունապետի ուղեկցությամբ, որպեսզի ասպետին առաջնորդեն սեղանատուն, որտեղ նրան սպասում էին տանտերն ու տանտիկինը:

Մանկլավիկները, շրջապատելով նրան մեծ հանդիսավորությամբ ու շքեղությամբ, այստեղից նրան տարան մի այլ դահլիճ, որտեղ ճոխ սեղան էր բացված շորս հոգու համար:

Դուքսն ու դքսուհին դիմավորեցին դոն Կիխոտին շեմքին և հրավիրեցին սեղան նստել: Տեղի տալով երկար թախանձանքներին՝ դոն Կիխոտը բազմեց պատվավոր տեղում, իսկ դուքսն ու դքսուհին նստեցին նրա աջ ու ձախ կողմից:

Սանչոն այդ տեսարանին ականատես լինելով, զարմացել ու ապշել էր այն պատիվներից, որ ազնվական անձինք տալիս էին իր տիրոջը:

Դքսուհին հարց տվեց դոն Կիխոտին՝ ունի՞ նա արդյոք տիրուհի Դուլսի-

նեայից տեղեկութիւնն և ի՞նչ հսկաներ ու ոճրագործներ է ուղարկել վերջերս նրան նվեր, երևի նա շատ-շատերին արդեն հաղթած կլինի:

— Տիրուհիդ իմ, իմ դժբախտութիւնները սկիզբ ունեցել են, բայց երևի վախճան չեն ունենալու: Ես հաղթել եմ հսկաների, ուղարկել եմ նրա մոտ ավազակներ ու շարագործներ, բայց ինչպե՞ս գտնեն նրան, քանի որ նա կախարդված է և կերպարանափոխված, դարձել է մի գեղջկուհի, որի այլանդակութիւնն աներևակայելի է:

— Զգիտեմ,— միջամտեց Սանչո Պանսան,— նա ինձ թվաց աշխարհիս ամենագեղեցիկ էակը: Համենայն դեպս, նա այնքան թեթև է, որ լարախաղացից էլ լավ է ցատկում: Ազնիվ խոսք, տիրուհի դքսուհի, հենց գետնից նա այնպես է թռչում էշի վրա, ինչպես ձեր կատուն:

— Մի՞թե դու, Սանչո, տեսել ես նրան կախարդված,— հարցրեց դուքսը:

— Բա՛ չէ,— պատասխանեց Սանչոն:— Ես առաջինը դեմ առա այդ կախարդանքին: Նա կախարդված է իմ հանգուցյալ հոր պես:

Ապա դուքսը տեղեկանալով, որ դոն Կիխոտը խոստացել է Սանչոյին մի կղզու կառավարիչ նշանակել, ասաց.

— Պարոն դոն Կիխոտին պատված լինելու համար ես հանձնում եմ ձեզ մի բավական մեծ կղզի: Գնացեք և կառավարեցեք, Սանչո բարեկամ:

— Ծնկի արի,— ասաց դոն Կիխոտը,— և համբուրիր նորին պայծառափայլութեան ձեռքը նրա արած շնորհի համար:

Սանչո Պանսան հնազանդվեց:

#### ԳԼՈՒԽ XXXVIII

### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍԱՆՉՈ ՊԱՆՍԱՆ ԴԱՐՁԱՎ ԿՂԶՈՒ ՎԱՐՁԱՊԵՏ

Դուքսը հրամաններ ու հրահանգներ արձակելով ժառանգներին ու վասալներին, թե ինչպես պիտի նրանք վարվեն Սանչոյի հետ, երբ որ վերջինս գա վարչապետի պաշտոնով իրեն խոստացված կղզին, հետևյալ օրը Սանչոյին ասաց, որ արդեն ժամանակն է ճանապարհ ընկնելու կղզին, որովհետև կղզիաբնակները սպասում են նրան՝ ինչպես գարնան անձրևին:

— Շատ բարի,— համաձայնեց Սանչոն,— ես կաշխատեմ այնպես կառավարել կղզին, որ իմ հոգին, ի հեճուկս բոլոր կողոպտիչների, ուղիղ երկինք գնա: Իմ հասակից բարձր թռչելու ընչաքաղց ցանկութիւնից և մեծ մարդ դառնալու համար չեմ գնում այդ գործին, այլ պարզապես ուզում եմ վարչապետութեան համը տեսնել:

— Եթե դուք մեկ անգամ միայն համը տեսնեք, Սանչո,— պատասխանեց դուքսը,— ապա ձեր ձեռքերն էլ այդ կերակուրի հետ կույ կտաք, որովհետև աշխարհիս երեսին ավելի քաղցր բան չկա, քան հրամայել և տեսնել, որ ձեզ հնազանդվում են: Եվ, անշուշտ, երբ որ ձեր տերը կայսր դառնա,— իսկ իրերի ընթացքից դատելով նա, իհարկե, դառնալու է,— ոչ մի ուժով հնարավոր չի

լինի խել նրա ձեռքից իշխանութունը: Իր հոգու խորքում նա ամսոսալու և վշտանալու է, որ այսքան տարի ապրել է առանց կայսր լինելու:

— Պարոն,— պատասխանեց Սանչոն,— իշխելը միշտ հաճելի է, անգամ ոչխարների հոտի վրա:

— Դուք հազարափեշակ մարդ եք,— ասաց դուքսը,— ես հույս ունեմ, որ նույնքան խելացի եք կառավարելու, որքան խելոք դատում եք: Այդքանը բավական է: Հիշեցեք, որ ոչ ուշ, քան վաղը, դուք մեկնելու եք կղզին, իսկ այդտեղյան մասի մասին մի մտածե՛ք: Եթե մի օր մտածե՛ք, որ այստեղյան կտեսնե՛ն:

— Թող ինձ ինչպես ուզում են զուգեն,— պատասխանեց Սանչոն,— ինչ շոր էլ վրաս լինի, մեկ է՝ ես նույն Սանչոն կմնամ:

Այդ միջոցին ներս մտավ դոն Կիխոտը: Երբ որ նրան հաղորդեցին բանի էությունը և հայտնեցին, որ Սանչոն շուտով ուղևորվում է կառավարելու, նա բռնեց Սանչոյի ձեռքից և, դուքսի թույլտվությամբ, տարավ նրան իր սենյակը, որ խրատ ու խորհուրդ տա, թե ինչպես պիտի վարի իր պաշտոնը:

Սանչոն իր տիրոջ խրատներն առավ և հետևյալ օրը ճամփա ընկավ: Նա գնում էր բազմաթիվ շքախմբի ուղեկցությամբ մի գյուղ, որը նրա համար պիտի վերափոխվեր կղզու:

Նոր և ճոխ զգեստներով Սանչոն նստած էր ջորու վրա, իսկ նրա կողքից գնում էր իր էջը, նոր՝ մետաքսե սարքով և արժանավայել արդուզարդով: Ժամանակ առ ժամանակ Սանչոն նայում էր իշուկին, որի ընկերակցությունը նրան այնպիսի հաճույք էր պատճառում, որ իր տեղը չէր փոխի գերմանական կայսեր տեղի հետ:

Վերջապես Սանչոն իր շքախմբով հասավ գյուղ, որը հազարի շափ բնակիչ ուներ և համարվում էր դուքսի լավագույն կալվածներից մեկը: Նրան ասացին, թե կղզին կոչվում է՝ Բարատարիա. նրա՞ համար արդյոք, որ այդ վայրը կոչվում էր Բարատարիա, թե՞ որովհետև Սանչոն կառավարելու իրավունքը ձրի ձեռք բերեց,— անհայտ է\*:

Երբ նրանք հասան գյուղի դարպասին, տեղական իշխանություններն ընդառաջ եկան: Զանգերը զողանջեցին, բնակիչները միահամուռ ցուցադրեցին մեծ ուրախություն և մեծ հանդիսավորությամբ առաջնորդեցին Սանչոյին մայր տաճարը, որպեսզի այնտեղ մաղթանք կատարեն: Ապա մի քանի ծիծաղաշարժ ծեսերից հետո հանձնեցին գյուղի բանակին և նրան ցմահ Բարատարիո կղզու վարչապետ ճանաչեցին:

Նոր վարչապետի զգեստը, մորուքը, հաստ փորը և կարճ հասակը զարմանք էին պատճառում նրանց, ովքեր չգիտեին այդ պատմության աստուղը: Ասենք, իմացողներից շատերն էլ էին զարմացած մնացել:

Վերջապես եկեղեցուց նրան տարան դատարանի դահլիճը, բազմեցրին բազկաթոռին, և դուքսի սենեկապետն ասաց.

— Տեր վարչապետ, մեր կղզում մի հին սովորույթ կա՝ ով որ դառնում է

\* Այս անունը կազմված է իսպաներեն *barato* բառից, որը նշանակում է սուտ, էժան (հեշտ հասանելի իմաստով): Հեղինակն ակնադրվում է, որ Սանչոյի կառավարելը սարքովի էր, սուտ, կեղծ: Մ. Թ.:

այս կղզու վարչապետը, պետք է պատասխանի բավական խորամանկ ու խր-  
ճրճված հարցերի: Այդ պատասխաններից բնակիչները դատում են և, այսպես  
ասած, իրենց նոր վարչապետի մտավոր ունակութունների զարկերակը շոշա-  
փում, ու դրա համեմատ կամ ուրախանում են նրա գալստյան համար, կամ  
տխրում:

Սենեկապետի ճառի միջոցին Սանչոն նայում էր իր բազմոցի դիմացի պա-  
տից կախված մեծ-մեծ գրերով մի երկար արձանագրության, իսկ որովհետև  
անգրագետ էր, ուստի հարցրեց, թե այդ ի՞նչ նշաններ են նկարված պատին:  
Նրան պատասխանեցին.

— Տեր, այնտեղ գրած ու գծած է, թե այս ինչ օրը ձերդ ողորմածութուն-  
նը դարձել է կղզու վարչապետ: Արձանագրությունն ասում է՝ «Այսօր, այսինչ  
օրը, այս ինչ ամսին, այս ինչ տարում, պարոն դոն Սանչո Պանսան դարձավ  
կղզու վարչապետը և տերը թող նրան պահպանի իշխանության գլխին բազում  
տարիներ»:

— Իսկ ո՞ւմ են դոն Սանչո Պանսա կոչում,— հարցրեց Սանչոն:

— Ձեզ, ձերդ ողորմածութուն,— պատասխանեց սենեկապետը,— քանի որ  
մեր կղզին մի հատիկ Պանսա է ժամանել, այն էլ հիմա բազմած է այս բազ-  
կաթոռին:

— Դե, նկատի առեք, եղբայր,— առարկեց Սանչոն,— որ ոչ ես, ոչ էլ մի  
ուրիշը մեր ցեղում երբեք դոն չի եղել: Ինձ պարզապես կոչում են Սանչո  
Պանսա, իմ հոր անունն էլ էր Սանչո, պապինս էլ՝ Սանչո և նրանք բոլորն էլ  
Պանսա են եղել առանց դոն ու մոնի: Ծս կասկածում եմ, որ ձեր կղզում դոնե-  
րը խճաքարից շատ են: Եթե ինձ հաջողվի այստեղ մի քանի օր վարչապետու-  
թյուն անել, բոլոր այդ դոներին կբռնեմ: Երևի նրանք այստեղ խփվածում են և  
զահլա տանում մոծակներից էլ ավելի: Դե, ձեր հարցերը տվեք, և ես խղճի  
մտքը պատասխաններս կտամ հուրախութուն թե ի վիշտ իմ ժողովրդի:

Այդ վայրկյանին դահլիճ մտան երկու ծերուկ, որոնցից մեկը ձեռքին  
հաստ ձեռնափայտ ունեւր: Երկրորդը, որ առանց ձեռնափայտի էր, ասաց.

— Տեր, ես այս բարի մարդուն տասը ոսկի եմ պարտք տվել, կամենալով  
նրան ծառայություն մատուցած լինել և սիրաշահել, այն պայմանով, սակայն,  
որ նա վերադարձնի, հենց որ ետ պահանջելու լինեմ: Շատ ժամանակ անցավ,  
և ես պարտքս չէի պահանջում, հասկանալով, որ եթե ինձնից պարտք անելու  
միջոցին նա գժվարին կացության մեջ էր, ապա, վերադարձնելով, նա առավել  
ևս ծանր կացության մեջ կընկնի: Սակայն վերջ ի վերջո ինձ թվաց, թե նա  
իսկի չի էլ մտածում իր պարտքը տալու մասին, ուստի ես մի քանի անգամ  
հիշեցրի, իսկ նա ոչ միայն փողը չվերադարձրեց, այլև ժխտում է, թե պարտք  
է արել և պնդում, թե ես երբեք նրան տասը ոսկի պարտք չեմ տվել, իսկ եթե  
երբևիցե տվել եմ, ապա նա վաղուց վճարել պրծել է: Ոչ պարտքը տալու, ոչ  
էլ վճարելու վկա կա: Ասենք, վճարում երբեք չի էլ եղել: Ծս կխնդրեի ձերդ ո-  
ղորմածութունից, ստիպել այս մարդուն երդում ուտել և, եթե նա երդվի, որ  
իր պարտքը վճարել է, ես նրանից ձեռք կքաշեմ:

— Ի՞նչ կասեք, ծերուկ,— հարցրեց Սանչոն մյուսին:

— Պարոն,— պատասխանեց մյուսը,— ես ընդունում եմ, որ նա ինձ  
պարտք է տվել: Իջեցրեք ձեր գավազանը, ձերդ ողորմածութուն, և քանի որ



Երեսուցիները հույս է դրել իմ երդումի վրա, ապա կերդվեմ, որ տվել ու վճարել եմ պարտքս լրիվ և առանց խաբեութեան:

Վարչապետը մեկնեց գավազանը, և ծերուկը իր հաստ ձեռնափայտը տրվեց մյուս ծերուկին՝ խնդրելով, որ պահի, իբրև խանգարող մի առարկա,

ինքը ձեռքը դրեց գավազանի ծայրի խաշի վրա և հայտարարեց, որ իրավ, նրան տասը ոսկի պարտք տրված է եղել, սակայն ինքը ետ է տվել, իսկ պարտապանը, մոռանալով, մի քանի անգամ նորից է պահանջել պարտքը:

Լսելով այդ, վարչապետը հարցրեց պարտքատերից, թե ի՞նչ կարող է պատասխանել հակառակ կողմի հայտարարությունը, և սա ասաց, թե պարտապանն անկասկած ճշմարիտ է ասում, որովհետև նրան ազնիվ մարդ է համարում և բարի քրիստոնյա և թե, երևի, ինքն է մոռացել՝ ե՞րբ և որտե՞ղ է ետ ստացել տասը ոսկին և որ այսուհետև այլևս այդ փողը երբեք չի պահանջի:

Պարտապանը վերցրեց իր ձեռնափայտը, գլուխ տվեց և հեռացավ դատարանից:

Սանչոն, տեսնելով, որ պարտապանը հանգիստ կերպով գնաց, իսկ հայցատերը հեզությամբ գլուխը խոնարհել կրծքին, մնացել է տեղում կանգնած, աչ ձեռքի ցուցամատը դնելով հոնքերի մեջտեղը, մի պահ մնաց մտամոլոր, ապա, բարձրացնելով գլուխը, հրամայեց, որ պարտապանին ետ բերեն:

Երբ որ նա վերադարձավ, Սանչոն նայեց նրան և ասաց.

— Ապա, բարի մարդ, տվեք ձեր ձեռնափայտը, ինձ հարկավոր է:

— Մեծ ուրախությամբ,— պատասխանեց ծերուկը,— համեցեք, տե՛ր: Սանչոն վերցրեց ձեռնափայտը, հանձնեց մյուս ծերուկին և ասաց.

— Դե գնացեք, հիմա դուք ձերն ստացաք:

— Մի՞թե, տեր իմ, այս ձեռնափայտը տասը ոսկի արժե,— հարցրեց պարտքատերը:

— Արժե,— պատասխանեց վարչապետը,— իսկ եթե ոչ՝ ապա ես աշխարհիս ամենահաստագլուխ մարդն եմ: Հիմա դուք կհամոզվեք, ընդունա՞կ եմ ես մի ամբողջ թագավորություն կառավարելու, թե ոչ:

Սի նա հրամայեց, որ բոլորի ներկայությամբ ձեռնափայտը մեջտեղից շարդեն: Հրամանը կատարվեց, և ձեռնափայտի միջից դուրս եկավ տասը ոսկին:

Բոլորը զարմացած մնացին և վճռեցին, որ նոր վարչապետը Սողոմոն իմաստունն է: Սկսեցին հարցուփորձ անել, թե ինչպես գլխի ընկավ նա, թե տասը ոսկին ձեռնափայտի մեջ է թաքցրած: Սանչոն բացատրեց այսպես՝ ծերուկը երդում ուտելուց առաջ ձեռնափայտը տվեց իր հակառակորդին և երգվեց, թե ինքը լրիվ և առանց խաբեություն վերադարձրել է պարտքը և ապա, երգվելուց հետո, իր ձեռնափայտը ետ վերցրեց: Տեսնելով այդ, Սանչոն կասկածել էր, թե պարտքը ձեռնափայտի մեջ է:

Բոլորը դարձյալ զարմացան նոր վարչապետի դատավճռից ու որոշումից: Գրագիրն այդ ամենը գրի առավ և ուղարկեց դուքսին, որ սրտատրոփ սպասում էր լուրի:

Դատավարությունից հետո Սանչոյին տարան մի շքեղ ապարանք: Մեծ դահլիճներից մեկում արքայական շուքով սեղան էր գցված:

Սանչոյի հայտնվելուն պես երաժշտություն հնչեց, և շորս մանկլավիկ նրան ջուր մատուցեցին լվացվելու համար, և նա մեծ արժանապատվությամբ կատարեց այդ արարողությունը:

Երաժշտությունը լռեց, և Սանչոն նստեց սեղան՝ պատվավոր տեղում: Ասենք, սեղանին ուրիշ տեղ էլ չկար և հացը մեկ հոգու համար էր գցած: Սանչո-

յի կողքին կանգնեց ինչ-որ մարդ՝ ձեռքին կիտոսկր. նա, ինչպես հետո պարզ-վեց, բժիշկ էր:

Վերցրին սեղանի երեսին փռած ճերմակ ընտիր գործվածքը, որ ծածկում էր բազմաթիվ ու բազմազան սկուտեղներ՝ ամեն տեսակ կերակուրներով ու մրգերով:

Մի ուրիշ մարդ, տեսքից դատելով՝ հոգևոր կոչում ունեցող, օրհնեց սեղանը: Մանկլավիկներից մեկը Սանչոյի պարանոցին կապեց ժանյակավոր անձեռոցիկ, իսկ մյուսը, որ սենեկապետի պաշտոն էր կատարում, մատուցեց նրան առաջին տեսակը՝ մի ափսե միրգ: Հազիվ էր Սանչոն մի կտոր կուլ տվել, որ բժիշկն իր կիտոսկրը կպցրեց ամանին, և իսկույն ևեթ արագ-արագ ափսեն դուրս տարան: Սենեկապետը տեղը մի ուրիշը դրեց: Սանչոն ուզեց ճաշակել, բայց հենց որ նա ձեռքը մեկնեց, որ կերակրի համը տեսնի, կիտոսկրը դարձյալ դիպավ ափսեին, և մանկլավիկը տարավ նույնքան հապճեպ, որքան և մրրգերը:

Սանչոն շվարեց: Նա նայեց շուրջը և հարցրեց, թե մի՞թե ճաշը պետք է այն եղանակով ուտել, ինչպես ներկայացնում են ձեռնածուները: Կիտոսկրը ձեռքին մարդը դրան պատասխանեց հետևյալը.

— Ոչ, տեր վարչապետ, այս կղզում ճաշում են այնպես, ինչպես ընդունված և կարգն է ուրիշ կղզիներում, որ կառավարող են ունենում: Ես բրժիշկ եմ, ոռճիկ եմ ստանում և կցված եմ վարչապետի անձին, հոգ եմ տանում նրա առողջության մասին ավելի, քան իմ: Ես գիշեր-ցերեկ աշխատում եմ, ուսումնասիրելով վարչապետին, որպեսզի հիվանդության դեպքում կարողանամ բուժել: Սակայն իմ գլխավոր պարտականությունն է ներկա լինել ճաշի և ընթրիքի միջոցին և թույլ տալ, որ նա ուտի միայն այն, ինչ որ ինձ հարմար թրվա, և հեռացնել սեղանից այն, ինչ որ, իմ կարծիքով, կարող է նրան վնաս տալ և ստամոքսը փչացնել: Ահա թե ինչու ես հրամայեցի, որ մրգերը տանեն, որովհետև նրանց մեջ շատ տամկություն կա և հեռացնեն երկրորդ կերակուրը, որովհետև շատ էր տաք-տաք և համեմատ էր, մի բան, որը ինչպես հայտնի է՝ ծարավեցնում է: Իսկ ով շատ ջուր է խմում, նա ոչնչացնում ու վերացնում է իր միջի հիմնական հեղուկը, որ պարփակում է մեր կենսական ուժերը:

— Այդ դեպքում խորոված կաքավները այնքան համեղ են պատրաստված, որ, անշուշտ, ինձ վնաս չեն տա:

Բժիշկը դրան պատասխանեց:

— Տեր վարչապետը ձեռք չի տա այդ կերակրին, քանի ես կենդանի եմ:

— Որ այդպես է,— ասաց Սանչոն,— խնդրեմ, պարոն բժիշկ, իմ առջև շարած բոլոր կերակուրներից ընտրեք այն, որ ինձ ամենից շատ օգտավետ է և ամենից քիչ վնասակար, և թույլ տվեք, որ ուտեմ, առանց ձեր կիտոսկրով ափսեին խփելու, որովհետև, վարչապետի արևը վկա՝ ես սովամահ կլինեմ: Ինչ էլ դուք ասելու լինեք, պարոն բժիշկ, ինչքան էլ բարկանալու լինեք, սակայն, զրկելով ինձ ճաշից, դուք ոչ միայն չեք երկարացնի իմ կյանքը, այլ պարզապես կսպանեք ինձ:

Ապա, թիկնելով բազկաթոռին, Սանչոն սևեռեց հայացքը բժշկին և խիստ



ձայնով հարցրեց, թե ինչպես է բժշկի անունը և որտեղ է նա ուսում առել:  
Բժիշկը պատասխանեց.

— Տեր վարչապետ, ես կոչվում եմ Պեդրո Ռեսիո դե Ադուերեո: Ես ծնվել եմ Տիրտեաֆուերա գյուղում, որ գտնվում է Կարակուելի և Ալմադովար դե Կամպոյի միջև, աջ կողմի վրա, իսկ գիտական աստիճանս ստացել եմ Օսունայի համալսարանում:

Սանչոն, կատաղությամբ բռնկված, բղավեց.

— Ահա թե ինչ, պարոն բժիշկ Պեդրո Ռեսիո դե Մալ-Ագուերո, Տիրտեաֆուերայում ծնված, որ գտնվում է աջ կողմի վրա, եթե Կարակուելից գնալու լինես Ալմադովար դե Կամպո, և Օսունայում գիտական աստիճանի արժանացած, ապա կորեք այստեղից և շուտով: Թե չէ, իմ արևը վկա, մի մահակ կը վերցնեմ և, սկսելով ձեզնից, բոլոր բժիշկներին կքշեմ կղզուց, համենայն դեպքս բոլոր տգետ բժիշկներին: Իսկ իմաստուն, փորձառու և գիտուն բժիշկներին կպահեմ աչքիս լույսի պես և կպատվեմ որպես սուրբ մարդկանց: Իսկ հիմա ուտելու բան տվեք, կամ ետ վերցրեք վարչապետութունը, որովհետև ձի պաշտոն, որը չի կարող կերակրել, լոբու հատիկ էլ չարժե:

Վարչապետին այդքան սաստիկ զայրացած տեսնելով, բժիշկը շփոթվեց և արդեն դահլիճից փախչելու վրա էր, որ փողոցում հնչեց շեփորը: Սենեկապետը դուրս նայեց լուսամուտից և, մոտենալով Սանչոյին, ասաց.

— Տեր, դուքսից սուրհանդակ է եկել, երևի որևէ կարևոր հանձնարարությամբ:

Ներս մտավ սուրհանդակը հեխե ու փոշոտ և, գրպանից մի նամակ հանելով, հանձնեց վարչապետին, իսկ Սանչոն մեկնեց սենեկապետին և հրամայեց կարդալ հասցեն:

Գրած էր՝ «Դոն Սանչո Պանսային, Բարատարիո կղզու վարչապետին: Հանձնել անձամբ նրան կամ նրա քարտուղարին»:

Սանչոն հարցրեց.

— Իսկ ո՞վ է իմ քարտուղարը:

— Ես,— պատասխանեց մեկը,— որովհետև գրել-կարդալ գիտեմ:

Նորաթուխ քարտուղարը պատվերը կատարեց և, կարդալով նամակը, հայտարարեց, որ նման գործերի մասին կարելի է խոսել միայն երես առ երես:

Սանչոն հրամայեց, որ բոլորը դուրս գան դահլիճից, ապա քարտուղարը կարդաց հետևյալ նամակը.

«Պարոն դոն Սանչո Պանսա, ես տեղեկացել եմ, որ իմ և ձեր թշնամիները հարձակում են պատրաստում ձեր կղզու վրա մոտակա գիշերներից մեկը, իսկ թե երբ՝ ինձ անհայտ է: Ուստի արթուն կացեք և հսկեցեք, որ ձեզ հանկարծակիի չբերեն: Նաև իմացա վստահելի լրտեսներիս միջոցով, որ ինչ-որ շորս հոգի, ծպտված, մուտք են գործել ձեր կղզին, մտադիր լինելով զրկել ձեզ կյանքից, որովհետև ձեր իմաստութունը նրանց երկյուղ է ներշնչում: Աչքերդ շորս դարձրեք, խուզարկեցեք ամենքին, ովքեր գալու լինեն ձեզ մոտ ընդունելության և հրաժարվեցեք բոլոր կերակուրներից, որ առաջարկելու լինեն ձեզ: Եթե ձեզ վտանգ սպառնալու լինի, ես անհապաղ օգնության կհասնեմ:

Բոլոր այդ գործերում ղեկավարվեք ձեզ հատուկ խոհեմությամբ: Գրած է մեր ղղյակում, օգոստոսի տասնվեցին, առավոտյան ժամը չորսին:

Ձեր բարեկամ  
ԴՈՒՔՍ»

Սանչոն ապուշ կտրեց, նրա մերձավորներն էլ զարմացած ձեացան: Դիմելով սենեկապետին, նա ասաց.

— Ահա թե հիմա ինչ պիտի անել, այն էլ՝ անհապաղ: Ստորեկրյա զընդանը նետել բժիշկ Ռեսոյին, որովհետև եթե մեկնումեկը մտադիր է ինձ ըսպանելու ապա, անշուշտ, նա է: Նա նյութել է ինձ համար ամենադաժան մահը՝ սովամահությունը: Հաց տվեք ինձ և մի շորս գրվանքա խաղող: Սա հո չի՞ կարող թունավորված լինել, իսկ առանց ուտելու ես չեմ կարող չոլա գնալ: Եվ եթե մենք պետք է պատրաստ լինենք մեզ սպառնացող մարտին, ապա պետք է լավ սնվենք, որովհետև քաջությունը կախված է ստամոքսից և ոչ թե ստամոքսը՝ քաջությունից: Իսկ դուք, քարտուղար, պատասխանեցեք իմ տիրոջը՝ դուքսին, և գրեցեք, որ նրա բոլոր հրամանները ճշտիվ կատարված կլինեն, առանց բան բաց թողնելու:

Իսկ հիմա, հավաքեցեք սեղանը, ինձ համար ուտելու բան բերեք, և եթե որևէ լրտեսներ, մարդասպաններ ու կախարդներ հարձակվելու լինեն ինձ վրա, ես նրանց հախիցը կգամ:

#### ԳԼՈՒԽ XXXIX

### ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԴՔՍՈՒՎՈՒ ՄԱՆԿԼԱՎԻԿԸ ՆԱՄԱԿ ՈՒ ՆՎԵՐՆԵՐ ՏԱՐԱՎ ՍԱՆՉՈ ՊԱՆՍԱՅԻ ԿՆՈՋԸ՝ ԹԵՐԵՍԱ ՊԱՆՍԱՅԻՆ

Դքսուհին, դոն Կիխոտին ծաղրելու նպատակով, ուղարկեց իր մանկավիճկներից մեկին Սանչոյի կնոջ՝ Թերեսա Պանսայի մոտ, տալով նրան մեկ նամակ իր կողմից, մյուսը՝ Սանչոյի: Բացի այդ, նա մարջանի մի երկար շարան նվեր ուղարկեց:

Մանկավիճկը խելքը գլխին և ճարպիկ տղա էր: Նա սիրով ճամփա ընկավ Սանչոյի գյուղը, կամենալով հաճոյանալ իր տերերին:

Դեռ գյուղ չմտած, նա տեսավ առվի շրում լվացք անող կանանց, որոնցից հարցրեց, չգիտե՞ն արդյոք, թե որտեղ է ապրում Թերեսա Պանսա անունով կինը, ոմն Սանչո Պանսայի, դոն Կիխոտ Մանչացի ասպետի զինակրի տիկինը: Լսելով այդ խոսքերը, լվացք անող աղջիկներից մեկը վեր կացավ և ասաց.

— Թերեսա Պանսան իմ մայրն է, իսկ Սանչոն՝ իմ հայրը, իսկ ասպետը, որի մասին ասացիք, մեր տերը:

— Որ այդպես է,— ասաց մանկավիճկը,— մոտ եկեք և առաջնորդեցեք ինձ ձեր մայրիկի մոտ, որովհետև ես նրա համար ձեր հայրիկից նամակ և նրվեր եմ բերել:

Լվացքը իր ընկերուհիներից մեկին հանձնելով, աղջիկը ինչպես որ կար, առանց կոշիկ հագնելու և շորերն ուղղելու, մի սաստյունով կանգնեց մանկլավիկի ձիու առջև ու ասաց.

— Գնացեք ուղիղ, ձերդ սղորմածություն, մեր տունը հենց գյուղի բերնին է, իսկ մայրիկս շատ է տխրում, վաղուց է, որ հայրիկիցս լուր չունի:

— Բան չկա, ես շատ բարի լուրեր եմ բերել:

Աղջիկը սաստատալով ու ցատկոտելով հասավ տուն և դեռ ներս չմտած, դռան շեմքին ճչաց.

— Դուրս արի, մայրի՛կ, մեզ մոտ ինչ-որ պարոն է եկել, որ մեր բարի հայրիկից նամակներ ու զանազան իրեր է բերել:

Այդ աղմուկի վրա դուրս եկավ նրա մայրը՝ Թերեսա Պանսան, որ կտավի թել էր մանում: Տեսքից նա քառասունվեց անց կլիներ, բայց ծեր շէր թվում, ամրակազմ, ջլուտ ու թուխ կին էր:

Տեսնելով իր աղջկան և հեծյալ մանկլավիկին, նա հարցրեց.

— Ի՞նչ կա, աղջիկս, ո՞վ է այդ պարոնը:

— Իմ տիրուհի դոնյա Թերեսա Պանսայի խոնարհ ծառան,— պատասխանեց մանկլավիկը:

Այս խոսքերն ասելով նա վար ցատկեց ձիուց և ակնածությամբ ծնկի եկավ տիրուհի Թերեսայի առջև:

— Ողջունում եմ ձերդ սղորմածությանը, Բարատարիտ կղզու լիազոր վարչապետ, պարոն դոն Սանչո Պանսայի սեփական և օրինական տիկնոջը:

— Ախ, պարոն, հերիք է: Այդ ի՞նչ եք անում,— պատասխանեց Թերեսան:— Ես հո պալատական տիկին չեմ, այլ հասարակ գեղջկուհի, ունչպարի աղջիկ և թափառական ասպետի զինակրի կին:

— Ոչ, ձերդ սղորմածություն,— ասաց մանկլավիկը,— դուք ամենաարժանավոր վարչապետի արժանավորագույն ամուսինն եք: Իմ խոսքերի ճշմարտության մեջ համոզվելու համար ընդունեցեք, ձերդ սղորմածություն, այս նամակներն ու նվերները:

Այստեղ նա գրպանից հանեց մարջանի մանյակը՝ մեծ-մեծ ոսկի հատիկներով և, զցելով նրա պարանոցին, շարունակեց.

— Ահավասիկ մի նամակ պարոն վարչապետից: Ինձ ձեզ մոտ ուղարկողը դքսուհին է, որ կարգադրել է հանձնել ձեզ մարջանը և մի նամակ:

Թերեսան ապուշ կտրեց, իսկ աղջիկը առավել ևս:

— Կարդացեք ինձ համար, ձերդ սղորմածություն, պարոն ազնվական,— ասաց Թերեսան,— թե՛ մանելում վարպետ եմ, գիր կարդալում՝ խեղճ:

Մանկլավիկը կարդաց Սանչոյի նամակն էլ, դքսուհունն էլ:

— Ա՛խ,— գոչեց Թերեսան,— ի՞նչ բարի, պարզ ու պարկեշտ տիրուհի է նա:

— Ձեր սիրտը ավելի ևս կուրախանա,— ասաց մանկլավիկը,— եթե դուք այս կապոցն էլ բանաք: Մեջը նրբագույն մահուդից զգեստ է, որ վարչապետը միայն մեկ անգամ է հագել որսի գնալուց, իսկ հիմա ուղարկում է տիկին Սանչայի համար:

Այնինչ Թերեսան, նամակները ձեռքին, մանյակը՝ պարանոցին, վազեց փողոց, մատներով խփելով նամակներին, ինչպես դափ են խփում և պատահ-

մամբ հանդիպելով քահանային ու Սամսոն Կարրասկոյին, սկսեց պար գալով խոսել.

— Հիմա մենք վարչապետ ենք, հա՛:

— Ի՞նչ է պատահել, Թերեսա Պանսա: Ի՞նչ ես խենթացել, այդ ի՞նչ թղթեր են ձեռքիդ:

— Իսկի էլ չեմ խենթացել, իսկ ձեռքիսն՝ նամակներ են դքսուհիներից ու վարչապետներից, վզիս էլ՝ իսկական մարջանից «տերողորմյա»:

— Ասելդ ի՞նչ է, Թերեսա, բան չենք հասկանում:

— Առեք, ինքներդ տեսեք, — պատասխանեց Թերեսան և պարզեց նրանց նամակները:

Քահանան բարձր կարդաց նամակները, որ Սամսոն Կարրասկոն էլ լսի: Նրանք նայեցին իրար, զարմացած կարդացածից, իսկ բակալավրը հարցրեց, թե ո՞վ է բերել նամակները: Թերեսան առաջարկեց նրանց գալ իրենց տուն և տեսնել սուրհանդակին՝ նա մի նվեր էլ է բերել, որ գին չունի:

Քահանան հանեց Թերեսայի պարանոցից մարջանը, ձեռքին շուռումուռ տվեց և համոզվելով, որ իսկական է, ավելի զարմացավ ու ասաց.

— Երդվում եմ կարգովս, չգիտեմ ինչ խոսեմ և ինչ խորհեմ այդ նամակների և նվերների մասին:

Թերեսան նրանց հետ վերադարձավ տուն:

Նրանք որ հասան, մանկլավիկը գարի էր մաղում իր ձիու համար, իսկ Սանիչկան ճարպ էր կտրում, որ ձվածեղ անի, սուրհանդակին հյուրասիրի:

Մանկլավիկի արտաքինը և սիրուն զգեստը դուր եկավ նկվորներին, և նրանք իրար քաղաքավարի բարեկեցին, ապա Սամսոնը հարցրեց հյուրից, թե ի՞նչ նորութուն կա դոն Կիխոտի և Սանչո Պանսայի մասին, ավելացնելով, որ իրենք արդեն Սանչոյի և դքսուհու նամակները կարդացել են, բայց այնուհանդերձ մտամոլոր են և չեն կարողանում ըմբռնել, թե այդ ի՞նչ վարչապետութուն է ձեռք բերել Սանչոն և ի՞նչ կղզի է:

Մանկլավիկը պատասխանեց.

— Որ պարոն Սանչո Պանսան վարչապետ է, ոչ մի կասկած չի կարող լինել: Իսկ կղզի՞ է կառավարում, թե չէ՞ դատել չեմ կարող: Սակայն այն էլ բավական է, որ այդ վայրը հազար մարդուց ավելի բնակչություն ունի:

Քահանան ու բակալավրը շատ լավ ըմբռնեցին, որ մանկլավիկը ծաղրում է, բայց իսկական մարջանն ու Սանչոյի ուղարկած որսորդական զգեստը նրանց շփոթեցնում էին:

— Այսպիսով, ձերդ ողորմածութուն, պարոն, — բացականչեց բակալավրը, — դուք շարունակում եք պնդել, թե Սանչոն իսկապես վարչապետ է և որ աշխարհիս երեսին իրոք գոյություն ունի այն դքսուհին, որը նրա կնոջը նամակ է գրում և նվերներ ուղարկում: Մենք ձեռքերով շոշափել ենք նվերները և նամակները կարդացել, բայց և այնպես հրաժարվում ենք հավատալ և ենթադրում ենք, թե դա մեր հայրենակից դոն Կիխոտի արկածներից է, որը, ինչպես հայտնի է, համարում է, որ իրեն ամեն ինչ պատահում է ոչ այլապես, քան կախարդական եղանակով: Ահա թե ինչու ես գրեթե պատրաստ եմ ասելու, որ կկամենայի ձեռք տալ և շոշափել ձերդ ողորմածությանը, որպեսզի պարզեմ, ո՞վ եք դուք՝ երևակայական դեսպան, թե միս ու ոսկորից մարդ:

— Պարոններ,— պատասխանեց մանկլավիկը,— ես իսկական դեսպան եմ, պարոն Սանչո Պանսան իրոք վարչապետ է, իմ պարոնները՝ դուքսն ու դքսուհին, ի վիճակի են շնորհելու և շնորհել են նրան վարչապետութուն և, ըստ լուրերի, Սանչոն իր գործը ամենալավ կերպով է կատարում: Կա՞ այստեղ կախարդանք, թե ոչ՝ ինքներդ դատեցեք: Իմ ասածը զուտ ճշմարտութուն է, եթե չեք հավատում թող ձեզանից մեկնումեկը, պարոններ, հետս գա և նրա աչքերը կտեսնեն այն, ինչին չեն հավատում ականջները:

Կարրասկոն առաջարկեց Թերեսային ստացած նամակներին պատասխան գրել: Սակայն Թերեսան չկամեցավ, որ բակալավրը խառնվի իր գործերին: Նա երկու ձու և հաց տվեց տիրացուին, որը երկու նամակն էլ գրեց, մեկը՝ ամուսնուն, մյուսը՝ դքսուհուն:

## ԳԼՈՒԽ XL

### ՈՐ ՊԱՏԱՐՈՒՄ Է ՍԱՆՉՈ ՊԱՆՍԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՇՏԱԼԻ ՎԱՆՇՄԱՆԻ ՄԱՍԻՆ

Իր վարչապետության յոթերորդ գիշերը Սանչոն պառկած էր անկողնում, կուշտ՝ ոչ թե հաց ու գինով, այլ դատ ու դատավճիռներով, իր հրապարակած հրովարտականերով ու օրենքներով, և արդեն նինչն սկսել էր փակել նրա աչքերը, երբ մի այնպիսի խլացուցիչ աղաղակ բարձրացավ ու զանգերի ղողանջ, որ նրան թվաց, թե ողջ կղզին խորտակվում է:

Նա նստեց մահճակալին և սկսեց ուշի-ուշով ականջ դնել, աշխատելով գլխի ընկնել, թե ի՞նչը կարող է այս մեծ իրարանցումի պատճառը լինել: Սակայն նա բան չէր կարողանում հասկանալ, որովհետև զանգերի ղողանջին և աղաղակներին շուտով խառնվեցին անթիվ փողերի և թմբուկների ձայներ, որ ավելի ևս շփոթեցրին Սանչոյին և ահ ու սարսափով պատեցին նրան:

Նա վեր կացավ տեղից, հողաթափերը հագավ (որովհետև հատակը խոնավ էր) և, առանց վրան խալաթ կամ նման բան գցելու, մոտեցավ իր ննջարանի դռանը այն իսկ վայրկյանին, երբ սրահ խուժեցին մոտ քսան մարդ, վառ ջահերն ու մերկ թրերը ձեռքներին, ու գոռացին.

— Զինվեցե՛ք շուտով, տեր, եթե չեք կամենում կործանել ողջ կղզին:

— Ինչի՞ համար զինվեմ,— պատասխանեց Սանչոն:— Մի՞թե ես զենքից ու պաշտպանութունից բան եմ հասկանում: Այդ գործը ավելի լավ կլիներ հանձնել իմ տիրոջը՝ դոն Կիխոտին: Նա մեկ հարվածով վերջ կտար, և դուք անվտանգ կլինեիք: Իսկ ես, ինչ մեղքս թաքցնեմ, այդ խառնաշփոթութունից գլուխ չեմ հանում:

— Օ, տեր վարչապետ, այդ ի՞նչ անտարբերութուն է: Զինվեցեք, ձեր ողորմածութուն, մենք ձեզ համար և հարձակվելու, և պաշտպանելու զենքեր ենք բերել: Դուրս եկեք հրապարակ, եղեք մեր առաջնորդն ու զորավարը, որովհետև իրավամբ ձեզ է վայելում այդ կոչումը, քանի որ դուք մեր վարչապետն եք:

— Շատ բարի, զինեցեք,— պատասխանեց Սանչոն:

Իսկույն բերին երկու մեծ վահան, որ նախապես պատրաստել էին և, առանց թույլ տալու, որ Սանչոն շորերը հագնի, մեկ վահանը՝ առջևից, մյուսը՝ հետևից, ամուր կապեցին: Վահաններով սեղմված, ինչպես տախտակներով, նա իլիկի պես ուղիղ կանգնել էր, անկարող լինելով ոչ ծունկ ծռել, ոչ քայլել: Նրա ձեռքը մի նիզակ տվին, որի վրա հենվեց, որ վայր չընկնի: Այդպես զարդարելով նրան, առաջարկեցին ճամփա ընկնել, առաջնորդել և արիացնել մարտիկներին: Նրանք ավելացրին, թե ամեն ինչ լավ կվերջանա, եթե նա կողմնացույց, լապտեր և լուսատու լինի:

— Ինչպե՞ս գնամ, խեղճ ողորմելիս,— քացականչեց Սանչոն,— քանի որ անկարող եմ ծնկներս շարժել: Այս տախտակները մխրճվում են մարմնիս մեջ և կաշկանդում ինձ: Ձեզ մնում է միայն, որ ինձ ձեռքերի վրա տանեք-կանգնեցնեք կամ պառկեցնեք որեէ դուան արանքում, որ ես պաշտպանեմ նիզակով կամ մարմնովս:

— Եկեք, տեր վարչապետ, ձեզ ոչ թե տախտակներն են կաշկանդում, այլ երկյուղը: Շուտ արեք, եկեք, ուշ է արդեն, թշնամու թիվն էլ հա՛ աճում է, ազմուկն ավելանում, և աղետը վրա է հասնում:

Նրանք այնպես էին համոզում ու հայհոյում, որ խեղճ վարչապետը, վճռելով վերջապես շարժվել, թրմփաց գետնին այնքան ուժեղ, որ թվում էր, թե փշուր-փշուր եղավ: Նա մնաց պառկած գետնին, ինչպես կրիան, կծկված ու ներփակված իր պատյանի մեջ, կամ խոզի բուդ, երկու տաշտի արանքում, կամ թե ավազով լեցուն մակույկ: Անգամ Սանչոյի վայր ընկնելուց հետո զվարճասերները նրան մազաչափ չխղճացին, ընդհակառակն, հանգցրին ջահերը, սկսեցին գոռալ ավելի ուժգին, ավելի մոլեգին զենքի կոշիկ և տրորել խեղճ Սանչոյին, թրերով անընդհատ զարկելով նրա վահաններին, այնպես որ եթե խեղճ վարչապետը գունդուժկիկ շղառնար, գլուխը ներս քաշելով վահանների մեջ, նրա բանը բուրդ կլիներ: Ամեն կողմից սեղմված, քափ ու քրտինք կտրած, նա հոգով-սրտով աղոթում էր աստծուն և աղաչում, որ դուրս բերի իրեն այս կրակից: Ոմանց ոտքը դեմ էր առնում նրա վահանին, ոմանք գրլորվում էին նրա վրա, իսկ մարդու մեկն էլ բարձրացավ նրա վրա և ասես թե պահակային աշտարակից, երկար ու բարակ հրամաններ էր արձակում զորքին, բարձրաձայն աղաղակելով:

— Մերո՛նք, վազեք այստեղ, թշնամին այս կողմի վրա է գրոհում: Պահակ դրեք այն մուտքի մոտ, դարպասը փակեցեք, գերաններով ծածկեցեք սանդուղքները: Ձյութ ու կրի ամանները բերեք, կաթսաների մեջ եռման յուղ, ձեթ ու կուպր ածեցեք: Փողոցները փակեք ներքնակներով:

Մի խոսքով, նա ամեն տեսակ ուղղակի պարագանների և նյութերի անուններ էր տալիս, որոնցով սովորաբար պաշտպանում են քաղաքները պաշարման պահին, մինչդեռ կիսաշունչ Սանչոն այդ ամենը լսում, համբերում ու ինքն իրեն ասում էր.

— Ախ, աստված տար շուտով այս կղզին թշնամիները գրավեին, իսկ ես կամ մեռնեի, կամ ազատվեի այս գահրումարից:

Երկինքն անսաց նրա աղերսանքին, և ահավասիկ, երբ որ նա ամենից քիչ էր սպասում, հնչեցին բարձրաձայն աղաղակներ.

— Հազթուխո՛ւն, հազթուխո՛ւն, թշնամին հաղթված է: Վեր կացե՛ք, տեր

վարչապետ, ձերդ ողորմածութիւն, համեցեք, վայելեցեք հաղթանակի պտուղները և բաժանեցեք ավարը, որ արի և անհաղթ ձեռքով մենք խլել ենք թշնամուց: — Վեր կացրեք ինձ,— տանջված ու ցավագին ձայնով ասաց Սանչոն: Նրանք օգնեցին և, ոտքի կանգնելով, նա ասաց.

— Ավար բաժանել չեմ ուզում: Իսկ եթե ձեզանից մեկնումեկը ինձ մի կում գինի տա և քրտինքս սրբի...

Մանչոյի վրայից վահանները հանեցին, նրա մարմինը սրբեցին և գինի բերին:

Նա նստեց մահճակալի վրա և ուշագնաց եղավ ահից, ցնցումից և հոգնածութիւնից: Այդ կատակը սարքողներն արդեն սկսեցին գղջալ, գտնելով, որ կատակը կոպիտ դուրս եկավ: Սակայն նրանց տխրութիւնը երկար չտևեց, որովհետև վարչապետը շուտով ուշքի եկավ և հարցրեց, թե ժամը քանի՞սն է: Նրան պատասխանեցին, թե արդեն լուսը քացվում է: Նա ոչ մի խոսք չարտասանեց և, լուռումունջ, սկսեց շորերը հագնել: Բոլորը սպասում էին, թե նրա արագ-արագ հագնվելու վերջն ինչ պիտի լինի:

Վերջապես Սանչոն հագնվեց ու դանդաղ քայլերով, որովհետև նա այնքան շարդված էր, որ ավելի արագ շարժվել չէր կարող, գնաց դեպի գոմ, ուր նրա հետևից գնացին բոլոր մերձավորները:

Սանչոն մոտեցավ իր իշուկին, գրկեց, քնքշորեն համբուրեց նրա ճակատը և, արցունքն աչքերին, ասաց.

— Իմ ընկերս, բարեկամս և օգնականս գործերիս և աղետներիս պահին: Երբ որ ես քեզ հետ էի ապրում, իմ բոլոր մտքերը կլանում էր քո սարքը նորոգելու, քո որովայնը սնելու հոգսը: Ծշմարիտ, երջանիկ էին իմ ժամերը, օրերն ու տարիները: Բայց քեզ լքեցի թե չէ, բարձրացա փառասիրութեան և պարտութեան աշտարակը, հոգիս պատեցին հազար ու մի ցավեր, հազար ու մի հոգս և շորս հազար հուզմունք:

Այդ խոսքերն արտասանելով, նա միաժամանակ փախանում էր էշին:

Բոլորը լուռ էին:

Էշին փախանելուց հետո Սանչոն, տնքտնքալով, ախ ու վախով, նստեց վրան և դառնալով սենեկապետին, քարտուղարին, բժիշկ Պեդրո Ռեսիոյին և մյուսներին, ասաց.

— Ծամփա տվեք, սիրալիր պարոններ, թույլ տվեք, որ ես վերադառնամ իմ նախկին կյանքին: Թույլ տվեք, գնամ-որոնեմ իմ անցյալ կյանքը, որպեսզի հարութիւն առնեմ իմ այժմյան մահվանից: Ես վարչապետ լինելու, թշնամիներից կղզի ու քաղաք պաշտպանելու համար չեմ ծնված: Իմ խելքն ավելի լավ է կտրում, թե ինչպես պետք է վարել, փորել հողը, էտել խաղողի որթը, քան թե հրատարակել օրենքներ և պաշտպանել պետութիւնը: Ինձ ավելի կվայելի ձեռքիս մանգաղ բռնել, քան վարչապետի գայիսոն: Ես գերադասում եմ պառկել կաղնու հովանու տակ, իսկ ձմեռը փաթաթվել ոչխարի մորթու մեջ, քան այս վարչապետական տաժանքը կրել, քնել հոլանդական սավանի վրա և սամույրի մուշտակ հագնել: Հաղորդեցեք իմ տիրոջը՝ դուքսին, որ ես ծնվել եմ մերկ և մերկ էլ մնացել եմ, ոչինչ չեմ տարել և տանուլ չեմ տվել: Ասելս այն է, որ ես դատարկ գրպանով սկսեցի պաշտոնավարել և դատարկաձեռն էլ թողնում եմ պաշտոնս: Սովորաբար, ուրիշ կղզիներում վար-

չապետները այլ կերպ են վարվում: Դե, ճամփա տվեք, ես գնում եմ բժշկվեմ, որովհետև առողջ տեղ չի մնացել վրաս:

— Հնարավոր բան չէ, պարոն վարչապետ,— բացականչեց բժիշկ Ռեսի-  
ոն,— ես ձեր դողորմածութեանը դեղ կտամ, որը կվերադարձնի ձեզ ձեր  
նախկին ուժն ու առողջութիւնը:

— Ուշ է, ուշ,— պատասխանեց Սանչոն:— Ավելի շուտ ես թուրք կդառ-  
նամ, քան կփոխեմ իմ որոշումը: Ես Պանսաների ցեղից եմ, որ համառ մար-  
դիկ եմ: Եթե մեզանից մեկնումեկն ասել է, թե սա կենտ է, կնշանակի կենտ է,  
թեկուզ զույգ է:

Սենեկապետն ասաց.

— Տեր վարչապետ, մենք ամենայն պատրաստակամութեամբ ձեզ բաց  
կթողնենք, թեև շատ ծանր է մեզ համար զրկվել ձեզանից: Սակայն ամենքին  
հայտնի է, որ յուրաքանչյուր վարչապետ, նախքան պաշտոնավայրից հեռանա-  
լը, պարտավոր է հաշիվ ներկայացնել: Ներկայացրեք, ձեր դողորմածութիւն,  
ձեր կառավարչութեան տասն օրվա հաշիվը և ապա՝ գնացեք խաղաղութեամբ:

— Ինձնից ոչ ոք հաշիվ պահանջելու իրավունք չունի,— պատասխանեց  
Սանչոն,— բացի ինձ լիազորող անձից, տեր դուքսից: Հիմա ես նրա մոտ եմ  
գնում և նրան հաշիվ կներկայացնեմ: Ասենք, ես այստեղից տկլոր եմ գնում,  
էլ ի՞նչ փաստաթղթեր և փաստարկումներ են պետք ապացուցելու համար, որ  
ես հրեշտակի պես եմ կառավարել:

— Ազնիվ խոսք, արդարացի է մեծն Սանչոն,— բացականչեց բժիշկ Ռե-  
սիոն:— Իմ կարծիքով, մենք կարող ենք նրան բաց թողնել, որովհետև դուք-  
սին մեծ հաճույք կպատճառի տեսակցութիւնը նրա հետ:

Բոլորը համաձայնվեցին և թույլ տվին, որ Սանչոն գնա, նախապես առա-  
ջարկելով նրան պատվավոր պահակ և այն ամենը, որպեսզի ճամփորդութիւ-  
նը հարմար ու հաճելի լինի: Սանչոն պատասխանեց, թե իր էջի համար կու-  
զենար գարի ստանալ, իսկ իրեն համար հաց ու պանիր, քանի որ ճանապարհ-  
ը երկար չէ, ուստի ավելի առատ և ավելի ընտիր պաշարի կարիք չունի:

Բոլորը հերթով գրկեցին նրան: Նա էլ, արցունքն աչքերին, գրկեց նրանց  
և հեռացավ:

ԳԼՈՒԽ XLI

ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է,

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԴՈՆ ԿԻՒՍՈՏԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԴՈՒՔՍԻՆ

ԵՎ ՍԱՆՉՈ ՊԱՆՍԱՅԻ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ԳՅՈՒՂ

Դոն Կիխոտը որոշեց, որ ժամանակն է արդեն վերջ տալու պարապ կյան-  
քին, որ վարում էր դժակում: Նրան մեծ հանցանք էր թվում ապրել մեղկ կյան-  
քով, անվերջանալի խնջույքների և զվարճութիւնների մեջ, որ դուքսն ու դքս-  
սուհին սարքում էին նրա համար որպես թափառական ասպետի: Նա խորհում  
էր, թե երկնքում ստիպված պիտի լինի խստիվ հաշիվ տալ այդ պարապ ու  
ծուլ օրերի համար: Ուստի մի գեղեցիկ օր նա դուքսից ու դքսուհուց հեռանալու



Թույլտվութիւնն խնդրեց: Նրանք թույլ տվին, բայց և խորին վիշտ հայտնեցին նրա գնալու առիթով: Դքսուհին հանձնեց Սանչոյին նրա կնոջից ստացված նամակը: Սանչոն, արցունքն աչքերին, ասաց.

— Ո՞վ կարող էր կարծել, որ իմ կնոջ՝ Թերեսա Պանսայի, կրծքում ծագած մեծամեծ հույսերը՝ իմ վարչապետութեան լուրն առնելուց, նրանով պիտի վերջանան, որ ես նորից վերագառնամ իմ տեր դոն Կիխոտ Մանչացու կործանիչ արկածներին:

Դոն Կիխոտը գնալու նախօրյակի երեկոյան հրածեղտ տվեց դուքսին և դքսուհուն, ու վաղ առավոտյան, տպառազինված, դուրս եկավ դղյակի առջևի հրապարակը: «Դղյակի ողջ բնակչութիւնը դուրս թափվեց, ասենք դուքսն ու դքսուհին էլ դուրս եկան՝ նայելու նրանց: Սանչոն նստել էր իր էշին, ճամփորդական պայուսակն ու պաշարեղենով լի խուրջինը հետը ուրախ-զվարթ, որովհետև դուքսի սենեկապետը նրան ճամփի ծախսերի համար, առանց դոն Կիխոտի գիտութեան, մի քսակ էր տվել, մեջը՝ երկու հարյուր ոսկի:

Դոն Կիխոտը գլուխ տվեց դղյակի տերերին, ապա և մնացյալներին ու Ռոսինանտի գլուխը շրջելով, ճանապարհ ընկավ Սանչոյի ուղեկցութեամբ:

Երբ որ նրանք ելան արձակ դաշտ, դոն Կիխոտն զգաց իրեն ազատ, իր տարերքում և զգաց մեջը նոր ուժ իր ասպետական գործերը կատարելու համար: Շրջվելով դեպի Սանչոն, նա ասաց.

— Ազատութիւնը, Սանչո, մեծագույն բարիքներից մեկն է, որ երկինքը շնորհել է մարդուս: Նրան շին հասնի բոլոր գանձերը, որ պարփակված են հողի ծոցում կամ թաքնված ծովի հատակին: Ազատութեան, ինչպես և պատվի համար կարելի է և անհրաժեշտ, որ մարդս վտանգի ենթարկի իր կյանքը: Ընդհակառակն՝ գերութիւնը մարդուս հասած շարիքներից վատթարագույնն է: Դու ինքդ տեսար, Սանչո, թե ինչ շքեղ և փառավոր ընդունելութիւն ցույց տվեցին մեզ դղյակում, որ մենք թողինք հեռացանք: Սակայն այն ընտիր խորտիկներն ու զովացուցիչ խմիչքներն առջևիս՝ ինձ թվում էր, թե ինձ կեղեքում է քաղցը, որովհետև ես չէի ճաշակում դրանք այնպիսի ազատութեամբ, ինչպես կվայելի, եթե իմը լինեին: Պարտականութիւնները, որ դնում են բարեգործութիւնն ու շնորհները՝ պիրկ կապանք են, որ կաշկանդում են հոգու ազատութիւնը: Երջանիկ է նա, ում երկինքը տվել է մի կտոր հաց, որի համար նա ոչ ոքի պարտական չէ, բացի իրենից:

Այդ և հետևյալ օրը նրանք անցկացրին ճամփին և ամբողջ այդ ժամանակամիջոցում այնպիսի բան չպատահեց, որ արժանի լիներ հիշատակութեան:

Վերջապես նրանք հասան իրենց գլուղը և, մտնելուն պես, հանդիպեցին քահանային ու բակալավր Կարրասկոյին: Քահանան ու բակալավրը իրկույն ճանաչեցին մեր թափառականներին և գրկազբաց վազեցին ընդառաջ: Դոն Կիխոտը իջավ ձիուց և ամուր գրկեց բարեկամներին:

Ասպետն ու ղինակիրը քահանայի ու բակալավրի հետ ուղևորվեցին դոն Կիխոտի տունը, որի շեմքին կանգնած էին դոն Կիխոտի զարմուհին ու տընտեսուհին:

Լուրը հասավ Թերեսա Պանսային, որը զզված մազերով, կիսահագնւրված, իր աղջիկ Սանիչկայի ձեռքից բռնած, վազելով եկավ, որ դիմավորի



ամուսնուն: Տեսնելով նրան հագնված ավելի աղքատ, քան վայել է վարչապետին, նա գոչեց.

— Տեսքդ ի՞նչ է, ա՛յ մարդ: Ասես ոտով եկած լինես: Զարգվածի պես ես ման գալիս: Իսկի վարչապետի տեսք չունես:

— Սուս, Թերեսա,— պատասխանեց Սանչոն,— տուն գնանք, ես քեզ հրաշք բաներ կպատմեմ: Գլխավորն այն է, որ հետս փող եմ բերել, իմ խելքով մտքով աշխատած, առանց մեկին կեղեքելու:

Սանիչկան գրկեց հորը և հարցրեց, թե ինչ է բերել իր համար: Աղջիկն սպասում էր նրան, ինչպես մայիսի անձրևին:

Կինը բռնեց Սանչոյի ձեռքից, մյուս կողմից աղջիկը՝ նրա գոտիից, և, էշն առաջներն արած, նրանք գնացին տուն, թողնելով դոն Կիխոտին իր զարմուհու և տնտեսուհու խնամքին, քահանայի ու բակալավրի հետ:

Դոն Կիխոտը, չկամենալով անգամ մեկ ժամ կորցրած լինել, իսկույն քահանայի և բակալավրի հետ առանձնացավ և հաղորդեց նրանց, թե որոշել է մեկ տարի հովիտի կյանք վարել՝ թափառել դաշտում, մենուֆյան մեջ, անձնատուր լինել իր նվիրական անուրջներին և վարժվել խաշնարածի առաքինի կենցաղին: Ու հարցրեց նրանցից՝ չէի՞ն կամենա արդյոք ընկերանալ իրեն, եթե շնն ծանրաբեռնված ավելի կարևոր հոգսերով:

Բարեկամները մնացին զարմացած դոն Կիխոտի այս նոր խելագարությունից: Սակայն, հուսալով, որ այդ տարվա ընթացքում նա կբուժվի, համաձայնվեցին այս նոր ձեռնարկին, հավանություն տվին այս անմտությանը, իբրև բանական մտադրության և խոսք տվին մասնակցելու:

Բարեկամները հրաժեշտ տվին դոն Կիխոտին, խորհուրդ տալով և խնդրելով, որ նա հոգ տանի իր առողջության մասին և կատարի այն ամենը, ինչ պահանջվում է դրա համար:

Ճակատագրի բերումով, այդ խոսակցությունը լսեցին դոն Կիխոտի զարմուհին ու տնտեսուհին: Քահանան ու բակալավրը դուրս եկան թե չէ, նրանք երկուսով ներս մտան և ասացին.

— Այդ ի՞նչ կնշանակի, քեռի: Մենք կարծում էինք, որ դուք վերջնականապես եք տուն դարձել, որ խաղաղ ու պատվավոր կյանք վարեք, իսկ դուք մտադիր եք նետվելու նոր քառսի մեջ:

Տնտեսուհին ավելացրեց.

— Իսկ ձերդ ողորմածությունը ի վիճակի կլինի՞ տանելու ամառային շոգը, ձմեռվա մառախլապատ գիշերներն ու գայլերի ոռնոցը: Իհարկե, ոչ: Որովհետև դա ամուր և դիմացկուն մարդկանց զբաղմունք է, որոնք ընտրել են այդ գործը, կարելի է ասել, մանուկ հասակից: Եթե շարյաց փոքրագույնը ընտրելու լինենք, ապա ավելի լավ է թափառական ասպետ լինել, քան հովիտ: Ուշքի եկեք, պարոն, և հետևեցեք իմ խորհրդին, որովհետև ես կուշտ ու հարբած չեմ խորհուրդ տալիս, այլ բան չկերած և աշխարհիս երեսին կես դար ապրելուց հետո: Մնացեք տանը, զբաղվեցեք ձեր տնտեսությամբ, ավելի հաճախ խոստովանեցեք, աղբատներին ողորմություն տվեք, և մեղքը իմ հոգու վրա, եթե ամեն ինչ դեպի լավը ջգմա:

— Սուս արեք, աղջկերք,— ասաց դոն Կիխոտը,— ես ինքս գիտեմ իմ անեւիբբ: Անկողինս պատրաստեցեք, քեֆս, կարծես, լավ չէ: Հավատացած եղեք, որ ինչ էլ դառնալու լինեմ՝ թափառական ասպետ, կամ, եթե հաջողվի, հովիտ, ես միշտ հոգ եմ տանելու ձեր կարիքների մասին, ինչպես դուք կտեսնեք իրականում:

Բարի կանայք նրան պառկեցրին անկողնում, կերակրեցին և խնամեցին ամենահոգատար կերպով:

ՈՐ ՊԱՏՄՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԴՈՆ ԿԻՒՈՏԸ ՀԻՎԱՆԴԱՑԱՎ,  
ԿՏԱԿ ԳՐԵՑ ԵՎ ՎԱՆԾԱՆՎԵՑ

Այս աշխարհում հավիտենական ոչինչ չկա: Ամեն ինչ իր արշալույսից թեքվում է դեպի մայրամուտ, մանավանդ՝ մարդկային կյանքը: Իսկ որովհետև դոն Կիխոտի կյանքը իր վազքը դանդաղեցնելու հրաշալի ընդունակութունը շուներ, ապա նրա վախճանը վրա հասավ այն վայրկյանին, երբ նա ամենից քիչ էր սպասում դրան:

Նա հիվանդացավ տենդով, որը վեց օր նրան պահեց անկողնում: Նրա բարեկամները՝ քահանան, բակավարը և սափրիչը, այցելում էին ամեն օր, իսկ Սանչո Պանսան, բարի զինակիրը, չէր հեռանում նրա սենյակից:

Բարեկամները բժիշկ կանչեցին: Սա շոշափեց դոն Կիխոտի զարկերակը և դժգոհ մնաց, ուստի խորհուրդ տվեց մեր ասպետին, համենայն դեպս, խորհել իր հոգու մասին, որովհետև մարմինը վտանգի մեջ է:

Դոն Կիխոտը հանգիստ լսեց նրան: Սակայն այդպես չվերաբերվեցին նրա զարմուհին, տնտեսուհին և զինակիրը, որոնք սկսեցին աղեխարշ լաց լինել, ինչպես եթե դոն Կիխոտը մեռած՝ պառկած լիներ նրանց առջև:

Բժշկի կարծիքով, դոն Կիխոտին սպանողը վիշտն ու թախիծն էր:

Հիվանդը խնդրեց, որ իրեն մենակ թողնեն և, առանց զարթնելու, քնեց ավելի քան վեց ժամ, այնպես որ նրա զարմուհին ու տնտեսուհին սկսեցին վախենալ՝ հո չի՞ վախճանվել քնած տեղը: Սակայն նա զարթնեց և շուրջը հավաքեց ազգականներին ու բարեկամներին:

Դոն Կիխոտն ասաց.

— Շնորհավորեք ինձ, բարի մարդիկ, ես այլևս դոն Կիխոտ Մանչացին չեմ, այլ Ալոնսո Կիխանոն: Հիմա ես Ամադիս Գադիացու և նրա բյուրավոր ժառանգների թշնամին եմ և ինձ համար ատելի են թափառական ասպետների բոլոր անհեթեթ պատմությունները: Ես հասկացա իմ անմտությունը և այն վրտանգը, որին ենթարկեցի ինքս ինձ, կարդալով դրանք: Եվ հիմա, երբ ողորմած աստված լուսավորեց, վերջապես, իմ գլուխը, ես նրանց դատապարտում եմ:

Երբ որ ներկա գտնվողները լսեցին այդ, վճռեցին, թե որևէ այլ խելագարություն է պատել նրան, և Սամսոնն ասաց.

— Հիմա, երբ մենք պատրաստվել ենք հովիվ դառնալ և իշխանական կյանք վարել, շարունակ երգ ասելով, ձերդ ողորմածությունը վճռում է ճշգնավոր դառնալ: Թողեք այդ զառանցանքները, ի սեր աստծո:

— Զառացանքն այն է, որ մինչև հիմա է եղել, — պատասխանեց դոն Կիխոտը: — Ճշմարիտ որ եղածը կործանիչ զառանցանք է եղել ինձ համար: Ես զգում եմ, պարոններ, որ մահս բոլորովին մոտ է: Թողնեք կատակները մի կողմ, մի քահանա կանչեցեք, որ խոստովանվեմ, և մի գրագիր, որ գրել տամ կտակս:

Բոլորը զարմացած իրար նայեցին և, թեև չկարողացան փարատել իրենց կասկածը, այնուհանդերձ հակամետ էին հավատալու նրան: Այդ հանկարծակի



կերպարանափոխութիւնը՝ խելագարից ողջամիտի, նրանց թվաց մոտալուտ  
մահվան նշան: Իսկ դո՞ն Կիխոտը շատ ուրիշ բաներ էլ ասաց և այնքան կոկ  
ու կանոնավոր, ճշմարիտ քրիստոնեական ու բանական, որ կասկածները ցր-  
վեցին, և բոլորը վերջնականապես հավատացին, որ դո՞ն Կիխոտի միտքը պարզ-  
վել է:

Քահանան խնդրեց, որ բոլորը դուրս գան և, մնալով մենակ, խոստովանեցրեց նրան: Բակալավրը, որ գնացել էր գրագրի հետևից, շուտով վերադարձավ գրագրի և Սանչո Պանսայի հետ: Վերջինս բակալավրից տեղեկացած լինելով, թե ինչ վիճակի մեջ է իր տերը ու տեսնելով, որ դոն Կիխոտի զարմուհին ու տնտեսուհին լաց են լինում, ինքն էլ սկսեց հեկեկալ ու արցունք թափել: Խոստովանությունն ավարտելուց հետո քահանան գուրս եկավ և սաց.

— Իրոք որ Ալոնսո Կիխանոն մահանում է և իրավ՝ նրա միտքը առողջ է: Ներս մտեք, որ ներկա լինեք կտակի կազմելուն:

Այս խոսքերը արցունքի նոր հեղեղ առաջ բերին դոն Կիխոտի զարմուհու, տնտեսուհու և բարի զինակիր Սանչո Պանսայի աչքերից. նրանք հեկեկում, ախ ու վախ էին քաշում: Որովհետև, ինչպես մենք քանիցս նշել ենք, դոն Կիխոտը թե Ալոնսո Կիխանո եղած պահին, թե դոն Կիխոտ Մանչացի եղած միջոցին, քաղցր ու բարեսիրտ բնավորության տեր էր, ուստի և նրան սիրում էին ոչ միայն մերձավորները, այլև բոլոր ծանոթները:

Բոլորի հետ ներս մտավ նաև գազիրը: Երբ որ նա կտակի վերնագիրը գրեց-պրծավ, դոն Կիխոտը, հոգին աստծուն հանձնելով, պահպանելով քրիստոնեական բոլոր կանոնները, սկսեց մեկ-մեկ թվել կտակի կետերը:

— Այլև ցանկանում եմ, որ Սանչո Պանսայի ձեռքում եղած փողերս նրանից ետ չուզեն և հաշիվ չպահանջեն, որովհետև նրան, իմ խելագարության ժամանակ, ես զինակիր էի կարգել և իմ ու նրա միջև զանազան հաշիվներ են եղել, ստացում ու վճարում ենք ունեցել: Իսկ եթե այդ գումարից նրան հասանելիքը հանելուց հետո որևէ մնացորդ մնալու լինի, թող նա վերցնի իրեն, որովհետև քիչ քան կլինի, իսկ նրան այդ քիչն էլ պետք կգա: Եվ եթե խելագարությանս ժամանակ ես օգնեցի նրան կղզի ստանալ ի կառավարություն, ապա հիմա, առողջ մտք, ես եթե ի վիճակի լինեի ողջ թագավորություն կտայի, որովհետև նրա պարզ ու հավատարիմ սիրտը արժանի է դրան:

Եվ, դառնալով Սանչոյին, նա ավելացրեց.

— Ներիր ինձ, բարեկամս, որ իմ երեսից դու էլ խենթի անուն հանեցիր, մեղքը իմն էր, որ դու մոլորության մեջ ընկար, հավատալով, որ աշխարհիս երեսին եղել են և կան հիմա էլ թափառական ասպետներ:

— Ա՛խ,— բացականչեց Սանչոն արտասովաթոր,— չմեռնեք, ձերդ ողորմածություն, տեր իմ, լսեցեք իմ խորհուրդը, ապրեցեք ևս բազում տարիներ: Որովհետև մեծագույն խելագարությունը, որ կարող է անել մարդս՝ մեռնելն է, այն էլ առանց որևէ պատճառի, երբ որ նրան սպանող չկա, և ոչինչ չի մաշում նրան, բացի թախիծից: Խնդրում եմ, որ անգործության շմատներ ձեզ, վեր կացեք անկողնուց, գնանք թափառենք արձակ դաշտերում, հովվի հազուստով, ինչպես որ վճռել էինք: Իսկ եթե որևէ թփի հետև մենք գտնելու լինենք կախարդագերծ եղած տիրուհի Դուսինեային, այլևս ի՛նչ կմնա ցանկանալ մեզ աշխարհիս երեսին:

— Իհարկե,— ասաց Սամսոնը,— բարի Սանչո Պանսան միանգամայն ճիշտ է դատում բոլոր այդ բաների մասին:

— Կամաց, պարոններ,— պատասխանեց դոն Կիխոտը,— անցյալ տարվա բներում նորելուկ ճտեր չեն լինում: Ես եղել եմ խելագար, իսկ հիմա միտքս

առողջ է: Ես եղիլ եմ դոն Կիխոտ Մանչացի, իսկ հիմա դարձել եմ, ինչպես արդեն ասացի՝ Ալոնսո Կիխանո: Թող իմ զոջումն ու ճշմարտասիրությունը վերադարձնեն ինձ ձեր նախկին հարգանքը: Իսկ հիմա, պարոն գրագիր, շարունակեցեք գրել:

— Այլև կտակում եմ իմ ողջ կարողությունը առանց որևէ սահմանափակումի զարմուհում՝ Անտոնինա Կիխանոյին, նախապես, հարմարագույն ձևով, հանելով այն, ինչ ես այլ անձանց եմ հատկացրել: Այդ թվում, նախ և առաջ խնդրում եմ վճարել իմ տնտեսուհու ոռճիկը բոլոր այն ժամանակամիջոցի համար, որ նա ծառայել է ինձ և դրա վրա քսան ոսկի՝ հագուստի համար: Կտակակատար նշանակում եմ այստեղ ներկա գտնվող տեր հորը և պարոն բակալավր Սամսոն Կարրասկոյին:

— Այլև կամենում եմ, որ իմ զարմուհին՝ Անտոնինա Կիխանոն, եթե նա մարդու գնալու լինի, ամուսին ընտրի այնպիսի մարդու, որի մասին նախապես ստուգած լինի, թե նա չգիտե ինչ ասել է ասպետական վեպ: Իսկ եթե պարզվի, որ նա գիտե և այնուհանդերձ զարմուհիս դարձյալ ցանկանա ամուսնանալ, ես զրկում եմ նրան իմ ժառանգությունից և խնդրում եմ, որ կտակակատարներս, ըստ իրենց հայեցողության, իմ կարողությունը գործադրեն քարեգործական նպատակով:

Դոն Կիխոտը սրանով ավարտեց իր կտակը և, ուշագնաց լինելով, մեկնեց վեց անկողնու վրա: Բոլորն իրար անցան, կամենալով նրան օգնած լինել: Երեք օր ապրեց նա կտակը գրել տալուց հետո և գրեթե շարունակ ուշագնաց վիճակում էր:

Ամբողջ տունը տագնապի մեջ էր:

Վերջապես դոն Կիխոտը վախճանվեց, բայց թե որ գյուղում՝ մնաց անհայտ, կարծես թե նրա համար, որ Մանչայի բոլոր գյուղերը վիճեն իրար հետ, որդեգրելով դոն Կիխոտին, ինչպես յոթ հունական քաղաքներն էին վիճում Հոմերոսի ծննդավայրը կոչվելու համար:

Մենք չենք նկարագրելու դոն Կիխոտի զարմուհու, տնտեսուհու և Սանչո Պանսայի արցունքները: Մենք մեջ չենք բերելու դոն Կիխոտի գերեզմանին փորագրած տապանագրերը:

Սահմանափակվենք Սամսոն Կարրասկոյի հորինածով:

Այստեղ հանգչում է մի տրի ասպետ,  
Այնքան հզոր էր և հուժկու այնքան,  
Որ մահը նրան տարել է թեպետ,  
Չի հաղթել սակայն, և անյունն անգամ  
Մեռած էլ՝ մնաց կենդանի հավետ:

Աշխարհը բնավ չէր գնահատում,  
Խրավիլակ էր նա և ուրու արթուն,  
Սիրտը բարի էր և անդավաճան  
Եվ նա ունեցավ երջանիկ վախճան՝  
Ելագար ապրեց, մեռավ իմաստուն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ I, որ պատմում է հռչակավոր հիդալգո գոն Կիխոտ Մանչալու բնավորության և կեն-  
ցաղի մասին . . . . . 3

Գլուխ II, որ պատմում է հանճարեղ գոն Կիխոտի առաջին արշավի մասին . . . . . 6

Գլուխ III, որ պատմում է, թե ինչ ծիծաղաշարժ կերպով դոն Կիխոտը ասպետ կարգվեց 11

Գլուխ IV, որ պատմում է, թե ինչ պատահեց մեր ասպետին իջևանատնից դուրս գալուց  
հետո . . . . . 15

Գլուխ V, որ շարունակում է մեր ասպետի ձախորդությունների պատմությունը . . . . . 21

Գլուխ VI մեծ ու զվարճալի հետազոտության մասին, որին ենթարկեցին քահանան ու սափրիչը  
մեր հանճարեղ հիդալգոյի գրադարանը . . . . . 23

Գլուխ VII, որ պատմում է փառապանծ ասպետ գոն Կիխոտ Մանչալու երկրորդ արշավի  
մասին . . . . . 25

Գլուխ VIII փառավոր հաղթանակի մասին, որ տարավ արի դոն Կիխոտը հողմաղացների դեմ  
մղած սարսափելի և աներևակայելի մարտում, ինչպես և այլ անցքերի մասին, որ ար-  
ժանի են հաճելի հիշատակության . . . . . 27

Գլուխ IX դոն Կիխոտի և նրա զինակիր Սանչո Պանսայի սրամիտ զրույցի մասին . . . . . 35

Գլուխ X, թե ինչ պատահեց գոն Կիխոտի և այծարածնների միջև . . . . . 38

Գլուխ XI, որ պատմում է գոն Կիխոտի մի անհաջող արկածի մասին . . . . . 40

Գլուխ XII, որ պատմում է, թե ինչ պատահեց խորամանկամիտ հիդալգոյին իջևանատանը, որը  
նա դրյակի տեղ էր դրել . . . . . 44

Գլուխ XIII, որ նկարագրում է արի գոն Կիխոտի և նրա հավատարիմ զինակրի կրած հետագա  
անհամար աղետները իջևանատանը, որը մեր ասպետը, դժբախտաբար, գրյակի տեղ էր  
դրել . . . . . 49

Գլուխ XIV, որ պարունակում է Սանչո Պանսայի զրույցը իր տիրոջ հետ, ինչպես և զանազան  
ուրիշ արկածներ, որ արժանի են հիշատակության . . . . . 57

Գլուխ XV Սանչո Պանսայի և նրա տիրոջ խելացի զրույցի, ննջեցյալի, ինչպես և այլ արտասո-  
վոր գեպքերի մասին . . . . . 61

Գլուխ XVI շտեմսնված և շլաված սխրագործության մասին, որ և ոչ մեկ հռչակավոր ասպետ աշ-  
խարհիս երեսին դեռ չի կատարել նվազ վտանգով իր համար, քան կատարեց արի դոն  
Կիխոտ Մանչալին . . . . . 65

Գլուխ XVII, որ պատմում է մեծ արկածի մասին և Մամբրինի թանկագին սաղավարտի նվաճ-  
ման մասին, ինչպես նաև այլ անցք ու գեպքերի մասին, որ պատահեցին մեր անհաղթ  
ասպետին . . . . . 68

Գլուխ XVIII այն մասին, որ գոն Կիխոտը ազատություն տվեց բազմաթիվ թշվառների, որոնց  
տանում էին հակառակ իրենց կամքի այնտեղ, ուր նրանք չէի ուզում գնալ . . . . . 72

Գլուխ XIX այն մասին, թե ինչ պատահեց հռչակավոր դոն Կիխոտին Սյերրա-Մորենայում,  
այլ կերպ ասած՝ ամենահազվագեպ արկածներից մեկի մասին, որ պատմում է այս  
ճշմարիտ պատմությունը . . . . . 79

Գլուխ XX, որ պատմում է Մանչալի արի ասպետի հետ Սյերրա-Մորենայում պատահած ար-  
տասովոր դեպքերի և այն ապաշխարանքի մասին, որ նա ինքը դրեց իր վրա . . . . . 82

Գլուխ XXI, որ պատմում է Սանչոյի գլխին եկած նոր ու հաճելի անցքի մասին . . . . . 89

Գլուխ XXII, որ պատմում է նույն լեռներում քահանայի և սափրիչի գլխին եկած նոր ու  
հաճելի անցքի մասին . . . . . 92

Գլուխ XXIII, որ պատմում է Գորոթեայի սրամտության և այլ շափազանց հաճելի ու զվարճալի  
բաների մասին . . . . . 95

Գլուխ XXIV, որ պատմում է գոն Կիխոտի երևելի զրույցի մասին իր զինակիր Սանչո Պան-  
սայի հետ . . . . . 99

Գլուխ XXV, որ պատմում է դոն Կիխոտի գծնդակ և արտասովոր մարտի մասին կարմիր գի-  
նով լի տկերի գեմ . . . . . 102

Գլուխ XXVI իջևանատանը տեղի ունեցած անօրինակ անցքի ու գեպքերի շարունակությունը 107

Գլուխ XXVII, որ պատմում է Մանչալի կախարգված ասպետի ճամփորդության և այլ հազ-



	վաղեպ գործերի մասին . . . . .	. 111
Գլուխ XXVIII,	որ պատմում է գոն Կիլիսոտի վեճի մասին հովվի հետ . . . . .	. 116
Գլուխ XXIX,	որ պատմում է Սանչո Պանսոյի և Թերեսա Պանսայի խոսակցության և հիշատակության արժանի այլ անցքերի մասին . . . . .	. 119
Գլուխ XXX,	որ պատմում է, թե ինչ պատահեց գոն Կիլիսոտի և նրա զարմուհու ու տնտեսուհու միջև. այս պատմության ամենակարևորագույն դրույթը . . . . .	. 120
Գլուխ XXXI,	որ պատմում է, թե ինչ խորամանկությամբ Սանչոն կախարդեց Դուլսինեսային . . . . .	. 123
Գլուխ XXXII,	որ նկարագրում է արի գոն Կիլիսոտին հանդիպած կառքի կամ «մահվան սայլի» տարօրինակ արկածը . . . . .	. 127
Գլուխ XXXIII,	որ պատմում է Անտառի ասպետի արտասովոր արկածի մասին . . . . .	. 130
Գլուխ XXXIV,	որ պարունակում է Անտառի ասպետի արկածի շարունակությունը . . . . .	. 132
Գլուխ XXXV,	որ պատմում է, թե ինչ ծայրահեղության կարող է հասնել և հասավ գոն Կիլիսոտի անլուր արիությունը առյուծների արկածում, որ հանդեց նրա համար բարեբաստիկ վախճանի . . . . .	. 139
Գլուխ XXXVI,	որ նկարագրում է տիկնիկային թատրոնի ղվարճալի արկածը, նաև գուշակ կապիկի նշանավոր մարդարեությունները . . . . .	. 141
Գլուխ XXXVII,	որ պատմում է, թե ինչ պատահեց գոն Կիլիսոտի և որսորդ դեղեցկուհու միջև . . . . .	. 149
Գլուխ XXXVIII,	որ պատմում է, թե ինչպես Սանչո Պանսան դարձավ կղզու վարչապետ . . . . .	. 152
Գլուխ XXXIX,	որ պատմում է, թե ինչպես դքսուհու մանկլավիկը նամակ ու նվերներ տարավ Սանչո Պանսայի կնոջը՝ Թերեսա Պանսային . . . . .	. 159
Գլուխ XL,	որ պատմում է Սանչո Պանսայի վարչապետության վշտալի վախճանի մասին . . . . .	. 162
Գլուխ XLI,	որ պատմում է, թե ինչպես գոն Կիլիսոտը հրաժեշտ տվեց դուքսին և Սանչո Պանսայի հետ վերադարձավ դյուղ . . . . .	. 165
Գլուխ XLII,	որ պատմում է, թե ինչպես գոն Կիլիսոտը հիվանդացավ, կտակ դրեց և վախճանվեց . . . . .	. 169

**ՄԻԳԵԼ ԴԵ ՍԵՐՎԱՆՏԵՍ ՍԱԱՎԵԴՐԱ**

**Դոն Կիխոտ**

*Դպրոցական բարձր տարիքի համար*

**МИГЕЛЬ ДЕ СЕРВАНТЕС СААВЕДРА  
Дон Кихот**

Для старшего школьного возраста  
(На армянском языке)  
Издательство «Советакан грոх»  
Ереван—1982.

*Խմբագիր՝ Զ. Մ. Ղազարյան  
Գեղ. խմբագիր՝ Ա. Վ. Սահակյան  
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Ք. Վ. Բաբսեդյան*

ИБ № 3807

Հանձնված է շարվածքի 18.05.82: Ստորագրված է տպագրության 05.10.82: Ծորմատ՝  $70 \times 100^{1/16}$ : Թուղթ՝ № 2: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ օֆսեթ: 12,6 հրատ. մամ., 14,3 պայմ. տպ. մամ.: Պատվեր՝ 884: Տպաքանակ՝ 30 000: Գինը՝ 65 կ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հանրո Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван-9, ул. Теряна, 91.

